Ամէն բան, որ յայտնի է լինում, լոյս է

Վասն արդարութեան

WHATSOVER DOTH MAKE MANIFEST IS LIGHT

FOR THE SAKE OF JUSTICE

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003
(ԲՈՒՆ ՀԱՅՈՑ ՍԱՀՄԻ 4496 ԱՄԻ)

10 (46)

OCTOBER 2003

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ. Եվրոպական սահմանադրական զարգացումների արդի միտումները 2

Հայաստանի Հանրապետության օրենքը Մարդու իրավունքների պաշտպանի մասին 6

ՍԱՐԳՍՅԱՆ Լ. Դիտողություններ և դատողություններ մի օրենքի մասին 13

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Գարեգին Նժդեհի փիլիսոփայության որոշ առանցքային գաղափարների մեկնաբանության հարցի շուրջ 24

ԴԵՄԻՐՃՅԱՆ Մ. Ազգային ինքնությունը և դիցարարությունը մշակույթների երկխոսության ժամանակակից պայմաններում 34

ԶԱՔԱՐՅԱՆ Ս. Գրիգոր Նարեկացին և հայկական վերածնության հարցը 39

ԲՐՈՒՏՅԱՆ Վ. Դպրոցականների իրավական դաստիարակության մի քանի հարցեր .. 49

ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ Ա. Հակամարտությունների լուծման ուղիների դասակարգումը 55

ՍՏԵՓԱՆՅԱՆ Ս. «Հայ իրավական մտքի գանձարանի» երրորդ հատորը 59

Մարդու իրավունքներ 60

ՀՐԱՅՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ (մահախոսական) 61

Գրքերի տեսություն 62

ՄԻ գրադարանում ստացված նոր գրականություն 64

IN THE ISSUE

G. HARUTIUNIAN. "Contemporary Tendency of European Constitutional Development" 2

RA Law on Ombudsman 6

L. SARGSYAN. "Remarks and Reasons on a Certain Law" 13

A. SARGSYAN. "To a Question on Interpretation of Some Basic Ideas of Garegin Nzhdeh's Philosophy" 24

M. DEMIRTCHYAN. "National Identification and Myth - Creativity in a Modern Context of Dialogue of Cultures" 34

S. ZAQARYAN. "Grigor Narekatsi and the Question of Armenian Renaissance" 39

V. BRUTYAN. "Some Questions on Law Education of Pupils" 49

A. GHARIBJANYAN. "Classification of the Ways of Conflicts Solution" 55

S. STEPANYAN. ""Treasury of Armenian Legal Thought" Third Volume" 59

Human Rights 60

HRAYR DARBINYAN (Obituary) 61

Survey of Books 62

New Publications in the Human Rights Library 64

Ծապիկի առաջին էջին՝ *խորան 1323-ին Գլաձորում Թորոս ՅԱՐՈՆՅԱՆԻ պատկերապարդած Ավետարանից*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Իրավա իրության դոկտոր, պրոֆեսոր

Նոր հազարամյակ մարդկությունը թեւակոխեց հասարակական գիտակցության առանցքային շատ արժեքների վերաիմաստավորման անհրաժեշտությամբ եւ հասարակական կեցության կանոնակարգման ու կայուն զարգացում երաշխավորելու լուրջ փնտրտուքներով: Շրջանառության մեջ դրված «գլոբալիզացիա», «ունիվերսալիզմ», «վերպետական Սահմանադրություն» եւ մի շարք այլ հասկացություններ պահանջում են ոչ միայն իմացական, այլեւ իրավագիտական ու քաղաքագիտական խոր իմաստավորում, ժողովրդավարական, իրավական պետության հիմնական սկզբունքների հետ այնպիսի բաղդատում, որպեսզի որոշակիացվեն կայուն եւ քաղաքակիրթ զարգացման չափորոշիչներն ու այդ ոլորտում միջազգային արդյունավետ գործակցության շրջանակները:

Իրողություն է նաեւ, որ համաեվրոպական ինտեգրացման որակական խորացումը պարզապես նշանավորվեց Եվրոպայում իրավական լուրջ վերափոխումներով, որոնք ականատես է ներկա սերունդը: Միայն վերպետական Սահմանադրության անհրաժեշտության գաղափարի կամ համաեվրոպական դատական նախադեպի ի հայտ գալն անգամ բավական էր՝ շեշտելու համար, որ իրականում գործ ունենք որակական նոր իրողության, ընդհուպ՝ իրավական հեղափոխության հետ:

Հիմնական գործոնները, որոնք բնորոշ են նոր հազարամյակի հասարակական կարգին եւ, մեր կարծիքով, թելադրում են նորովի լուծումներ, ամենաընդհանուր գծերով հանգում են հետեւյալներին՝

1. միջազգային առումով ժողովրդավարական զարգացումները հասել են որակական մի սահմանի, երբ պահանջում են իրավակարգի պաշտպանության, համակարգային ներդաշնակության ու կայունության նոր մակարդակ ու որակ,

2. առաջացել է լուրջ հակասություն՝ ներպետական հարաբերություններում ժողովրդավարության արմատավորման եւ միջպետական հարաբերություններում ուժի թելադրանքի միջեւ,

3. տնտեսական գլոբալացումը հասարակական ինտեգրացման որակապես նոր իրավիճակ է ստեղծել, երբ կազմավորվում են նախադեպը չունեցող միջազգային համակցություններ, ինչպես, օրինակ, Եվրամիությունը, որի պարագայում անխուսափելիորեն առաջ է գալիս ընդհուպ վերպետական Սահմանադրության գաղափարը[1]: Միաժամանակ, խզվում են սահմանները ներպետական ժողովրդավարական համակարգերի եւ վերպետական տնտեսական հարաբերությունների միջեւ[2],

4. առավել հրատապ է դառնում ունիվերսալիզմի եւ ազգային առանձնահատկությունների հաշտեցման խնդիրը: Ներդաշնակման փոխարեն է՛լ ավելի են սրվում արժեհամակարգային հակասություններն ազգակենտրոն եւ անձնակենտրոն պետական-հասարակական համակարգերում,

5. մարդկային հանրությունը հոգեւոր-մշակութային հանրությունից աստիճանաբար դառնում է մերկանտիլ սպառող հանրություն,

6. կրոնը, հոգեւոր ոլորտը, մարդուն աստվածային արժեքներով ապրեցնելու էական դերակատարությունից հեռանալով, վեր են ածվում ձեւական, մարդուն խորթացած ինքնամփոփ ներեկեղեցական երեւույթի,

7. ազատ շուկայի ծավալման եւ տնտեսական գլոբալ մրցակցության պայմաններում բարոյական նորմերը կորցնում են հասարակական հարաբերությունների կարգավորիչի ու խթանիչի իրենց նախկին դերը,

8. հարստության եւ աղքատության մկրատը հասել է բեւեռացման այնպիսի սահմանագծի, երբ դրանք պարզապես անհամատեղելի են դառնում[3],

9. էապես փոխվում են միջազգային իրավունքի տեղն ու դերը միջպետական իրավական համակարգում: Միաժամանակ, ավանդական իրավական համակարգերի տարբերություններն առավել հարաբերական են դառնում: Եվրոպական մայրցամաքային իրավական համակարգում նախադեպը դառնում է իրավունքի կարեւոր աղբյուր, իսկ մարդու իրավունքները, անկախ ազգային սահմաններից, միջազգային պաշտպանության օբյեկտ են դառնում,

10. մարդկության համար մեծագույն վտանգ է դարձել ահաբեկչությունը, որն ունի տնտեսական, սոցիալական, քաղաքական դրդապատճառներ եւ հակադրվում է արժեքների այն համակարգին, որը ներկայումս ընկած է քաղաքացիական համաձայնությամբ ժողովրդավարական հարաբերությունների հաստատման հիմքում[4],

11. սառը պատերազմի ավարտից հետո ու հետհամայնավարական տարածքում ժողովրդավարական զարգացումների պայմաններում փնտրվում են միջազգային հավասարակշռության նոր հենակետեր: Աշխարհը երկբեւեռ համակարգից դարձել է անկայուն միաբեւեռ համակարգ՝ բազմաբեւեռի վերածելու իրական միտումներով: Մի կողմից՝ միջազգային համակարգային կայունության հենակետերը դեռեւս հստակեցման գործընթացում են, մյուս կողմից՝ գոյություն ունեցող եւ այդ նպատակին ծառայող միջազգային ինստիտուտները կորցնում են իրենց նախկին տեղն ու դերը,

12. միաժամանակ, բազմաթիվ երկրներ հայտնվեցին համակարգային վերափոխումներով պայմանավորված անորոշության գոտում, երբ անխուսափելի է դառնում արժեքային նոր համակարգի ձեւավորումն ու դրա հենքի վրա հասարակական զարգացման խնդիրների լուծումը,

13. մարդկությունը վաղուց ստեղծել է ինքնաոչնչացման բավարար նախադրյալներ, եւ պատահականության գործոնը կամ բնական աղետները կարող են այդ հավանական հնարավորությունը դարձնել իրական,

14. առավել քան հրատապ է դարձել համամոլորակային վտանգների դեմ գործակցաբար հանդես գալու անհրաժեշտությունը,

15. գիտատեխնիկական մտքի թռիչքը, տեղեկա-

տվական ներկա հնարավորությունները, ընդհուպ տեխնիկական կամ օրգանական արհեստական մարդու ստեղծման փորձարկումները թելադրում են ընդհանուր արժեհամակարգային նոր մոտեցումներ:

Թվարկումների ցանկը, թերեւս, կարելի է շարունակել, սակայն նշվածն էլ բավական է համոզվելու համար, որ այս համատեքստում պետք է դիտարկվեն բոլոր այն հիմնահարցերը, որոնք ներազգային ու միջազգային հոլովույթում առնչվում են հասարակության կայուն ու ներդաշնակ զարգացման խնդիրներին:

Մյուս կողմից՝ ՄԱԿ-ի կազմավորումից եւ միջազգային համընդգրկուն հիմնարար մի շարք պայմանագրերի կնքումից ի վեր միջազգային իրավունքի նորմերը հիմնարար դիրք գրավեցին միջպետական եւ ներպետական հարաբերություններում: Սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Եվրամիության արդարադատության դատարանի, իսկ 2002 թվականից՝ նաեւ մշտապես գործող Միջազգային քրեական դատարանի գործունեությունն ակնհայտ են դարձնում, որ մարդկությունը նոր հազարամյակ թեւակոխեց՝ «փշրելով» իրավունքի ընկալման ու դրա պաշտպանության ազգային կաղապարները, եւ իրավունքի պաշտպանության հարցը դարձավ վերպետական երեւույթ: Սա պայմանավորված էր նաեւ նրանով, որ քաղաքացիական հասարակության կայացումը եւ իրավական, ժողովրդավարական պետության ստեղծումը դարձան համընդհանուր իդեալ, մարդկային բարօրության եւ մարդու ստեղծարար նախասկզբի լավագույնս իրացման նախապայման: Պատահական չէ, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում, հատկապես Եվրոպայում, ընդունված կամ էապես բարեփոխված գրեթե բոլոր սահմանադրությունները որպես նորմ-նպատակ եւ նորմ-սկզբունք ամրագրում են պետության իրավական եւ ժողովրդավարական լինելու հանգամանքը, ինչպես նաեւ ընդունում են միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը ներպետական օրենսդրական նորմերի նկատմամբ:

Արժեհամակարգային ինտեգրացումն առավել ակտիվ դրսեւորվեց Եվրոպայում, որտեղ միասնական շահերի վրա խարսխված տնտեսական, քաղաքական, հումանիտար եւ, ընդհանրապես, արժեհամակարգային համագործակցությունը բերեց վերպետական գործակցության այնպիսի որակի, երբ ստեղծված միասնական տնտեսական, իրավական, կառուցակարգային բազան միանգամայն օրինաչափորեն օրակարգային է դարձնում նաեւ վերպետական Սահմանադրության ստեղծման անհրաժեշտությունը: Սա արդեն իրավական գլոբալացման բոլորովին նոր որակ է՝ առայժմ բնորոշ միայն Եվրամիությանը: Այսուհանդերձ, վերպետական իրավակարգը՝ իր բնորոշ գծերով ու ակտիվ ներազդեցության լիցքով, գնալով տիրապետող է դառնում ողջ աշխարհում:

Նման որակական միջավայրում հետաքրքիր օրինաչափություններ են նկատվում նաեւ եվրոպական սահմանադրական զարգացումներում հատկապես վերջին 40-50 տարիների ընթացքում: Մասնավորապես, բազմաթիվ երկրներում վերջին տասնամյակների սահմանադրական փոփոխությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ՝

1. հասարակական-պետական հարաբերությունների առանցքն է դառնում մարդը՝ իր անօտարելի արժանապատվությամբ եւ իրավունքներով: Վերջիններս սահմանադրորեն ամրագրվում ու ճանաչվում են որպես անմիջական գործող իրավունքներ, դառնում են ժողովրդի ու պետության կողմից իշխանության իրականացման սահմանափակիչներ, ստանում են ներպետական ու միջազգային պաշտպանության հուսալի երաշխիքներ, հանդես են գալիս որպես տվյալ հասարակական համակարգի գնահատման հիմնական չափանիշներ,

2. տիրապետող է դառնում իրավունքի գերակայության սկզբունքը: Գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը,

3. ժողովրդավարական արժեքները հիմնավորապես դառնում են սահմանադրական կարգի հենքը եւ մարդկանց ազատությունների երաշխիքը,

4. առավել մեծ չափով են ներդաշնակվում միջազգայնորեն ճանաչված սահմանադրական հիմնական սկզբունքները եւ կոնկրետ հարաբերություններ կարգավորող սահմանադրական նորմերը,

5. համընդհանուր միտում է նկատվում իշխանության աստիճանական սահմանափակման, ուժի (քաղաքական, վարչական, տնտեսական) ցրման եւ ինքնակառավարման հնարավորությունների ընդլայնման ու երաշխիքների ամրապնդման հարցերում,

6. իշխանությունների տարանջատման սկզբունքի հետեւողական իրացումը, դրանց գործառնական հավասարակշռումը, խելամիտ զսպումն ու հակակշռումը դառնում են համընդհանուր պահանջ,

7. ներկայացուցչական ժողովրդավարության զարգացումներն առանձնահատուկ կարեւորում են հասարակության քաղաքական կառուցակարգերի կատարելագործումն ու մարդկանց քաղաքական իրավունքների պաշտպանությունը,

8. ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները, արմատավորվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կուռ համակարգ, սահմանադրական կարգն օժտվում է առավել կենսունակ իմունային համակարգով,

9. հատուկ ուշադրության առարկա է դառնում դատական իշխանության անկախության, համակարգային լիարժեքության, ամբողջականության, կենսունակության ապահովման խնդիրը,

10. մեծապես կարեւորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես հասարակության ժողովրդավարական ինքնավարության առանձնահատուկ ձեւ,

11. հասարակական օրգանիզմի իմունային բավարարվածության ապահովման խնդիրների լուծումները նկատելիորեն փնտրվում են սահմանադրական դաշտում, եւ, իր հերթին, ազգային սահմանադրությունների յուրաքանչյուր փոփոխություն միջազգային լայն արձագանք է ստանում:

Նշված օրինաչափություններն առաջին հերթին համակարգային նոր որակ են ստացել Եվրոպական իրավունքում: Ընդհանրապես Եվրոպական միությունը ներկայումս գտնվում է տարբեր փոփոխությունների փնտրտուքում: Դրանք վերաբերում են նաեւ հիմնական փաստաթղթերում ամրագրված արժեքներին եւ մոտեցումներին, մասնավորապես՝ Եվրոպական համայնքների պայմանագրին (որը էականորեն փոփոխվել էր միասնական եվրոպական ակտերով, Եվրոպական մի-

ության մասին պայմանագրով, Ամստերդամի պայմանագրով եւ Նիսի պայմանագրով) եւ Եվրոպական Միության մասին պայմանագրին (որն էականորեն փոփոխվել է Ամստերդամի եւ Նիսի պայմանագրերով):

Ներկա մոտեցումների արդյունքում առաջիկայում Եվրոպական միության առաջին իրավական փաստաթուղթը կազմված կլինի Սահմանադրական համաձայնագրից եւ վերջինիս երկու ակտերից (Տնտեսական եւ սոցիալական քաղաքականության մասին ակտ, Արտաքին, անվտանգության եւ պաշտպանության բնագավառներում քաղաքականության մասին ակտ): Նպատակ է հետապնդվում, որ այս վերակազմավորումը, մասնավորապես, կհանգեցնի գործունեության եւ իրավասության ավելի հստակ ու մատչելի բնորոշմանը, Եվրոպական միության եւ Եվրոպական համայնքների միջեւ տարբերության վերացմանը՝ դրանով ստեղծելով իսկապես միասնական ինստիտուցիոնալ համակարգ՝ օժտված մեկ իրավասուբյեկտությամբ:

Վերջին տարիներին Եվրոպական միության համար օրակարգային հիմնահարց է, թե ինչպես զարգացնել ընդլայնվող Միությունը նոր աշխարհակարգում՝ որպես կայունության գործոն եւ մոդել: Այդ նպատակով Եվրոպական խորհուրդը 2001թ. դեկտեմբերին Լեյկենում (Բելգիա) հրավիրեց խորհրդաժողով, որը խնդիր դրեց մշակել Միության Սահմանադրություն, եւ ընդունվեց հռչակագիր, որում, մասնավորապես, առաջարկվեց հասնել Միության եւ Անդամ պետությունների միջեւ իրավասությունների լավագույն տարանջատման, Միությանն օժտել իրավունակությամբ, պարզեցնել որոշումներ կայացնելու ընթացակարգերը եւ եվրոպական հաստատությունների գործունեությունը դարձնել ավելի թափանցիկ ու մատչելի:

Անցած երկու տարիների ծավալուն աշխատանքի արդյունքը հանդիսացավ 2003թ. հունիսին Եվրոպական խորհրդի կողմից հավանության արժանացած Եվրոպական միության Սահմանադրության նախագիծը, որը մտել է վերջնական քննարկումների եւ ընդունման փուլ:

Ոչ միայն Եվրոպական միության, այլեւ եվրոպական արժեքային համակարգին ինտեգրվել ցանկացող յուրաքանչյուր երկրի համար բացառիկ կարեւոր է, թե ի՞նչ արժեքների վրա է խարսխվում ապագա եվրոպական սահմանադրական կարգը, համակարգային ի՞նչ նոր լուծումներ են գտնվել, ինչպիսի՞ն է լինելու ներմիութենական եւ այլ երկրների հետ հարաբերությունների բնույթը, ինչպե՞ս կարելի է դառնալ միասնական Սահմանադրություն ունեցող ապագա Միության անդամ եւ բազմաթիվ այլ հարցեր, որոնք ներկայումս տարբեր երկրների լրատվամիջոցների ամենահիրատապ թեմաներից են դարձել:

Միանշանակ կարելի է փաստել, որ ներկայումս Եվրոպական միությունը գտնվում է շրջադարձային փուլում, եւ դա իրողություն է: Խնդիրը չի վերաբերում միայն Միության համալրմանը՝ Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ մի շարք երկրների անդամակցությամբ: Ինչպես ընդգծեց Լեյկենի խորհրդաժողովը, արժեհամակարգային լուրջ վերաիմաստավորումների խնդիր է առաջացել: Միությունը, նոր հազարամյակի մարտահրավերներից ելնելով, փորձում է իր համար հստակեցնել առնվազն երեք հիմնահարց. քաղաքացիներին ինչպե՞ս մոտեցնել եվրոպական ծրագրերին ու հաստատություններին, ընդլայնված Միությունում ինչպե՞ս կազմակերպել քաղաքականությունն ու քաղաքական մթնոլորտը եւ ինչպե՞ս զարգացնել Միությունը նոր աշխարհակարգում՝ որպես կայունության գործոն եւ մոդել: Այս հարցերին զգալի չափով պատասխան կտա ներկայումս մշակման ավարտական փուլում գտնվող եւ նախադեպը չունեցող Սահմանադրությունը: Դա առաջին, այսպես կոչված, վերպետական Սահմանադրությունն է եւ ցրում է ավանդական պատկերացումները միասնական Սահմանադրությամբ պետությունների գործակցության ձեւերի մասին, ինչպիսիք էին ֆեդերալիզմը, կոնֆեդերալիզմը եւ այլն: Բացի դրանից՝ այն հենվում է սահմանադրագիտության դարավոր փորձի ու վերջին նվաճումների վրա եւ առաջադրում է որակապես նոր լուծումներ:

Առաջին հերթին անհրաժեշտ է առանձնացնել Սահմանադրության նախագծի երկրորդ հոդվածը: Շատերը հաճախ կրկնում են Եվրոպա, եվրոպական արժեքներ, եվրոպական չափանիշներ եւ այլն: Դրանք հաճախ մնում են վերացական արտահայտություններ կամ սուբյեկտիվ ընկալման արտացոլանք: Առաջին անգամ Եվրոպական միությունը հստակ, սահմանադրական մակարդակով ամրագրում է, թե որոնք են Միության արժեքները, որոնց վրա պետք է խարսխվեն բոլոր տիպի իրավահարաբերությունները: Այդ հոդվածը սահմանում է, որ «Միությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը: Այս արժեքներն ընդհանուր են Անդամ պետությունների համար, որոնցում հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարադատությունը եւ համերաշխությունը»:

Սրանք լոկ բառեր չեն, այլ քաղաքակրթական մի ամբողջ համակարգի հիմքը կազմող արժեքներ, եւ եվրոպական ընտանիքին լիարժեք անդամակցելու մտադրություն ունեցող յուրաքանչյուր երկրում այս արժեքները պետք է դառնան կենսունակ ու հիմնաքարային նշանակության կողմնորոշիչներ:

Մանրամասների մեջ չխորանալով՝ անհրաժեշտ է շեշտել նաեւ սահմանադրական հիմնական հասկացությունների հստակության, միարժեքության, խոր ընդգրկման պարագան: Օրինակ, ամրագրելով Միության նպատակները՝ նախագծի հոդված 3-ը սահմանում է. «Միությունն իր քաղաքացիներին առաջարկում է ազատության, անվտանգության եւ արդարադատության միջավայր, միասնական ազատ շուկա՝ առանց ներքին սահմանների եւ ձեւախեղված մրցակցության»: Կամ շեշտվում է, որ Միությունը պետք է հիմնվի հավասարակշռված տնտեսական աճի, ինչպես նաեւ սոցիալական շուկայական տնտեսության վրա:

Այս եւ սկզբունքային բնույթի նման այլ հասկացությունները եվոպական ինտեգրացման կողմնորոշիչների համար ունեն բացառիկ նշանակություն:

Սահմանադրության նախագծի հոդված 8-ը տալիս է նաեւ այն հարցի պատասխանը, թե ով կարող է դառնալ Միության քաղաքացի: Ըստ այդ հոդվածի՝ յուրաքանչյուր Անդամ պետության քաղաքացի միաժամանակ Միության քաղաքացի է:

Չափազանց կարեւոր են նաեւ իշխանությունների տարանջատման սկզբունքի իրացման հարցում

գտնված նոր լուծումները: Դրա մանրամասներին թերեւս արժե առանձին վերլուծությամբ անդրադառնալ: Բավարարվենք միայն շեշտելով, որ բացառիկ հետաքրքիր են հիմնական ինստիտուտների՝ Եվրոպական պառլամենտի, Եվրոպական խորհրդի, Նախարարների խորհրդի, Եվրոպական հանձնաժողովի եւ Արդարադատության դատարանի գործառնական փոխհարաբերությունները օրենքների ընդունման, գործադրման եւ վերահսկողության իրականացման ոլորտներում:

Հետաքրքիր մոտեցում է դրսեւորվել նաեւ Սահմանադրության կառուցվածքին: Սահմանադրությունը բաղկացած է երեք մասից: Առաջին մասը ներառում է Միության սահմանումները եւ նպատակները, ճշգրտվում են իրավասությունները, ամրագրվում է Միության հաստատությունների ձեւավորման կարգն ու լիազորությունների շրջանակը, դրանց իրականացման կարգը, հատուկ դրույթներ՝ անվտանգության ոլորտում ընդհանուր քաղաքականության իրականացման, արդարադատության միջավայրի ձեւավորման, ժողովրդավարական կյանքի երաշխավորման եւ այլնի վերաբերյալ:

Երկրորդ մասն ամբողջությամբ ներառում է Մարդու հիմնարար իրավունքների մասին խարտիան՝ որպես Սահմանադրության անբաժանելի մաս:

Երրորդ մասը ներառում է տարբեր ոլորտներում Միության քաղաքականության (անվտանգության, արտաքին հարաբերությունների, տնտեսական, սոցիալական, ֆինանսական եւ այլն) եւ գործառույթների վերաբերյալ դրույթներ, ինչպես նաեւ կից մի շարք արձանագրություններ՝ Միության կազմավորման քվոտաների եւ Սահմանադրության նորմերի կիրառման վերաբերյալ:

Այդ բոլորի մեջ կցանկանայինք հատկապես առանձնացնել առաջին մասի 9-րդ բաժինը, որը վերաբերում է Միությանն անդամակցելու հիմնահարցերին: Եվրոպական միություն ձգտելիս պետք է նկատի ունենալ, որ բավականին խիստ ընթացակարգ է նախատեսված: Մասնավորապես, եվրոպական յուրաքանչյուր պետություն, որը ցանկանում է դառնալ Միության անդամ, պետք է դիմի Նախարարների խորհրդին: Եվրոպական պառլամենտը եւ Անդամ պետությունների ազգային պառլամենտները պետք է ծանուցվեն այդ դիմումի մասին: Նախարարների խորհուրդը որոշումը կայացնում է փոխհամաձայնությամբ՝ խորհրդակցելով Հանձաժողովի հետ եւ ստանալով Եվրոպական պառլամենտի համաձայնությունը: Վերջինս պետք է վավերացվի յուրաքանչյուր պայմանավորվող պետության կողմից:

Եվրոպական միության Սահմանադրության նախագծի կառուցվածքի վերլուծությունից հետեւում է, որ գլխավոր շեշտը դնելով իրավունքի գերակայության երաշխավորման վրա՝ միաժամանակ ձեւավորվում է վերպետական կառավարման ամբողջական ու, թերեւս, մեծ հեռանկար ունեցող եւ ուսանելի մի մոդել:

Սահմանադրությամբ հստակեցված է նաեւ, թե ինչի է ձգտում Միությունը՝ թե՛ նպատակների, թե՛ դրանց հասնելու մոտեցումների և ուղիների առումով: Մասնավորապես, անհրաժեշտ է նշել, որ Միության նպատակն է խրախուսել խաղաղությունը, Միության արժեքները եւ մարդկանց բարեկեցությունը, ապահովել հավասարակշռված եւ կայուն զարգացում, մարդկանց, ապրանքների, ծառայությունների ու կապիտալի ազատ տեղաշարժ, բնակության ազատություն, Միությանն օժտել իրավունակությամբ, հասնել միջպետական համագործակցության՝ պատմության մեջ իր նախադեպը չունեցող մի նոր որակի, որն սկիզբ կդնի քաղաքացիական հասարակության ու միջազգային ժողովրդավարական զարգացումների որակապես նոր փուլի:

---

[1] Եվրոպական Սահմանադրության մշակման մասնագիտական խմբի գերմանացի անդամ, պրոֆեսոր Ինգոլֆ Պերնիցեի կարծիքով (ըստ ինտերնետ կապով մեր համատեղ քննարկման) Եվրոպական միության պայմանագրերն արդեն ունեն վերազգային հանրային հեղինակություն, դրանք կատարում են Սահմանադրության գործառույթներ, բայց չեն դիտվում որպես Սահմանադրություն: Մարդիկ հստակ եւ պարզ տեքստի կարիք ունեն, եւ Սահմանադրական խորհուրդն այժմ փորձում է գոյություն ունեցող առաջնային իրավունքի դրույթներն ի մի բերել Եվրոպական միության Սահմանադրության տեքստում, համատեղելով Միությունն ընդլայնմանը նախապատրաստելու, ներառյալ՝ Հիմնարար իրավունքների խարտիան, ժողովրդավարական վերահսկողությանը հասնելու եւ իր հաստատություններն ավելի արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, նոր Սահմանադրությունը պետք է հասկանալի լինի Միության քաղաքացիների համար, Հիմնարար իրավունքների խարտիայի տեսքով ներառի ընդհանուր արժեքներ, համապատասխանի ժողովրդավարության եւ թափանցիկության պահանջներին: Պետք է հստակեցվի, որ Միությունը գործում է իր քաղաքացիների եւ ոչ (միայն) իր անդամ պետությունների համար: Միաժամանակ հստակ պետք է ամրագրվեն, որ Միության հիմնական սկզբունքներն են մարդու իրավունքների եւ իրավական օրենքի գերակայության, ժողովրդավարության, սոցիալական հանդուրժողականության եւ կայուն զարգացման սկզբունքները:

[2] Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆեսոր Էրնստ Ուլրիխ ֆոն Վայցզեկերը, նման պայմաններում, երբ ժողովրդավարությունը ներփակվում է ազգային-պետական սահմաններում, իսկ տնտեսական հարաբերությունները վերպետական բնույթ ունեն, պետք է խոսել ժողովրդավարության զարգացման նոր փուլի՝ համաշխարհային ժողովրդավարության անհրաժեշտության մասին (Deutschland, 2002, թիվ 4, օգոստոս-սեպտեմբեր):

[3] Նոբելյան մրցանակի դափնեկիր, ԱՄՆ Նախագահի նախկին խորհրդական, տնտեսագետ Ժոզեֆ Ստիգլիցը միանգամայն ճշմարտացի է՝ ընդհանրացնելով, որ նման բեւեռացման պատճառը տնտեսական գլոբալացման սխալ ընթացքը եւ ծայրահեղացված լիբերալիզմն է: Մարդկության զարգացման նպատակը չէ հարստությունը փոքրաթիվ անհատների ձեռքում կուտակելը՝ համատարած աղքատության պայմաններում: Յուրաքանչյուր տնտեսական ձեռնարկ պետք է գնահատվի նաեւ իր սոցիալական հետեւանքների տեսանկյունից («Գլոբալացման ստվերում», Deutschland, 2002, թիվ 4, օգոստոս-սեպտեմբեր):

[4] Ինչպես արդարացիորեն նշել են Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի նախկին անդամ, պրոֆեսոր Ժակ Ռոբերը, Իռլանդիայի գերագույն դատարանի անդամ Ֆրենսիս Մերֆին, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի իրավական հարցերի եւ մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ Միշել Յունոն, Ավստրիայի գերագույն դատարանի նախագահ Էվրին Ֆելցմանը եւ այլք՝ «Ահաբեկչության դեմ պայքարում նպատակահարմարության շահերի եւ մարդու իրավունքների միջեւ հաշվեկշռի պահպանումը» վերտառությամբ իրենց ելույթներում, որոնք ներկայացվել են Ստրասբուրգում 2002 թ. մայիսին հրավիրված միջազգային դատական տասներորդ կոնֆերանսում, վերջին հաշվով, ահաբեկչության դեմ պայքարը հանգում է այն իդեալների հաղթանակի ապահովմանը, որոնք ընկած են ողջ հանրության սոցիալական համաձայնության հիմքում:

Ոչ պաշտոնական հրատարակություն*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ

Ընդունվել է 21.10.2003

Հոդված 1. Ընդհանուր դրույթներ

Սույն օրենքը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնի նշանակելու եւ պաշտոնից ազատելու կարգը, լիազորությունները, գործունեության պայմանները եւ երաշխիքները:

Հոդված 2. Մարդու իրավունքների պաշտպանը

Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) ինքնուրույն եւ անկախ պաշտոնատար անձ է, որը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության եւ օրենքների, ինչպես նաեւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանությունը:

Հոդված 3. Պաշտպանի նշանակումը

1. Պաշտպանի պաշտոնում նշանակվում է 35 տարին լրացած Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով ունի բարձրագույն կրթություն, մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ եւ փորձ, հասարակության մեջ վայելում է բարձր հեղինակություն:

2. Պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ից ավելիով՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի եւ Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից:

Պաշտոնի նշանակվելիս Պաշտպանը տալիս է հետեւյալ երդումը.

«Ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանի պարտականությունները՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին, հասարակական համակեցության եւ արդարության սկզբունքներին, պաշտպանել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու հիմնարար ազատությունները:

Երդվում եմ, որ պարտականություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ եւ ջանասիրությամբ»:

3. Պաշտպանը պաշտոնում նշանակվում է 6 տարի ժամկետով:

Նույն անձը Պաշտպանի պաշտոնում չի կարող նշանակվել միմյանց հաջորդող երկու ժամկետից ավելի:

Հոդված 4. Պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը

1. Պաշտպանը չի կարող զբաղեցնել պետական կամ այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական եւ ստեղծագործական աշխատանքից:

2. Պաշտպանը չի կարող լինել որեւէ կուսակցության անդամ կամ ընտրություններում առաջադրել իր թեկնածությունը, մասնակցել նախընտրական քարոզչությանը:

3. Պաշտպանը պարտավոր է սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործունեությունն ընդհատել պաշտոնավարության անցնելուց հետո՝ ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում:

Հոդված 5. Պաշտպանի անկախությունը

1. Պաշտպանն իր լիազորություններն իրականացնելիս անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը եւ օրենքներին, ինչպես նաեւ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին:
Պաշտպանը չի ենթարկվում պետական կամ տեղական ինքնակառավարման որեւէ մարմնի կամ պաշտոնատար անձի:

2. Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաեւ որպես վկա, իր մոտ գտնվող բողոքի կամ փաստաթղթի էության վերաբերյալ կամ դրանք տրամադրել ծանոթացման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում եւ կարգով:

Հոդված 6. Պաշտպանի լիազորությունների դադարումը

1. Պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից:

2. Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են միայն, եթե՝

* Տե՛ս http://www.parliament.am

1) խախտվել են սույն օրենքի 4-րդ հոդվածի պահանջները.

2) Պաշտպանի նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել.

3) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

4) նա Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով հրաժարական է ներկայացրել իր լիազորությունները վայր դնելու մասին.

5) Պաշտպանը դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ճանաչվել է անգործունակ, անհայտ բացակայող կամ հայտարարվել է մահացած.

6) նա առողջական վիճակի պատճառով ոչ պակաս, քան 6 ամիս անընդմեջ իր լիազորությունները չի կատարել.

7) Պաշտպանը մահացել է:

3. Վերոնշյալ դեպքերում Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին հարցը Ազգային ժողովի քննարկմանը կարող են ներկայացնել սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն առաջադրման իրավունք ունեցող անձինք: Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների կեսից ավելիով:

4. Պաշտպանի լիազորությունների դադարեցման դեպքում նոր Պաշտպան պետք է նշանակվի նախորդի լիազորությունների դադարեցման օրվանից մեկ ամսվա ընթացքում: Մինչեւ նոր Պաշտպան նշանակվելը Պաշտպանի պարտականությունները կատարում է նրա տեղակալը:

Հոդված 7. Պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքները

1. Պաշտպանը քննարկում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաեւ միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու (այդ թվում՝ նաեւ քաղաքացու) իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

Պաշտպանն իրավասու չէ միջամտել դատական վարույթին: Նա կարող է տեղեկություններ պահանջել դատաքննության մեջ գտնվող ցանկացած գործի մասին եւ առաջարկներ ներկայացնել դատարան՝ երաշխավորելով քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ միջազգային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը: Պաշտպանն իրավասու է դիմողին տալ առաջարկություններ կամ խորհրդատվություն՝ դատարանի որոշման, վճռի կամ դատավճռի հիմնավորվածությունը բողոքարկելու վերաբերյալ:

2. Պաշտպանը չի քննարկում ոչ պետական մարմինների եւ կազմակերպությունների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բողոքները:

3. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության կառավարության, ինչպես նաեւ պետական այլ մարմինների նիստերին եւ ելույթ ունենալ, եթե քննարկվում են մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ այդ նիստերի քննարկմանը ներկայացնել այդ կամ դրանց ենթակա մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների, ինչպես նաեւ սույն օրենքի պահանջների խախտման վերաբերյալ հարցեր:

4. Պաշտպանն իրավունք ունի ներկա լինել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նիստերին, ելույթ ունենալ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, երբ քննարկվում են մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր:

Հոդված 8. Պաշտպանին դիմելու իրավունքը

1. Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական եւ այլ հայացքներից ու գործունակությունից:

Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար:

Պաշտպանին իրավունք ունի դիմել ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձը:

Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պետք է երաշխավորվի զորամիավորումներում, ձերբակալման վայրերում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաեւ հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ: Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների՝ այդ անձանց հետ խոսակցությունները ենթակա չեն միջամտության եւ գաղտնալսման:

Պաշտպանին բողոք ներկայացնելը կամ նրա միջամտությունը չպետք է հանգեցնի բողոքողի նկատմամբ քրեական, վարչական կամ այլ պատժամիջոցի կիրառման կամ որեւէ խտրականության:

2. Պաշտպանին կարող են դիմել նաեւ իրավաբանական անձինք:

Իրավաբանական անձի անունից տրված բողոքը վերաբերում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտմանը, եթե իրավաբանական անձի իրավունքների խախտման հետեւանքով խախտվել են նաեւ նրա մասնակից ֆիզիկական անձանց (բաժնետերերի, փայատերերի, անդամների եւ այլն), ինչպես նաեւ նրա պաշտոնատար անձանց իրավունքներն ու հիմնարար ազատությունները, կամ այդ անձինք իրավաբանական անձի իրավունքների խախտման հետեւանքով վնաս են կրել, կամ առկա է այդ անձանց վնաս կրելու հնարավորությունը:

3. Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաեւ մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները:

4. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ խնամակալության եւ հոգաբարձության մարմինների, չեն կարող Պաշտպանին բողոքներ ներկայացնել:

5. Պաշտոնատար անձինք իրավունք ունեն Պաշտպանին դիմել միայն իրենց՝ որպես ֆիզիկական անձանց խախտված իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 9. Պաշտպանին տրվող բողոքը

1. Բողոքը պետք է Պաշտպանին տրվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին:

2. Սույն օրենքի գործողության առաջին տարում Պաշտպանին կարող են տրվել բողոքներ վերջին երեք տարվա ընթացքում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ: Բողոքի համար որեւէ հատուկ ձեւ չպետք է սահմանվի, սակայն բողոքում պետք է նշված լինեն դիմող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, կազմակերպական-իրավական ձեւը, գտնվելու վայրը: Բողոքում պետք է նշվեն նաեւ մարդու խախտված կամ խախտվող իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին տեղեկությունները:

Եթե դիմողն ունի գործի պարզաբանման եւ լուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր, ինչպես նաեւ բողոքի հետ կապված դատական կամ վարչական կարգով ընդունված ակտեր, ապա դրանք կարող են կցվել բողոքին:

3. Բողոքը ներկայացվում է գրավոր կամ բանավոր: Բանավոր բողոքների բովանդակությունը եւ սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված տվյալները պետք է արձանագրի պաշտպանը կամ նրա աշխատակազմը:

4. Ձերբակալված, նախնական կալանք կամ քրեական պատիժն իրականացնող հիմնարկներում պատիժը կրող, ինչպես նաեւ այլ հարկադրական պահման վայրերում գտնվող անձի կողմից Պաշտպանին ուղղված բողոքները եւ այլ փաստաթղթեր ենթակա չեն ստուգման ու որեւէ գրաքննության: Դրանք այդ հիմնարկների վարչակազմերի կողմից 24 ժամվա ընթացքում պետք է ուղարկվեն Պաշտպանին:

5. Պաշտպանին ուղղված բողոքներն ընդունող մարմինը պարտավոր է դիմողի պահանջով վերջինին տրամադրել հավաստագիր (ստացական)՝ բողոքի ստացման մասին:

6. Պաշտպանին ուղղված բողոքների համար պետական տուրք չի գանձվում:

Հոդված 10. Պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքները

1. Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաեւ դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան:

2. Պաշտպանը կարող է չքննարկել անանուն բողոքները եւ այն բողոքները, որոնք իր կարծիքով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման մասին չեն վկայում կամ պահանջ չեն ներկայացնում:

3. Եթե բողոքում բարձրացված հարցն իր բնույթով կարող է լուծել նաեւ պետական այլ մարմինը կամ պաշտոնատար անձը, եւ եթե այդ անձը նախապես չի քննարկել տվյալ գործը, Պաշտպանը բողոքը ներկայացնողի համաձայնությամբ կարող է բողոքը քննարկման նպատակով փոխանցել նրան՝ վերահսկողություն սահմանելով դրա քննարկման նկատմամբ:

Այս դեպքում դիմողը տեղեկացվում է, որ բողոքն այլ պաշտոնատար անձի է փոխանցվել:

Հոդված 11. Բողոքների ընդունումը

1. Բողոքը ստանալով՝ Պաշտպանը որոշում է ընդունում՝

1) բողոքը քննարկման ընդունելու մասին.

2) դիմողին իր իրավունքների եւ ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին.

3) բողոքը ներկայացնողի համաձայնությամբ բողոքը այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը.

4) բողոքը չքննարկելու մասին:

2. Բողոքի քննարկման մերժումը պետք է հիմնավորվի սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս Պաշտ-

պանը պարտավոր է դիմողին բացատրել այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը:

3. Պաշտպանն ընդունված որոշման պատճենն ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

4. Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

5. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններ կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը:

6. Բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

Հոդված 12. Բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրումը

1. Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է՝

1) անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նաեւ նախնական կալանքի եւ ազատազրկման վայրեր.

2) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել եւ ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

3) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից եւ պետական ծառայողներից, բացառությամբ դատարանների ու դատավորների, ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ.

4) իրավասու պետական մարմիններին հանձնարարել բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզելու ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ եւ պատրաստել եզրակացություններ.

5) ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական եւ այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաեւ այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է գործերի հարուցումը.

6) ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի եւ փաստաթղթի:

Պաշտպանի գրավոր որոշմամբ սույն մասի 1-ին, 2-րդ, 5-րդ եւ 6-րդ կետերով նախատեսված լիազորությունները կարող են իրականացնել նաեւ Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները կամ փորձագետների խորհրդի անդամները:

2. Պետական, առեւտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկություններին Պաշտպանը կարող է ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

3. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր եւ փաստաթղթեր, ինչպես նաեւ բողոքը քննարկելու համար անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Պաշտպանին անվճար եւ անարգել:

4. Պաշտպանի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ տեղեկությունները պետք է ուղարկվեն Պաշտպանին հնարավորինս արագ, հարցումն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան երեսուն օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ:

5. Իր լիազորությունների շրջանակում Պաշտպանն օգտվում է պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ կազմակերպությունների ղեկավարների եւ այլ պաշտոնատար անձանց, հարկադրական պահման վայրերի վարչակազմի մոտ անհետաձգելի ընդունելության իրավունքից:

Հոդված 13. Բողոքների վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների պարզաբանումները

1. Բողոքներն ուսումնասիրելիս Պաշտպանը պարտավոր է հնարավորություն տալ այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, պարզաբանումներ տալ բողոքի եւ կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաեւ հիմնավորել իրենց դիրքորոշումն ամբողջությամբ:

2. Բողոքի վերաբերյալ քննարկման արդյունքները, քննարկման ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնվում են այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են: Վերջինս պարտավոր է իր դիրքորոշումն ու պարզաբանում-

ները Պաշտպանին ուղարկել ուսումնասիրության արդյունքներն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Նշված ժամկետը կարող է երկարաձգել Պաշտպանը:

Հոդված 14. Բողոքների կամ դրանց բովանդակության հրապարակումը

1. Մինչեւ բողոքի վերաբերյալ Պաշտպանի կողմից վերջնական որոշման ընդունումը, քննարկման ենթակա բողոքները կամ դրանց բովանդակությունը հրապարակման ենթակա չեն:

2. Պաշտպանն իրավունք չունի բողոքի ուսումնասիրման ընթացքում իրեն հայտնի դարձած դիմողի կամ այլ անձանց մասին տվյալներ հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության:

Հոդված 15. Պաշտպանի կողմից ընդունվող որոշումները

1. Քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել հետեւյալ որոշումներից մեկը.

1) առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ նա տեսնում է մարդու իրավունքների եւ ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ եւ կատարման ենթակա հնարավոր միջոցառումները.

2) մարդու իրավունքների եւ ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտում.

3) դիմել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների խախտման հարցերով.

4) մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի եւ դրա պաշտոնատար անձի՝ օրենքին եւ այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատարան հայց ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը.

5) առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել պաշտոնատար այն անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, եւ (կամ) որը խախտել է սույն օրենքի պահանջները:

2. Պաշտպանը պարտավոր է բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվել են:

3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որն ստացել է Պաշտպանի՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված միջնորդությունը, պարտավոր է դա ստանալու օրվանից քսանօրյա ժամկետում ձեռնարկված միջոցառումների մասին գրավոր հայտնել Պաշտպանին: Անհրաժեշտության դեպքում Պաշտպանի համաձայնությամբ այս ժամկետը կարող է երկարաձգվել:

4. Պաշտպանը, բողոքի վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասում նշված իր որոշման պատճենը, որոշումն ընդունելու օրվանից հինգ օրվա ընթացքում, պարտավոր է ուղարկել բողոքն ուղարկած անձին:

Պաշտպանի որոշումը չի կարող խոչընդոտ դառնալ անձի կողմից իր իրավունքները եւ հիմնարար ազատություններն օրենքով չարգելված այլ միջոցներով պաշտպանելու համար:

5. Պաշտպանը կարող է անհրաժեշտության դեպքում հատուկ զեկույցներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Նախագահին եւ Ազգային ժողով:

6. Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր միջնորդությանը չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ Պաշտպանի որոշման եւ միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձանց պատասխանների հետ միասին, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:

Հոդված 16. Պաշտպանի կողմից տրվող պարզաբանումները

Պաշտպանն իրավասու է մարդու իրավունքների եւ ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության եւ վերլուծության արդյունքների հիման վրա, ուսումնասիրության արդյունքների ամփոփման նպատակով պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց ուղարկել խորհրդատվական բնույթի պարզաբանումներ եւ առաջարկություններ:

Հոդված 17. Պաշտպանի զեկույցը

1. Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության եւ երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Պաշտպանը զեկույցը ներկայացնում է նաեւ զանգվածային լրատվամիջոցներին եւ համապատասխան հասարակական կազմակերպություններին:

2. Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաեւ խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակային զեկույցներով:

Հոդված 18. Պատասխանատվությունը օրենքի պահանջների խախտման համար

Պաշտպանի որոշումների վրա ազդելու նպատակով նրա գործունեությանը միջամտելը կամ պաշտոնատար անձանց կողմից սույն օրենքով սահմանված Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը կամ սահմանված ժամկետներում նյութեր կամ փաստաթղթեր չներկայացնելը կամ Պաշտպանին սպառնալը կամ նրան վիրավորանք հասցնելն առաջացնում է պատասխանատվություն՝ դատավորի կամ դատարանի հանդեպ համանման խախտումների համար նախատեսված կարգով եւ չափով:

Հոդված 19. Պաշտպանի անձեռնմխելիությունը

1. Պաշտպանն իր լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում օժտված է անձեռնմխելիությամբ: Նրա նկատմամբ քրեական հետապնդում չի կարող հարուցվել, նա չի կարող կալանավորվել կամ ձերբակալվել: Պաշտպանը, նրա բնակարանը չեն կարող խուզարկվել առանց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի համաձայնության: Պաշտպանի անձեռնմխելիությունը տարածվում է նաեւ նրա ուղեբեռների, նամակագրության, Պաշտպանի օգտագործած կապի միջոցների, ինչպես նաեւ նրան պատկանող փաստաթղթերի վրա:

2. Պաշտպանին հանցանքի վայրում բռնելու դեպքում ձերբակալությունն իրականացնող պաշտոնատար անձն անմիջապես այդ մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին, որը պետք է որոշում ընդունի դրա հետագա կիրառման համար համաձայնություն տալու մասին: Նման համաձայնություն 24 ժամվա ընթացքում չստանալու դեպքում Պաշտպանն անմիջապես պետք է ազատ արձակվի:

3. Պաշտպանն իրավունք ունի հրաժարվելու իր պարտականությունները կատարելու կապակցությամբ իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին քրեական կամ քաղաքացիական գործով որպես վկա ցուցմունքներ տալուց:

Հոդված 20. Պաշտպանի սոցիալական երաշխիքները

1. Պաշտպանի աշխատավարձը հավասար է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի նախագահի աշխատավարձին:

2. Պաշտպանն ունի 30 աշխատանքային օր տեւողությամբ ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

3. Պաշտպանն իր լիազորությունների իրականացման ողջ ժամանակահատվածում ազատվում է ժամկետային զինվորական ծառայությունից, զորահավաքներից եւ վարժական հավաքներից:

Հոդված 21. Պաշտպանի անվտանգությունը

Պաշտպանը եւ նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Իրավասու պետական մարմինները Պաշտպանի դիմումի հիման վրա պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ՝ Պաշտպանի եւ նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու նպատակով:

Հոդված 22. Պաշտպանի տեղակալը

1. Պաշտպանն ունի տեղակալ, որը նշանակվում է Պաշտպանի առաջարկությամբ, սույն օրենքով Պաշտպանի նշանակման համար նախատեսված կարգով եւ պայմաններով, ունի անկախության եւ գործունեության նույն երաշխիքները:

2. Պաշտպանի տեղակալն իրականացնում է Պաշտպանի լիազորությունները Պաշտպանի հանձնարարությամբ, նրա բացակայության ժամանակ կամ Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում: Վերջին դեպքում Պաշտպանի տեղակալն օգտվում է Պաշտպանի համար նախատեսված բոլոր իրավունքներից, երաշխիքներից ու անձեռնմխելիությունից:

3. Պաշտպանի տեղակալի այլ լիազորություններ սահմանում է Պաշտպանը:

Հոդված 23. Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակը

1. Պաշտպանի գործունեությունն ապահովելու համար Պաշտպանը ստեղծում է աշխատակազմ:

2. Պաշտպանի աշխատակազմն իրականացնում է Պաշտպանի գործունեության իրավաբանական, կազմակերպչական, գիտական-վերլուծական, տեղե-

կատվական եւ այլ ապահովում:

3. Պաշտպանի աշխատակազմը պետական հիմնարկ է, որն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով եւ իր անվամբ կնիք:

Մարզերում կարող են ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանի մարզային ներկայացուցչություններ:

4. Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները քաղաքացիական ծառայողներ չեն եւ աշխատում են ժամկետային աշխատանքային պայմանագրերով: Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները պահպանում են պայմանագրի ժամկետը լրանալուց հետո նախկին ծառայությանն անցնելու երաշխիքը, եթե աշխատակազմում աշխատանքի անցնելուց առաջ քաղաքացիական ծառայողներ են եղել: Աշխատակազմում նրանց աշխատանքը հավասարեցվում է քաղաքացիական ծառայությանը:

5. Այն անձինք, ովքեր որեւէ պաշտոն են զբաղեցնում Պաշտպանի աշխատակազմում, չեն կարող մեղադրվել, հետաքննության ենթարկվել, ձերբակալվել, կալանքի ենթարկվել կամ դատի տրվել Պաշտպանի հանձնարարականի համաձայն իրենց պարտականությունները կատարելիս, որեւէ գործողության, կարծիքի կամ ընդունած որոշման համար: Եթե աշխատակազմում որեւէ պաշտոն զբաղեցնող անձը ձերբակալվում է, կալանքի է ենթարկվում կամ դատի է տրվում այլ հանգամանքի պատճառով, ապա մեղադրող մարմինը պետք է սահմանված կարգով եւ ժամկետում այդ մասին տեղեկացնի Պաշտպանին:

Հոդված 24. Պաշտպանի գործունեության ֆինանսավորումը

1. Պաշտպանը եւ նրա աշխատակազմը ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ առանձին տողով:

Պաշտպանի եւ նրա աշխատակազմի բյուջետային հայտը կազմում եւ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում Պաշտպանը: Հայտն առանց փոփոխության ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում:

Եթե Հայաստանի Հանրապետության կառավարության կարծիքով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում պետք է նախատեսել ավելի քիչ ծախսեր, քան ներկայացված է Պաշտպանի բյուջետային հայտում, ապա Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ Ազգային ժողով պետք է ներկայացնի նաեւ իր առաջարկն այդ ծախսերի վերաբերյալ եւ նվազեցման հիմնավորումը:

2. Պաշտպանն ինքնուրույն է մշակում եւ իրագործում իրեն վերապահված միջոցների ծախսման հաշվարկը:

3. Ֆինանսական հաշվետվությունը Պաշտպանը ներկայացնում է սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 25. Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

1. Պաշտպանը հաստատում է աշխատակազմի կառուցվածքը, նրա կանոնակարգը եւ անմիջականորեն ղեկավարում է աշխատակազմի աշխատանքները:

2. Ծախսերի հաշվարկի շրջանակներում Պաշտպանը որոշում է իր աշխատակազմի աշխատողների թվաքանակը եւ հաստիքացուցակը:

3. Աշխատակազմի ղեկավարման հետ կապված հարցերով Պաշտպանն արձակում է հրամաններ:

Հոդված 26. Փորձագիտական խորհուրդը

1. Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագետների խորհուրդ՝ կազմված մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

2. Փորձագիտական խորհրդի անդամներին հրավիրում է Պաշտպանը:

3. Փորձագիտական խորհրդի կազմը չի կարող գերազանցել 20 անդամը:

4. Փորձագիտական խորհրդի անդամները ներգրավվում են կամավորական հիմունքներով եւ իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական կարգով:

Հոդված 27. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը եւ 3-րդ մասը, 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետն ուժի մեջ են մտնում Պաշտպանի նշանակման եւ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմելու իրավունքի մասին դրույթները Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանելուց հետո:

2. Մինչեւ սահմանադրական փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

1) Ազգային ժողովի խմբերի եւ խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է Պաշտպանին.

2) տալիս է 6-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով պահանջվող համաձայնությունները:

Առաջին Պաշտպանի պաշտոնավարման ժամկետը լրանում է սույն հոդվածի առաջին մասով սահմանված սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեսուներորդ օրը:

Առաջին Պաշտպանը նշանակվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2004 թվականի հունվարի 1-ից:

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասեր

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻ ՕՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

Օմբուդսմենի ինստիտուտի կայացումը քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարական պետության կառուցման կարևոր նախադրյալներից է: Բնական է, որ հայ քաղաքական շրջանակներում օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման ·աղափարն սկսել է շրջանառվել դեռ անցյալ դարի 90-ական թվականներից: Մասնավորապես, Հայաստանի երրորդ հանրապետության առաջին սահմանադրության նախա·ծերից մեկում նախատեսված է եղել վերոհիշյալ ինստիտուտի ստեղծումը, ինչը, սակայն, չի իրա·ործվել. 1995 թ. ընդունված Սահմանադրությունը ո՛չ սահմանադրական, ո՛չ օրենսդրական ճանապարհով օմբուդսմենի ինստիտուտ ստեղծելու վերաբերյալ դրույթ չամրա·րեց: Մինչդեռ Եվրոպային և քաղաքակիրթ ու զար·ացած երկրներին անկասելիորեն ու նպատակադիր կերպով ինտե·րվող Հայաստանի համար ·նալով ակնհայտ էր դառնում օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման անհրաժեշտությունը:

Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, օմբուդսմենի ինստիտուտի ·աղափարը կարծես հասունանում էր ավելի արա·, քան երկիրը, որ պատրաստվում էր այդ այդ ·աղափարն իրականացնել: Մեր ձեռքի տակ է ՀՀ կառավարության մի որոշում՝ «««Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումն անհետաձ·ելի համարելու մասին»: Ահավասիկ.

«Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 75 հոդվածով (կամեցել են ասել՝ հոդված 75-ով՝ Լ. Ս.)՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Անհետաձ·ելի համարել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը և առաջարկել Հայաստանի Հանրապետության Ազ·ային ժողովին նշված օրենքի նախա·իծը քննարկել ու քվեարկել մեկամսյա ժամկետում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2000 թվականի ապրիլի 12-ից»[1]:

Համաշխարհային փորձը օմբուդսմենի մասին վկայում է, որ վերջինս օրենսդիր մարմնի կողմից ստեղծվող ինստիտուտ է և կոչված է առավելապես պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների խախտումները բացահայտելուն և բացառելուն: Նույն համաշխարհային փորձը վկայում է նաև, որ օմբուդսմենի մասին օրենք կարելի է ստեղծել նաև կառավարության նախա·ծով: Սակայն խոստովանենք, որ Հայաստանը ո՛չ Ֆրանսիա է, ո՛չ Ավստրիա, ո՛չ էլ Կանադա. Հայաստանը ժողովրդավարական պետություն դառնալուց դեռ աներևակայելիորեն հեռու, ժողովուրդը՝ թշվառ, իշխանությունները՝ կոռումպացված, արևելյան տիպի կիսաոստիկանական երկիր է: Եվ ընդամենը 3 տարի առաջ հայ քաղաքական միտքը մի՞թե այնքան խակ է եղել, որ պետական մարմնի կողմից մարդու իրավունքների հնարավոր խախտումները բացառելու նպատակով օրենքի նախա·իծ է «պատվիրել» նույն հավանական խախտող-պետական մարմնին, այն է՝ կառավարությանը: Կամ մի՞թե կառավարությունն է եղել այնքան խակամիտ, որ այդպիսի օրենքի նախա·իծ ստեղծելու նախաձեռնություն է հանդես բերել: Ի՞նչ անուն տալ այն իրողությանը, որ այս հակատրամաբանական ·որձելակերպին համաձայնել է ՀՀ Նախա·ահը՝ իր «Վավերացնում եմ»-ը դնելով վերոբերյալ որոշման վրա: Արդ ժամանակն է հարցնել՝ ի՞նչ եղավ այս «խստապահանջ» որոշումն իր «Վավերացնում եմ»-ով, պարոնա՛յք վարչապետ և Նախա·ահ: Եթե այդ որոշումը մեռելածին էր, արդյո՞ք չարժի մտածել ժամանակին, այն է՝ ոչ ժամանակավրեպ որոշումներ կայացնելու ձեր կարողությունների մասին: Ո՞ւր մնաց «մեկամսյա» ժամկետը: Դուք այդքան դյուրությա՞մբ եք որոշումներ ընդունում, վավերացնում և մոռանում:

Այո, վերոբերյալ հապշտապ, ընդամենը «մեկամսյա ժամկետ» պարտադրող որոշումից հետո ավելի քան երկուսուկեսամյա անբացատրելի լռություն է տիրում օմբուդսմենի ինստիտուտի ստեղծման առնչությամբ, մինչև որ 2002 թ. դեկտեմբերի 12-ին պատ·ամավորական նախաձեռնությամբ (նախկին ·ումարման Աժ պատ·ամավորներ Տ. Թորոսյան, Վ. Խաչիկյան, Լ. Ալեքսանյան) շրջանառության մեջ է դրվում խնդրո առարկա օրենքի նախա·իծը: Նախա·իծը շուտով անցնում է օրենք դառնալու բոլոր փուլերը, և, ի վերջո, ս/թ հոկտեմբերի 21-ին Ազ·ային ժողովն ընդունում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, որը և ուղարկվում է ՀՀ Նախա·ահին՝ ստորա·ման: Թռուցիկ ծանոթությունն իսկ նախա·ահական ստորա·ման «պատրաստ» օրենքին երևան է բերում բազմաթիվ լեզվաոճական, իրավաբանական սխալներ ու բացթողումներ: Այս ամենի «արդյունքում»՝ ·րվում է սույն հոդվածը, որը, հեղինակի մտահղացմամբ, հրապարակվելու ենթակա չէր, այլ ուներ օրենքի բազմաթիվ սխալներն ուղղելու, շտկելու, վերացնելու նպատակ:

Հոդվածը տպա·ության հանձնելուց առաջ՝ նոյեմբերի 11-14-ին, էլեկտրոնային փոստով խմբա·ությունը նամակներ հղեց ՀՀ Նախա·ահի մամլո քարտուղարին, աշխատակազմի ղեկավարին, անձամբ Նախա·ահին՝ հորդորելով չստորա·րել օրեն-

քը: Խմբա·րությանը պատասխանեցին, որ դիտողությունները տեղին են, և մենք հուսով էինք, թե օրենքը չի ստորա·րվի. կվերադարձվի Ազ·ային ժողով՝ լրամշակման: Սակայն շուտով պարզվեց, որ նոյեմբերի 15-ին ՀՀ Նախա·ահը ստորա·րել է օրենքը: Եվ այսպես, մենք ունեցանք թերություններով, անկատարություններով, սխալներով լեցուն ևս մեկ օրենք, որին մեր օրենսդիրը շուտով անդրադառնալու է՝ «ի փոփոխումն» կամ «ի լրացումն», և այդ անդրադարձները բազում են լինելու՝ այնքան, որքան սխալ է բովանդակում սույն օրենքը: Անշուշտ, կա նաև այն հավանականությունը, որ օրենքը «կկորչի» մյուս թերի-կիսա·րա·ետ օրենքների դաշտում և ընդամենը կամ ևս մի պաշտոնյայի ծնունդ կտա, որը կնշանակվի Նախա·ահի առաջարկով, զեկույցներ կտա Նախա·ահին և, բնականաբար, նաև կպաշտպանի Նախա·ահին (օրենքի «լեզվով» ասած՝ այդ թվում՝ մարդուն)՝ ի պաշտոնե:

Հարկ ենք համարում վերն ասվածին հավելել հետևյալը: ՀՀ Նախա·ահի աշխատակազմի հետ էլեկտրոնային «·րա·րություններում», մտավախություն ունենալով, թե մեր շահա·ր·ռվածությունն օրենքի կատարելությամբ կարող է սխալ ընկալվել, կամ պարզապես մեր նամակներն ստացող մարդիկ կարող են օրենքի ոչ բավարար ·րա·իտության վերաբերյալ ահազան·երին չհավատալ, երկու մեջբերմամբ փորձեցինք ապացուցել մեր ճշմարտացիությունը: Մասնավորապես նշեցինք «իրավասությունները վայր դնել» սխալը և խիստ խճողուն-անիմաստ մի նախադասություն հոդված 9-ից, որոնց մասին հոդվածում խոսվելու է: Նախա·ահի աշխատակազմից պատասխանեցին, որ մեր դիտողությունները տեղին են: Ստացանք նաև Նախա·ահի մամլո քարտուղար Ա. Քոչարյանի արձա·անքը՝ ան·լերեն.«You are kindly reguested to forward your concrete proposals and amendments wiech will be sent to the attantion of competent people». (Խնդրում ենք ուղարկել Ձեր կոնկրետ առաջարկությունները և փոփոխությունները, որոնք կներկայացվեն բանիմաց-իրավասու (կոմպետենտ) մարդկանց ուշադրությանը): Մենք վերն արդեն նշված փոփոխություններն ու առաջարկություններն ուղարկեցինք, թեև տարօրինակ էր, որ, ըստ պրն Քոչարյանի պատասխանի, դեռևս կային «իրավասու մարդիկ», որոնց պետք էին այդ փոփոխություններն ու առաջարկությունները: Մինչդեռ այդ «իրավասու մարդիկ» կարող էին լինել միայն Աժ պատ·ամավորները՝ այն պարա·այում, եթե Նախա·ահն օրենքը վերադարձներ լրամշակման:

Ս/թ նոյեմբերի 15-ին, ինչպես նշեցինք, ՀՀ Նախա·ահը ստորա·րել է օրենքը: Մենք ձեռք բերեցինք (http://www.parliament.am) օրենքի այդ տարբերակը, և, զարմանալի բան. օրենքը ·րեթե անփոփոխ կրկնում էր մեր ձեռքի տակ եղածը, միայն թե արդեն առանց մեր մատնանշած երկու սխալների: Մեզ այլ բան չէր մնում անել, քան ենթադրել, թե օրենքը Նախա·ահի աշխատակազմի չ·իտես որ ծառայության կողմից «հուշումով»խմբա·րվել է, որի իրավունքը ոչ ոք չուներ: Կրկնում ենք՝ ՈՉ ՈՔ չուներ:

Ակամա պիտի ենթադրենք նաև, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը ստորա·րվել է ապօրինաբար: Այս պարա·այում դյուրին է ·ուշակել, թե ինչպես է ·որձելու այսպես ընդունված օրենքը:

Արդ «սկսենք այնտեղից, որտեղից հարկ է սկսել»:

Հոդված 1-ը (Ընդհանուր դրույթներ) ամրագրում է. «Սույն օրենքը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու կարգը, լիազորությունները, գործունեության պայմանները և երաշխիքները»: Նախ՝ նկատենք, որ հոդվածում «Մարդու իրավունքների պաշտպանը» միանգամայն ճիշտ սկսվում է մեծատառով, և տարօրինակ է, որ Մի Պաշտպանի երդման տեքստում (հոդված 3) այն փոքրատառով է: Այնուհետև՝ մեջբերված հոդվածում տարակույսների տեղիք են տալիս «պաշտոնից ազատելու կարգը» և «երաշխիքները» բառ-արտահայտությունները: Օրենքի հետագա ամբողջ շարադրանքում՝ որևէ հոդվածի որևէ մասում[2] կամ կետում չի «սահմանվում» Պաշտպանին «պաշտոնից ազատելու կարգը». հոդված 6-ում (Պաշտպանի լիազորությունների դադարումը) միայն սահմանվում են Պաշտպանի լիազորությունների դադարման ժամանակը, այդ լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմք-պայմանները և դադարեցման կարգը: Բնավ այն կարծիքին չենք, թե «պաշտոնից ազատելը» և «լիազորությունները դադարեցնելը» իրավաբանորեն համարժեք են և մեկը մյուսով ամբողջությամբ ու բոլոր պարագաներում փոխարինելի:

Հոդված 1-ի ձևակերպումից անորոշ է մնում, թե «երաշխիքները» վերաբերում են «գործունեությա՞նը», թե՞ «Պաշտպանին»: Իմաստային առումով որքան որ տարբեր են սրանք («գործունեությունը» և «Պաշտպանը»), նույնքան էլ տարիմաստ կարող են լինել «երաշխիք» բառի գործածությունները: Մինչդեռ հայտնի է, որ օրենքը տարիմաստություն կամ երկիմաստություն չի սիրում: Արդ՝ ամենակարևորը. եթե նույնիսկ «երաշխիքը» վերաբերում է «Պաշտպանին» կամ «գործունեությանը», այս ձևակերպմամբ այն անիմաստ է այնպես, ինչպես անիմաստ են «Պաշտպանի երաշխիքները» և «գործունեության երաշխիքները»: Եթե ամրագրված լինեին, դիցուք, «Պաշտպանի անձեռնմխելիության երաշխիքները» կամ «գործունեության ազատության երաշխիքները», «երաշխիք» բառի ներառումը հոդված իմաստ կունենար: Ասվածին հավելենք, որ օրենքի հոդվածներից մեկում իսկապես խոսվում է երաշխիքի մասին, բայց դա սոցիալական երաշխիք է, մինչդեռ մեր համոզմամբ, միայն այդ չէ, որ ի նկատի են ունեցել օրենքի հեղինակները: Հոդված 1-ի վերաբերյալ նաև ասենք, որ այն ի սկզբանե՝ մինչ խորհրդարանական վերջին ընթերցումն ու Նախագահին հանձնումը, ունեցել է, մեր կարծիքով, համեմատաբար ճիշտ ձևակերպում («Սույն օրենքը սահմանում է Մարդու իրավունքների**

պաշտպանի՝ պաշտոնի նշանակման կարգը ...»): Մինչդեռ այս բանաձևով՝ «սույն օրենքը սահմանում է մարդու իրավունքների պաշտպանին պաշտոնում նշանակելու ... կարգը», ստացվում է, որ Պաշտպանը նախապես կա, արդեն որոշված - հայտնի է, մնում է նրան «կարգով» նշանակել: Մեջբերման մեջ «պաշտպանի(ն)» բառի փակագծյալ ն հոդը որոշակիություն է ենթադրում (այն հենց այդպես էլ կոչվում է՝ որոշիչ հոդ), որից էլ տրամաբանորեն հետևում է Պաշտպանի՝ նախապես որոշակի կամ որոշված լինելը:

Որոշակի տարակույսների տեղիք է տալիս հոդված 2-ը (Մարդու իրավունքների պաշտպանը) իր սկիզբով. «Մարդու իրավունքների պաշտպանը (այսուհետ՝ Պաշտպան) ինքնուրույն և անկախ պաշտոնատար անձ է ...»: Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների Պաշտպան բառակապակցությունը Պաշտպան բառով փոխարինելը պետք է կատարվեր այս բառակապակցության առաջին գործածության դեպքում (ինչպես ընդունված է), այն է՝ հոդված 1-ում[3]: Կարծում ենք նաև, որ Պաշտպանը ածականների (ինքնուրույն, անկախ) կարիք չունի, երբ նրա անկախությունը սահմանված է առանձին հոդվածով (հոդված 5): Ավելին՝ հոդված 2-ում և հոդված 5-ում Պաշտպանի՝ անկախ լինելու ամրագրումներն անհարկի և գրեթե նույնական կրկնվում են. «... որը (Պաշտպանը՝ L.U.), Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն, իրականացնում է ...» (հոդված 2). «Պաշտպանն ... անկախ է, ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին ու նորմերին» (հոդված 5):

Հոդված 2-ը սահմանում է, որ Պաշտպանը «... իրականացնում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից խախտված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը»: Տարակուսելի է, թե ինչո՞ւ են «պաշտոնատար անձինք» առանձնացվում (այդ է հուշում և շաղկապը) իրենց իսկ ղեկավարած «մարմիններից». մի՞թե «պետական մարմին»-ը չի ենթադրում նաև այդ մարմնի ղեկավար պաշտոնյա կամ պաշտոնյաներ: Հոդվածի վերոբերյալ սահմանումը, մեր կարծիքով, ակամա «հնարավորություն է ստեղծում» մարդու իրավունքների խախտման համար: Որևէ պետական մարմնի պաշտոնատար անձի քարտուղարուհի կամ գործավար ապօրինաբար կարող է մերժել քաղաքացու որևէ օրինական խնդիրքը (դիցուք՝ ինչոր տեղեկանք ստանալու), և Մարդու իրավունքների պաշտպանն այս օրենքով չի կարողանա պաշտպանել տեղեկանք խնդրողի ոտնահարված իրավունքը, քանի որ գործավար-քարտուղարուհին «պետական մարմին» և «պաշտոնատար անձ» չէ:

Օմբուդսմենի ընտրության եվրոպական (ոչ միայն) հարուստ փորձը հավաստում է, որ առավել նշանակալից ու արդյունավետ է օմբուդսմենի այնպիսի ընտրությունը, որ կայանում է օրենսդիր մարմնի կողմից և ընտրողների ճնշող մեծամասնության հավանությամբ: Արդ դիտարկենք, թե ինչ է մեզ «մատուցում» հոդված 3-ը. «Պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ից ավելիով՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից»: Նկատենք, որ վերոնշյալ եվրոպական փորձը, ինչի նմանակմանը կամ գոնե ընդօրինակմանն է միտում մերօրյա հայրենական օրենսդրական միտքը, այս հոդվածում հաշվի չի առնվել. 3/5-ը (60%) ընտրողների ճնշող մեծամասնություն չէ. օրենսդրական լեզվով՝ այն ընդամենը պարզ մեծամասնություն է: Հիշենք կրկին, որ գերադասելի է օմբուդսմենի ընտրությունն օրենսդիր մարմնի կողմից: Վերոբերյալ հոդվածը, թվում է, եվրոպական այս փորձի կիրարկումն է. օմբուդսմենին ընտրում է խորհրդարանը: Բայց ինչպե՞ս: Նախագահի և պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից առաջարկված թեկնածուներից: Նորանկախ Հայաստանի կարճ պատմությունն արդեն հասցրել է ապացուցել, որ մեր երկրում օրենսդիր մարմինը (Ազգային ժողովը), մի քանի ցնցումների բերած քաղաքական վերադասավորումները բացառած, գրեթե միշտ Նախագահի խորհրդարանն է: Ուրեմն՝ համարեա՛, թե բացառվում է օմբուդսմենի ընտրությունը. վերջինս հիրավի դառնում է քաղաքական նշանակովի պաշտոնյա, և դա երևում է խնդրո առարկա օրենքից, որը թեև սահմանում է. «Պաշտպանին նշանակում է Ազգային ժողովը ...», բայց բառային խաբկանքից վերանալով՝ առանց տողատակի էլ ակներև է, որ Պաշտպանին փաստորեն նշանակում է Նախագահը՝ Ազգային ժողովի միջոցով:

Պիտի տարակուսենք նաև հոդված 3-ի մաս 1-ի առնչությամբ. «Պաշտպանի պաշտոնում նշանակվում է ... քաղաքացին, ով ունի ... մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ»: Նախ՝ վերոգրյալ մեջբերումն իզուր-անտեղի «սերտել» ու կրկնում է «հիմնարար» բառը, ապա և՝ ո՞վ, ինչպե՞ս, ե՞րբ, ի՞նչ չափանիշներով է քննելու՝ Պաշտպանի թեկնածուն ունի՞ վերը նշված գիտելիքներն ու փորձը, թե ոչ: Պաշտպանի նշանակման ընթացքում խորհրդարա՞նն է «քննություն» անցկացնում. մի՞թե վերջինս իրավազոր է և, առավել ևս, ի զորու է այդպիսի քննություն անցկացնել:

Կարծում ենք՝ իրավաբանական կոպիտ բացթողում-թերություն է օրենքում այն դրույթի չգոյությունը, որը կհստակեցներ Պաշտպանի ընտրության մեխանիզմները մի պարագայում, երբ Պաշտպան չի նշանակվում «Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների 3/5-ից ավելիով»: Հարկ է, որ հարևանների փորձից դասեր քաղած հայ օրենսդիրը նախատեսեր սույն հանգամանքը և ամրագրեր համապատասխան դրույթ(ներ): Այդօրինակ դրույթ(ներ)ի բացակայությունը ցուցանում է մեր օրենսդրի քաղաքական կարճատեսությունը: Մի՞թե նրանք տեղյակ չէին հարևան երկրներում (Ռուսաստան, Վրաստան) ստեղծված խորհրդարանական ճգնաժամերին, երբ օմբուդսմենների նշանակումները դարձնելով քաղա-

քական շահարկումների առարկա՝ նույն այդ նշանակումները երկար ժամանակ «հրվում էին» փակուղի: «Երբեմն Օմբուդսմենի նշանակման ... համար սկզբնական խոչընդոտ է հանդիսացել այն, որ խորհրդարանական մարմինն ի վիճակի չի եղել հավաքել համապատասխան մեծամասնություն՝ առաջին Օմբուդսմենին նշանակելու համար: Սա պատահել է, օրինակ, Ռուսաստանում և Վրաստանում: Օրենքի հաստատումը Ռուսաստանում մի քանի տարի տևեց, և Օմբուդսմենի նշանակման գործընթացը երկարեց, քանի որ տարբեր կուսակցություններ և ֆրակցիաներ երկար ժամանակ չէին կարողանում համաձայնության գալ թեկնածուի շուրջ: Վրաստանում հանրապետության Նախագահի կողմից առաջադրված տարբեր թեկնածուներ մերժվում էին խորհրդարանի կողմից»[4]:

Մի Պաշտպանի նոր ինստիտուտը, Պաշտպանին և նրա պաշտոնն ի սկզբանե կարևորելու իմաստով, ըստ իս, հարկ է, որ երդման տեքստը սկսվի «Ստանձնելով մարդու իրավունքների Պաշտպանի պաշտոնը» և ոչ թե «պարտականությունները» ձևակերպմամբ: Ի դեպ, պարտականությունների փոխարեն հենց պաշտոնն է իր երդման մեջ ստանձնում, դիցուք, ՀՀ Նախագահը[5]: Պաշտոնն ստանձնելու առումով ՀՀ Նախագահը, կարծում ենք, ոճական ոչ մի առավելություն չունի Պաշտպանի նկատմամբ:

Մեր համոզմամբ՝ երդման տեքստում ավելորդ է վերջին նախադասությունը. այն, թող ներվի ասել, պիոներական երդման հետ ինչ-ինչ զուգորդություններ է առաջացնում, ապա նաև՝ ճիշտ չէ ասել՝ «պարտականություններս կկատարեմ անաչառ(որեն)»: Փակագծի որեն-ը մեր հավելածն է, քանզի անաչառ որոշիչն ամենից առաջ առարկա որոշյալ է ենթադրում, մինչդեռ մեջբերված հատվածում այն կկատարեմ բայական անդամի լրացումն է, ուստի հարկ է, որ մակբայակերտ որեն ածանցով գործածվի:

Հոդված 3-ի ավարտ-նախադասությունում՝ «Նույն անձը Պաշտպանի պաշտոնում չի կարող նշանակվել միմյանց հաջորդող երկու ժամկետից ավելի», ընդգծված բառը, կարծում ենք, իր «տեղում» չէ, և հարկ է, որ փոխարինվի իրար հոմանիշ բառով, քանզի միմյանց-ը մեր լեզվամտածողության մեջ միմյանց հետ կապված անձինք է ենթադրում, ոչ թե իրեր (քերականական իմաստով), որպիսիք են ժամկետները: Կարծում ենք՝ ճիշտ չէ նույն հոդված 3-ում գործածված «բարձր հեղինակություն» արտահայտությունը. հեղինակությունը կարող է լինել «մեծ», բայց ոչ «բարձր»:

Օրենքի հոդված 4-ի (Պաշտպանի՝ այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը) 2-րդ և 3-րդ մասերը, մեր կարծիքով, ժամանակագրական հակասության մեջ են: «Պաշտպանը չի կարող... մասնակցել նախընտրական քարոզչությանը» (մաս 2). «Պաշտպանը պարտավոր է սույն օրենքի պահանջներին չհամապատասխանող գործունեությունն ընդհատել պաշտոնավարության անցնելուց հետո ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում» (մաս 3): Արդ պատկերացնենք-ենթադրենք, թե ինչ-որ ընտրություն է նշանակված 2004 թ. փետրվարի 24-ին, իսկ Պաշտպանը նշանակվել է ն/թ փետրվարի 12-ին: Ըստ այս հոդվածի մաս 2-ի՝ Պաշտպանը, որը «նախընտրական քարոզչության մասնակցելու» իրավունք չունի, 3-րդ մասով լիուլի կօգտվի այդ իրավունքից, քանզի պարտավոր է «օրենքի պահանջներին չհամապատասխանող գործունեությունն ընդհատել պաշտոնավարության անցնելուց հետո՝ ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում» միայն: Կարծում ենք՝ սույն օրենքի ապագա բարեփոխիչներին կամ լրամշակողին հարկ կլինի վերացնել այս հակասությունը:

Հոդված 4-ի մաս 2-ի հետևյալ միտքը՝ «Պաշտպանը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ», մենք հակված ենք ընդունել որոշ վերապահությամբ, քանզի նույն հոդվածի մաս 3-ում Պաշտպանից պահանջվում է «ընդհատել սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող գործունեությունը»: Հայ օրենսդիրն ակներևաբար բավարար պատկերացում չունի, թե ի՛նչ է կուսակցությունը, և ի՛նչ է նշանակում լինել կուսակցության անդամ: Անշուշտ, եթե անդամ լինելը սոսկ նշանակեր գրանցված լինել որևէ կուսակցության ինչ-որ ցուցակներում կամ գրպանում ունենալ կուսանդամատոմս, այս պարագայում իհարկե՛ կարելի է «ընդհատել ... գործունեությունը» կամ կուսակցության անդամակցությունը: Սակայն մի՞թե որևէ կուսակցության անդամության չափանիշը ոչ թե անդամի՝ ինչ-ինչ գաղափարախոսության կրող լինելն է, այլ ինչ-որ անդամատոմս ունենալը, որը «վայր դնելով»՝ կարելի է անդամակցությունն «ընդհատել»: Այսպես լինո՞ւմ է: Մի՞թե: Եթե մեր ապագա Պաշտպանն այդպիսի դյուրությամբ մոռանալու-դավաճանելու է իր կուսակցական գաղափարները, չկա՞, արդյոք, վտանգ-հավանականություն, թե նա կդավաճանի նաև մարդու իրավունքների և ազատությունների գաղափարներին: Կարծում ենք՝ հարկ է, որ ապագա Պաշտպանը լինի մինչ նշանակումը և տևական մի ժամանակահատվածում անկուսակցական մարդ, եթե, իհարկե, օրենսդիրն իսկապես շահագրգռված է նրա անկողմնակալությամբ ու մարդու իրավունքների պաշտպանության գործին նվիրվածությամբ:

Որոշ լեզվաոճական սխալներ կան հոդված 5-ի մաս 2-ում: «Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ, այդ թվում՝ նաև որպես վկա ...»: Սխալը մատնանշելու համար օգտվենք օրինակից. «Այս օրենքի բոլոր հոդվածներում, այդ թվում՝ հոդված 5-ում, սխալներ կան»: Բերված օրինակում դյուրին է տեսնել, որ հոդված 5-ը ներառված է բոլոր հոդվածներում, ուստի կարելի է ասել՝ այդ թվում, այն է՝ բոլոր հոդվածների թվում: Հիմա փորձենք հասկանալ, թե վերոբերյալ մեջբերումում «նաև որպես վկա»-ն այդ ի՞նչ «այդ թվում» է: Շատ որոնելու հարկ չկա, քանզի չկա այն ամբողջությունը, որի թվում կարող էր լինել «որպես վկա»-ն: Առաջարկում ենք քննվող նախադասությունից «օտարել» «այդ թվում»-ը: Միաժամանակ առաջարկում ենք (բնականաբար՝ օրենսդրին) մտածել նույն մասում տեղ գտած «փաստաթղթի էություն» բառակապակցության մեջ էություն բառի գործածության հիմնավորվածության և, թերևս, «էությունը» «բովանդակություն» բառով փոխարինե-

լու անհրաժեշտության մասին: Նույն հոդվածի նույն մասում «Պաշտպանը պարտավոր չէ բացատրություններ տալ ... իր մոտ գտնվող բողոքի մասին» թերի մեջբերված նախադասության մեջ բոլորովին տեղում չէ «բողոք» բառը: Անընմբռնելի է, թե ինչպես կարող է բողոքը գտնվել մեկի մոտ. բողոքագիրը, բողոքարկուի դիմումը (օրենսդիրն, ի դեպ, տարօրինակաբար և համառորեն հրաժարվել է այս բառերից. չի՞ իմացել) միանգամայն բնականորեն կարող է գտնվել մեկի մոտ, սակայն ոչ բողոքը, որով օրենսդիրն ամբողջ օրենքում փաստաթուղթ է հասկացել, մինչդեռ որպես այդպիսին, կրկնում ենք, կարող էր դիտվել բողոքագիրը:

Օրենքի հոդված 6-ում (մաս 2, կետ 3) հայտնվել է մի արտահայտություն, որ առնվազն տարօրինակ է. «... նա (Պաշտպանը՝ Լ. Ս.) իր իրավասությունները վայր դնելու մասին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով հրաժարական է ներկայացրել»: Եթե վայր դնելու խնդիր կա, կարծում ենք, իրավաբանորեն ճիշտ է լիազորությունները վայր դնել արտահայտությունը, և, միաժամանակ, առաջարկում ենք վերոբերյալ մեջբերման «իրավասությունները» փոխարինել «լիազորություններով»[6]: Հոդված 6-ի մաս 3-ում ամրագրված է. «... Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին հարցը Ազգային ժողովի քննարկմանը կարող են ներկայացնել սույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն առաջադրման իրավունք ունեցող անձինք»: Նախ՝ նշենք, որ հոդված 3-ը բովանդակում է 3 մաս, և դրանցից միայն 2-րդն է վերաբերում «առաջադրման իրավունք ունեցող անձանց», ուստի օրենսդրին հարկ էր լիներ առավել ստուգախոս. ապա՝ հոդված 3-ի մաս 2-ը նշում է ոչ թե առաջադրման, այլ առաջարկման իրավունք ունեցող անձանց մասին: Կարծում ենք՝ անհրաժեշտ է ընդգծված առաջարկմանը փոխարինել առաջադրմամբ, մանավանդ որ վերջինս մեր օրենսդրական բառապաշարում կայունացել է, և նոր առաջարկների կարիք չկա:

Հոդված 6-ի մաս 3-ից վերոբերյալ մեջբերումը լեզվական առումով անհստակ է և կարիք ունի մեկնաբանությունների, մասնավորապես՝ ծագող որոշ հարցերի պատասխանների: Օրինակ՝ Պաշտպանի լիազորությունների դադարեցման հարցը կարող են ԱԺ-ում քննարկման ներկայացնել միայն ՀՀ Նախագահը և ԱԺ պատգամավորների այն 1/5 -րդը (կամ 1/5-նե՞րը), որոնք մասնակցել են Պաշտպանի թեկնածուի «առաջարկմանը», թե՞ ԱԺ յուրաքանչյուր պատգամավոր: Սա էական հարցադրում է, ուստի ենթադրում է ստույգ ու հստակ պատասխան:

Մեզ տարօրինակ թվաց հոդված 6-ի մաս 3-ի վերջին նախադասությունը. «Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների կեսից ավելիով»: Մինչև պարզելը, թե նախադասությունն ինչո՞վ կամ ինչո՞ւ է տարօրինակ, նշենք, որ խնդրո առարկա հոդվածի մաս 2-ը սահմանում է.

«...Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են միայն, եթե՝

...

7) Պաշտպանը մահացել է»: Նախ՝ նկատենք, որ «դադարեցվում են միայն, եթե» լեզվական կառույցում միայն բառն իմաստային ոչ մի գործառույթ չունի. «դադարեցվում են, եթե»-ն արդեն ենթադրում է միայն, ուստի վերջինիս գործածության կարիք չկա: Ապա՝ այն պայմանների թվում, երբ Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, նշված է նաև «Պաշտպանը մահացել է» պայմանը: Արդ եկեք համադրենք վերն ասվածները և հարցնենք (բնականաբար՝ օրենսդրին). եթե «Պաշտպանը մահացել է», նրա լիազորությունների դադարեցման համար ինչո՞ւ է անհրաժեշտ ԱԺ «պատգամավորների ընդհանուր թվի ձայների կեսից ավելին»: Այլ կերպ ասած՝ օրենսդիրը հնարավո՞ր է համարում, որ «Պաշտպանը մահացել է», բայց ԱԺ-ն չի ընդունում այդ փաստը, և պատգամավորների «կեսից ավելին» մահացած Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման օգտին չի քվեարկում:

Օրենքը տարօրինակաբար չի բովանդակում մեխանիզմ-դրույթներ, որոնցով կկարգավորվեր նախկին Պաշտպան-նոր Պաշտպան անցումը: «Դիտարկենք» հետևյալ ենթադրական, գործնականում նույնիսկ անխուսափելի իրավիճակը: Լրացել է Պաշտպանի պաշտոնավարության ժամկետը, և հարկ է նոր Պաշտպանի նշանակման խնդիր լուծել: Նախկին Պաշտպանի լիազորությունների դադարումից շաբաթներ կամ ամիսներ շարունակ նոր Պաշտպան չի նշանակվում: Ո՞վ է այս ամբողջ ընթացքում կատարելու Պաշտպանի պարտականությունները. նախորդ Պաշտպանի տեղակա՞լը, սակայն չէ՞ որ նրա՝ պաշտոնի նշանակման մեխանիզմը գրեթե նույնն է, ինչ Պաշտպանինը, որից էլ ենթադրվում է, թե նախորդ Պաշտպանի հետ «դադարել են» նաև նրա տեղակալի լիազորությունները: Ըստ օրենքի (հոդված 6)՝ Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման պարագայում է նրա տեղակալը կատարում Պաշտպանի պարտականությունները, մինչդեռ լիազորությունների ոչ վաղաժամկետ, այլ ժամանակին դադարման դեպքում մենք ունենք օրենսդրական անորոշություն, որի հետևանքով երկիրն ու ժողովուրդն անորոշ ժամանակով մնում են անՊաշտպան:

Օրենքի հոդված 7-ում (Պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքները) մեր կողմից փոքր-ինչ արդեն քննարկված այդ թվում արտահայտության զարմանալի մի գործածություն է հայտնվել. «Պաշտպանը քննարկում է ... մարդու (այդ թվում՝ քաղաքացու) իրավունքների ... խախտման վերաբերյալ բողոքները»: Հիշենք, որ օրենքի նախորդ և հաջորդ հոդվածներում միշտ գրվել է «մարդու և քաղաքացու»: Թե ինչու է վերոբերյալ հոդվածում հարկ եղել մարդու (այդ թվում՝ քաղաքացու) (այսինքն՝ մարդու թվում՝ քաղաքացու) քիչ է ասել անհեթեթ ձևակերպումը, հայտնի չէ:

Նույն հոդվածի 2-րդ պարբերության մեջ ի կատար ածել հարադրական բայի՝ նախօրինակը չունեցող (այդպես կարծում ենք) մի գործածություն է սպրդել (այդպես ենթադրում ենք), որ պարզապես ապշեցնում է: Պարբերությունն-նախադասությունը բավական ծավալուն է, ուստի մեջբերենք մեզ հարկավոր հատվածը. «... երաշխավորելով ... միջազ-

գային իրավունքի նորմերով նախատեսված դատավարության իրավունքի պատշաճ ի կատար ածումը»:

Ցավոք, այդ թվում-ը, ի կատար ածում-ը օրենքում բառերի և բառակապակցությունների՝ տարօրինակ իմաստափոխությունների ենթարկվելու և գործածությունների եզակի դեպքեր չեն: Օրենքի մի քանի հոդվածներում հայտնվել է, օրինակ, «ցանկացած» բառը՝ յուրաքանչյուր, ամեն, ամեն մի նշանակությամբ, իսկ այդպիսի նշանակության մասին մեզ չի հուշում հայերեն ոչ մի բացատրական կամ հոմանիշների բառարան: Հոդված 8-ում (Պաշտպանին դիմելու իրավունքը) սահմանված է. «Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ ...»: Ավելորդ է ասել, որ այս բառն օրենսդրական բառապաշարում հայտնվել է խոսակցական հայերենից, և նրա հայտնությունն օրենքում (ընդ որում՝ ոչ միայն խնդրո առարկա) անօրեն է, ապօրինի: Առաջարկում ենք սույն օրենքը լրամշակողներին՝ «ցանկացածի» փոխարեն գործածել «յուրաքանչյուր», «ամեն մի» կամ այլ հոմանիշ, միայն ոչ «ցանկացած»:

Օրենքն ուսումնասիրելիս սկսում ես մտածել, թե նրա հեղինակները և խորհրդարանական ընթերցումների ընթացքում մշակող- խմբագրողները, մեղմ ասած, այնքան էլ լավ չեն տիրապետում հայերենին, այնքան էլ տեղյակ չեն մեր լեզվի բառապաշարի հոմանիշային հարստությանը: Տեղյակ լինելու պարագայում նրանք, անշուշտ, չէին գրի. «Պաշտպանը .... պետք է երաշխավորվի ....հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ»: Որ առանձին-ը մեկուսի-ն է, օրենսդիրը կարող է համոզվել, դիցուք, Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ով (Երևան, 1967, էջ 78), իսկ որ «... երաշխավորվի ... հնարավորությամբ...» լեզվական կառույցն արհեստական-խճողուն է, մենք որևէ հղում անելու հնարավորություն այս պարագայում, ավաղ, չունենք, քանզի մեջբերվածի ոչ հայերեն լինելը կարելի է փաստարկել հայ լինելով՝ հայերեն մտածելու և արտահայտվելու կարողությամբ միայն:

Օրենքում լեզվական-իրավաբանական անհստակություն կա ոչ միայն բառերի, այլև առանձին բառակապակցությունների իմաստն ու նշանակությունը ճշգրտելու տեսակետից: Մի քանի հոդվածներում գործածվում է «ձերբակալման վայր(եր)» բառակապակցությունը, որով օրենսդիրն անտարակույս ի նկատի է ունեցել այն վայր(եր)ը, ուր պահվում են ձերբակալվածները: Մինչդեռ «ձերբակալման վայր» կարող են հասկացվել (առավելապես այդպես էլ հասկացվում են) այն վայր(եր)ը, ուր կատարվել է ձերբակալությունը: Այս դեպքում, անշուշտ, մենք «գործ ունենք» տեղ ցույց տվող բազմաթիվ վայրերի հետ, ուր կարող էր կատարվել ձերբակալում գործողությունը (փողոց, տուն, զբոսայգի, ճանապարհ, անտառ, հանցագործության վայր և այլն): Այս պարագայում «Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ձերբակալման վայրեր...» (հոդված 8) ձևակերպումն անիմաստ է: Մեզ թվում է, որ տեղին չէ նաև զորամիավորումներ բառի գործածությունը. շատ ավելի ճիշտ կլիներ, եթե գործածվեր զորամասեր բառը:

Ի դեպ, իրավաբանական տեսակետից խոցելի է հոդված 8-ի մաս 1-ը. «Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից և գործունեությունից»: Իրավամբ տպավորություն է ստեղծվում, թե ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ ստեղծելով՝ մեր օրենսդիրները նրան միաժամանակ օժտել են համաշխարհային օմբուդսմենի լիազորություններով: Չէ՞ որ մեր Պաշտպանին կարող է դիմել եթովպացին (անկախ ազգությունից), Թուրքիայի թուրք քաղաքացին (անկախ քաղաքացիությունից), տոկիոցին (անկախ բնակության վայրից) ... Ըստ վերոբերյալ ձևակերպման՝ հայոց օմբուդսմենին կարելի է դիմել աշխարհի յուրաքանչյուր երկրից: Մինչդեռ, դիցուք, Եվրոպական օմբուդսմենին կարող է դիմել յուրաքանչյուր ֆիզիկական անձ, որը, անկախ ազգությունից, ռասայից, քաղաքացիությունից ... և այլն, բնակվում է Եվրոպայի որևէ երկրում (տե՛ս «Օմբուդսմենը և ժողովրդավարական հասարակությունը» գիրքը, Երևան 2003, էջ 144): Ուրեմն՝ օմբուդսմենին դիմելու իրավունքի ձեռք բերման առումով խիստ կարևոր է բնակվելու հանգամանքը, որը, սակայն, մեր օրենսդիրների թեթև ձեռքով կամ «Հռոմի պապից ավելի կաթոլիկ» երևալու մղումով, ներմուծվել է խնդրո առարկա օրենքի համապատասխան հոդված, և մեր ապագա Պաշտպանը, կրկնում ենք, ձեռք է բերել համաշխարհային օմբուդսմենի լիազորություններ:

«Բողոքի համար որևէ հատուկ ձև չպետք է սահմանվի, սակայն այնտեղ (հատուկ ձև -այնտեղ՝ Լ. Ս.) պետք է նշված լինեն դիմող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը ... ինչպես նաև խախտված կամ խախտվող իրավունքների ու հիմնարար ազատությունների մատնանշումը»: Այս ծավալուն-խճողված նախադասությունը եթե «բեռնաթափենք» (կամ «բառաթափենք») այս պահին մեզ ոչ հարկավոր բառերից, կստանանք «նշված լինեն... մատնանշումը» անհեթեթությունը[7]:

Ի դեպ, քանի որ խոսվեց խոսքը «բեռնաթափելու» մասին, նշենք, որ այս օրենքում օրենսդրի լեզվամտածողությունն այնքան էլ ճկուն ու «տնտեսող» չէ: Օրենքի տարբեր հատվածներում դեգերող «դիմող ֆիզիկական անձ», «բողոքն ուղարկած անձ», «դիմող անձ» և այլ նույնանշանակ բառակապակցությունների փոխարեն ինչո՞ւ ոչ մի տեղ չի նշված բողոքարկու, որ և՛ գեղեցիկ է, և՛ պատշաճ:

Օրենքում միօրինակություն չկա նաև բացարձակ քանակական թվականների գործածության առումով. մի դեպքում՝ 35 (հոդված 3), 6 (հոդված 3), 14 (հոդված 4), 3 (հոդված 11), մյուս դեպքում՝ մեկ (հոդված 6), երեսուն (հոդված 12)[8], տասնհինգ (հոդված 13) և այլն, և այլն:

Հոդված 8-ի (Պաշտպանին դիմելու իրավունքը) մաս 1-ի երրորդ պարբերությունը կարելի է համարել իրավաբանական ոչ գրագիտություն, եթե, անշուշտ,

չընդունենք, որ այն լեզվական անգրագիտություն է. «Պաշտպանին իրավունք ունի դիմել ծերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում պատիժ կրող, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձը»: Դյուրին է նկատել, որ վերոբերյալ ձևակերպմամբ՝ օրենսդիրը պատիժ է ընկալում-ներկայացնում ծերբակալումը և նախնական կալանքը, կամ, որ առավել անհեթեթ է, կան հիմնարկներ, որոնք ծերբակալում, նախնական կալանք են իրականացնում:

Հոդված 8-ի մաս 1-ում, մեր կարծիքով, բոլորովին ավելորդ է երկրորդ պարբերությունը. «Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ունի իր նախաձեռնությամբ անարգել այցելել զորամիավորումներ, ծերբակալման վայրեր, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներ, ինչպես նաև հարկադրական պահման այլ վայրեր՝ դրանցում գտնվող անձանց դիմումներն ընդունելու համար»: Ընդգծումը պարզում է Պաշտպանի կամ նրա ներկայացուցչի՝ վերոնշյալ «վայրեր» այցելելու բուն նպատակը՝ «... դիմումներ ընդունելու համար»: Արդ տեսնենք Պաշտպանի կամ նրա ներկայացուցչի այս այցելությունների նպատակահարմարությունը՝ նույն այս օրենքի հաջորդ՝ հոդված 9-ի կետ 4-ի մի նախադասությունն ի նկատի ունենալով. «Դրանք (համապատասխան հարկադրական պահման վայրերում գտնվող կամ պատիժը կրող անձանց բողոքագրերը՝ Լ.Ս.) այդ հիմնարկների վարչակազմերի կողմից 24 ժամվա ընթացքում պետք է ուղղարկվեն Պաշտպանին»: Եթե օրենքն ամրագրել է բողոքագիրը Պաշտպանին ուղարկելու այսքան ստույգ (24 ժամ), ուրեմն և՝ պարտադիր կատարման ենթակա դրույթ, էլ ինչո՞ւ է Պաշտպանն անում իր վերոնշյալ այցելությունները, մանավանդ որ վերջնանպատակը «դիմումներն ընդունելն» է: Այս նպատակով, հիշենք, ըստ հոդված 8-ի կետ 1-ի՝ Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչն իրավունք ուներ այցելել «զորամիավորումներ»՝ նաև այստեղ «գտնվող անձանց» (գտնվող անձա՞նց) դիմումներն ընդունելու համար: Այնուհետև՝ հոդված 9-ի մաս 4-ից և ընդհանրապես օրենքից պարզ չի դառնում՝ «զորամիավորումներում... գտնվող անձինք» իրավունք ունե՞ն հանդես գալ որպես բողոքարկու, և նրանց դիմում-բողոքները «վարչակազմը» (հրամանատարությունը) պարտավո՞ր է «24 ժամվա ընթացքում ուղարկել Պաշտպանին», թե ոչ: Հայտնի է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն առավելապես խախտվում են հենց «զորամիավորումներում», և այս առնչությամբ է, որ օրենքը պիտի գործի հստակ ու անխափան: Մինչդեռ վերը նշված էական բացթողմանը (դիտավորյա՞լ) հետևում է ևս մի կարևոր «պակասություն». օրենքում խոսվում է «24 ժամվա ընթացքում ուղարկելու մասին», բայց չէ՞ որ սա տարտամ, անորոշ, կեղծիքների ու խարդախությունների տեղիք տվող դրույթ է. զինվորի բողոքագիրը կուղարկվի, այն տեղ չի հասնի, մեղավոր կդառնա, դիցուք, փոստային ծառայությունը, այն է՝ ոչ ոք: Օրենքը, մեր կարծիքով, այս առումով պետք է լիներ առավելագույն չափով հստակախոս, դիմում-բողոքագրերն ըստ պատկանելվույն հասցնելու մեխանիզմները պետք է մշակած լիներ մանրամասնաբար ու մանրակրկիտորեն: Թե չէ տարրական կրթությամբ մի գեներալ ծեծ ու ջարդի կենթարկի բարձրագույն կրթությամբ մի նորակոչիկի, և դու, հարգելի ոչ գրագետ օրենք, ոչնչով օգնել չես կարողանա: Այսինքն՝ օգնել կկարողանաս, բայց՝ ոչ նորակոչիկին: Գուցե հենց այդ նպատակո՞վ են քեզ ստեղծել: (Կներես, որ հետդ դու-ով եմ խոսում. քեզ հորինել են այնքան ապաշնորհ-անկատար, որ Դուք-ով դիմել բոլորովին չեմ կարողանում):

Հոդված 9-ի մաս 3-ում Պաշտպանը փոքրատառով է, ինչո՞ւ. «Բանավոր բողոքի բովանդակությունը և սույն հոդվածի 2-րդ մասում նախատեսված տվյալները պետք է արձանագրի պաշտպանը կամ նրա աշխատակազմը»: Պաշտպանի փոքրատառ գրությունը գուցե պայմանավորված է նրա «կարգավիճակի» փոփոխմա՞մբ. չէ՞ որ նշված մասում Պաշտպանն ընդամենը ... արձանագրող է:

Հոդված 9-ի մաս 5-ում շփոթված են հավաստագիր և ստացական փաստաթղթերը, ավելի ստույգ՝ ստացականը փակագծերում նշվում է որպես հավաստագրին փոխարինող փաստաթուղթ, մինչդեռ այդ բառերի իմաստներից էլ միանշանակ է, որ դրանք տարբեր փաստաթղթերի անվանումներ են:

Հոդված 11-ի մաս 5-ում տեղ է գտել «Պաշտպանն իրավասու է դիմելու ...» արտահայտությունը, մինչդեռ օրենքի այլ հոդվածներում «Պաշտպանն իրավասու է դիմել, այցելել, քննարկել ...» և այլ բաներ անել՝ առանց ու-ի (հմմտ. հոդված 12-ի մաս 1-ի 1-6 կետերը): Սա, իհարկե, սխալ լինելուց բացի նաև լեզվական փնթիություն է: Նույն այս մասում սահմանված է. «... Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց, որպեսզի նրանք նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը»: Տարօրինակ է, թե մարդը (մարդիկ), թեկուզ և «պաշտոնատար», ինչպես կարող են նպաստել «հանգամանքների ուսումնասիրմանը», եթե դրանք դեռ «բացահայտման ենթակա» են:

Հոդված 12-ն անվանված է՝ «Բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրումը»: Նախ՝ «բարձրացված հարցերից» տողերիս հեղինակը «կոմունիստական հոտ» է առնում և ուրախ չէ դրա համար, ապա՝ ինչո՞ւ ենք ճգնում և երբեմն բարձրացնում նույնիսկ անբառնալի բաներ, այս դեպքում՝ հարցեր, երբ նույն հարցերը (կամ խնդիրները) բարձրացնելու փոխարեն կարելի է արծարծել:

Հոդված 13-ի մաս 1-ը նշում է. «... Պաշտպանը պարտավոր է հնարավորություն տալ պետական մարմնին ... պարզաբանումներ տալ... արդյունքների վերաբերյալ ...»: Ահա՛ թե երբ էր պետք տալ բառի փոխարեն գրել տալու (... հնարավորություն տալ... պարզաբանումներ տալու...):

Կարծում ենք՝ շտկելու կարիք ունի հոդված 15-ի (Պաշտպանի կողմից ընդունվող որոշումները) մաս 1-ը. «Քննարկված բողոքի արդյունքների հիման վրա Պաշտպանը պարտավոր է ընդունել հետևյալ որոշումներից մեկը.»: (Մեջբերումն ավարտվում է մի-

ջակետով, մինչդեռ ճիշտ է ավարտել բութով, քանզի հետևյալ բառով ենթադրվում է թվարկում (այդպես էլ կա), որի դեպքում բութ է գործածվում, իսկ միջակետով միանգամայն ճիշտ առանձնանում են հոդվածի կետերը): Սակայն հոդված 15-ի վերոբերյալ մասը մեջբերելիս մենք կամեցել ենք ընթերցողի ուշադրությունը բևեռել ոչ կետադրական վրիպման վրա. մեզ ավելի հետաքրքրել է «քննարկված բողոքի արդյունքներ» բառակապակցությունը և հետաքրքրել է այնքանով, որքանով տարօրինակ-անիմաստ է թվացել «բողոքի արդյունքներ» արտահայտությունը: Մենք ավելի քան համոզված ենք, որ օրենսդրի մտքին եղել է «բողոքի քննարկման արդյունքներ» բառակապակցությունը, բայց մտքինը մինչև հասել է գրչին, նշված բառակապակցության մեջ բառի անիմաստ դրափոխություն է տեղի ունեցել, և օրենքի հիշված հոդվածի նշված մասում հայտնվել է մատնանշված անիմաստությունը: Առաջարկում ենք վերը մեջբերվածի հետևյալ խմբագրումը. «Բողոքի քննարկման արդյունքների հիման վրա ...», մնացյալը՝ ինչպես տեքստում:

Հոդված 17-ի մաս 2-ը սահմանել է. «Հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի ... դեպքերում Պաշտպանը կարող է հանդես գալ հրապարակային զեկույցներով ...»: Մեջբերումն ընդհատենք և մեր կողմից հավելենք՝ Պաշտպանը, իհարկե, կարող է հանդես գալ հրապարակային զեկույցներով, բայց այս օրենքի հեղինակն իրավունք չուներ (բոլորովին չուներ) այս կիսագրագետ լեզվով հանդես գալ հրապարակայնորեն, քանզի հարցերի դեպքերում-ը անիմաստ, անհեթեթ բառակապակցություն է, այնքան անհեթեթ, որ մենք էլ ենք մեզ զգում անհեթեթ վիճակում՝ այսքան անհեթեթություններ մատնանշելով:

Տարօրինակ է հոդված 21-ը (Պաշտպանի անվտանգությունը). «Պաշտպանը և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո»: Չևակերպման այս անորոշությունից կարելի է մակաբերել, որ ՀՀ հասարակ քաղաքացիները չեն գտնվում պետության պաշտպանության ներքո: Պետությունն ինչո՞վ է պաշտպանում Պաշտպանին: Անշուշտ, օրենքներով: ՀՀ Սահմանադրությունն ամրագրել է «Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով» (հոդված 16): Արդ, ի՞նչ տարբերություն Պաշտպանի և ՀՀ սովորական քաղաքացու՝ պետության պաշտպանության ներքո գտնվելու միջև: Կարծում ենք՝ ոչ մի: Այս պարագայում կամ հոդվածն է ավելորդ (օրենքի հոդվածի մասին է խոսքը), կամ պետք է այն վերաձևակերպել: Կարծում ենք՝ ոչինչ չի ավելացնում հոդվածի երկրորդ նախադասությունը. «Իրավասու պետական մարմինները Պաշտպանի դիմումի հիման վրա պարտավոր են ձեռնարկել միջոցառումներ Պաշտպանի և նրա ընտանիքի անդամների անվտանգությունն ապահովելու նպատակով»: Հետաքրքիր է՝ այսօրինակ պաշտպանությունից արդյո՞ք չի օգտվում ՀՀ նույն սովորական քաղաքացին:

Ակնհայտորեն խմբագրման կարիք ունի հոդված 22-ը (Պաշտպանի տեղակալը), մասնավորապես մաս 1-ը. «Պաշտպանն ունի տեղակալ, որը նշանակվում է Պաշտպանի առաջարկությամբ, սույն օրենքով Պաշտպանի նշանակման համար նախատեսված կարգով և պայմաններով ...»: Հիշենք, որ «Պաշտպանի նշանակման համար նախատեսված կարգի և պայմանների» մեջ է մտնում ՀՀ Նախագահի և Աժ պատգամավորների առնվազն 1/5-ի կողմից Պաշտպանի թեկնածուների առաջարկումը, մինչդեռ վերոբերյալ մասով թեկնածուի առաջարկման նախագահական ու պատգամավորական իրավունքը վերապահվում է նաև Պաշտպանին, հետևաբար՝ տեղակալը թեև նշանակվում է Պաշտպանի առաջարկությամբ, բայց ոչ «Պաշտպանի համար նախատեսված կարգով և պայմաններով»: Ի դեպ, վերոբերյալն ապացույց է այն բանի, որ օրենքը խոցելի է ոչ միայն լեզվաոճական, իրավաբանական տեսակետից, այլև տրամաբանության, ավելի ստույգ՝ դրա երբեմնակի բացակայության առումով:

Հոդված 22-ի անվանումը կառաջարկեինք փոխել: Անշուշտ, ընկալումը և հակազդեցությունը սուբյեկտիվ է, բայց մենք դեմ ենք տեղակալ բառի գործածությանը. այդ բառից և՛ խորհրդային ժամանակների, և՛ չինովնիկական, և՛ հին-հիմնարկային «հոտ է գալիս». տհաճ է: Կկամենայինք առաջարկել երկրորդ Պաշտպան անվանումը, որը, մեր կարծիքով, ավելի ճիշտ է արտացոլում այդ պաշտոնատար անձի գործառույթներն ու լիազորությունները:

Օրենքում քիչ չեն դեպքերը, երբ ինչ-ինչ թվարկման անհրաժեշտություն կա, և այդ թվարկումը չի կատարվում առաջնահերթությունները (կամ կարևորությունները) հաշվի առնելով: Հոդված 25-ի (Պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը) մաս 2-ը սահմանում է. «Ծախսերի հաշվարկի շրջանակներում Պաշտպանը որոշում է իր աշխատակազմի աշխատողների թվաքանակը և հաստիքացուցակը»: Ավելի անհեթեթ բան դժվար է երևակայել. եթե «ծախսերի հաշվարկի շրջանակներում» է որոշվում «աշխատողների թվաքանակը», ուրեմն ի՞նչ հիմունքով է կատարվել «ծախսերի հաշվարկը»: Ապա և՝ անտրամաբանական չէ՞ նախ որոշել, թե քանի՞ աշխատող է պետք, հետո նոր միայն՝ ի՞նչ աշխատող: Տարրական տրամաբանությունը հուշում է (օրենսդրի խուլ ականջին), որ Պաշտպանը պետք է նախ հաստիքացուցակ կազմի, ըստ որի՝ նաև որոշի աշխատողների թվաքանակը [9]:

Հոդված 19-ի (Պաշտպանի անձեռնմխելիությունը) մաս 1-ում գրված է. « ... նա (Պաշտպանը՝ Լ.Ս.) չի կարող կալանավորվել կամ ձերբակալվել»: Եթե այս գործողությունները դիտարկենք ժամանակագրական հաջորդականության մեջ, պարզ է, որ նախ պիտի նշվի ձերբակալվելու, ապա՝ կալանավորվելու մասին: Դրանք տարբեր են ոչ միայն ժամանակային հարթության մեջ:

Օրենքում, որքան էլ տարօրինակ է, շփոթված են իրավասություն և լիազորություն իրավաբանական եզրերը, ավելին՝ երբեմն իրավասությունը դիտվում է որպես լիազորություն, ինչն անթույլատրելի է: (Այդպիսի մի շփոթի մասին արդեն խոսվել է): Հոդված 12-ի (Բողոքում բարձրացված հարցերի ուսումնա-

սիրումը) մաս 1-ը նշում է. «Բողոքը քննարկման ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո Պաշտպանը բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով իրավասու է ...»: Այնուհետև թվարկվում են իրավասությունները՝ անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ (1-ին կետ), ստանալ նյութեր ու փաստաթղթեր (2-րդ կետ), ստանալ պարզաբանումներ (3-րդ կետ): Տարօրինակ է, որ սրանք դիտարկվում են իբրև իրավասություններ, բայց առավել տարօրինակ է, որ ասված ու չասված իրավասություններից հետո օրենսդիրը կետ 1-ը եզրափակում է. «Պաշտպանի գրավոր որոշմամբ սույն մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված լիազորությունները կարող են իրականացնել նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները...»: Հեշտ է նկատել իրավասություն – լիազորություն անտրամաբանական անցում-շփոթը, և արդ դյուրին է դառնում կասկածել՝ արդյո՞ք խնդրո առարկա օրենքն անցել է ոչ միայն լեզվական, այլ մասնագիտական-իրավական մշակման անհրաժեշտ փուլերով:

Օրենքում բազմաթիվ լեզվական անճշտություններ կան, որոնցից մի քանիսի մասին արդեն խոսվել է: Հավելենք ևս մեկ-երկուսը՝ առավել, այսպես կոչված, ակնհայտ-ակնբախները: Հոդված 13-ի մաս 2-ում ամրագրված է. «Վերջինս (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի պաշտոնյան, որի գործողությունները (կամ անգործությունը) բողոքարկվում են) պարտավոր է իր դիրքորոշումն ու պարզաբանումները պաշտպանին ուղարկել ...»: Կարևոր չէ, թե ե՛րբ, ինչո՞ւ կամ ինչպե՞ս են դրանք ուղարկվում. կարևորն ու անհեթեթն այն է, որ կարող է ուղարկվել նաև ... դիրքորոշումը:

Հոդված 23-ի (Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակը) մաս 2-ը սահմանում է. «Պաշտպանի աշխատակազմն իրականացնում է Պաշտպանի գործունեության իրավաբանական, կազմակերպչական, գիտական-վերլուծական, տեղեկատվական և այլ ապահովում»: Անշուշտ, մոտավորապես գլխի ընկնել կարելի է՝ խոսքն ինչի մասին է, բայց պետք չէ խճողել և ասել՝ իրականացնում է ապահովում. սա և՛ անիմաստ է, և՛, օրենքի նախագահական ստորագրումից հետո, ցավալի:

Հոդված 24-ի (Պաշտպանի գործունեության ֆինանսավորումը) մաս 2-ը սահմանում է. «Պաշտպանն ինքնուրույն է մշակում և իրագործում իրեն վերապահված միջոցների ծախսման հաշվարկը»: Նախ՝ արդյո՞ք ճիշտ է ասել՝ մշակում և իրագործում է ... հաշվարկը (հաշվարկը մշակում կամ իրագործո՞ւմ են), ապա՝ այս օրենքի հեղինակներն ու մշակողներն ակներևաբար լավ չգիտեն «վերապահել» բառի իմաստը, և եթե այն ընբռնում են «հատկացնել» ուղղակի իմաստով, որ երևում է մեջբերումից, ապա տարաբախտաբար սխալվում են: Բացի այդ՝ ի՞նչ է նշանակում «վերապահված միջոցներ»[10]:

Օրենքում կան տարօրինակ - անիմաստ կրկնություններ. օրինակ՝ հոդված 23 (Պաշտպանի աշխատակազմի կարգավիճակը), մաս 1. «Պաշտպանի գործունեությունն ապահովելու համար Պաշտպանը ստեղծում է աշխատակազմ»: Մենք այնքան էլ համաձայն չենք «ստեղծում է աշխատակազմ» արտահայտությանը, բայց մեջբերյալ նախադասությունում անիմաստ է Պաշտպանի-Պաշտպանը կրկնությունը (տավտոլոգիան), մինչդեռ պետք էր ընդամենը գրել. «Իր գործունեությունն ապահովելու համար Պաշտպանը ստեղծում է աշխատակազմ» կամ, եթե անհրաժեշտ էր, որ Պաշտպան բառը լիներ մասի սկզբում, կարելի էր գրել. «Պաշտպանն իր գործունեությունն ապահովելու համար ստեղծում է աշխատակազմ»:

Խմբագրման (ինչպես ցույց կտրվի ստորև՝ համառոտման) կարիք ունի հոդված 26-ը: Նախ՝ հոդվածի 1-ին մասում արհեստականորեն միջանկյալ դարձված բառակապակցություն կա՝ ստորակետերով բաժանված. «Պաշտպանը (,՞) խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով (,՞)կարող է ստեղծել փորձագետների խորհուրդ ...»: Փորձագետների խորհուրդ բառակապակցությունն ամբողջ օրենքի համատեքստում լիովին հասկանալի է, մինչդեռ վերոբերյալ մեջբերման ավարտի կախման կետերում արտահայտված է մեր օրենսդրի անվստահությունը՝ հասարակ քաղաքացիների (մեր) կողմից իրենց իրավաբանական խորհրդատվությունները ընբռնելու կարողության նկատմամբ, ուստի քաղաքացիասեր օրենսդիրը շարունակում է. «... կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում գիտելիքներ ունեցող անձանցից»: Անշուշտ, փորձագետների խորհուրդ խորհրդատվությունն այլևս մեկնաբանված է և հասարակ քաղաքացիներիս համար՝ ընբռնելի:

Հոդված 23-ը սահմանել է. «Պաշտպանի աշխատակազմը պետական հիմնարկ է, որն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվամբ կնիք»: Անտարակույս, գովելի է հայ օրենսդրի նրբա կամ մանրանկատությունը, որ հոգացել է նույնիսկ Պաշտպանի կնիքի մասին, թեև վերևի մեջբերումից պարզ չէ՝ «իր անվամբ կնիք»-ն ի՞նչ է նշանակում՝ աշխատակազմի՞ կնիք, թե հիմնարկի կնիք. կնիքի վրա պիտի գրվի «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպա՞ն», թե՞ «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Վահան Վահանյան». չէ՞ որ անվանումն այլ բան է, անունը՝ այլ: Մեր օրենսդրին հուշենք ևս մի այլ բան. կնիքներին սովորաբար «դաջվում է» պաշտոնի **անվանումը,** ոչ թե պաշտոնյայի **անունը,** ինչն անթաքույց – ուղղակիորեն պարտադրում է «անվամբ կնիք»-ը:

Ավելացնենք, որ հոդված 22-ի երկրորդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ ՀՀ Նախագահը Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու կապակցությամբ.

«2) տալիս է 6-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով պահանջվող համաձայնությունները»:

Ընթերցողը տեսնում է, անշուշտ, թե ըստ հարկի որքան մանրախնդիր է հայ օրենսդիրը, երբ խոսելով ՀՀ Նախագահին վերապահվող ինչ-ինչ համաձայնություններ տալու իրավունքի մասին, ստույգ նշում է. «... 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով պահանջվող»: Ընթերցողը, բնականաբար, այսքանից հետո վստահ է, որ Նախագահը երբ «տալիս է ... պահանջ-

վող համաձայնությունները» «6-րդ հոդվածով», այն է՝ առանց առանձին մասերի նշումների, ուրեմն ամբողջ հոդվածը վերաբերում է Պաշտպանի լիազորությունների դադարեցմանը վերաբերող համաձայնություններին (ԱԺ-ի, այս հոդվածի պարագայում՝ Նախագահի): Մինչդեռ հոդված 6-ի հենց առաջին մասը բացարձակապես որևէ կապ չունի «համաձայնություններ» տալու հետ, «համաձայնություններ» տալու անհրաժեշտություն բացարձակորեն չկա էլ: Ահա այդ մասը. «1. Պաշտպանի լիազորությունները դադարում են լիազորությունների ժամկետը լրանալուն հաջորդող օրվանից»: Ուրեմն օրենսդիրն ակամա ստում է, երբ նշում է, թե ՀՀ Նախագահը «2) տալիս է 6-րդ հոդվածով.... պահանջվող համաձայնությունները»:

Ի դեպ, ձևակերպումային անմիօրինականությունն ակնառու է նաև օրենքները «վերնագրելիս». համեմատենք հոդված 7-ի «Պաշտպանի քննարկմանը ենթակա բողոքները» և հոդված 10-ի «Պաշտպանի կողմից քննարկման ոչ ենթակա բողոքները»: Տարօրինակ է, ինչո՞ւ չէր կարելի գրել՝ «Պաշտպանի քննարկմանը ոչ ենթակա բողոքները»:

Օրենքի «պսակը», անտարակույս, վերջին՝ հոդված 27-ն է (Անցումային դրույթներ): Օրենքի նախագիծը կազմողները (հոդվածում հիշված պատգամավորները) ժամանակին վստահ են եղել, որ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ ստեղծել արտոնող սահմանադրական դրույթ է արտացոլվելու սպասվող (այն ժամանակ) ՀՀ Սահմանադրության բարեփոխված տարբերակում, որ այդ տարբերակն ամենայն հավանականությամբ ընդունվելու է, ուստի հոդված 27-ն անվանել են անցումային դրույթներ՝ չկասկածելով, որ իբր բարեփոխվող Սահմանադրության նախագծում նախ՝ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտ ստեղծելու վերաբերյալ մի կեսբերան ակնարկ է ընդամենը լինելու, որը հուշելու է, թե այդ ինստիտուտը ստեղծվելու է օրենքով, իսկ այդ նախագիծը ընդունվելու պարագայում նույնիսկ անցումային դրույթները բովանդակազրկվելու են: Առավել ևս բովանդակազրկվում են, եթե չի ընդունվել «բարեփոխված» Սահմանադրության նախագիծը, և ՀՀ Նախագահի համար անցումային դրույթները դարձել են Պաշտպան նշանակելու լիազորությունը լրիվությամբ իրեն փոխանցելու՝ փոխանցումային դրույթներ: «Մինչև սահմանադրական փոփոխությունները (,°) Հայաստանի Հանրապետության Նախագահը՝

1) Ազգային ժողովի խմբերի և խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո նշանակում է Պաշտպանին»:

Այս խոցելի հոդվածի երկրորդ կետն առավել է զարմանալի, քանզի լիովին, Ազգային ժողովին շրջանցելով (միա՞յն)՝ ՀՀ Նախագահին է վերապահում Պաշտպանի լիազորությունները վաղաժամկետ և միանձնյա որոշմամբ դադարեցնելու և այլ միապետական լիազորություններ:

Արդ. քանի որ Նախագահը երկրի թիվ 1 քաղաքական պաշտոնյան է, հետևաբար, թեկուզ «Ազգային ժողովի խմբերի և խմբակցությունների (թե՞ խմբակցությունների և խմբերի՝ Լ.Ս.) հետ խորհրդակցելուց հետո», այնուամենայնիվ, Պաշտպանի նշանակումը դառնում է քաղաքական նշանակում, Պաշտպանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը՝ քաղաքական որոշում, ինչին դեմ է նույնիսկ սույն ոչ այնքան գրագետ օրենքի տրամաբանությունը, ինչին դեմ է նաև օմբուդսմենի ինստիտուտի համաշխարհային փորձը:

Եզրափակենք: «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում լեզվական թերությունները, սխալները, բացթողումները, ինչպես նաև իրավաբանական անճշտություններն ավելի շատ են, քան ներկայացվեցին սույն հոդվածում: Չենք թաքցնում. մենք շահագրգռված էինք այս օրենքի ոչ միայն սոսկ գոյությամբ, այլև կատարելությամբ: Դրան էլ միտված էր այս հոդվածը, և հեղինակը հույս ուներ, որ իր մատնանշած թերությունները եթե ոչ հաշվի կառնվեին, ապա գոնե կքննարկվեին:

---

[1] Իրավական տեղեկատվական որոնողական համակարգ (ԻՐՏԵԿ), ՀՀ կառավարության որոշում N 172. «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի ընդունումն անհետաձգելի համարելու մասին, 18.11.2003, ոչ պաշտոնական հրատարակություն:

[2] «Հոդված», «մաս», «կետ», «ենթակետ», «պարբերություն» բառերն իրավաբանական որոշակի արժեք ունեցող եզրեր են (տերմիններ), սակայն հայ օրենսդրության մեջ սրանց միարժեք գործածությունը բոլոր իրավական փաստաթղթերում չէ, որ պահպանված է, թեև 2002 թ. ապրիլի 29-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել և գործողության մեջ է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը: ՀՀ Սահմանադրությունում, օրինակ, «մասը» «պարբերությունն» է (հոդված 71), «կետը»՝ x) նշումը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 41-ը (Իրավական ակտերի մասերը) հստակորեն սահմանում է մասը՝ նշելով նաև դրա կետադրման եղանակները: Սակայն, որքան էլ տարօրինակ է, նույն օրենքը հակասում է ինքն իրեն: Նշված հոդվածի կետ կամ մաս 5-ը նշում է. «Հոդվածները և կետերը համարակալվում են արաբական թվանշաններով»: Այս իմաստով՝ սույն մեջբերումը կետ է, ոչ թե մաս: Բայց նույն հոդվածի կետ 2-ը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության օրենքների հոդվածները կարող են բաժանվել «մասեր» կոչվող համարակալված կամ չհամարակալված պարբերությունների»: Քիչ է, որ աղավաղվել է «պարբերություն» կոչվող իրավաբանական եզրը, շփոթվել են նաև «կետ», «մաս» եզրերը, քանզի երկուսն էլ, ըստ օրենքի, համարակալվում են, ուրեմն ո՞րն է դրանց տարբերությունը: Շփոթի ևս մեկ օրինակ. ՀՀ ընտրական օրենսգրքի (03.08.2002 թ., կատարված բոլոր լրացումներով և փոփոխություններով) հոդված 18-ի 8-ը՝ արտահայտված 1 պարբերությամբ, դիտվել է «կետ» (հմմտ. նույն օրենսգրքի հոդված 109-ի կետ 1-ի ենթակետ 4 հղումը): Հոդվածի՝ արաբական թվանշանով սկսվող և կից կետիկով հատվածը միմիայն «կետ» է դիտարկվում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում: Ակներևաբար դարձյալ շփոթված են «կետ», «մաս» եզրերը, ինչը զարմանալի է, մանավանդ եթե ի նկատի ունենանք, որ ՀՀ օրենքների ընդունման ընթացակարգը բավական խիստ է. դրանք անցնում են փորձաքննություն (նաև՝ արդարադատության նախարարությունում), ինչը պիտի բացառեր վերոնշյալ թերությունները:

[3] Հմմտ., օրինակ, ՀՀ Նախագահի աշխատակազմի կանո-

նադրություն, կետ (կամ հոդված) 1, ՀՀ ՊՏ, N 37 (212), 28 Օգոստոսի 2002, նաև՝ ՀՀ քաղաքացիական դատավարության մասին օրենսգիրքը, ՀՀ ՊՏ, N 20 (53) 9 Սեպտեմբերի 1998, հոդված 1: (Ի դեպ, այս օրենսգրքում ևս հոդվածների x. նշումը դիտարկվում է իբրև կետ և ոչ մաս. հմմտ. նույն օրենսդրքի հոդված 24-ի կետ 1-ը):

4 («Օմբուդսմենը և ժողովրդավարական հասարակությունը (համաշխարհային փորձը)», Ժողովրդավարության և Մարդու իրավունքների ազգային կենտրոն, Երևան 2003, էջ 106):

5 Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», փոփոխություններով (նախագիծ), հոդված 56:

6 Սույն սխալի և հուշումով դրա ուղղման մասին նշվել է հոդվածի սկզբում:

7 Այս սխալը ևս, ինչպես մենք ենք կարծում, ուղղվել է հուշումով:

8 Երեսուն թվականի տարբեր՝ տառային և թվային գրությունը գրեթե համանման կապակցության մեջ է. «… բողոքն ստանալուց 30 օրվա ընթացքում» (հոդված 11), «հարցումն ստանալուց … երեսուն օրվա ընթացքում» (հոդված 12):

9 Այսպիսի բառ հայերենը չունի (հմմտ. Ա. Սուքիասյան, «Հայոց լեզվի հոմանիշների բառարան», Երևան 1967, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», կազմեց Վ. Ներսիսյանը, հ. II, Երևան, 1972): Անիմաստ է երկու հոմանիշ բառ-արմատների կից գրությունը, երբ դրանք միասնաբար (թվաքանակ) դարձյալ արտահայտում են այն իմաստը, որ ունեն առանձին-առանձին: Անձերի թիվ նշանակելու համար քանակը, չգիտես ինչու, մերժվում է, թիվը հարմար չէ. ահա և գտնվել է «փոխզիջումային» տարբերակ՝ թվաքանակ, որը, կրկնում ենք, հայերենը չունի, և կարիք չկա օրենսդրի սխալագիր ձեռքով այն օրինականացնել:

10 «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը հոգացել է հայրենական օրենքների լեզվական մաքրության և, մասնավորապես, բառերի ու եզրերի ոչ երկիմաստ, միանշանակ գործածության մասին:

REMARKS AND REASONS ON A CERTAIN LAW

LEVON SARGSYAN
Philologist

Summary

On November 15, 2003, Robert Kocharyan, the President of the Republic of Armenia, signed the RA Law "About Ombudsman" which had been adopted by the National Assembly on October 15 of this year. The editorial staff was able to get a version of the Law only on November 10. Even the fleeting view showed that the Law was full of a lot of mistakes (linguistic-stylistic, punctuation, even orthographical, as well as of a legal trend). The editorial staff of the review "For the Sake of Justice" sent several letters to the RA President's Press Secretary, Chief of staff to the President and to the President personally via e-mail, asking and appealing not to sign that non-grammatical Law. There were encumbered and meaningless sentences and legal misprints in the Law two of which were pointed out in our letters. But as it is mentioned, the Law was signed on November 15. In the already signed version the evident mistakes pointed out by us were missing, which made us suspiciously assume that the Law received from the National Assembly was edited by the President's personnel, the right of which nobody had, even the President himself.

The article touches upon a number of various and numerous mistakes of the already adopted Law, which again concern the linguistic-stylistic and legal spheres; editions, corrections and solutions are proposed.

At the same time the editorial staff still hopes to suspend the action of this not so grammatical Law suggesting the legislator reverting to the pointed out and not pointed out mistakes and making an attempt to get rid of them.

ЗАМЕЧАНИЯ И РАССУЖДЕНИЯ ОБ ОДНОМ ЗАКОНЕ

ЛЕВОН САРКИСЯН
Филолог

Резюме

15 ноября 2003 года президент Республики Армения Роберт Кочарян подписал закон РА "О защитнике прав человека", который был принят Национальным Собранием 15-го октября. Редакции журнала "Васн ардарутеан" ("Во имя справедливости") удалось заполучить версию закона только 10-го ноября. Даже мимолетный просмотр показал, что закон содержит большое количество ошибок (лингвистическо-стилистических, пунктуационных, даже орфографических и более того – юридических). Редакция послала по электронной почте несколько писем пресс-секретарю и руководителю аппарата Президента РА и лично Президенту с настоятельными просьбами не подписать этот неграмотный документ. Закон содержал запутанные и бессмысленные предложения, юридические оплошности, на две из которых мы явно указали в письмах. Однако, как уже было упомянуто выше, 15-го ноября закон все-таки был подписан. В уже подписанном законе, однако, отсутствовали очевидные ошибки, на которые мы указали, что заставило нас предположить, что закон, полученный от Национального Собрания, был отредактирован в аппарате Президента, в то время как никто, даже непосредственно Президент, не имел на это право.

Данная статья касается многочисленных и разнообразных лингвистическо-стилистических и юридических ошибок, содержащихся в уже принятом законе. Предложены редкционные решения и поправки.

Одновременно редакция все еще надеется, что действие этого не очень грамматного закона будет приостановлено и предлагает законадателю обратить внимание на указанные и не указанные ошибки и попытаться избавится от них.

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԱՐՄԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ
ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի ասպիրանտ

Չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց եւ այնպէս լաւ Հայ լինել:
Այո՛, չի կարելի անկատար մարդ, բայց կատարեալ Հայ լինել:

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

Ցեղակրոնության բնութագրական գծերի վերհանման խնդիրը ցայսօր էլ Նժդեհագիտության առանցքային հիմնահարցերից է: Չնայած այն իրողությանը, որ վերջին տարիներին այս ուղղությամբ կատարվել են մի շարք ուսումնասիրություններ և իրականացվել վերլուծական աշխատանքներ, այնուամենայնիվ, խնդրո առարկայի շուրջ մի շարք հարցեր շարունակում են մնալ առկախ: Ցեղակրոնության և նացիստական, ֆաշիստական գաղափարներ ու ռասայական խտրականություն սերմանող ուսմունքների առնչակցությունն այն հիմնախնդիրներից է, որը ևս կարիք ունի լրացուցիչ պարզաբանումների և հստակեցումների: Դա պայմանավորված է այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների խորացման, ցեղակրոնության համամարդկային գծերի վերհանման, ինչպես նաև խնդրո առարկայի հնարավոր շահարկումներն ու տարընմբռնումները բացառելու անհրաժեշտությամբ:

Ասվածն առավել առարկայական կդառնա, եթե հաշվի առնենք և համապատասխան վերլուծության ենթարկենք ցեղակրոնության և նացիզմի առնչակցությունը «հաստատող» մեղադրանքները: Նման մեղադրանքների առաջադրմանը խթանել են մի շարք գործոններ.

- արևմտաեվրոպական մի շարք պետություններում նացիստների, նացիոնալ-սոցիալիստների հետ Նժդեհի համագործակցությունը. համագործակցություն, որն իրականում պայմանավորված էր բացառապես ինքնապաշտպանական, հայրենասիրական մղումով և բնավ ոչ ծավալապաշտական նկրտումներով, այլատյացության շարժառիթներով [1].
- ցեղակրոնության գաղափարական հակառակորդների քաղաքական նկրտումները, ինչպես նաև այս ուսմունքի ըմբռնման դժվարությունները.
- ցեղակրոնության այսպես կոչված՝ պաշտամունքային օբյեկտների շարքում ուժապաշտության և արյան պաշտամունքի դրույթների առկայությունը:

Հարկ է նշել, որ արյան պաշտամունքի և ուժապաշտության դրույթներին անդրադարձը պայմանավորված է ոչ միայն ռասիզմի, նացիզմի հետ Գարեգին Նժդեհի ցեղակրոն ուսմունքի հնարավոր ընդհանրությունների, այլև ցեղակրոն ուսմունքի շրջանակներում կենսաբանականի և վերկենսաբանականի փոխհարաբերության հարցի պարզաբանմամբ, ինչպես նաև ցեղակրոնության բնութագրական գծերի բացահայտմամբ: Այսինքն՝ ցեղակրոնության բնույթը, դրան տրված ոչ միանշանակ, անգամ հակասական գնահատականների և մեկնաբանությունների գոյությունը հասկանալու համար չափազանց կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ինչպես կենսաբանականի և արտակենսաբանականի (ոգեղենի)[2] նժդեհյան ըմբռնմանը, այնպես էլ ցեղակրոնության մեջ արտահայտություն ստացած արյան պաշտամունքի և ուժապաշտության դրույթների հարցում համապատասխան հստակեցումների իրականացմանը: Վերջինս կապված է մի շարք բարդությունների հետ, որոնք մի կողմից՝ ճանաչողության օբյեկտի բովանդակային ընդգրկունության, լիարժեք վերլուծությունների սակավության, մյուս կողմից՝ եզրաբանական տարընմբռնումների, մեկնաբանական անհամապատասխանությունների հետևանք են:

Նժդեհի հայացքների վերլուծությանը նվիրված հրապարակումների մեջ որոշակի բացասական վերաբերմունք է ցուցաբերվել ուժապաշտության դրույթի նկատմամբ, որը, ցավոք, հաճախ մեկնաբանվել է միանգամայն խեղաթյուրված կերպով, երբեմն նույնիսկ չի ըմբռնվել–հասկացվել: Քննադատելով ցեղակրոնությունը՝ Վ. Պետրոսյանը նշում է. «Ցեղակրոնությունը կարող է լինել զուտ կուսակցական գաղափարախոսություն, որովհետև դրա հիմքում ընկած են այնպիսի մոտեցումներ, որոնցով մի ամբողջ ազգ առաջնորդվել չի կարող: Ցեղակրոնությունն իր մեջ, անշուշտ, ունի դրական պահեր, բայց արդարացնելով ուժը, վերջին հաշվով, մեծ խնդիրների մեջ, ինչոր կերպ դուրս է գալիս մեր հետապնդած հայ դատի դեմ. եթե արդարացվում է ուժը, ապա այդ տեսակետից կարելի է համարել, որ ճիշտ էին երիտթուրքերը, երբ կոտորեցին անպաշտպան հայությանը Արևմտյան Հայաստանում»[3]: Նժդեհյան ուժապաշտության այսպիսի մեկնաբանությունը ոչ միայն չի համապատասխանում «իրերի փաստական վիճակին», այլև, ըստ էության, այդ ուժապաշտությունը ներկայացնում է տրամագծորեն հակառակ բևեռից: Մի կողմ թողնելով ցեղակրոնության՝ կուսակցական գաղափարախոսություն լինելու կամ չլինելու հարցը՝ պետք է նշել, որ ուսումնասիրողներից, դիցուք, նույն Վ. Պետրոսյանը ցեղակրոնության քննադատությունն իրականացնում է ուժապաշտության այնպիսի ըմբռնման համատեքստում, որն էապես խորթ է ցեղակրոնությանը և իր բովանդակությամբ մոտ է թուլության, տկարության նժդեհյան ըմբռնմանը: «Ըստ Շոպենհաուերի,- գրում է Նժդեհը,- մարդս ցավ է պատճառում ուրիշներին, իր սեփական ցավը մեղմացնելու համար: Այդ դեպքում՝ վայրագությունը մի տեսակ դարման է իր սեփական ցավի դեմ: Թուրքական գազանությունն էլ պետք է բացատրել անհատ, թե հավաքական թուրքի հոգեկան տկարությամբ: Նաև՝ այդ տկարության նվաստացուցիչ գիտակցությամբ»[4]:

Նժդեհյան ուժը ոչ թե կործանարար, կենսասպան, ապակառուցողական, այլ կենարար, կենսալիր - կենսամետ երևույթ էր: Այդ ուժը բիրտ, դաժան, հակամարդկային այն ուժը չէ, որ կարող է ոտնակոխել

ամեն սրբություն, համամարդկային արժեք, այլ այն ուժը, որը մի կողմից՝ կոչված էր զորավորելու տվյալ ժողովրդի գոյության իրավունքը՝ դառնալով նրա ինքնապաշտպանության բաղադրիչը, իսկ մյուս կողմից՝ բարոյական, ոգեղեն գոյավորում էր, որն ունակ էր ներելու, սիրելու: «Սիրում է նա, ով ուժեղ է,- գրում է Նժդեհը,- ով ոգու առատութիւն ունի, ում ոյժի բաժակը լցւած է յորդելու, թափելու աստիճան»[5]: «Քրիստոսը,- այլուր շարունակում է Նժդեհը,- սիրում էր, որովհետեւ ուժեղ էր. նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզօր էր»[6]:

Նժդեհյան ուժն օտարի նկատմամբ չարդարացված անհանդուրժողականություն ցուցանող ուժը չէր, այլ սեփականի հանդեպ, ազգային ինքնատիպության և դրա գոյության նկատմամբ կործանարար ու քայքայիչ ազդեցություն գործող օտարին անհանդուրժողականություն ցուցաբերելուն ունակ ուժը: «Մեծ սիրտ եւ ազնիւ զգացումներ,- գրում է Նժդեհը,- ահա՛ թէ ինչը ուժեղ կը դարձնի մեր ժողովուրդը»[7]:

Համաձայն Նժդեհի՝ միայն ուժեղին է վիճակված ինքնությամբ հանդես գալու իրավունքի պատասխանատու գործը կյանքի կոչելը, օտար այլասերիչ ազդեցություններին հաջողությամբ դիմակայելը, ներքնապես ազատագրվելու ճանապարհով սեփական անհատականության ստեղծագործական ներուժն իրականության բարեփոխման մարդասիրական գործին նվիրաբերելը: «Յոթնիցս զզվելի է հոգևոր ստրուկը,- գրում է Նժդեհը,- նա՛ որն ազատության մեջ իսկ ապրում է, խորհում, գործում ստրկորեն. նա՛ որի կրծքին թեև չի ճնշում բռնավորի թաթը, - բայց և այնպես, նա միշտ էլ իրեն զգում է ծնկի եկած «զորավորի» առջև. նա՛ որը ծանրապես կոխող գարշապար է փնտրում՝ լիզելու, սուտ աստվածություններ՝ փառաբանելու, կեղծ մեծություններ՝ պսակադրելու»[8]: Ուժեղին է տրված թե՛ ազգի, թե՛ պետության, թե՛ հայրենիքի և թե՛ մարդկության հանդեպ սեփական պարտքի խոր գիտակցումը և այն ստեղծագործաբար իրականացնելու կամքը: Հակառակ պարագայում՝ այս կամ այն անհատը, ժողովուրդը հանդես կգա սոսկ կամակատարի կամ էլ, վատագույն դեպքում, ապազգային ու հակամարդկային հնարավոր գործառույթների իրականացմանը ծառայեցվող գործիքի կարգավիճակով: «Իմացականությամբ ու սրտով փոքրիկ էակներին է միայն հատուկ՝ կուրորեն կատարել վերևից տրված ամեն հրաման: ... Մարդկային իմացականության դեմ խորապես մեղանչում է նա, ով իրեն տրված հրամանը չի գործադրում ստեղծագործաբար», - գրում է Նժդեհը[9]:

Այսպիսով՝ ցեղակրոնության պաշտամունքային օբյեկտների շարք ներառված ուժապաշտության դրույթն ընդհանուր ոչինչ չունի ծայրահեղ ազգայնամոլական, ռասայական խտրականություն սերմանող և այլատյացություն քարոզող ուսմունքների հետ, քանզի այդ այն դրույթը ներթափանցված է մարդասիրությամբ և ոգեշնչման, ոգեկոչման ներունակությամբ:

* * *

Կենսաբանականի և արտակենսաբանականի փոխհարաբերության խնդիրն առանցքային տեղ է զբաղեցնում Գ. Նժդեհի տեսական ժառանգության մեջ: Չնայած այն իրողությանը, որ սույն հիմնախնդիրը բացահայտ կերպով առանձնահատուկ քննարկման չի ենթարկվել Գ. Նժդեհի գրչին պատկանող որևէ աշխատության մեջ, այնուամենայնիվ, ոչ բացահայտ կերպով այս հարցին պատասխանելու փորձերով են «ներթափանցված» Նժդեհի բազմաթիվ աշխատություններ, հոդվածներ: Կենսաբանականի և արտակենսաբանականի փոխհարաբերության նժդեհյան ըմբռնման հարցի պարզաբանումը կապված է մի շարք դժվարությունների հետ: Առաջին դժվարությունն արդյունք է այն իրողության, որ միմյանցից տարբերվող այս երկու երևույթների մասին Նժդեհի տեսակետները երբեմն հստակ, որոշարկված չեն և ենթադրում են բացահայտ կամ քողարկված կերպով արտահայտված մտքերի «հեղեղում» կողմնորոշվելու ջանքեր: Հաջորդ դժվարությունը կապված է այն հանգամանքի հետ, որ սույն հարցի ակնկալվող պատասխանը ենթադրում է որոշակի անդրադարձ 20-40-ական թվականներին գրված մի շարք աշխատություններին, ուր և կարելի է նկատել կենսաբանականի և վերկենսաբանականի համակարգաստեղծ նշանակության մասին որոշակի հակասականություն պարունակող մտքեր, դատողություններ: Դժվարություններից մեկն էլ այն է, որ կենսաբանականի տեղի, դերի և նշանակության վերաբերյալ արտահայտված մի քանի դատողություններ հիմք են հանդիսացել առկա տարաձայնությունների ոչ թե հաղթահարման, այլ խորացման համար:

Նժդեհի փիլիսոփայական ընդհանրացումների և խորհրդածությունների ծիրում հայտնված գրեթե բոլոր հիմնախնդիրները քննարկվում են ազգայինի հետ որոշակի առնչվածության համատեքստում: Ասվածը բացառություն չէ նաև կենսաբանականի և արտակենսաբանականի փոխհարաբերության հարցի դեպքում, քանզի վերջինս համապատասխան վերլուծության է ենթարկվում ցեղայինի, ազգայինի մակարդակում իր իսկ դրսևորումների տեսանկյունից: Ազգային կեցության մեջ կենսաբանական և արտակենսաբանական տարրերի փոխհարաբերության, ազգային կեցության պահպանման և գոյության շարունակականության հարցում այս տարրերի համակարգաստեղծ բնույթի հետ կապված խնդիրները, կարելի է ասել, ոչ միայն և գուցե ոչ այնքան Նժդեհի մտորումների առարկան, որքան XIX-XX դարերի (մասնավորապես XX դարի առաջին կեսի եվրոպական երկրների) գաղափարաքաղաքական, հոգևոր, գիտամշակութային իրականության «սեփականությունն» էին: Ի հավաստումն վերոնշյալի կարող են հանդես գալ այնպիսի տեսական համակարգեր, ինչպիսիք էին եվգենիկան, ռասայական հիգիենան, ռասայագիտությունը և այնպիսի գաղափարաքաղաքական հոսանքներ, որոնք սնվում էին Իտալիայում ծագած ֆաշիզմի և Գերմանիայում ձևավորված նացիզմի գաղափարախոսություններից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նժդեհի ուշադրությանն արժանացած գրեթե բոլոր հարցերն արծարծվում են ազգայինի, ցեղայինի հիմնախնդրի համատեքստում, ուստի կենսաբանականի և վերկենսաբանականի փոխհարաբերության հարցը ևս պետք է պարզաբանել ցեղի, ցեղայինի նժդեհյան ըմբռնման համատեքստում: Բնականաբար, սա բնավ չի նշանակում, թե սույն հարցում պետք է անտեսել Նժդեհի ապրած ժամանակաշրջանի առանձնահատկություններով պայմանավորված հրամայականները (ուծացման վտանգ, ազգային ինքնության և ինքնատիպու-

թյան պահպանման խնդիր, ազգային միասնականության ապահովում և այլն), որոնց գոյությամբ կարելի է բացատրել այն տեղաշարժերը (գուցե թե թվացյալ), որոնք ազգային դիմագծի, ցեղայնության պահպանման համակարգաստեղծ գործոնի կարգավիճակ էին տալիս կենսաբանականին՝ արյանը, կամ էլ վերկենսաբանականին՝ ոգուն:

Թեպետ Նժդեհյան ցեղը զուրկ չէ նաև կենսաբանական որակներից, այնուամենայնիվ, կենսաբանականն այն ընդհանուրը չէ, որը կարող է հանդես գալ որպես ցեղն ամբողջացնող բնութագրական գործոն: Անգամ եթե ընդունենք, թե Նժդեհյան ցեղը կենսաբանորեն կաղապարված է (արյան պաշտամունք), այնուամենայնիվ, անհրաժեշտ է զգուշանալ ցանկացած զուգահեռներից մարդու բնույթի ֆրոյդիստական այլ տիպի կենսաբանականացումից: Եթե Ֆրոյդը մշակույթը, սոցիալ-բարոյական նորմերն ու կանոնները դիտում էր իբրև մարդու բնական հակումները և ցանկությունները ճնշող ուժ, ի հետևանս որի «հիվանդանում» է թե՛ մարդը, թե՛ հասարակությունը, իսկ անգիտակցականի բովանդակությունը կազմող ապրումները, մղումները, որոնք դուրս են մղված գիտակցականի ոլորտից, ունեն հիմնականում սեքսուալ բնույթ, ապա այլ է պատկերը Նժդեհի պարագայում: Ի տարբերություն Ֆրոյդի՝ Նժդեհը ոչ թե մշակույթն է դիտում որպես մարդու և հասարակության «ախտահարման» պատճառ, այլ սեփական և օտար, արտաքին մշակութային արժեքների միջև փոխներդաշնակության բացակայությունը թե՛ տվյալ անհատի, թե՛ տվյալ ազգի մակարդակում: Այսինքն՝ ոչ թե ինքնին մշակույթը, սոցիալ-բարոյական նորմերն են «տկարացնում» մարդուն, այլ սեփական ցեղային արժեքների հետ հաղորդակցության բացակայությունը, ինքնաճանաչման կամքի պակասը: «Անցեղահաղորդը,- գրում է Նժդեհը,- քարշ է տալիս իր մանր և պարզ գոյութիւնը: Նա չի ճանաչում ավելի բարձր և ընդարձակահորիզոն կյանք: Նմանը տկար է և դժբախտ, քանզի դեռ չի զգացել իր միությունը ցեղի հետ: Նաև երկչոտ է անցեղապաշտը, որովհետև չգիտի օգտվել իր էութեան մէջ մթերված կենսաբանական եւ հոգևոր ուժի ակնաղբյուրից, նրա շտեմարանից-իր ցեղի ուժից»[10]:

Ըստ Նժդեհի՝ չափազանց բարդ է տալ ցեղի սահմանումը: Մարդաբանության եզրույթներն ու կատեգորիալ-հասկացական ապարատը ներունակ չեն սահմանելու ցեղը, քանզի «Ցեղն աւելի հոգի է, քան կաւ»[11]: Շարունակելով հայ փիլիսոփայության մեջ որոշակի ավանդույթ դարձած հակաճակատագրապաշտական գաղափարները՝ Գ. Նժդեհը տվյալ ազգի առաջընթացն ու հետընթացը, վերելքն ու անկումը, հաղթական և կրավորական կեցվածքը, ստեղծագործական ներուժն ու անկարողությունը բացատրում է առանձնահատուկ ազգային ոգու գոյությամբ: Եթե տվյալ անհատի, ազգի հոգեկան վերելքն ու աճը, պատմության քառուղիներում ձեռք բերած հաղթանակներն ու մշակութաստեղծ ներուժն արդյունք են առավելապես ցեղաճանաչության, ապա նրանց տկարություններն ու պարտությունները, կրավորական կեցվածքն արդյունք են առավելապես ցեղային օտարման, ինքնաճանաչման բացակայության: «Ոգին է կռում ազգերի ճակատագիրը,- գրում է Նժդեհը:- Փոխւեց մէկը՝ փոխւում է եւ միւսը: ... Արժէքներ, սրբութիւններ, մարդկայնութիւն, առաջնորդութիւն, հերոսական, փառք, ոգին է այդ բոլորի ստեղծիչը: Այլ բան չէ մարդկային բովանդակ պատմութիւնը, եթէ ոչ՝ ոգու զարգացման առաջընթաց եւ արդիւնք, միաժամանակ»[12]:

Արյուն և ոգի՝ կենսաբանական և վերկենսաբանական զույգի փոխհարաբերության խնդրի լուծման առումով Նժդեհի բազմաթիվ աշխատություններից, հոդվածներից («Բանտային գրառումներ», «Ցեղի ոգու շարժը», «Ինչո՞ւ տարօնականություն» և այլն) կարելի է վկայակոչել ոգու ստեղծարար, համակարգաստեղծ դերի վերաբերյալ բազմաթիվ մտքեր: Այս կապակցությամբ Նժդեհը գրում է. «Ազգային ոգի - ահա՛ գերագոյն հերոսը, միա՛կը, մեր պատմութեան անիւը դարձնող, մեր հաւաքական ճակատագիրը վարող հերոսը: Էապէս միայն դա է գործում պատմութեան մէջ եւ պատմութեան համար: Անհատ հերոսներն ոչ այլ ինչ են, եթէ ոչ միայն անձնաւորողներն այդ ոգու: Մեռնում են հերոսները՝ Մանուէլները, Մուշեղները, Վարդանները. մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնաւորումը գտնելով այլ հայերի մէջ՝ շարունակում է ապրել ու ներգործել: Եւ հենց սրանում է հերոսների անմահութիւնը: Չէ', չի' մեռնում հերոսը. նա միայն իր անօթն ու անունն է փոխում»[13]:

Չնայած այն իրողությանը, որ Նժդեհը ազգային դիմագծի և էթնոինքնատիպության պահպանման հարցում որոշակի նշանակություն է հատկացնում նաև արյանը, այնուամենայնիվ, սա ինքնին դեռ բավարար ապացույց չէ այն տեսակետների, համաձայն որոնց՝ Նժդեհին հատուկ է ցեղը կենսաբանականացնելու մտայնությունը: Նժդեհի փիլիսոփայական հայացքների ներքին տրամաբանությունը, դրա ոգեպաշտական ուղղվածությունը չէր կարող «անտարբեր» մնալ կենսաբանականի նշանակության ուռճացման, ծայրահեղացման ջանքերի նկատմամբ: Ավելին՝ կարելի է նշել, որ Նժդեհյան ցեղը ոչ այնքան կենսաբանական, որքան վերկենսաբանական հասկացություն է: Նժդեհին հատուկ է կենսաբանական սկզբի «ենթակայումը» ոգեղենին և վերջինիս համակարգաստեղծ դերի ընդգծումը:

Արյան և ոգու, կենսաբանականի և արտակենսաբանականի ազգապահպան, ազգաստեղծ, մշակութաստեղծ նշանակության հարցում դրսևորված հակասականությունը կարելի է բացատրել «Ցեղակրոնության հավատամք»-ում բանաձևված «Ես ցեղահաւատ եմ, եւ ահա ես կը պաշտեմ եւ մի այլ աստուածութիւն՝ ցեղիս արիւնը, որի անաղարտութեան մէջ է մեր ժողովրդի ողջ ապագան»[14] սկզբունք-կարգախոսով և «Հայու ճամբան՝ մեծ զղջումի ճամբան» հոդվածում արտահայտված Նժդեհյան հետևյալ դատողությամբ. «Մեր արեան մէջ է դրուած մեր ցեղի գաղափարը-հայկակա'նը, բնազանցութիւնը, նպատակաբանութիւնը, ինչպես եւ այդ վերջինների իրականացման համար անհրաժեշտ զօրութենականութիւնը, կարողական ոյժերը»[15]: Այսինքն, եթե նախորդ պարբերության շրջանակներում կարելի է նկատել Նժդեհի կողմից ոգու համակարգաստեղծ դերի ընդունումը, ապա այս պարբերության վերը նշված հատվածում դժվար չէ նկատել ցեղի, էթնոսի ինքնապահպանման գործում կենսաբանական մեխանիզմների (մաքուր արյուն) դերի ու նշանակության այնպիսի ըմբռնում, որը որոշակիորեն կասկածի տակ է դնում ոգու դերի Նժդեհյան ըմբռնման մասին արված նախկին դատողությունները:

«Ցեղակրոնության հավատամք»-ում դրսևորված արյան պաշտամունքը, որը Նժդեհի կողմից չի են-

թարկվում հետագա պարզաբանումների և համապատասխան հիմնավորումների, ճշմարիտ հասկանալու համար անհրաժեշտ են համապատասխան վերլուծություններ արյան դերի ու նշանակության վերաբերյալ պատմականորեն ձևավորված մոտեցումների, ինչպես նաև XX դարի 1-ին կեսի գաղափարաքաղաքական, գիտական իրականության և արժեքային կողմնորոշումների համատեքստում:

* * *

Թեպետ կենսաբանականի (արյան) և վերկենսաբանականի (ոգեղենի, ազգային ոգու) փոխհարաբերության բնույթի հետ կապված ուսումնասիրությունների և դրանցից արտածված գործնական քայլերի վառ դրսևորումներով հարուստ է XIX-XX դարերի ինչպես գիտատեսական, քաղաքական միտքը, այնպես էլ քաղաքական պրակտիկան և որոշ պետությունների (Գերմանիա) ներքին և արտաքին քաղաքականությունը, այնուամենայնիվ, սույն հիմնախնդրի առաջադրումը XIX-XX դարերի «մենաշնորհը» չէ: Այս հիմնախնդրի ինչպես տեսական, աշխարհայացքային, այնպես էլ գործնական նշանակությունը գիտակցվել է թե՛ անտիկ դարաշրջանում, թե՛ միջնադարում և թե՛ դրանց հաջորդող ժամանակաշրջաններում՝ ընդհուպ մինչև մեր օրերը:

Այս խնդրի լուծման նժդեհյան տարբերակի պարզաբանման համար, որը միաժամանակ ընդհանրություններ ունի ինչպես Արևմուտքում, այնպես էլ հայ իրականության մեջ տարածում գտած մոտեցումների հետ, անհրաժեշտ կամ, ավելի ճիշտ, նպատակահարմար է հետադարձ պատմական հայացքով անդրադառնալ արյան, ոգու, դրանց փոխհարաբերության վերաբերյալ տեսակետներին:

«Բավական օգտակար է,- գրում է Նիցշեն,- մի անգամ կտրվել սեփական ժամանակից և նրա ափերից քշվել անցած աշխարհայեցողությունների օվկիանոս: Նայելով այնտեղից ափին՝ առաջին անգամ տեսնում ես նրա ընդհանուր ձևը և երբ կրկին մոտենում ես նրան, ունենում ես այն առավելությունը, որ այն իր ամբողջության մեջ հասկանում ես ավելի լավ, քան նրանք, ովքեր երբեք չեն լքել այն»[16]: Առաջնորդվելով այս սկզբունքով՝ կարող ենք տեսնել, որ արյան և ոգու փոխհարաբերության հարցի լուծման փորձեր են պարունակել բազմաթիվ գաղտնաբանական, խորհրդապաշտական ուղղությունները, տեսական համակարգերը, կրոնները, ինչպես նաև տարբեր ժողովուրդների, ցեղախմբերի կենսագործունեության ընթացքում ձևավորված մոգական «պատկերացումները»: Այս կապակցությամբ բավական ուշագրավ են Զ. Ֆրեյզերի դիտարկումները՝ կապված արյան նկատմամբ տարբեր ժողովուրդների, ցեղախմբերի վերաբերմունքի հետ: «Ոսկե ճյուղում» այս հիմնախնդրին վերաբերող հատվածների ուսումնասիրությունից պարզ երևում է, որ բազմաթիվ ժողովուրդներ արյանը վերագրել են տարբեր հատկություններ և ըստ այդմ էլ մշակել են համապատասխան վերաբերմունք դրա նկատմամբ: Նկատի ունենալով Կենտրոնական Աֆրիկայի ֆուրերի ազգությը, Հարավարևելյան Աֆրիկայի լեռնային որոշ ցեղերի՝ Զ. Ֆրեյզերը նշում է. «Լայնորեն տարածված է հանգուցյալների միսն ուտելու և արյունը խմելու սովորությը, որպեսզի տիրանան այդ մարդկանց դրական հատկանիշներին (օրինակ, քաջությանը կամ իմաստությանը), որոնք, իբր, տեղակայված են նրանց մարմնի այս կամ այն մասում»[17]: Եթե որոշ ցեղերի մոտ խրախուսվում էր ուրիշի արյան տիրապետումն ու տնօրինումը, ապա այլոց դեպքում արյան հարցում դրվում էին համապատասխան մոգարգելքներ: «Այս մոգարգելքների համար, հավանաբար, հիմք է ծառայում այն տարածված հավատալիքը, - գրում է Ֆրեյզերը,- որի համաձայն, անասունի հոգին կամ ոգին գտնվում է նրա արյան մեջ»[18]:

Ոգու և արյան փոխհարաբերության հարցից չեն «խուսափել» համաշխարհային կրոններից քրիստոնեությունը և իսլամը: Քրիստոնեության մեջ սույն հիմնախնդրի հետ կապված դատողությունների կարելի է հանդիպել Աստվածաշնչի հետևյալ գրքերում՝ Ծննդոց,Ղեւտացոց, Օրինաց: Այստեղ արտահայտություն ստացած պատվիրանները ևս կապված էին այն մտքի հետ, որ արյունը հոգու, ոգու զետեղարանն է: «Բայց զգուշացիր, որ արիւնը չուտես. վասն զի արիւնը ոգին է ու ոգին միսին հետ մի՛ ուտեր: Զանիկա մի՛ ուտեր, այլ ջուրի պէս գետինը թափէր»[19]: Նմանատիպ պատվիրան է ամփոփված նաև Ղեւտացոց-ում: «Եթէ Իսրայէլի որդիներէն կամ ձեր մէջ պանդխտացած օտարականէն մեկը ուտուելու անասուն կամ թռչուն մը որսալու ըլլայ, անոր արիւնը պէտք է թափէ ու հողով ծածկէ զայն: Վասն զի ոեւէ մարմնի կենդանութիւնը իր արիւնն է: Անիկա է բուն կենդանութիւնը, ուստի Իսրայէլի որդիներուն ըսի. Բնաւ մարմնի մը արիւնը չուտէք, քանզի ոեւէ մարմնի կենդանութիւնը իր արիւնն է. ով որ ուտէ՝ պէտք է կորսուի»[20]:

Խուսափելով ոգու և արյան առնչությունների վերաբերյալ հեռավոր անցյալում ձևակերպված և տարածում ստացած բազմաթիվ տեսակետների թվարկումից՝ անհրաժեշտ է այս խնդրի հետ կապված քննարկումները «տեղափոխել» XX դարի թե՛ գաղտնաբանական - խորհրդապաշտական, թե՛ քաղաքական պրակտիկայի համատեքստ: Կարելի է ասել, որ սա այն դաշտն է, որտեղ կարելի է քայլեր կատարել ցեղակրոնության բնորոշ գծերի բացահայտման, ցեղակրոն ուսմունքի շրջանակներում արյան պաշտամունքի դրույթի հետ կապված մի շարք դժվարությունների հաղթահարման ուղղությամբ:

XX դարի առաջին կեսի թե՛ քաղաքական, թե՛ գիտական, թե՛ գաղափարական (նկատի ունենք արևմտյան իրականությունը) կյանքում ընդգծված տեղաշարժեր էին նկատվում ազգային կեցության արժևորման, իմաստավորման ուղղությամբ: Այդ տեղաշարժերն արտահայտվեցին նաև կենսաբանականի և սոցիալականի փոխհարաբերության մակարդակում: Այս ժամանակաշրջանում է, որ լայն տարածում է ստանում արյան և ոգու հետ կապված ուսումնասիրությունների իրականացումն ազգային ոգու կամ էլ ռասայական ոգու տեսանկյունից:

Ազգայինի հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, սոցիոլոգիական և այլատիպ գրականության մեջ արյան և ազգային ոգու միջև կապի վերաբերյալ ցայսօր էլ չկա միասնական, հարացուցային մոտեցում: Եթե որոշ հեղինակներ կարծում են, որ ազգայինի հիմնահարցն անհնար է լուծել առանց արյուն հասկացության հետ դրա անխզելի կապի ընդունման, ապա մյուսները կարծում են, որ ազգայինի հիմնախնդրի, դրա չափանիշների հարցի պատասխանին չի կարելի հասու լինել ինչպես կենսաբանական, այնպես էլ զուտ տարածական, աշխարհագրական «հարթություններում»: Ազգայինի չափանիշը տեսնելով պատմական ճակատագրի միասնության մեջ՝ Պ.

Սորոկինը գտնում է, որ ո՛չ կրոնը, ո՛չ փիլիսոփայությունը, ո՛չ լեզուն և ո՛չ էլ արյունը, արյունակցական միասնությունը չեն կարող ապահովել ազգայինի չափանիշի կարգավիճակով հանդես գալու ներուժ[21]:

Կրոնական էքզիստենցիալիզմի խոշորագույն ներկայացուցիչ Ն. Բերդյաևը այս կապակցությամբ նշում է. «Ազգը չի ենթարկվում ոչ մի ռացիոնալ սահմանման: Ռացիոնալ կերպով ըմբռնելի ոչ մի հատկանիշ չի սպառում նրա կեցությունը:... Ազգի կեցությունը չի որոշվում և չի սպառվում ո՛չ ռասայով, ո՛չ լեզվով, ո՛չ կրոնով, ո՛չ տարածքով, ո՛չ պետական սուվերենությամբ, չնայած այս հատկանիշները շատ թե քիչ էական են ազգային կեցության համար: Առավել ճիշտ են նրանք, որոնք ազգը սահմանում են որպես պատմական ճակատագրի միասնություն: Այդ միասնության գիտակցումը հենց ազգային ինքնագիտակցությունն է»[22]:

«Ժամանակակից մարդաբանությունը,- գրում է Ն. Ուստրյալովը,- համոզիչ կերպով ապացուցում է, որ «մաքուր ռասան» իրենից ներկայացնում է մաքուր վերացարկում. ռեալ կերպով տրված են միայն խառնված մարդաբանական տարրերը՝ այսպես կոչված ռասայական խճանկարները: ...Չի կարելի կառուցել ազգի տեսություն «ռասայական» հիմքի վրա: Ազգերը ոչ թե բնական, այլ պատմական-սոցիալական կազմավորումներ են: Ոչ թե առասպելական «ընդհանուր արյունն» է, այլ պատմական ճակատագրի կոնկրետ ընդհանրությունն է կերտում ազգին»[23]:

Արյան գործոնին հզոր էթնիկական, ռասայական գործառույթների վերագրումը չի ընդունվում նաև, այսպես կոչված, հոգևոր ռասիզմի ներկայացուցիչների, պաշտպանների կողմից: Այս ուղղության խոշորագույն ներկայացուցիչներից է Յ. Էվոլան, որը ժամանակին սկզբունքային բանավեճի մեջ է եղել Ա. Ռոզենբերգի հետ: Վիճաբանության առանցքը մշակութային կյանքում կենսաբանական գործոններին հատկացված նշանակության հարցն էր: Եթե Ռոզենբերգը (որն, ի դեպ, նացիոնալ-սոցիալիզմի գաղափարախոսներից էր) կարծում էր, թե մշակութային հզորության, մշակութային կյանքի վերելքի և շարունակական զարգացման հիմնասյուներից է արյան մաքրությունը, ապա Էվոլան զերծ է մնում մշակութային կյանքի կենսաբանականացման «հեռանկարներից»՝ դրանք համարելով մոլորությունների վառ դրսևորումներ: Մշակույթների անկումը, ըստ Էվոլայի, ի հայտ է գալիս բացառապես հոգևոր բնույթի պատճառներով: Եթե կենսաբանական ռասիզմի կողմնակիցները ռասայական տիպաբաժանման մեջ առանձնահատուկ տեղ էին տալիս արիական ռասային՝ այն համարելով առավելապես կենսաբանական միավոր, ապա Էվոլան, չժխտելով արիական ռասայի գոյությունը, այնուամենայնիվ, ընդգծում էր, որ այս դեպքում ևս չի կարելի խոսել բացառապես կենսաբանական և էթնիկական հասկացության մասին, քանզի արիական ռասան պետք է նշանակի հոգևոր ռասա[24]:

Արյան և ազգային, ռասայական ոգիների միջև անխզելի կապի գաղափարը տարածված էր XX դարի առաջին կեսի գիտամշակութային, քաղաքական կյանքի շրջանակներում: Եթե գիտական մտքի ներկայացուցիչները փորձում էին ուրվագծել այդ երկու երևույթների միջև կապի բնույթը, ապա քաղաքական շրջանակները, իրենց հերթին, փորձում էին կյանքի կոչել ստացված եզրակացությունները: Ընդ որում՝ հարկ է նշել, որ գիտական հետազոտությունները հաճախ կատարվում էին քաղաքական-գաղափարախոսական վերահսկողության ներքո, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ ստացված եզրակացությունների վրա: «Մարդաբանության քաղաքականացման գագաթնակետը,- գրում է Վ. Լարիոնովը,- Երրորդ Ռեյխի «գիտական» ինստիտուտների գործունեությունն էր: Մարդաբանությունը դառնում է գերմանացիների ռասայական գերազանցության ցնորային գաղափարների աղախինը: Աներևակայելի մարդկային զոհերը, որոնք մատուցվեցին նացիզմի սև զոհասեղանին, բազմաթիվ մարդկանց աչքերում մարդաբանությունը դարձնում են չարագույժ գիտություն: Դրա վերակենդանացումն ապագայի գործն է»[25]:

Ինչպես արդեն նշվել է, արյան և ազգային ոգու փոխհարաբերության հարցն արծարծվել է նաև գաղտնաբանական (էզոտերիկ) գրականության մեջ: Վկայակոչելով Մաքս Գենդելի «Ռոզենկրեյցերների տիեզերածնական կոնցեպցիան» աշխատությունը՝ Դենի Բակսանը նշում է, որ այստեղ քննարկվում են ինչպես արյան և ոգու, արյան և ազգային ոգու փոխհարաբերության հարցերը, այնպես էլ արյունախառնությանն ուղեկցող փոփոխությունների հարցը: Բակսանը նաև հավելում է, որ վերոնշյալ աշխատության մեջ ամենայն պարզությամբ է ներկայացվում գաղտնահաղորդների հիմնական նպատակը՝ ռասաների և ազգերի կենսաբանական խառնակումը, որն էլ, իր հերթին, բերում է հայրենասիրության, հայրենիքի, ընտանիքի նկատմամբ կապվածության թուլացում[26]: Ընդունելով և կարևորելով այն միտքը, համաձայն որի՝ արյունը կրողն է մարդու անձնային և ազգային բնութագրերի, Մ. Գենդելը գտնում է, որ արյան խառնումը նպատակ ունի վերացնել այդ բնութագրերը, թուլացնել և ապա բացառել ազգային ինքնատիպությունը, ազգային դիմագծի եզակիությունը: «Այսպես, - գրում է Մ. Գենդելը,- օտար արյան խառնման, տարբեր ցեղերի և ազգերի ներկայացուցիչների միջև խառնամուսնությունների միջոցով մարդուն Վարողները աստիճանաբար նրան օգնում են քշել Ընտանեկան, Ցեղային կամ էլ Ազգային ոգին արյան միջից»[27]: Արյան հիմնախնդիրը չի վրիպել նաև XX դարի խոշոր էզոտերիստ Ռուդոլֆ Շտայների ուշադրությունից: «Արյան օկուլտիստական նշանակությունը» հոդվածում, որը սկսվում է Գյոթեի «Ֆաուստ» ստեղծագործության մեջ շրջանառություն ստացած «արյունը միանգամայն յուրահատուկ հեղուկ է» դատողությամբ, Շտայները գրում է. «Այժմ, երբ արյունը էկզոգամիայի միջոցով խառնվում է, նախնիների հետ սերտ կապը խախտվում է, և մարդ սկսում է ապրել իր սեփական անհատական կյանքը: Այսպիսով, չխառնված արյունը արտահայտում էր նախնիների կյանքի իշխանությունը, իսկ խառնված արյունը՝ անձնական ապրումների: Առասպելներն ու դիցերը վկայում են այդ երևույթների մասին: Դրանք ասում են. «Այն, ինչ իշխանություն ունի արյանդ վրա, իշխանություն ունի քո վրա»: ... Ինչպիսին էլ լինի իշխանությունը, որը ցանկանում է տիրապետություն մարդու նկատմամբ, այդ իշխանությունը պետք է ազդի այնպես, որ ազդեցությունն արտահայտվի արյան մեջ: Հետևաբար, եթե չար ուժը կցանկանար ազդել մարդու վրա, ապա այն պետք է ունակ լիներ ազդելու արյան վրա: ...Քանզի նա, ով իշխում է արյան վրա՝ նա տերն է մարդու կամ մարդկային «Ես»-ի»[28]: Գենդելի և Շտայների տեսակետների ընդհանրությունների մասին է վկայում նաև հետևյալը: «Մենք տե-

սանք,- գրում է Շտայները,- արյան միավորումը միմյանց հետ հեռապես կապված տեսակների արյան հետ՝ սպանում է, իսկ արյունը, որը միավորվում է հարաբերականորեն մերձավոր կենդանատեսակների արյան հետ՝ չի սպանում: ... Ազգի անհատականությունը կարող է քանդվել, եթե գաղութացնելով նրան՝ դուք նրա արյունից կպահանջեք ավելին, քան այն կարող է կրել, քանզի արյան_մեջ է արտահայտված «ես»-ը»[29]: Շտայների տեսակետին նման երկար անդրադարձը պայմանավորված է այն իրողությամբ, որ այն չի սահմանափակվել տեսական երևույթ լինելուց և ձեռք է բերել որոշակի գործնական արտահայտվածություն[30]:

Չի կարելի չնկատել այս տեսակետների և Ա. Հիտլերի տեսակետի ընդհանրությունները: «Իմ պայքարը» գրքի «Ժողովուրդը և ռասան» գլխում Հիտլերը գրում է. «Հին մշակույթների մահացման միակ պատճառը արյունախառնությունն էր և դրանից բխող՝ ռասայի մակարդակի թուլացումը: Մարդիկ կործանվում են ոչ թե պարտված պատերազմների արդյունքում, այլ միայն մաքուր արյանը բնորոշ դիմադրողական ուժի թուլացման արդյունքում»[31]: Իհարկե, Հիտլերն այս տեսակետը գործնականորեն զարգացրեց միանգամայն հակահումանիստական տարբերակով՝ հետամուտ լինելով որոշ քաղաքական նպատակների իրականացման:

XX դարի առաջին կեսում լայն տարածում ստացած այն մոտեցումը, որի էությունն արյան և ոգու էակցության գաղափարի ընդունման մեջ էր, իր արտահայտությունն է գտել նաև ցեղակրոն շարժման ականավոր տեսաբան և Նժդեհի գաղափարակից Հայկ Ասատրյանի ստեղծագործություններում: 1939-ին լույս տեսած «Հայ և գերման ոգու էակցության մասին» հոդվածում Հ. Ասատրյանը գրում է. «Մենք կարող ենք չընդունել «ոգե-մարմնական զուգահեռականութիւնը» որպես փիլիսոփայական տեսութիւն կամ բնազանցական վերացում, բայց ո՛չ ոք կարող է ժխտել ոգու եւ արիւնի փոխադարձ ազդեցութիւնը որպէս կենսաբանական ճշմարտութիւն: Որոշ որակի արիւնը կարող է ծնունդ տալ որոշ որակի ոգու: Ոգու եւ Ոգու միջեւ այնքա՛ն տարբերութիւն կա՛յ, որքան՝ արիւնի եւ արիւնի: Տարբեր են ո՛չ միայն սպիտակների եւ դեղինների մարմնական_հատկանիշները, այլեւ նրանց հոգեգծութիւնը»[32]: Իսկ 1942թ. լույս տեսած «Հայաստան-արիական նախադիրք Առաջավոր Ասիայում» աշխատության մեջ Հ. Ասատրյանը արյունախառնության հարցի հետ կապված որոշակի պարզաբանումներ ու հստակեցումներ է կատարում և դրանք հանրագումարի բերելով՝ նշում. «...Մենք բաւարար հիմքեր ունեք եզրակացնելու, թէ արիւնն է նախապէս որոշում ոգու ճակատագիրը, բայց մի անգամ կաղապարուած ոգին ապրում է եւ իշխում է տուեալ ժողովրդի մէջ, թէկուզ սա ամենայորդ արենախառնումով փոխած լինի մարմնական իր հատկանիշները»[33]: Այստեղից կարելի է գալ այն եզրակացության, որ թեպետ արյունախառնությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ ոգու ներուժի դրսևորման գործում, այնուամենայնիվ չի կարող արմատապես փոխել ոգու առանձնահատկությունները, նրա նկարագիրը: Ոգեսպառությունն առավելապես հետևանք է ինքնաճանաչողության կամքի բացակայության, ոչ թե արտաքին գործոնների համակարգաստեղծ նշանակության:

Վերոշարադրյալից պարզ երևում է, որ XIX-XX դարերում խիստ տարածված էր այն տեսակետը, որի համաձայն՝ ոգին արյան մեջ է, իսկ արյունը ոգու զետեղարանն է: Այս մոտեցումը ենթադրում էր, որ արյունախառնության միջոցով կարելի է հասու լինել ազգային ոգու առանձնահատկությունների թուլացմանն ու աղճատմանը, որն էլ կարող էր հնարավորությունից վերաճել իրականության նաև խառնազգի, խառնացեղ ամուսնությունների տարբերակով: Խառնացեղ ամուսնությունների խնդրին բավական մեծ ուշադրություն է հատկացվել XIX-XX դարերում. մի ժամանակահատված, երբ զարգացում են ապրում եվգենիկան (լավասերում), ռասայագիտությունը, ռասայական հիգիենան: Այս ընթացքում տարածված երևույթ էր բացասական վերաբերմունքը խառնացեղ ամուսնությունների նկատմամբ: Իհարկե, քննադատության սլաքն ուղղված էր ոչ միայն ու թերևս ոչ այնքան միջէթնիկական, որքան միջռասայական արյունախառնությանը (օրինակ՝ արիական ռասան ներկայացնող էթնիկական միավորների խառնվելը սեմական ռասայի ներկայացուցիչ-էթնոսների հետ): Սույն հարցի քննարկումն արդարացված է նաև նրանով, որ կապված է ցեղակրոնության մեջ իր արտացոլումը գտած «արյան պաշտամունքի» հետ:

«Ցեղակրոնության մեջ,- գրում է Մ. Լալայանը,- Ցեղի արյունը աստվածություն է, քանզի սրանով է նաև պայմանավորված Ցեղի հոգեմարմնական կերտվածքը: Ցեղակրոնությունը քարոզում է պաշտամունք Ցեղի արյան նկատմամբ, որի անարատության մեջ է տեսնում մեր ցեղի ապագան: Այլ խոսքով, Ցեղակրոնությունը մերժում է խառնացեղ ամուսնությունները»[34]:

Վերոնշյալ դատողությունից պարզ երևում է, որ ցեղակրոնության մեջ գործ ունենք բացարձակ էնդոգամիայի (ներամուսնության) անհրաժեշտության հետ: Թեպետ ժամանակակից էթնոլոգիական գրականության մեջ ընդունվում է էթնոսի և էնդոգամիայի միջև սերտ կապը, այնուամենայնիվ, չի ընդունվում էնդոգամիային կենսաբանական մեխանիզմների տեսանկյունից խիստ հզոր էթնիկական գործառույթների վերագրումը: Լ. Գումիլյովը, էնդոգամիայի հիմնական «գործառնական ճակատ» համարելով սոցիալականը, նշում է. «Պարզ է, որ էթնիկական ավանդույթների պահպանման համար անհրաժեշտ է էնդոգամիա, քանզի էնդոգամ ընտանիքը երեխային փոխանցում է վարքագծի մշակված կարծրատիպ, իսկ էկզոգամ ընտանիքը նրան փոխանցում է երկու կարծրատիպեր, որոնք մեկը մյուսին փոխադարձաբար մարեցնում են: ... Խոսքը գնում է ոչ թե սոմատիկ տարբերությունների, այլ վարքագծային տարբերությունների մասին»[35]: Էնդոգամիայի կարևորման սոցիալական մեկնաբանության կարելի է հանդիպել նաև Լ. Շանթի ստեղծագործություններում: Խուսափելով ազգային կյանքի կենսաբանականացման մտայնություններից՝ Լ. Շանթը նշում է. «Ազգը պահողը, ազգը շարունակողը, ազգային ոգին, ազգային գծերը, ազգային քաղաքակրթութիւնը, ըլլայ ժառանգութեամբ թէ կրթութեամբ նոր սերունդներուն փոխանցողը ընտանիքն է գլխաւորապես. ան է որ կը դնէ ազգային դրոշմը անհատին վրայ ամենէն աւելի: ... Եթէ գրաւեցին ընտանիքը՝ մեռաւ ազգութիւնը: Ասոր մէջն է խառն ամուսնութիւններու վճռական դերը ազգերու կեանքին ու մահուան վրայ: Մասնաւորապես ճակատագրական են խառնազգի ամուսնութիւնները թոյլ ու փոքր եւ հպատակ ազգերու համար: Խառնազգի ընտանիքը Բաբելոն մըն է, ուր մարդիկ կը խո-

սին տարբեր լեզուներով: Ինչքան ալ երկու կողմէն իրարու դէմ գան սիրով, մեղմութեամբ, լայն մտածումով ու փոխադարձ զիջումներով, երբեք չեն կըրնար լեցնել լիովին այն վիհը, որ կայ տարբեր պատմական դիրքի ու ձգտումներու ու տարբեր քաղաքակրթական ժառանգութիւններու միջեւ»[36]: Այս կապակցությամբ բավականին հետաքրքիր է հրեաների օրինակը: «Սովետական իմաստունների արձանագրությունները» աշխատության «Խորհրդապաշտություն և վիճակագրություն» հատվածում Գ. Կլիմովը նշում է, որ երկար ժամանակ ապրելով ուրիշների հողում և խուսափելով շրջապատող միջավայրում ձուլվելու վտանգից՝ հրեաները ստեղծում են կրոն (հուդայականություն), որի համաձայն՝ արգելվում են խառնամուսնությունները: Մինչդեռ համացեղակիցների և հարազատների միջև բազմադարյա արյունախառնության արդյունքում շատանում է այլասերվածությունը, որը և հաղթահարում են խառնամուսնությունների միջոցով[37]: Ինչպես արդեն նշվել է, ցեղակրոնությունը ենթադրում է բացարձակ էնդոգամիայի անհրաժեշտություն, որտեղ և իր նշանակալի տեղն ունի արյան գործոնը: Թեև գործնականում ժամանակակից էթնոսոցիալական օրգանիզմների համար բացարձակ էնդոգամիայի պահպանումը (տվյալ դեպքում նկատի ունենք հարցի կենսաբանական կողմը) հնարավոր չէ, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ բացարձակ էնդոգամիան կարող է քայքայել ազգային ֆիզիոլոգիան՝ պարարտ հող ստեղծելով ժառանգական հիվանդությունների բարգավաճման համար: Ավելին, եթե բացարձակ էնդոգամիան կարող է բացասական նշանակություն ունենալ էթնոսի ինքնապահպանման գործում, ապա «հարաբերական» (այսինքն՝ ոչ 100%-անոց) էնդոգամիային պատկանում է էական դեր էթնոսի պահպանման գործում[38]: «15-20%-ի սահմաններում էնդոգամիայի խախտումը,- գրում է Բրոմլեյը,- որպես օրենք չի ուղեկցվում էթնոսի համար քիչ թե շատ նկատելի և, առավել ևս՝ անհապաղ հետևանքներով»[39]: Բացարձակ էնդոգամիայի բացասական նշանակությունը դրսևորվում է նաև խիստ մերձավոր, սերտորեն կապված կամ այլ կերպ՝ ներտոհիական, ներընտանեկան արյունախառնությունների պարագայում: Այս առումով բավական հետաքրքիր և ուսանելի է Լ. Վոլտմանի «Քաղաքական մարդաբանություն» հիմնարար աշխատությունը, որտեղ հեղինակը բավական մանրամասնորեն և հանգամանալից վերլուծության է ենթարկում ներռասայական, ներէթնիկական, միջռասայական խաչասերումների արդյունքների հարցը՝ չխուսափելով ներկայացնել իր ժամանակի մարդաբանության մեջ տարածում ստացած հակադիր և անգամ փոխբացառող տեսակետները: «Մարդկանց տոհիական բազմացումը,- գրում է Լ. Վոլտմանը,- պետք է դիտարկվի այլասերման ապացուցված պատճառ: Այն, որ վերջինս թուլացնում է կազմությունը և վերարտադրողական ուժը, ապացուցում է բազմաթիվ դինաստիաների ֆիզիոլոգիական պատմությունը»[40]:

Ծայրահեղացված համարելով «մաքուր արյան» գործոնի դերն էթնոսի ինքնապահպանման գործում՝ հարկ է նշել, որ Նժդեհի կողմից այդ գաղափարի ներմուծումը ցեղակրոնության պաշտամունքային օբյեկտների շարքը, հավանաբար, նպատակ ուներ կանխել իր իսկ դարաշրջանի հայ իրականությանը շատ թե քիչ տիպական էթնիկ ձուլման և էթնիկական յուրակերպության վերացման վտանգը: Մինչդեռ Նժդեհի համար անթույլատրելի էր նաև մշակութային ցեղասպանությունը կամ, այլ կերպ ասած, սպիտակ ջարդը, որը 1915-ի ցեղասպանությունից մազապուրծ և աշխարհասփյուռ հայության համար շարունակում էր մնալ օրակարգային հիմնախնդիր: Ազգի դեմ ուղղված ջարդի այդօրինակ տարբերակն ավելի դաժան էր և անմարդկային, քանզի այդ դեպքում ազգը կարող էր գոյություն ունենալ որպես «ֆիզիկական միավոր», որն անգիտակից և անքննադատ կերպով պետք է ընդուներ այն, ինչ տրվում է՝ աստիճանաբար կորցնելով ինքնությամբ հանդես գալու իր իրավունքն ու հնարավորությունը: Իսկ այս ճանապարհն աստիճանաբար ազգը ստեղծագործության սուբյեկտից վերածելու էր «ոչինչ չասող» օբյեկտի: «Հայը,- իր «Ինքնակենսագրականում» գրում է Նժդեհը,- Հայաստանից դուրս ենթակայ է վատասերումի: Այդ չարիքի դէմ պայքարել հնարաւոր է միայն ցեղային արժէքների, առաքինութիւնների եւ սրբութիւնների խոր ճանաչումով ու վերապրումով,- մի բան, որ հիմնաւորեցի եւ անաւանեցի Ցեղակրօնութիւն: Դրա նպատակն էր՝ անհայրենիք հայութեանը հոգեւոր ու քաղաքական անտուն-անտիրութիւնից փրկելով, դարձնել հայրենատէր»[41]: Իսկ նման բացարձականացված գաղափարը կարող էր թուլացնել ձուլման գործընթացները և խթանել ազգային միասնականության կայացումը: Այս գաղափարն առօրյա գիտակցության մեջ արմատավորվելու հզոր ներուժ ունի նաև: Այսինքն՝ կարելի է նշել, որ ցեղակրոնության շրջանակներում խառնացեղ ամուսնությունների բացարձակ անթույլատրելիությունն առավելապես պայմանավորված էր ազգային ինքնության պահպանման գործում էնդոգամիայի ոչ այնքան կենսաբանական, որքան սոցիալական գործառույթների դերի և նշանակության գիտակցմամբ:

* * *

Գարեգին Նժդեհի ցեղակրոն ուսմունքի շրջանակներում արտահայտություն ստացած արյան պաշտամունքի հիմնախնդրին անդրադարձն արդարացված է նաև այնպիսի թյուրըմբռնումների և քաղաքական շահարկումների հաղթահարման անհրաժեշտությամբ, որոնք արյան պաշտամունքի ընդունումը (անկախ դրա բնույթից կամ մեկնաբանությունից) համարում են անհրաժեշտ և բավարար հիմք ցեղակրոնության և նացիզմի կամ ռասիզմի էակցության ընդունման համար: Այդօրինակ մոտեցումները իրենց արտահայտությունն են ստացել նաև «հետնժդեհյան» իրականության շրջանակներում: Չխորանալով այդ մոտեցումների առաջացման նախադրյալների մանրակրկիտ վերլուծության մեջ՝ այնուամենայնիվ պետք է նշել, որ դրանց նպաստել էին ինչպես ցեղակրոն շարժման գաղափարական հակառակորդների քաղաքական շահերն ու հավակնությունները, այնպես էլ ցեղակրոնության բովանդակության ըմբռնման հետ կապված դժվարությունները: Ցեղակրոնության նկատմամբ խիստ բացասական վերաբերմունք է ունեցել Նժդեհի քննադատ Հակոբ Սիրունին, որն իր հարցաքննություններից մեկի ժամանակ նշում է, որ ինքը ժամանակին թե՛ մամուլում, թե՛ գրքերում և թե՛ տարբեր հավաքների ընթացքում հանդես է եկել ցեղակրոնության՝ «հայկական ֆաշիզմի» դեմ՝ այն ռասայական-կրոնական շարժման փոխարեն անվանելով կեղտոտ-կրոնական: Սիրունին նշում է նաև այն, որ ցեղապաշտ կարող են լինել

միայն հետամնաց ու քոչվոր ժողովուրդները, որ զտարյուն ցեղեր, ռասաներ գոյություն չունեն, և որ հայ ժողովուրդը ցեղակրոն շարժման կարիքը չունի[42]:

Ռ. Մարտիրոսյանն էլ, իր հերթին, հանդես է գալիս առավել ծայրահեղ դիրքերից՝ ցեղակրոնության և նացիզմի թվացյալ ընդհանրությունն անարդարացիորեն ներկայացնելով «անառարկելի նույնության» տարբերակով: «Գ. Նժդեհի գլխավորությամբ,- գրում է Ռ. Մարտիրոսյանը, - բուլղարահայ գաղթօջախում ստեղծվում է «Ցեղակրոնական միությունը»՝ հայ հիտլերյուգենդը: 1934թ. ցեղամոլական այս հոսանքը երիտասարդության շրջանում նոր դաշնակցության, փաստորեն ֆաշիզմի գաղափարախոսություն էր տարածում ԱՄՆ-ում «The Hairenik Weekly» շաբաթաթերթի, իսկ Եվրոպայում՝ «Ռազմիկ» թերթի միջոցով: ... «Մայն կամֆֆի» դրույթները հարմարեցնելով հայ իրականությանը նա ցեղակրոնության՝ ռասայական տեսության վրա հիմնված ինչ-որ նոր կուսակցության ու նոր հայի ծնունդն էր ավետում»[43]: Հարկ է նշել, որ ցեղակրոնության գաղափարին ուղղված այսօրինակ մեղադրանքներին ժամանակին պատասխան է տվել նաև Գարեգին Նժդեհը: Նկատի ունենալով ուսյալ, բայց ոչ բարոյաշունչ մտավորականությանը՝ «ստամտավորականությանը»՝ Նժդեհը գրում է. «Նա վատաբանեց. «Ցեղակրօնութիւնը Հիթլէրութիւն կհոտի»: Նա այսպէս չարամեկնեց, գիտնալով հանդերձ, որ ցեղակրօնութիւնը ծնունդ է առել մեր հայրենի Լեռնաշխարհի գլխին կախուած մեծ վտանգի օրերին, երբ մարդկութիւնը լսած չէր Հիթլէրականութեան մասին»[44]: Գիտակցելով օտար գաղափարախոսական համակարգերի (նացիոնալ-սոցիալիզմ) և ցեղակրոնության բովանդակային խորթությունը՝ Նժդեհը չէր կարող խուսափել բացասական վերաբերմունքից առ այն մոտեցումները, որոնք փորձում էին դրանց բովանդակությունների միջև «համագործակցության դաշտ» ստեղծել: «Ցեղակրոն շարժումը,- գրում է Նժդեհը,- ոչ մի ընդհանուր բան չունի եւ չէր էլ կարող ունենալ օտար վարդապետությունների հետ, քանզի այն, նախ եւ առաջ, բարեփոխիչ շարժում-վերածնունդ է, որը հնարավոր է միայն սեփակա՛ն, այլ ոչ փոխառնված արժեքներով»[45]:

Ցեղակրոնության նկատմամբ ձևավորված բացասական վերաբերմունքը, ինչպես արդեն նշվել է, պայմանավորված էր նաև այդ ուսմունքում արյան պաշտամունքի գոյությամբ: Թեպետ Նժդեհի տեսական ժառանգության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում արյան մաքրության հիմնահարցը, այնուամենայնիվ այս խնդրի նժդեհյան մեկնաբանությունը զերծ է մարդատյացության և ռասայական խտրականության դրսևորումներից: Արյան մաքրության գաղափարի ընդունումը բավական չէ, որպեսզի այս կամ այն մտածողը դասվի ռասիստների, նացիոնալ-սոցիալիստների շարքը: Էականն այս հարցում այդ գաղափարի համապատասխան մեկնաբանություններն են: Անդրադառնալով ռասիզմի հիմնախնդրին՝ Վ. Մալախովը արդարացիորեն նշում է. «Ռասիզմը կարող է հանդես գալ և՛ որպես կենսաբանության մշակութականացում, և՛ որպես մշակույթի կենսաբանականացում: ... Ես չեմ ուզում ասել, թե մարդկանց միջև չկան կենսաբանական տարբերություններ: Խնդիրը չի կայանում նման տարբերությունների ժխտման կամ հաստատման մեջ, այլ կայանում է դրանց մեկնաբանության մեջ: Մասնավորապես, մարդաբանական փաստերից սոցիալ-մշակութային հետևանքների բխեցման մեջ»[46]: Եթե այս տեսանկյունից մոտենանք Նժդեհի արյան պաշտամունքին, ապա անհերկբա կարող ենք ասել, որ այս հարցում Նժդեհը չի հետևում այն մոտեցումներին, որոնք արյան «որակական որոշակիությամբ» համապատասխան ազգային կամ ռասայական աստիճանակարգեր էին ստեղծում: Անգամ եթե ընդունենք այն վարկածը, որի համաձայն՝ Նժդեհն արյունը դիտում էր ազգային ոգու զետեղարան, իսկ վերջինիս դիմագծի պահպանումը պետք է ենթադրեր արյունախառնության բացառում, ապա դարձյալ չենք կարող հանգել Նժդեհի հոգևոր ժառանգության մեջ ազգամիջյան աստիճանակարգի, այլատյացության տեսական հիմնավորմանը: Մարդը Նժդեհի համար արժեք էր՝ անկախ ազգային, սեռային կամ մշակութային պատկանելության փաստից: «Պիտ սիրել բոլոր մարդկանց, - գրում է Նժդեհը, - առանց ցեղի, գոյնի, կուլտուրայի խտրութեան: Այո՛, պիտ սիրել, պիտ կարեկցել, աւելին՝ պիտ օգնութեան փութալ իր նմաններին: Սէրը դէպ մեր նմանները եղել է եւ կը մնայ կրօնների եւ յեղափոխութիւնների հռչակած առաքինութիւններից գերագույնը: Պիտ ապրի մարդասիրութիւնը: Բայց մի՞թե մեր դէպ մարդկութիւնն ունեցած սէրը ազատում է մեզ եւ մե՛ր ժողովուրդը սիրելուց, հայրենասէր լինելուց»[47]:

Վարկածի մակարդակում կարող ենք ասել, որ ցեղակրոնության պաշտամունքային օբյեկտների շարք արյան պաշտամունքի ներմուծումը և խառնացեղ ամուսնությունների արգելումն ուներ առավելապես գաղափարախոսական բնույթ և պայմանավորված չէր ցեղի կենսաբանականացման ներքին համոզմունքով: Ի հավաստումն վերոնշյալի՝ կարող են հանդես գալ հետևյալ գործոնները.

1. Բովանդակային «հատույթում», ընդհանուր առմամբ, Նժդեհի ուսմունքն ունի ոգեպաշտական բնույթ, որի համատեքստում կենսաբանականի «ազգաստեղծ գործառույթը» երկրորդական նշանակություն ունի:

2. Արյան պաշտամունքի ներառումը ցեղակրոնության պաշտամունքային օբյեկտների շարքը միայն և միայն 30-ական թվականների իրողություն էր: Իսկ սա մի ժամանակաշրջան էր, երբ Եվրոպայում վերելք էր ապրում նացիոնալ-սոցիալիստական շարժումը, որի գաղափարախոսության մեջ առանցքային նշանակություն ուներ արյան պաշտամունքը: Այստեղ մաքուր արյունը դիտվում էր մշակութաստեղծ գործոն, իսկ արյունախառնությունը՝ մշակութակործան երևույթ: Չի բացառված այն հանգամանքը, որ արյան նժդեհյան պաշտամունքը «թելադրված էր» նացիստների հետ համագործակցությամբ և հայերին ևս մեկ (գուցե թե վերջին) ցեղասպանությունից փրկելու համար ծավալած տեսագործնական գործունեությամբ, որի նպատակն էր հայերի արիական ծագման հիմնավորումը: Մինչդեռ հայտնի է, որ արիականության հիմնախնդիրը նացիզմում անքակտելի էր արյան պաշտամունքից, արյան հիմնախնդրից:

«Որքան էլ համաձայնվենք հայկական Ցեղակրոնության մարդասիրական և ազգասիրական բովանդակության հետ,- գրում է Ս. Զաքարյանը, - ինչպես նաև՝ Նժդեհի այն մտքի հետ, որ դա ներմուծված վարդապետություն չէ, այդուհանդերձ չենք կարողանում դրանում չտեսնել միջազգային ցեղապաշտական վարդապետությունների ազդեցության որոշ հետքեր, եթե ոչ ուղղակի, ապա անուղղակի, որպես պարտադիր տուրք ժամանակի ոգուն: ... Այսպես, նա տուրք է

տալիս ցեղի կենսաբանական ըմբռնմանը՝ ներմուծելով «արյան պաշտամունքը»...»[48]: Սակայն այստեղ պետք է էական վերապահում անել. եթե նացիստներն արյան մաքրության գաղափարից գնում էին թե՛ դեպի ազգայնամոլություն, թե՛ դեպի այլատյացություն և ծավալապաշտություն, ապա Նժդեհի մոտ այդ գաղափարն ուներ բացառապես ինքնապաշտպանական ենթատեքստ և զուրկ էր ազգամիջյան որևէ աստիճանակարգի ստեղծման մտայնությունից: Այլատյացությունը բնորոշ չէր Նժդեհի տեսական ժառանգությանը: Ազգային կյանքի ոգեկոչողը չէր կարող հանդես գալ կոնկրետ ազգային միավորի վերացման և բնաջնջման գաղափարով: «Այո՛,- գրում է Նժդեհը,- մարդկային ոյժերից վեր է մի ժողովրդի պատմութիւնն սպանել, մի ժողովրդի հոգեւոր հայրենիքը նուաճել: Սակայն, եթէ նոյնիսկ դա հնարաւոր լինէր, արդեօք թոյլատրելի՞ է դա: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Որովհետեւ սպանել մի ժողովրդի ազգայնութիւնը, կը նշանակի սպանել նրա ցեղային հանճարը, կը նշանակի մարդկութիւնը զրկել քաղաքակրթական մի ստեղծագործ ազդակից, որպիսին կը հանդիսանան ազգութիւնները»[49]:

3. Ցեղակրոնության առավելապես գաղափարախոսական միտվածությունն է հավաստում Նժդեհյան հետևյալ միտքը (որը, ավաղ, ուշադրության գրեթե չի արժանացել). «Խաղաղութեան ժամանակ գուցէ եւ կարելի է ապրել առանց ցեղակրօնութեան, վտանգի ժամանակ՝ երբէք»[50]: Այսինքն՝ բացառված չէ այն հանգամանքը, որ այս դատողությամբ Նժդեհը ցանկանում էր շեշտել ցեղակրոնության մեջ տեղ գտած որոշ դրույթների ժամանակահատվածային արդարացվածությունը, ինչպես նաև օրակարգային մի շարք հիմնախնդիրների լուծումների իրավիճակային բնույթը: Իհարկե, սա վերաբերում էր ոչ թե ցեղակրոնության մեջ արտահայտված հայրենասիրական դավանանքին, այլ ազգային ինքնության, ազգային դիմագծի պահպանման համար անհրաժեշտ որոշ սկզբունքների անփոփոխելիությանը և «հավերժական հրատապությանը»:

Անգամ եթե ընդունենք հակառակ տեսակետը՝ շտայներյան ոգով արյան «նժդեհյան» միստիֆիկացիան (սրա օգտին բերվող փաստարկները ավելի քիչ են և սակավ համոզիչ, քան հակափաստարկները), ապա սա ևս բավարար հիմք չէ ցեղակրոնությանը ռասիստական, նացիստական գաղափարական ծանրաբեռնվածություն հաղորդելու համար, քանզի, ի տարբերություն առաջինի, արյան նացիստական կամ հիտլերյան միստիֆիկացիան արյունալի միստիֆիկացիա էր, որն արյան առանձնահատկությունների հիմքի վրա կառուցում էր ազգային, ռասայական աստիճանակարգեր և այլատյացությունը հիմնավորող հակամարդկային տեսական դրույթներ կամ համակարգեր:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ պետք է նշել, որ ցեղակրոնության պաշտամունքային օբյեկտների շարքում ներառված ուժապաշտության և արյան պաշտամունքի դրույթները ոչ մի էական ընդհանրություն չունեն նացիստական, ֆաշիստական կամ ռասայական խտրականություն սերմանող ուսմունքների հետ: Գարեգին Նժդեհի ցեղակրոն ուսմունքում տեղ գտած պաշտամունքային այս օբյեկտները զերծ են հակամարդասիրական լիցքերից, իսկ Նժդեհին ներկայացված մեղադրանքները արդյունք են կա՛մ քաղաքական շահարկումների, կա՛մ ցեղակրոն ուսմունքի և նրա պաշտամունքային որոշ օբյեկտների թյուր կամ սխալ ըմբռնման:

---

1 ԽՍՀՄ-ին բնորոշ գաղափարական կյանքի քաղաքականացումն ու մշակութային կյանքի միօրինականացման միտումներն իրենց արտացոլումը գտան նաև Գարեգին Նժդեհի գործունեության գնահատման հարցում: Բոլշևիկյան գաղափարախոսության քննադատի համագործակցությունը նացիոնալ-սոցիալիստների հետ խորհրդային ժամանակներում լույս տեսած պատմագիտական գրականության մեջ հաճախ ներկայացվել է որպես ազգադավ և հակամարդկային գործունեություն. Նժդեհը ներկայացվել է նացիզմի կամ ֆաշիզմի գործակալի կարգավիճակով, որի գործունեության շարժառիթներ են դիտվել ոչ թե հայրենասիրական մղումները, այլ թե՛ նացիզմի, թե՛ ֆաշիզմի քաղաքական հավակնությունները կյանքի կոչելը (այս մասին տե՛ս Ռ. Մարտիրոսյան, Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Եր., 1984):

Վերջին տարիներին նժդեհագիտական գրականության մեջ այս հարցն արժանացել է լուրջ ուշադրության և նորովի լուսաբանվել: «Երկրորդ աշխարհամարտի սկզբին,- գրում է Ռ. Համբարձումյանը,- երբ Գերմանիան յաղթում էր բոլոր ճակատներում, Գարեգին Նժդեհը համագործակցում է այդ երկրի իշխանութիւնների հետ՝ նպատակ ունենալով կանխել գաղութահայութեան գլխին կախուած՝ հրէաների ճակատագրին ենթարկուելու վտանգը, օգնել հայ ռազմագերիներին եւ վերջապէս հիմնականը՝ Այսրկովկասը գերմանացիներից նուաճելու պարագայում ոչ միայն կանխել Թուրքիայի հնարաւոր ներխուժումը Խորհրդային Հայաստան, այլեւ հնարաւորութեան դէպքում՝ վերականգնել Հայաստանի անկախութիւնը»: (Ռ. Համբարձումեան, Գարեգին Նժդեհ, Եր., 2003, էջ 22):

Այս մասին տե՛ս նաև Մ. Լալայան, Ցեղակրոն և տարոնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունեությունը, Եր., 2001: Յ. Հովսեփյան, Գ. Նժդեհի գործունեությունը երկրորդ աշխարհամարտի տարիներին, «Գարեգին Նժդեհ - 115» (Գիտաժողովների նյութեր), Եր., 2001, էջ 71-77:

2 Ամբողջ շարադրանքում վերկենսաբանականը չի դիտարկվում կենսաբանականից բացարձակ անջրպետվածության տեսանկյունից:

3 Տե՛ս «Հանրապետական», Եր., 1997, հունվար, 1(112):

4 Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 360:

5 Գ. Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2001, էջ 69:

6 Նույն տեղում, էջ 69:

7 Նույն տեղում, էջ 42:

8 Գ. Նժդեհ, Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 197:

9 Նույն տեղում, էջ 205-206:

10 Գ. Նժդեհ, Երկեր, հ. 1, էջ 223:

11 Գ. Նժդեհ, Հատընտիր, էջ 316:

12 Նույն տեղում, էջ 350:

13 Նույն տեղում, էջ 265:

14 Նույն տեղում, էջ 395:

15 Գ. Նժդեհ, Մեծ գաղափար, (նորահայտ նյութեր), Եր., 2002, էջ 92:

16 Ф. Ницше, Сочинения, т.1, М., 1990, с. 478.

17 Ջ. Ֆրեյզեր, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 584:

18 Նույն տեղում, էջ 273:

19 Աստվածաշունչ, Օրինաց (12, 23-24), 1994, էջ 239:

20 Նույն տեղում, Ղեւտացոց (17, 13-14), 1994, էջ 146:

21 П. Сорокин, Человек, цивилизация, общество, М., 1992, с. 245-249.

22 Н. Бердяев, Философия неравенства, М., 1990, с. 101.

23 Н. Устрялов, Германский национал-социализм, http://

magister.msk.ru/library/philos/ustry019.htm

[24] Այս մասին տե՛ս А. Иванов, Бесплотный "Русский Дух", "Расовый смысл русской идеи", вып.1, М., 2000, с. 72-73.

[25] В. Ларионов, Расовые и генетические аспекты этнической истории русского народа, "Расовый смысл русской идеи", вып.1, М., 2000, с. 31.

[26] Այս մասին տե՛ս Д. Баксан, Следы сатаны на тайных тропах истории, гл. 6, http://balkaria.narod.ru/istoria/dbaksan/glava6.htm

[27] Цит. по Д. Баксан, Следы сатаны на тайных тропах истории, гл. 6, http://balkaria.narod.ru/istoria/dbaksan/glava6.htm

[28] Р. Штайнер, Оккультное значение крови, http://kulichki.com/moshkow/URIKOVA/STEINER/occultsignificansofbloodr.txt

[29] Նույն տեղում, http://kulichki.com/moshkow/URIKOVA/STEINER/occultsignificansofbloodr.txt

[30] Նշելով, որ արյան վերաբերյալ շտայներյան դասախոսությունների ակտիվ ունկնդիրներից էին կոմունիստական կուսակցության առաջնորդներ Լենինը, Ձերժինսկին, Բոգդանովը և այլք, Դ. Բակսանը հակված էր ենթադրելու, որ անգամ ինտերնացիոնալիզմի իրականացումն իր իսկ հիմքում ուներ արյունախառնության սկզբունքը: Վկայակոչելով այն հանգամանքը, որ Խորհրդային Միությունում խրախուսվում էին միջէթնիկական, միջազգային կամ խառնացեղ ամուսնությունները, ինչպես նաև մասսայականություն էր «վայելում» դոնորական արյան կամավոր-ստիպողական տարբերակը՝ Դ. Բակսանը եթե ոչ բացահայտ, ապա քողարկված կերպով բացառված չէր համարում խիստ «երևակայական» այն միտքը, ըստ որի՝ «յուրահատուկ հեղուկի»՝ արյան, վիթխարի ծավալները օգտագործվում էին ինտերնացիոնալիզմի կայացման համար, ինչը ենթադրում էր նաև կենսաբանական մերձեցում (տվյալ ազգից ստացված դոնորական արյունը տրվում էր այլազգի ռեցիպիենտին, վերջիններինը՝ այլազգիների): (Д. Баксан, նշվ. աշխ.)

[31] А. Гитлер, Моя борьба, http://lib.ru/POLITOLOG/AE/putx.txt

[32] Հ. Ասատրյան, Արքնացի՛ր, հա՛յ մարդ, «Ազգայնական միտք», թիվ 2, Եր., 1998, էջ 115:

[33] Հ. Ասատրյան, Հայաստան-արիական նախաղիրք Առաջավոր Ասիայում, «Ազգայնական միտք», թիվ 6, Եր., 2000, էջ 72:

[34] Մ. Լալայան, Ցեղակրոն և Տարոնական շարժումներն ու Գարեգին Նժդեհի գործունեությունը, Եր., 2001, էջ 26-27:

[35] Л. Гумилев, Этногенез и биосфера земли, Санкт-Петербург, 2001, с. 98.

[36] Լ. Շանթ, Ազգությունը հիմք մարդկային ընկերության, Եր.,1999, էջ 47-78:

[37] Г. Климов, Протоколы советских мудрецов, http://www.klimovlib.boom.ru/Books/Protok/PSM-16.htm

[38] Ю. Бромлей, Очерки теории этноса, М., 1983, с. 203.

[39] Նույն տեղում, էջ 202:

[40] Л. Вольтман, Политическая антропология, М., 2000, с. 183-184.

[41] Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 304:

[42] Տե՛ս В. Овсепян, Гарегин Нжде и КГБ, Ер., 2001, с. 141-143.

[43] Ռ. Մարտիրոսյան, Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Եր., 1984, էջ 35-36:

[44] Գ. Նժդեհ, Հատընտիր, Եր., 2001, էջ 334:

[45] Նույն տեղում, էջ 313:

[46] В. Малахов, Скромное обаяние расизма, http://www.rol.ru/news/magazine/znamia/n6-20/malahov.htm

[47] Գ. Նժդեհ, նշվ. աշխ., Եր., 2001, էջ 38-39:

[48] Ս. Զաքարյան, Գարեգին Նժդեհ (Փիլիսոփայական ճեպանկար), Եր., 2001, էջ 59:

[49] Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 114:

[50] Նույն տեղում, էջ 391:

TO A QUESTION ON INTERPRETATION OF SOME BASIC IDEAS OF GAREGIN NZHDEH'S PHILOSOPHY

ARMEN SARGSYAN
Research Student of YSU
History of Philosophy Department

Summary

To this day poorly studied and often wrongly interpreted some ideas of Garegin Nzhdeh's philosophy, such as "a cult of force", "a cult of blood" and "correlation of biological and out of biological (blood and spirit)" are being examined in the article from the positions of historical retrospection and comparative approach.

The author of the article shows the inconsistency of any attempts of identification of the doctrine tseghakronutyun with Nazism and racism on the basis of abovementioned Garegin Nzhdehs' basic ideas. Besides, it is put forward a point of view, according to which the involvement of "a cult of blood" in doctrine tseghakronutyun is not determined by the inner conviction of nation's biologicalization.

The humanistic "spirit" of doctrine tseghakronutyun is proved in the article, and all attempts of proracist interpretation of the last one are the product of either political manipulations or of wrong understanding and interpretation.

К ВОПРОСУ ОБ ИНТЕРПРЕТЕНЦИИ НЕКОТОРЫХ ОСНОВНЫХ ИДЕЙ ФИЛОСОФИИ ГАРЕГИНА НЖДЕА

АРМЕН САРКИСЯН
Аспирант кафедры истории философии ЕГУ

Резюме

В статье с позиции исторической ретроспекции и сравнительного подхода рассматриваются по сей день мало изученные и часто превратно истолковывающиеся идеи Гарегина Нждеа, такие как «культ силы», «культ крови» и «соотношение биологического и внебиологического (крови и духа)». Автор статьи показывает несостоятельность всяких попыток идентифицирования учения родорелигиозность (цегакронутюн) с нацизмом и расизмом на основе вышеупомянутых основных идей Гарегина Нждеа.

Кроме этого, выдвигается точка зрения, согласно которой внесение «культа крови» в учение цегакронутюн не обусловленно внутренней убежденностью биологизации нации. Помимо этого, в статье обосновывается гуманистический ''дух'' учения цегакронутюн, а все попытки прорасистского истолкования последнего являются продуктом либо политических манипуляций, либо неправильного понимания и истолкования.

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԻՑԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՄՈՎՍԵՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ
ԵՊՀ տեսական փիլիսոփայության ամբիոնի ասպիրանտ

Թեև ազգային ինքնությունը՝ որպես սոցիալական իրականության նշանակալի գործոն, ոչ վաղ անցյալում մասամբ էր ներառված հասարակական գիտությունների հետաքրքրության ոլորտ, այնուամենայնիվ խնդրին վերաբերող հատկապես վերջին տասնամյակի ուսումնասիրություններում հստակորեն խոսվում է ժամանակակից պայմաններում ազգային-էթնիկական վերածննդի, նույնիսկ մեր օրերի էթնիկական պարադոքսի մասին: Ներկայիս գլոբալիզացիոն (համաշխարհայնացման) գործընթացներին զուգահեռ ընթացող ազգային-էթնիկական զարթոնքը գալիս է հաստատելու ժամանակակից իրականության սոցիալական ցնցումների նկատմամբ էթնիկական կառույցների ապահովությունը, ինքնության ճգնաժամի մեր օրերում ազգային-էթնիկական կեցության «կայունությունը»: Էթնիկ մշակույթների յուրահատկությունների հետ է կապվում նաև գլոբալիզացիայի պայմաններում ժամանակակից համաշխարհային քաղաքակրթության երկու հիմնական թևերի՝ Արևելքի և Արևմուտքի մշակույթների փոխներգործության հնարավորության հարցը: Կարծիք է հայտնվում այն մասին, որ յուրաքանչյուր մշակույթի (քաղաքակրթության) հատուկ է սեփական գենոտիպ և այս իմաստով՝ զարգացման ներքին յուրահատուկ տրամաբանություն[1]: Գենետիկական գործոնը, որով փորձ է արվում հիմնավորել մոտ ապագայում Արևելքի և Արևմուտքի մշակույթների ունիֆիկացման անհնարինությունը, կապված է էթնիկ մշակույթների յուրահատկությունների և ուղեղի ֆունկցիոնալ անհամաչափության հարցերի հետ[2]: Հաստատված է, որ աշխարհի տրամաբանական-վերբալ արտացոլումը, որը հատուկ է արևմտյան տիպի մտածողությանը, կապված է ուղեղի ձախ կիսագնդի գործառնության հետ, իսկ իրականության կերպարային, ոչ վերբալ ըմբռնումը, ինչը բնորոշ է արևելյան տիպի մտածելակերպին, ավելի շուտ պայմանավորված է աջ կիսագնդի գործունեությամբ: Ակնհայտ է, որ այս կամ այն տիպի գերակայությամբ որևէ էթնոսի (ժողովրդի, ազգի) մոտ առկա են մտածողության բոլոր տիպերը:

Հարկ է համաձայնել, որ թեև ներկա պայմաններում, հատկապես ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների առկայության պարագայում, կարող են արտահայտվել մարդու տարբեր հատկությունները, որակները, այնուամենայնիվ գլոբալիզացիոն գործընթացները հազիվ թե ծնունդ տան նոր մարդու, մարդու՝ «առանց որոշակի էթնոսի և քաղաքակրթության, ինչպես նաև առանց խոշոր էթնոսների, որոնց պատմությունն ու մշակույթը հազարամյակներով է հաշվվում»[3]:

Դեռ ավելին՝ վերջին մի քանի տասնամյակների իրադարձությունները՝ կապված միջազգային կոնֆլիկտների, տարածքների վերաբաժանման և ազգային ինքնորոշման խնդիրների հետ, և, մյուս կողմից, հումանիզմի և բարոյականության խիստ պակասը մեր օրերում արդիականացնում են դեռ XIX դարի սկզբին արտահայտված դրույթը, թե «մարդկությունը գիտի ազգային տիպերը, իսկ մարդն «ընդհանրապես» նրան հայտնի չէ»[4]: Ասվածը նոր իմաստավորում է ստանում մարդու՝ որպես «ազգային կերպարի», ինքնության ըմբռնման համատեքստում: Բազմաբևեռ աշխարհում կենսական անհրաժեշտություն է դառնում ազգային ինքնության, «ով լինելու» խնդրի լուծումը, ինչն այսօր իրեն զգալ է տալիս փոխհարաբերությունների գրեթե բոլոր մակարդակներում: Ազգերի միջև շփումները կարող են նույնքան խոր և բարդ լինել, որքան միջանձնային հարաբերությունները, ուստի ազգային ինքնությունը մշակույթների երկխոսության մեջ ստանում է գրեթե նույն նշանակությունն ու կարևորությունը, ինչ ունի անհատական ինքնությունը (ինքնանույնացումը) միջանձնային փոխհարաբերություններում:

Կարծիք է հայտնվում նույնիսկ այն մասին, որ աշխարհը բաժանված է, նախ և առաջ, ազգ-անհատների: «Բոլոր այն կոլեկտիվ ինքնություններից, որոնցում այսօր ընթանում է մարդու կյանքը, ազգային ինքնությունը, երևի թե, ամենահիմնականն ու ամենախորն է»[5]:

Անհատին, «ես»-ին «ազգային իրավիճակի», ազգայինի մեջ ներքաշելու գործում աշխատում են մեխանիզմներ, որոնք ի սկզբանե իռացիոնալ են (օրինակ, կրոնը՝ մուսուլմանական երկրներում): Այս տեսակետից պատահական չէ ինքնության կայացման գործընթացում ազգային զգացմունքի, ազգային երանգավորում ստացող «ռոմանտիզմի» զգալի նշանակությունը:

Մշակույթների երկխոսության մեջ ազգային ինքնությունը կարևորվում է այնքանով, որ ընդգծում է յուրաքանչյուր մշակույթի՝ որպես առանձին «անհատի», երկխոսության սուբյեկտի դերը: Անկախ այն բանից, թե ազգային ինքնագիտակցության մեջ որ տարրն է գերակշռում՝ կրոնականը (արևելյան երկրներ, մասնավորապես՝ Թուրքիա, Իրաք), կամ հասարակական-քաղաքականը (արևմտյան երկրներ), երկխոսության մեջ յուրաքանչյուր մշակույթ բացահայտվում է աշխարհընկալման (նաև՝ «աշխարհաստեղծման»[6]) իրեն հատուկ ձևերով ու մեխանիզմներով: Առավելապես մշակութային երկխոսության մեջ է ընդգծվում ազգային ինքնությունը՝ որպես գործընթաց, որպես կայուն ու անկայուն ընթացք:

«Ազգային վերածննդի» մեր դարում ազգային ինքնության տիպական դրսևորումներից է դիցարարությունը: Բնականաբար, վերջինիս սուբյեկտն ինքն ազգն է, որը ստեղծել է և այժմ վերաշարադրում, վերաիմաստավորում, «վերածնում» է իր մշակույթը[7]: Ազգի պատմական հիշողությունն ընդգրկում է ոչ միայն հայտնի, «տեսանելի» պատմությունը, այլև գնում է ավելի հեռուն՝ դեպի ազգի դիցաբանական ծագումը, ցույց է տալիս բնությունից նրա սնուցումը: Ազգային «հիմքերի» կամ «արմատների» որոնումը ժամանակակից պայմաններում ձեռք է բերում առասպելաստեղծման նոր գծեր: Այս գործընթացը, որպես կանոն, ընթանում է տարերայնորեն՝ հիմնվելով

պատմական հիշողության, առասպելների, ավանդույթների «վերակենդանացման» (հաճախ՝ առանց նպատակի հստակ գիտակցման) վրա: Սակայն, ինչպես ցույց կտրվի ստորև, հատկապես ժամանակակից պայմաններում դիցարարությունը կարող է հանդես գալ իբրև նպատակադրված գործունեության արդյունք:

Անցյալի իմաստավորումը միայն ճանաչողական ակտ չէ: Նրա բարոյախոսական բովանդակությունը բացահայտվում է տվյալ ազգի համար ճգնաժամային, վճռորոշ իրավիճակներում: Ինչպես հայտնի է, ազգային դիցարարությունը (հատկապես փոքր ազգերի համար) կատարում է իրականությանը հարմարվելու, «սևն ու սպիտակը», բարին ու չարը տարբերակելու և իմաստավորելու գործառույթ, այն վերացնում է իրականությունը հասկանալու, նրանում կողմնորոշվելու անկարողության զգացումը: Առասպելն ավանդաբար դիտարկվել է որպես իրականության պարզեցում. այն ներկայացնում է իրականությունը երկբևեռ դիխոտոմիայի (երկճյուղման) տեսքով: Այսպիսի սխեման աղքատացնում է իրականությունը՝ մեկնաբանելով այն «բարի-չար», «բարեկամ-թշնամի» հակադրությունների միջոցով: Այս պայմաններում առանձնահատուկ նշանակություն է ստանում էթնոգենետիկական առասպելը[8], որում արտահայտվում է էթնոսի իրավունքը տարածքի, սեփական մշակույթի պահպանման վերաբերյալ, քաղաքական տրամադրությունները՝ ընդհուպ մինչև ինքնորոշման իրավունքի ձեռք բերում:

Ազգային առասպելաստեղծման մեջ կարևոր տեղ են զբաղեցնում ընդհանուր նախնիների, տվյալ ազգի երբեմնի «ոսկե դարի», ապա կործանման, տարածքի կորստի, պատերազմների, գաղթի մասին ունեցած պատկերացումները: Գրեթե բոլոր ազգերին է հատուկ նաև հավատը ապագայում վերածննդի, ազգային զարթոնքի նկատմամբ: Հայի պատմական հիշողության մեջ առկա են պատկերացումները և՛ ընդհանուր նախնու՝ Հայկի, և՛ «ոսկե դարի», և՛ հայրենիքի կորստի մասին, և՛, իհարկե, հավատը ապագայում ազգի վերածննդի, պատմական արդարության հաստատման հանդեպ:

Ժամանակի և տարածության մեջ սեփական մշակույթի մասին պատկերացումների դիցաբանականացման մակարդակը մինչ այսօր էլ շատ բարձր է: Մեր օրերում ազգային երանգավորում ստացող համոզմունքների և զգացմունքների վիթխարի պաշարի ազդեցության տակ ժամանակակից մարդը, պատռելով քաղաքավարության թաղանթը, իր վարքում կարող է առաջնորդվել անցյալի նորմերով: Ճգնաժամային իրադրություններում մարդն (ազգը, ժողովուրդը) անցյալում է փնտրում ուղեցույցներ՝ ներկա քաոսային կյանքում դրանցով առաջնորդվելու համար: Տվյալ դեպքում՝ վերջիններիս տրամաբանությունն ու փոխկապակցվածությունն ավելի կարևոր են, քան դրանց համապատասխանությունն իրականությանը:

Ազգային ինքնության գաղափարն անձնավորում է ազգը, այն դարձնում է միասնական օրգանիզմ: Այս գործընթացում հաճախ մեծ դեր է խաղում թշնամու գործոնը, որի կոնկրետ կերպարն առկա է գրեթե բոլոր ժողովուրդների մոտ, և որի հետ համադրության մեջ ձևավորվում ու կայունանում է տվյալ ազգի ինքնագիտակցությունը: Թշնամու գաղափարը մեծապես օգտագործվում է ներքին միասնականությունն ընդգծելու համար: Այդպես, Սումգայիթում կատարված ոճրագործությունը հիշեցրեց հայոց պատմության արյունոտ էջերը և արմատավորեց (ոչ առաջին անգամ) ճակատագրից խուսափելու անկարողության զգացումը՝ դրանով հանդերձ ակտիվացնելով ազգային ինքնագիտակցությունը և միավորվելու ձգտումը: Որպես կանոն՝ թշնամու կերպարն անձնավորվում է ի դեմս կոնկրետ ժողովրդի, ազգի: Օրինակ, հայերի նկատմամբ պանթուրքիզմի գաղափարախոսության հետևողական իրականացումն «աշխարհի հայկական պատկերում» ամրագրել է թուրքի՝ որպես հավերժական, ճակատագրական թշնամու կերպարը[9]:

Հայտնի է, որ առասպելն առաջանում է իրականության իմաստավորման ընթացքում, ինչը լրացվում է սուբյեկտիվ (տվյալ դեպքում՝ ազգային) երևակայությամբ: Այն իրականության հուզական, բարոյականության երանգով վերապրումի փորձ է: Դիցաբանության մեջ մարդը (ազգը, էթնոսը) աշխարհին է վերագրում իրեն հատուկ (ազգային, էթնիկական) առանձնահատկությունները՝ այդքանով իրականությունը դարձնելով սեփական ճակատագրի մասնակից: Իրականության երկճյուղ բաժանվածության մեջ ազգը միշտ հանդես է գալիս «դրական», «բարի», երբեմն «տուժածի» կերպարով: Դրանով հիմք է ստեղծվում անցյալի հերոսացման և տարածքային, քաղաքական դիրքորոշումների արդարացման համար: Վերջիններս մեծապես արտահայտվում են քաղաքական դիցարարության դաշտում, որի համար որպես հիմք են ծառայում ընդհանուր պատմությունն ու մշակույթը:

Հայտնի է նաև, որ այն հասարակությունում, որտեղ չկա լեզվական, մշակութային ընդհանրություն, կազմվում են առասպելներ, որոնք վեր են կանգնած բոլոր ազգային, էթնիկական, մշակութային տարբերություններից: Այդպիսի առասպելաստեղծումն ունի շեշտված սոցիալական երանգավորում: Որպես օրինակ կարող է ծառայել այսպես կոչված «ամերիկյան կենսակերպը», որն այսօր շեշտված առասպելաստեղծման օբյեկտ է: Տարբեր էթնոկոնֆեսիոնալ միավորներից բաղկացած ամերիկյան հասարակության միասնական ինքնության կառուցման համար անհրաժեշտ էր վերազգային և վերկրոնական գաղափարախոսություն, որը և մարմնավորվեց «ամերիկյան կենսակերպ» կոչվող սոցիալական ուտոպիայի տեսքով: Վերջինիս շուրջ ծավալվող առասպելաստեղծումը տարածում է նրա՝ որպես «երկրի վրա դրախտային կյանքի» նկատմամբ հավատը: Ամերիկյան հասարակության պայմաններում ազգային պատկանելությունը փոխարինվում է քաղաքացիությամբ, ազգային լեզուն՝ պաշտոնական անգլերենով, իսկ ազգային-էթնիկական ինքնությունը՝ իրականության նկատմամբ սոցիալ-ուտոպիական դիրքորոշումներով: ԱՄՆ-ում այսպես թե այնպես ներկայացված ազգային-էթնիկական գրեթե բոլոր մշակույթներին փոխարինելու է գալիս մասսայական մշակույթը, որը նույնն է՝ տիպական բոլորի համար: Նրանում հնարավոր չեն ազգային ինքնատիպ դրսևորումները, այն չի ճանաչում լեզվական բազմազանություն;

Ի տարբերություն այլ մշակույթների, որոնց համար սնուցող աղբյուրներ են ընդհանուր պատմությունը, պատմական հիշողությունը, ազգային դիցաբանությունը, մասսայական մշակույթը պահպանվում է շնորհիվ զանգվածային արտադրության արդյունք հանդիսացող անհամար առասպելների:

Մինչդեռ յուրաքանչյուր ազգի մշակույթ «ուրիշ» է: Ազգի ստեղծագործական ներուժի ինքնարտահայտումը մեծապես հնարավոր է, թերևս, սեփական մշա-

կույթի միջոցով: Ազգային յուրահատկությունների գունագեղ բազմազանության փոխարեն համամարդկային մշակույթը ժամանակակից պայմաններում հանգեցնում է առավելապես նյութական պահանջմունքների բավարարմանը կամ ենթադրում է որևէ մեկ մշակույթի դոմինանտություն: Նրանում ոչ ոք իրապես երջանիկ չի լինի[10]:

Նման ընդգծված սոցիալական երանգավորում ունեցող «արհեստական» առասպելաստեղծումը կտրում է մարդուն իր հիմքերից, ազգային-էթնիկական արմատներից, զրկում հոգևոր սնուցման աղբյուրներից: Ժամանակակից առասպելաստեղծումը, եթե հիմնված չէ ժողովրդի պատմական հիշողության, ազգային մշակույթի անկրկնելիության, իրականության վերապրման յուրօրինակ հոգեբանական մեխանիզմների վրա, ձևավորում է մարդու այնպիսի տեսակ, որն ի վիճակի չէ դիմակայել ժամանակի մարտահրավերներին, առավել ևս՝ ըմբռնել (որպես «ուրիշ») վերջիններիս իմաստը: Ազգային առասպելաստեղծումն ընդգրկում է այնպիսի «գործնական» բաղադրատարրեր, ինչպիսիք են գործունեության ոլորտը, վարքի նորմերը, որոնցում մեծ է կրոնի, կրոնական ինքնության ազդեցությունը, բարդ իրավիճակներին հոգևոր հարմարման (ադապտացիայի) մեխանիզմները: «Ի վերջո, ազգն ու ազգային ինքնությունն են դառնում գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացների ճանաչման աղբյուր»[11]:

Ազգային-էթնիկական զարթոնքի ժամանակակից պայմաններում կրոնական գործոնն է հավակնում, երևի թե, վճռական դերը խաղալ գլոբալ իրադարձություններում և ավելին՝ նոր աշխարհակարգի կայացման գործընթացում: Կրոնի վրա հիմնված գաղափարախոսությունը, արտահայտելով հասարակության (որոշ երկրներում՝ մեծամասնության) տրամադրությունները, կարող է պայմանավորել նաև նրա քաղաքական և աշխարհաքաղաքական դիրքորոշումները: Այսօրվա պայմաններում կրոնը հանդես է գալիս որպես իրականությանը սոցիալական տարբեր խմբերի հարմարման մեխանիզմ, տարերայնորեն կազմավորվող զանգվածային գիտակցությունը համակարգող, ավարտուն տեսքի բերող միջոց:

Ենթադրվում է, որ կրոնն ու քաղաքականությունը չեն գործում մեկուսացված. երկուսն էլ միաժամանակ իրենց ազդեցությունն են թողնում ժամանակակից քաղաքական իրադարձություններում, լրացնում են միմյանց՝ իբրև լայն զանգվածները միավորող և ուղղորդող գործոններ[12]:

Կրոնը միայն իրենով չի կարող պայմանավորել մարդու սոցիալական, տնտեսական, քաղաքական դիրքորոշումները, բայց կարող է դրանց ամբողջական բնույթ և, որպես կրոն, բարձրագույն ճշմարտությանը հավակնող բովանդակություն հաղորդել: Չնայած շատ է խոսվում իսլամական տնտեսության, իսլամական գիտության, Ղուրանի՝ իբրև մուսուլմանական երկրի համար միակ հնարավոր Սահմանադրության մասին, դրանք ավելի շուտ պանիսլամիզմի գաղափարախոսության ծայրահեղ դիրքորոշումներն են, քան թե իրական գործող մեխանիզմներ: Ոչ այնքան կրոնական զարթոնքն է պարունակում կոնֆլիկտայնություն, որքան քաղաքականության հետ նրա ունեցած ուռճացված կապը, այն ամենը, ինչը հավակնում է աշխարհաքաղաքական խնդիրների լուծմանը:

Հայտնի է, որ կրոնականն ավանդաբար նույնացվել է բարոյականի հետ: Ժամանակակից պայմաններում բարոյականության խիստ պակասն առավել է արդիականացնում թե՛ անհատի, թե՛ ազգի կրոնական ինքնության դերը: Իսլամական (և ընդհանրապես՝ կրոնական) վերածնունդը մեր օրերում, թվում է, կոչված է լրացնելու գլոբալիզացիայի հետևանքով առաջացած հոգևոր վակուումը: Կրոնական ինքնության պարագայում Հայաստանում ևս ազգի պատմությունը, ներկան և ապագան դիտարկվում են որպես վերուստ կանխորոշված գործընթաց, որպես հատուկ առաքելության իրականացում, և այս տեսակետից՝ ունեն բարոյական արդարացվածություն:

Ժամանակակից պայմաններում կրոնը մարդու աշխարհայացքային-վարքային ակտիվության գլխավոր կարգավորիչներից մեկն է: Եվ որքանով այն ազգային ինքնության կառուցվածքաստեղծ գործոն է, այդքանով պայմանավորում է դիցաբանական նշանակություն ստացող «ազգային խնդիրների, նպատակների և առաքելությունների» ձևավորումն ու իրականացումը:

Վերջին տարիների ահաբեկչական գործողությունները, որոնք երբեմն դառնում են բազմաբնույթ բողոքների արտահայտման միակ «լսելի» միջոցը, ցույց են տալիս, որ մեր օրերին հատուկ կոնֆլիկտայնությունն ընթանում է ոչ թե տարբեր քաղաքակրթությունների՝ իբրև աշխարհագրական միավորների, այլ ժամանակակից աշխարհի հոգևոր և աշխարհիկ կենտրոնների միջև, ինչն էլ առավել ակնհայտորեն դրսևորվեց 2001թ. սեպտեմբերի 11-ին՝ ահաբեկչության ձևով: Ուղղված լինելով Համաշխարհային առևտրի կենտրոնի և Պենտագոնի՝ իբրև տնտեսական և ռազմական մենիշխանության սիմվոլների դեմ, ահաբեկչությունը պատասխան էր կայացող միաբևեռ աշխարհի սպառնալիքին: Հատկանշական է «Քաղաքակրթությունների բախում» անվանումը կրող աշխատության հեղինակ Ս. Հանտինգտոնի տեսակետը սեպտեմբերյան իրադարձությունների վերաբերյալ. «Այս ահաբեկչությունը, ամենից առաջ, բարբարոսների հարվածն էր աշխարհի քաղաքակիրթ հասարակությանը: Հարկ է հաշվի առնել, որ այն դեռևս մշակույթների բախում չէ: Սակայն քաղաքակրթությունների իսկական բախումից կարելի է խուսափել միայն այն դեպքում, եթե իսլամական պետությունները միանան ԱՄՆ-ին՝ ահաբեկչության դեմ պայքարելու համար: Սկզբունքային խնդիրը հետևյալն է. վտանգը գալիս է և՛ պետություններից, և՛ փոքր խմբերից, որոնք լայնորեն կիրառում են ինֆորմացիայի տարածման և կապի նորագույն միջոցները: Բացի այդ, մեր օրերում զարթոնք են ապրում ֆանատիզմի տարբեր դրսևորումները, այդ թվում և նրա կրոնական տարբերակը»[13]:

Ժամանակակից պայմաններում «քաղաքակրթությունների բախման» հիպոթեզի շուրջ ծավալված առասպելաստեղծումը լայն զանգվածների պատկերացումներում ձևավորում է Արևելքի, իսլամի, իսլամական արմատականության կամ ֆունդամենտալիզմի նկատմամբ բացասական դիրքորոշում, որում շեշտը դրվում է մասսայական իսլամֆոբիայի, մուսուլմանական երկրների նկատմամբ «կենսաբանական վախի» առաջացման վրա: Վերջինիս արդյունավետությունը մեր օրերում ապահովվում է շնորհիվ տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառման:

Ամենայն հավանականությամբ, մոտ ապագայում կանխատեսվող ինֆորմացիոն պատերազմն իր հետ կբերի բռնության նոր տեսակներ: Ինֆորմացիոն հակամարտության հիմնական հարվածի կրողը ժամանակակից մարդն է՝ առավելապես իր հոգեկան և նույ-

նիսկ կենսաբանական մակարդակներում: Այդպես, իր մատչելիությամբ և պարզությամբ հաճելի լինելով՝ ինֆորմացիան, միաժամանակ, մարդու գործունեության մոտիվացիոն դաշտում կարող է հանդես գալ որպես ապակառուցողական տարր: Առավել ևս, երբ խոսվում է ժամանակակից սոցիալական իրականության անբաժանելի ուղեկից զանգվածային «արհեստական» առասպելաստեղծման մասին:

Որպես մասսայական գիտակցության դրսևորման ձև՝ առասպելը մեր ժամանակներում ևս հազիվ թե կորցնի իր նշանակությունը: Այն ավանդաբար մեկնաբանվում է իբրև անգիտակցական գործունեության կամ երևակայական մտածողության արդյունք, մինչդեռ ժամանակակից առասպելաստեղծումը զուրկ չէ ծրագրավորվածությունից: Այն ստեղծվում է կոնկրետ նպատակով և գործում է նախատեսված ժամանակահատվածում: Ժամանակակից պայմաններում քաղաքական առասպելաստեղծումը հանդես է գալիս որպես բռնության նոր ձև, որի դեմ պայքարելը չափազանց դժվար է: Եթե քաղաքական ներգործության ավանդական մեխանիզմները մարդուն ազատ էին թողնում գոնե իր անձնական կյանքում, ապա ժամանակակից քաղաքական առասպելաստեղծումը ղեկավարում է մարդու հույզերը, տրամադրությունները նրա կյանքի յուրաքանչյուր պահին՝ անհրաժեշտ ուղղությամբ:

Քաղաքական առասպելաստեղծման ազդեցությունն ազգային ինքնության կայացման վրա հիմնվում է առասպելի՝ որպես զանգվածային գիտակցության արտահայտման միջոցի յուրահատկությունների վրա: Դրանք են, օրինակ, նրա սերտ կապը մասսայական գիտակցության հետ (առասպելը միշտ կոլեկտիվ, զանգվածային ինքնորոշման արդյունք է), նրա արտատրամաբանական (հույզերի և զգացմունքների վրա հիմնվող) բնույթը, նրանում ընդհանուրի և անհատականի միահյուսվածությունը:

Ազգային դիցարարության վերջնական նպատակը հանդիսացող ազգային միասնականությունը չի կարող որպես այդպիսին ըմբռնվել առանց նրանում քաղաքական պրոցեսների և նպատակների ներգրավման:

Արևմուտքում իշխող գաղափարախոսությունը՝ ազատականությունը (լիբերալիզմը), մեծ դեր է խաղում Եվրոպայի ինքնության՝ իբրև ժամանակի ոգուն համապատասխան քաղաքակրթության, ձևավորման գործում: Պատահական չէ, որ «անցյալ-ներկա-ապագա» եռմիասնությունը լիբերալիզմի ազդեցության ներքո փոխարինվում է «ավանդականություն-մոդեռն» հակադրությամբ: Եվ ավելին՝ որոշ աղբյուրներում պրոգրեսը ներկայացվում է որպես եվրոպական քաղաքակրթության մենաշնորհ, որպես արդյունք այդ քաղաքակրթության[14]:

Այս տեսակետից ժամանակակից իրականությունը բնութագրվում է իբրև Եվրոպայի կողմից սեփականաշնորհված մոդեռնի և ողջ մարդկության մշակութային փորձի հակադրություն, որի հիմնական կոնցեպցիան՝ «The west against the rest» («Արևմուտքն ընդդեմ մնացյալների»), ոչ արևմտյան աշխարհին վերագրում է մարդկային հատկություններից զուրկ «չարի կայսրության» գործառույթը, որի վերափոխման առաքելությունը տրված է «առաջադեմ մարդկությանը»:

Ինչպես յուրաքանչյուր առասպելաստեղծում, այնպես էլ քաղաքականն ամենից առաջ բարդ իրականության պարզեցում է, ինչի շնորհիվ լայն զանգվածներն առնչվում են իրականության բարդ պրոցեսներին: Քաղաքական առասպելաստեղծման տեխնոլոգիան գործառնում է բոլորին հասկանալի լեզվով՝ պարզ սիմվոլների, կարճ ֆրազների տեսքով:

Միևնույն ժամանակ քաղաքական դիցարարությունն իրականության այնպիսի դիտարկում է, որը հարմարեցնում է արտաքին աշխարհը նախապես տրված մշակութային սխեմային և այդքանով մեղմում իրականության հետ շփման հոգեբանական լարվածությունը: Քաղաքական առասպելաստեղծումը, որը ձևավորվում է ազգային մշակույթի համատեքստում, հիմնվում է իրական պատմության վրա, կազմվում քաղաքական փորձի գնահատման դաշտում: Այլ հարց է, որ այդ փորձը հետագայում կարող է կարգավորվել անգիտակցական մեխանիզմներով՝ վերածվելով ժողովրդի կողմից ընդունելի պատկերացումների համակարգի:

Հայաստանի ժամանակակից քաղաքական առասպելաստեղծումը ելնում է հիմնականում XX դարի պատմական փորձից, որը հայի համար պատմական նոր ողբերգությունների ժամանակահատված էր: Հայ ժողովուրդը պատմության յուրաքանչյուր պահին կանգնած է եղել սեփական մշակույթի, ինքնատիպության պահպանման խնդրի առջև, ստիպված է եղել իրականությանը հարմարվել, նրան մերվելու նոր մոդելներ փնտրել կամ ստեղծել այդպիսիք: Քաղաքական առասպելաստեղծումը սահմանում է քաղաքականությունը հաստատված նմուշների, օրինակների միջոցով, ինչն, իհարկե, սահմանափակում է քաղաքական մշակույթի հարստացումը, քաղաքական մտածելակերպն ընդհանրապես, սակայն փոխարենը ազգին տալիս է ամենաողբերգական իրականությանը հարմարվելու ռեալ լծակներ:

Հայերի համար պատմականորեն վերջին ճգնաժամային իրավիճակներից մեկի՝ Ղարաբաղյան հակամարտության ժամանակ ակնհայտ դարձավ, որ միևնույն ազգի ներկայացուցիչները նույն իրավիճակի նկատմամբ կարող են ունենալ արժեքային տարբեր դիրքորոշումներ: Սփյուռքին հատուկ է արժեքային դիրքորոշումների հակասականությունը. մի կողմից այն յուրացնում է արևմտյան արժեքները, մյուս կողմից՝ նրան հատուկ է անցյալի հերոսացումը և կորցրած արժեքները վերադարձնելու ձգտումը: Իսկ Հայաստանի հայերի համար այս հարցում երևի թե առաջնային է արտաքին (շատ դեպքերում՝ քաղաքական) գործոնի ընդունումը[15]: Միևնույն ժամանակ թե՛ Սփյուռքը, թե՛ Ղարաբաղը «մայրական էթնոսի» ճգնաժամի ժամանակ կատարում են ազգապահպան, ազգային ինքնության կառուցման այլընտրանքային գործոնի դեր:

Ի վերջո, յուրաքանչյուր ազգ ժամանակ առ ժամանակ բարոյական փորձության է ենթարկում իր առասպելները: Նրանք, որոնք չեն ապացուցում իրենց բարոյական կենսունակությունը, դատապարտվում են «չգոյության»: Բացառություն չի կազմում քաղաքականությունը, որը ժամանակակից պայմաններում առավել քան երբևէ ենթարկվում է բարոյական փորձությունների:

---

[1] Այդ մասին տե՛ս Кессиди Ф.Х. Глобализация и национальная идентичность. // Вопросы философии. 2003 N 1. с. 76-79.

[2] Այդ մասին տե՛ս Ротенберг В.С., Аршавский В.В. Межполушарная ассиметрия мозга и проблема интеграции культур.// Вопросы философии. 1984 N 4. Էջ 78-86.

[3] Кессиди Ф.Х. указ. тр., с. 75.

[4] Մեջբերումն Блu Блu -Сухачев В.Ю. Человек в национальном и этническом измерениях.// Философская антропология как интегративная дисциплина.СПбГУ, 2001. с.75 (http://homc.comsct.net/vinal/cthnoburcau/txt/sux7.htm 21.03.2002).

[5] Anthony D.Smith. National identity. Nevada, 1991. p. 71.

[6] Библер В.С. Диалог.Сознание.Культура.(Идея культуры в работах М.М.Бахтина). //Одиссей. Человек в истории. М., "Наука". 1989, с. 28

[7] Սա չի նշանակում, որ ազգային մշակույթը «վերջնական տեսքի եկած» համակարգ է, և որ նրանում նորամուծություններ հնարավոր չեն: Մշակույթների ենթադրվող «բաց» բնույթը նշանակում է նաև այլ մշակութային արժեքների յուրացում և իմաստավորում, ինչն այսօր առավելագույնս երևում է քաղաքական մշակույթների պարագայում:

[8] Տե՛ս Шнирельман В. Ценность прошлого: Этноцентристские исторические мифы, идентичность и этнополитика.//Реальность этнических мифов. Выпуск 3. М., Генгальф. 2000, с. 21.

[9] Հայ ժողովուրդը ոչ պակաս, եթե ոչ ավելի, ճնշվել է քրդերի կողմից, սակայն նրանց չի դիտում իբրև «պատմական թշնամի»: Միևնույն ժամանակ հայի համար այդչափ կարևոր «դաշնակցի» դերում հանդես է գալիս Ռուսաստանը, ռուս ժողովուրդը:

[10] Տե՛ս Трубецкой Н.С. История. Язык. Культура. М., Прогресс. 1995. с. 120:

[11] Anthony D.Smith. National identity. Nevada, 1991, p. 144.

[12] Տե՛ս Митрохин Л.Н. Религия и политика. М., Знание. 1991, с.18.

[13] Сэмюэль Хантингтон. Это не столкновение культур. (http://www.archipelag.ru/text/319.htm Сетевой проект русского мира "Русский Архипелаг" 02.13.2002).

[14] Այդ մասին տե՛ս Ben J.Wattenberg. The first universal nation. US-Pres,1991, p. 204.

[15] Տե՛ս Светлана Лурье. Историческая этнология. М., Аспект-Пресс. 1998, с. 395.

NATIONAL IDENTIFICATION AND MYTH - CREATIVITY IN A MODERN CONTEXT OF DIALOGUE OF CULTURES

MOVSES DEMIRTCHYAN
Research Student of YSU Theoretical Philosophy Department

Summary

The experience which has been saved up by mankind last decades, testifies that national-religious revival was the answer to calls of globalization, the answer which is called to fill in the spiritual vacuum generated by globalization. The geopolitic processes, developed mainly on "The East-The West" civilization lines, frequently accompanied and directed by religious motives, nowadays appear as struggle between wordly (in special americanized understanding) and spiritual – as two alternative ways of the worldsystem.

For today in dialogue of cultures the growing role is played with a phenomenon of national identification, which is connected to comprehension of the culture in a context of Big Time and, in today's conditions, with the spiritual-emotional attitude to a cultural heritage. The last is especially brightly expressed in the East that speaks as well the special religious factor in ethno psychology of east peoples. In dialogue of cultures national identification has about the same value, as well as personal identification – in interpersonal attitudes. National (no less than any another) identification is closely connected with myth-creativity, to what associated the basic problems of human consciousness and being in revealing of the very-beginning of cultures. Search of certain national "roots" and "sources", special "national idea" or "national character" gets features of new myth-creativity. In postindustrial society based on mass consciousness modern myth-creativity, owing to the newest means of the information control, expands horizons of the activity, applying already on " the right of a casting vote " in such responsible area such as the policy is.

Being object of mythologization in the close communication with mass consciousness, a policy, as the most active element in modern inter-civilization dialogue processes, becomes, thus, the instrument of a manipulation of mass and means of the total control. Political myth-creativity, as well as any another, adapts reality to primary cultural-set scheme, softening, thus, "collision" with reality. Eventually, any myth-creativity from time to time is exposed to moral test. Does not make exception and political myth-creativity, which today more than ever is subject to moral peripetias.

НАЦИОНАЛЬНАЯ ИДЕНТИФИКАЦИЯ И МИФОЛОГИЗАЦИЯ В КОНТЕКСТЕ ДИАЛОГА СОВРЕМЕННЫХ КУЛЬТУР

МОВСЕС ДЕМИРЧЯН
Аспирант кафедры теоретической философии

Резюме

Опыт, накопленный человечеством в последние десятилетия, свидетельствует о том, что национально-религиозное возрождение явилось ответом на вызовы глобализации, ответом, который призван заполнить порожденный глобализацией духовный вакуум. Развертывающиеся преимущественно по цивилизационной линии Запад-Восток геополитические процессы, зачастую сопровождаемые и направляемые религиозными мотивами, ныне предстают как борьба мирского (в особом американизированном понимании) и духовного – как двух альтернативных способов мироустройства.

На сегодняшний день в диалоге культур возрастающую роль играет феномен национальной идентификации, который связан с осознанием своей культуры в контексте Большого Времени и, в сегодняшних условиях, с духовно-эмоциональным отношением к культурному наследию. Последнее особенно ярко выражается на Востоке, что объясняется также и особым религиозным фактором в этнопсихологии восточных народов. В диалоге культур национальная идентификация имеет примерно такое же значение, как и личностная идентификация в межличностных отношениях. Национальная (равно как и любая другая) идентификация тесно связана с мифологизацией, с чем ассоциируются основные проблемы человеческого сознания и бытия в выявлении первоначала культур. Поиск неких национальных "корней" 8 "истоков", особой "национальной идеи" или "национального характера" приобретает черты нового мифотворчества.

Являясь объектом мифологизации именно в своей тесной связи с массовым сознанием, политика, как наиболее активный элемент в современных межцивилизационных диалоговых процессах, становится, таким образом, орудием манипулирования массами и средством тотального контроля. Политическое мифотворчество, как и любое другое, адаптирует реальность к изначальной культурно-заданной схеме, смягчая, таким образом, "столкновение" с реальностью. В конце концов, любое мифотворчество время от времени подвергается нравственному испытанию.

ՄԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Փիլիսոփայական իրությունների դոկտոր, պրոֆեսոր

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Ինչպես հայտնի է, 20-րդ դարի 40-60-ական թվականներին փիլիսոփայական, մշակութաբանական և բանասիրական գրականության մեջ շրջանառության մեջ դրվեց «հայկական Վերածնություն» տեսությունը, ըստ որի՝ 10-14-րդ դարերում Հայաստանում «տեղի է ունեցել» եվրոպական Վերածնության հար և նման Վերածնություն, ուստի այդ շրջանի հայ մշակույթը պետք է դիտել որպես Վերածննդի դարաշրջանի մշակույթ: Իրենց տեսակետը հիմնավորելու համար «հայկական Վերածնության» կողմնակիցները սկսեցին պատմամշակութային նյութը վերակազմել ու մեկնաբանել՝ ելնելով եվրոպական Վերածնության չափանիշներից: Բնականաբար, «հայկական Վերածնության» տեսության կողմնակիցները առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնեին Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը, որն աննախադեպ երևույթ էր հայ գրականության պատմության մեջ:

Նարեկացին մեծ է, հանճարեղ, հավերժի ճամփորդ, սակայն ապրել ու ստեղծագործել է որոշակի դարաշրջանում, օգտագործել և որոշ առումներով էլ կատարելության հասցրել այդ դարաշրջանին բնորոշ փիլիսոփայական, կրոնա-աստվածաբանական, բանաստեղծական ու գեղագիտական հարացույցները: Ո՞ր դարաշրջանն է դա. Միջնադա՞րը, թե՞ Վերածնունդը:

«Հայկական Վերածնության» կողմնակիցները միանշանակորեն պնդում են, որ Գրիգոր Նարեկացին հայոց Վերածնության սկզբնավորողն է, նախակարապետը: Հոգեբանորեն կարելի է հասկանալ այդ տեսակետի պաշտպաններին. եթե Վերածննդի դարաշրջանը դիտվում է որպես առաջադիմական, հումանիստական մի դարաշրջան, որում ապրել ու ստեղծագործել են մտքի տիտաններ, ապա մեծ է գայթակղությունը Նարեկացուն նույնպես տեղավորել այդ դարաշրջանի շրջանակներում, մանավանդ, եթե միջնադարը պատկերվում է որպես «մութ, միապաղաղ ու ամուլ» մի դարաշրջան:

Այժմ դիտարկենք այս տեսակետը պաշտպանողների հիմնական փաստարկները:

Նախ անդրադառնանք Մ. Աբեղյանի տեսակետին, թեև նրան չի կարելի համարել «հայկական Վերածնություն» տեսության կողմնակից:

«Ինչպես էլ լինի, - գրում է Մ. Աբեղյանը, - վերածնության կարապետ է արդեն Գրիգոր Նարեկացին, մեր հին մեծ բանաստեղծը: Սակայն նա իր էությամբ պատկանում է դեռ նախորդ շրջանին. նրա Ողբերգությունն ու տաղերը, - մի կողմ թողած նրա մյուս գրական գործերը, - ըստ բովանդակության արտահայտիչ են ոչ թե ազնվականության ու քաղաքացության աշխարհիկ ոգու, այլ այն դարի եկեղեցական դասի կրոնական ոգու, որով տոգորված էին և աշխարհականները: Բայց և այնպես նրա մի քանի բանաստեղծությունների մեջ շնչում է արդեն վերածնությունը: Սկսվում է հայոց հին գրականության մի նոր շրջան - «վերածնության գրականությունը» (1, 629): Հարկ է նշել, որ, նախ, Մ. Աբեղյանը «Վերածնություն» հասկացությունը չի գործածում այն իմաստով, որ հետագայում պետք է գործածեին «հայկական Վերածնության» կողմնակիցները, երկրորդ՝ մեծանուն հետազոտողն իրավացիորեն կարծում է, որ Նարեկացին «իր էությամբ պատկանում է դեռ նախորդ շրջանին», այսինքն՝ Միջնադարին: Համենայն դեպս, «Մատյան ողբերգության» պոեմի նրա վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ Նարեկացին պաշտպանում է ոչ թե Վերածննդի դարաշրջանի, այլ Միջնադարի կրոնական-միստիկական ոգուն համահունչ գաղափարներ:

Մ. Մկրյան. «10-րդ դարում սկզբնավորված Վերածնությունը իր առավել ցայտուն արտահայտությունը գտավ գեղարվեստական գրականության մեջ՝ հանձինս հայ մեծ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու լավագույն ստեղծագործությունների» (9, 404): «Թեպետ մեր գրողները (Դեմիրճյան, Զարյան) հաճախ են Նարեկացուն Դանթեի հետ համեմատել, և որոշ իմաստով նրանք իրավացի էլ են, բայց, այնուամենայնիվ, պիտի նշել, որ մարդկային ներաշխարհը ստեղծագործության նյութ դարձնելու տեսակետից Նարեկացին ավելի առաջ է անցել Դանթեից ու ավելի մոտեցել է Շեքսպիրին: Այն ժամանակ, երբ Դանթեն կյանքի հանգամանքները արտացոլող ողբերգականը արտահայտել է գերազանցապես հերոսների արտաքին՝ ֆիզիկական տանջանքների պատկերներով, Նարեկացին այն ներկայացրել է մարդկային ներքին-հոգեկան բարդ ու հակասական ապրումների միջոցով: Պոեմում Նարեկացին՝ մեծ բանաստեղծը, հանդես է գալիս որպես իր ժամանակաշրջանի մարդու մի հոյակապ գեղարվեստական համապարփակ կերպար» (նույն տեղում, 532):

Համանման տեսակետ է պաշտպանում «Մատյան ողբերգության» երկի աշխարհաբար թարգմանիչ Վ. Գևորգյանը. «Եթե Դանթեն վերածնության նախակարապետ հորջորջվեց այն պատճառով, որ Եվրոպայում առաջինը ստեղծագործության առարկա դարձրեց մարդուն, հիմնականում պատկերելով նրա արտաքին, մարմնական տառապանքները, ապա Նարեկացին, նրանից մոտ երեք դար առաջ, նրանից ավելի հեռուն գնալով՝ իր հայացքը սևեռեց մարդու ներքնաշխարհը» (5, 599):

Իսկապես, Նարեկացին, ի տարբերություն Դանթեի, մարդու ներաշխարհն է դարձնում իր ստեղծագործության առարկան: Սակայն դա դեռ չի նշանակում, թե նա Վերածննդի դարաշրջանի աշխարհիկ և

մարդակենտրոն փիլիսոփայության ներկայացուցիչ է: Չպետք է մոռանալ, որ մարդու ներաշխարհի բացահայտումը քրիստոնեական կրոնի մենաշնորհն էր: Ի տարբերություն մարդու մասին անտիկ դասական և հելլենիստական ըմբռնմանը՝ քրիստոնեությունը՝ որպես մարդու փրկության մասին վարդապետություն, մտասևեռման առարկա է դարձնում մարդու ներաշխարհի գաղտնիքները: Քրիստոնեության տեսանկյունից մարդու վիճակը ողբերգական է. արտաքին աշխարհը նրա համար իսկական կեցություն չէ, հետևաբար՝ ոչ մի արժեք չի ներկայացնում: Միակ ճշմարիտ իրականությունը քրիստոնյայի համար իր հոգին է և Աստված: Ո՛չ թե դրսում, այլ իր հոգու խորքում մարդ պետք է փնտրի Աստծուն: Այսպիսով՝ «ներքին մարդու» քրիստոնեական վարդապետության մտասևեռման առանցքը ոչ թե արտաքին աշխարհն է, այլ մարդկային հոգին, մարդու ներաշխարհը: «Ի՞նչ օգուտ կունենայ մարդ, եթէ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կործանի» (2, Մատթ. 16, 26):

Մինչև Նարեկացին՝ դեռևս 4-5-րդ դարերում, Օգոստինոս Երանելին գրել է «Խոստովանություններ» աշխատությունը, որում պատկերված են նրա հոգեկան տվայտանքները, հոգեկան դրաման: Մարդու մասին այսպիսի պատկերացումը տարածված էր 7-11-րդ դարերի արևելաքրիստոնեական, հատկապես բյուզանդական գրականության և փիլիսոփայության մեջ:

Վ. Նալբանդյան. «Պոեմի դժվարալուծ ու բազմաճյուղ բովանդակությունը պտտվում է մի գլխավոր առանցքի՝ մարդու ճակատագրի, նրա բարոյական կատարելագործման, մարդու (և մարդկության) փրկության խնդրի շուրջ, որի լուծումը քերթողը ջանում է գտնել ժամանակի կրոնա-միստիկական հասկացությունների ու պատկերացումների քաոսի մեջ: Ավելորդ չենք համարում հիշել, որ պրոբլեմի արծարծման ու նրա լուծման այս եղանակն առհասարակ բնորոշ է եղել ինչպես Վերածնության դարաշրջանի, այնպես էլ միջնադարի հումանիստ շատ գրողների ու մտածողների համար: Ինչ վերաբերում է Գրիգոր Նարեկացուն, ապա համարձակ կարող ենք ասել, որ, ինչպես կտեսնենք, դարի ինքնահատուկ ըմբռնումների ոգուն միանգամայն համապատասխան կրոնական հանգամանքն այստեղ շատ դեպքերում ըստ էության լոկ ձև է, իրական կյանքի կենսական բարդ հարցերի արտահայտման միջոց, որը Նարեկա վանական քերթողն օգտագործել է իրեն հուզող հումանիստական մեծ գաղափարների՝ մարդու և մարդկության ճակատագրի կնճռոտ խնդիրներն արծարծելու համար» (10, 97): Գրականագետը չփաստված և չհիմնավորված է համարում Ս. Ավերինցևի այն դրույթը, որով նա Նարեկացու ստեղծագործությունը կտրում է Վերածնությունից ու հատկացնում Միջնադարին:

Նախ՝ նշեմ, որ Վ. Նալբանդյանը միանգամայն իրավացի է, երբ Նարեկացու ստեղծագործության կենտրոնական թեման համարում է մարդու հիմնախնդիրը: Սակայն յուրաքանչյուր դարաշրջանում մարդու հիմնահարցը գտնվել է փիլիսոփաների և գրողների ուշադրության կենտրոնում, և այդ դարաշրջանի ոգին մարմնավորող մեծ մտածողները փորձել են լուծել այդ հիմնահարցը: Հետևաբար, այստեղ խնդիրը ոչ թե և ոչ այնքան այն է, որ նրանց մտասևեռման առարկան մարդն է, այլ՝ ինչպե՞ս են նրանք մոտենում այդ հարցին, ո՞ր դարաշրջանին բնորոշ հարացույցներով են իմաստավորում այդ հարցը: Ավելի ստույգ՝ մարդը եղել է թե՛ միջնադարյան, թե՛ Վերածննդի դարաշրջանի գրականության և փիլիսոփայության առանցքային հիմնահարցերից: Սակայն մարդու միջնադարյան և վերածնական ըմբռնումները (եթե դրանք ներկայացնենք իդեալական սխեմաների միջոցով) իրարից էապես այնքան են տարբերվում, որ դրանք պարզապես հնարավոր չէ շփոթել: Իսկ եթե շփոթում ենք, ապա նշանակում է, որ չենք ուզում տեսնել այդ երկու դարաշրջանների մարդաբանական մոտեցումների միջև եղած սկզբունքային տարբերությունները:

Երկրորդ. իհարկե, եթե Նարեկացու աշխարհայացքում կրոնականը դիտենք լոկ ձև, ապա նրան կարող ենք համարել ոչ միայն Վերածննդի, այլև Լուսավորականության դարաշրջանի մտածող: Սակայն Նարեկացին մեծ է նախ և առաջ որպես կրոնական ոգով համակված մտածող, որպես քրիստոնեական մտածողության նոր չափումի արտահայտիչ: Հետևաբար, քրիստոնեությունը նրա համար ոչ թե «զգեստ» կամ դիմակ է, այլ իր էությունը: Նարեկացին չի խաղում տառապող քրիստոնյայի դերը. նա տառապում է որպես քրիստոնյա, մտածում է քրիստոնեական արժեքների անաղարտության պահպանման մասին:

Գ. Խրլոպյան. «Գրիգոր Նարեկացին 10-րդ դարում դառնալով հայկական ռենեսանսի նախակարապետը սկզբունքային փոփոխութիւն ներմուծեց ինչպէս մարդու ըմբռնման, այնպէս էլ հայ գեղագիտական (քնարերգութիւն, երաժշտութիւն), իմաստասիրական, աստուածաբանական, բարոյագիտական մտածողութեան, հայ մեկնողական արուեստի եւ ընդհանրապէս հայու հոգեբանական ու իմացական կառոյցի մէջ» (6, 133): Այն, որ Նարեկացին նորարար էր, կասկածի ենթակա չէ. խնդիրն այլ է. արդյո՞ք նրա նորարարական սկզբունքները համահունչ էին Վերածնության դարաշրջանի ոգուն: Օրինակ, միջնադարյան եվրոպական ճարտարապետության մեջ սկզբում գերիշխում էր ռոմանական ոճը, որը փոխարինվեց մի նոր ոճով՝ գոթականով: Բայց դա բնավ էլ չի նշանակում, թե այդ նորը ոչ թե Միջնադարին, այլ Վերածնության դարաշրջանին հատուկ երևույթ է:

Գ. Խրլոպյանը, ինչպես և շատերը, Նարեկացուն համարում են որպես «հայկական ռենեսանսի նախակարապետ», սակայն իրենց վերլուծություններում փաստացիորեն ցույց են տալիս, որ Նարեկացին միջնադարյան մտածող է: Այս իմաստով բնութագրական է Վ. Նալբանդյանի դիրքորոշումը. «Որքան էլ բարձր գնահատենք Նարեկացու մարդերգությունը ու այն, իրավամբ, դիտենք որպես իր ժամանակի համար վերածնական հումանիզմի ամենաբարձր արտահայտություն, այնուամենայնիվ պիտի ասենք, որ բանաստեղծի պատկերածը տակավին ապաշխարող հավատացյալ մարդն է՝ իր մարդկային էության մի կողմով, որոշակի սահմանափակություններով (ընդգծ. իմն է՝ Ս.Զ.): Եթե կարելի է այսպես ասել, «լիարժեք

մարդը»՝ իր ողջ աշխարհական էությամբ, բուն մարդկային հույզերի ու զգացումների լիագին ու հարուստ կենսաշխարհով, իր սրտի նվիրական գաղտնիքներով, պոեզիայում հանդես պիտի գար Նարեկացուց մի քանի դար հետո միայն՝ հայ միջնադարյան աշխարհիկ տաղերգության մեջ...» (10, 224-225):

Այստեղ, թվում է, ասված է ճշմարտությունը. «Մատյանում» մեզ ներկայանում է ապաշխարող, փրկություն հայցող մարդը, այն մարդը, որը իմանալով, որ ինքը առանց Աստծո չի կարող փրկվել, ամբողջությամբ իր հույսը կապում է Քրիստոսի հետ: Այդ մարդու համար կա ընդամենը մի բացարձակ գոյ, որը Աստված է: Իր կյանքի իմաստը նա տեսնում է Նրա հետ միաձուլման մեջ: «Մատյանի» մարդը բնավ էլ Վերածննդի դարաշրջանի մարդը չէ, որ իրեն զգում է ոչ թե մեղսագործ, ծնկաչոք պաղատող, այլ որպես հերոս, գործունյա, արարող, ինքնուրույն վճիռներ կայացնող, ինքնավստահ, անհատապաշտ, ինքն իրենով հպարտացող, երկրային հաճույքներով ապրող էակ: «Որ Նարեկացին զարգացած ֆէոդալիզմի դարաշրջանի բանաստեղծ է, - իրավացիորեն նկատում է նարեկացիագետ Ա. Ղազինյանը,- ակներեւ է նաեւ նրա իդէալից: Ի՞նչ է տառապագին տենչում նա, ինչի՞ է ձգտում. բարոյական ինքնակատարելագործման, աստուածացման եւ հոգու փրկութեան: Աստուածանմանութեան եւ աստուածացման այս իդէալը միջնադարի մենաշնորհն էր: Այն խորթ էր թէ անտիկ եւ թէ վերածնութեան արուեստին: Մինչդեռ այդ իդէալը բանաստեղծօրէն ոչ ոք այնքան բարձր արուեստով չի պատկերել, որքան Նարեկացին» (8, 72):

Նշված հետազոտողները կարծես թե չեն տեսնում, որ իրենց վերլուծություններում փորձում են համատեղել անհամատեղելիները: Մարդու մասին միջնադարյան և վերածնական ըմբռնումները, աստվածակենտրոն հումանիզմը և մարդակենտրոն հումանիզմը ոչ միայն տարբեր են, այլև հակադիր: Վերածննդի դարաշրջանի փիլիսոփայության, արվեստի ու գրականության մեջ մերժվում է հայեցողական-կրավորական կյանքով ապրող, ճգնավորական բարոյականությամբ առաջնորդվող, մարմնական ու բնական պահանջմունքները, երկրային ու աշխարհիկ բարիքներն արհամարհող մարդու իդեալը: Հումանիստ մտածողների կարծիքով՝ աշխարհը ոչ թե «թախծի ու լացի հովիտ» է, ոչ թե Աստծո և սատանայի մրցակցության ասպարեզ, այլ մարդու գործունեության, մարդկային ուժերի, հանճարի ու կարողությունների ծավալման ու դրսևորման դաշտ: Հումանիստները վերականգնում են մարդկայինի, երկրայինի ու բնականի հեղինակությունն ու իրավունքները: Մարդը պետք է ոչ թե հաղթահարի իր «բնությունը», մեռցնի բնականն ու մարմնականը, այլ հնարավորություն ստեղծի դրանց դրսևորման համար:

Նարեկացին իր մտածելակերպով, բարոյագիտական ու գեղագիտական սկզբունքներով միջնադարյան մշակույթի և գրականության ներկայացուցիչ է:

Նարեկացու աշխարհայացքը և նրա փիլիսոփայությունը ճիշտ հասկանալու և բնութագրելու համար, ինչպես նաև պարզելու համար Միջնադարի՞, թե՞ Վերածննդի դարաշրջանի մտածող է, փորձենք վերլուծել նրա գլուխգործոցը, որում ըստ ամենայնի դրսևորվել է նրա գաղափարական դավանանքը:

Նախ՝ սկզբից անդրադառնանք այն հարցին, թե ինչպե՞ս է Բանաստեղծը գնահատել իր իսկ ստեղծագործությունը, ի՞նչ նշանակություն է դրան տվել և ինչո՞ւ:

Նարեկացին «Մատյանը» դիտում է որպես փրկության Գիրք, Կենաց դեղ, մարմնական ու հոգևոր վերքերի բուժման, մաքրագործման ու կատարելագործման, Աստծու հետ միավորվելու զորավոր միջոց:

Նա Մատյանը նմանեցնում է Քրիստոսի Ավետարանին, որը «կյանք է բացարձակ», քանի որ խոստանում է մեղքերին դարձ, պարտքերին՝ զիջում, եղծմանը՝ նորոգում, վերքերին՝ բուժում, մահվան փոխարեն՝ կյանքի փրկություն: Նարեկը նույնպես «կենաց գիրք» է, որին հաղորդակիցները պիտի արժանի դառնան փրկության, հոգեկան մահաբեր ցավով տառապողները, աղոթելով այս գրքով, կստանան «կյանքի հույս», հանգստություն ու խաղաղություն:

Մատյանը կտակարան է, «հավերժական անեղծ հուշարձան», որն ավետում է փրկություն, հույս, լույս, ընդսմին՝ ոչ միայն ընտրյալների, այլև բոլորի համար:

Գիտակցելով իր Մատյանի կարևորությունն ու նշանակությունը՝ Նարեկացին Աստծուն խնդրում է ոչ միայն բարեհաճությամբ ընդունել իր Մատյանը, այլև այն դասել ընտիր գրքերի շարքը, դարձնել համայն քրիստոնյաների համար Սուրբ գիրք.

՛ր ու մաքրի՛ր ամեն
Տառը մատյանի այս ողբեր ության.
Վավերա՛ր ի՛ր, հաստատի՛ր, կնքի՛ր
Այն որպես արձան հավիտենական՝
Ընտիր ու հանո՛ որոգեր կար ում:
Թո՛ղ որ առջևդ լինի մշտապես
Ու լսելիքիդ հնչի շարունակ,
Խոսի շուրթերով քո ընտրյալների,
Հրեշտակներիդ լեզվով բարբառի,
Թո՛ղ տարածվի Քո աթոռի հանդեպ
Եվ ընծա բերվի Քո սուրբ սրահում,
Խնկի տաճարում անունդ կրող
Ու բուրի փառքիդ սեղանի վրա,
Պահպանվի հավետ Քո անձարանում
Եվ ամբարվի Քո ստացվածքի մեջ:
Թո՛ղ որ հոչակված հասնի ազ երին,
Ժողովուրդներին քարոզվի ի լուր,
Տպվի դռներին բանականության
Եվ զ այության սեմերի վրա դրոշմվի ամուր:
Ու թեպետ որպես մի մահկանացու՝
պիտի վախճանվեմ,
Բայց այս մատյանի հարակայությամբ
կմնամ անմահ» (3, 526-527):

Նարեկացին իր «Մատյանը»՝ որպես «ճշմարտացի մի պատվեր, ավանդ», իբրև փրկության կենաց գիրք, հանձնարարում է «այս երկրի վրա հաստատված բոլոր բանականներին, համայնատարած քրիստոնյաների տիեզերագումար ամբողջ բազմությանը», արդարներին և մեղավորներին, հպատակներին և իշխանավորներին, բարեգործներին և չարամիտ-

ներին, տղամարդկանց և կանանց, եկեղեցականներին և աշխարհականներին:

Դա նշանակում է, որ նա նոր ասելիք ունի և նոր ճանապարհ է մատնացույց անում, մարդկանց փրկելու նոր գաղափար և նոր ուղի է առաջարկում: Ո՞րն է նրա առաջարկի իմաստն ու էությունը, ո՞րն է «Մատյանի» գաղափարական բովանդակության հիմնակետը:

Նարեկացու «Մատյանի» գլխավոր գաղափարը մարդու փրկությունն է: Բայց չէ՞ որ արդեն Քրիստոսը ցույց է տվել մարդու փրկության ուղին: Աստծու Որդին մարդեղացավ, խաչվեց՝ զոհաբերեց Իրեն, որպեսզի մարդկանց ցույց տա փրկության կենարար ուղին: Բայց արդյոք մարդիկ հասկացա՞ն Քրիստոսին, արդյոք կարողացա՞ն հասու լինել այդ Սխրանքի խորհրդին: Քրիստոսի խաչելությունից արդեն անցել էր շուրջ հազար տարի. այդ ընթացքում փոխվե՞լ են արդյոք մարդիկ, փոխվե՞լ է նրանց մտածելակերպը և գործելակերպը, ջանացե՞լ են նրանք նմանվել կամ հետևել իրենց Տիրոջը: Քրիստոսից հետո մարդիկ ձգտե՞լ են արդյոք թոթափելու իրենց մեղքերը, մաքրվելու, նորոգվելու, հոգեպես կատարելագործվելու, ըստ մարդկային կարողության Աստծուն նմանվելու, աստվածամարդ դառնալու: Չէ՞ որ մոտ է Ահեղ դատաստանի օրը: Նարեկացին «Մատյանի» սկզբնամասում ստեղծում է Ահեղ դատաստանի մոտալուտ ներկայության տեսիլքը՝ «Հնչում է ահա ուժգնապես ձորում վրեժխնդրության՝ // Ձայնը ահավոր քո Դատաստանի», կամ՝ «Մոտ է Տիրոջ օրն, երբ արդարության ժամադրավայր // Հովսաթափի այն նեղանձուկ հովտում // Եվ հեղեղատի ափին Կեդրոնի Փոքր հանդեսներում՝ երկրային կյանքի օրինակներով // Հանդերձյալները պիտի պատկերվեն...» (3, 7): Մոտ է ժամը հաշվետվության և հատուցման, բայց «ի՞նչ, ի՜նչ երեսով պիտի հանդգնի» մարդը ներկայանալ այդ մեծ Դատաստանին: Պատրաստ է արդյո՞ք մարդկությունը Ահեղ դատաստանին: Չէ՞ որ «պատերազմի օրն» այդ ահարկու» ո՛չ պաշտպանվելու միջոց կա, ո՛չ խոսքով արդարանալու, ո՛չ կեղծելու, ո՛չ խաբելու, ո՛չ կմկմալով ստախոսելու, ո՛չ ճողոպրելու ու ծլկելու, ո՛չ էլ թաքնվելու: Այդ օրը ինքնարդարացման մարդկային բոլոր հնարները իզուր են լինելու. Աստված ամենատես է, ամենագետ, հետևաբար՝ արդարացի և անողոք Դատաստանից ոչ ոք չի կարող խույս տալ:

Ավաղ, իրականությունն այն էր, որ նախնական մեղքով ապականված մարդը շարունակում էր թաղվել նորանոր ինքնաստեղծ մեղքերի մեջ՝ բոլորովին մոռացած Քրիստոսի չարչարանքների, Աստծու Որդու խաչելության, մարդու առաքելության և պատասխանատվության մասին: Ավելին, ինչպես նկատում է Նարեկացին, մարդը «դեմքի փոխարեն թիկունք է դարձրել» Աստծուն:

Մարդիկ օտարվել էին Աստծուց, նույնիսկ կորցրել իրենց հավատը: Կենարար հավատն իր տեղը զիջել էր ձևական, հետևաբար՝ խախուտ, անիմաստ, «անհավատ» հավատին: Սիրտն ու բանականությունը, խիղճն ու միտքն օտարվել-հեռացել էին իրարից: Սիրտը գրավի դրած մարդը երկփեղկվել էր, դարձել երկդիմի: Ինչպես Բանաստեղծն է խոստովանում՝ «բերանով մոտ եմ եղել արարչին, մտքերով հեռու, // Շրթունքներովս եմ լոկ պատվամատույց, // Ըստ մարգարեի, և ոչ թե սրտով»: Մարդիկ ոչ միայն կորցրել էին իրենց աստվածային պատկերը, ոչ միայն հեռացել-օտարվել էին Աստծուց, այլև սկսել էին հեգնել Քրիստոսի երախտիքները: Քրիստոնեական Եկեղեցին, որը պետք է միջնորդի դեր կատարեր Աստծու և մարդու հարաբերությունում, մարդու փրկության գործում ավելի մեծ ուշադրություն էր դարձնում հավատքի արտաքին, քան ներքին կողմին, ավելի շատ զբաղվում էր աշխարհիկ, քան հոգևոր գործերով: Ավելին՝ որոշ հավատացյալներ «ինքնաբավական մի վստահությամբ, մոռացած սահմանն էության մարդու», փորձում էին սրբագրել Քրիստոսի սխրագործությունը: Մարդու բարոյական ու հոգևոր անկման բոլոր նշանները առկա էին. մարդը ճգնաժամի մեջ էր, հայտնվել էր փակուղու մեջ, մոլորվել ինքնագործունեության լաբիրինթոսում, զրկվել բարոյական կողմնորոշիչներից, չուներ այլևս «գնալու տեղ»:

Մարդկանց սաստելու, զգաստացնելու ու նորեն դարձի բերելու համար անհրաժեշտ էր մի նոր զոհաբերություն: Այլևս միայն մարդկային զոհաբերություն, որ պիտի նշանավորվեր նորացված, թարմացված հավատքի հռչակմամբ՝ իր անձնուրաց «փրկիչով», որը մեծ ճակատամարտ պիտի տար մարդկության փրկության համար: Մարդը դեմքով պիտի շրջվի առ Աստված, դեմ հանդիման կանգնի Աստծու առաջ: Մարդը նորեն պիտի դարձի գա և արդարացնի զոհաբերությունը Քրիստոսի:

Բայց ո՞վ պետք է հնչեցնի ահազանգը, ո՞վ պետք է աստվածային ճշմարտությունից շեղվածներին և առաքինությունից մոլորվածներին ցույց տա փրկության ուղին: Թվում է՝ Աստված լքել է երախտամոռ մարդկանց, նրանց թողել բախտի քմահաճույքին, հոգնել բարերարելուց, հրաժարվել մարդասիրելուց: Ո՞վ պետք է միջնորդի Աստծուն, ո՞վ պետք է հաշտեցնի և ինչպե՞ս պետք է հաշտեցնի մարդկանց և Քրիստոսին:

Այդ տիեզերական, համամարդկային բեռն իր ուսերին վերցնում Գրիգոր Նարեկացին՝ միջնադարի քրիստոնեական աշխարհի մեծագույն մարդկանցից մեկը, համամարդկային էությամբ պարուրված հայոց ոգու, հայոց բնազանցական ու կրոնական ձգտումների գեղարվեստական արտահայտիչը: Նարեկացու «Մատյանը» հայ հավատացյալ ոգու կտակարանն է, հայոց արդարամիտ, խռովահույզ և ինքնաքննադատ ոգու համամարդկային չափերի հասնող պոռթկման մարմնացումը: Նարեկը քրիստոնեության ընկալման ու մեկնաբանման հայեցի տարբերակն է: Պատահական չէ, որ «Մատյանը» հայ ժողովուրդը ընկալել է որպես սուրբ գիրք: Նշանավոր գրականագետ Արշակ Չոպանյանի դիպուկ արտահայտությամբ՝ «ոչ մեկ կրոնական գիրք մեր մեջ այնչափ կարևորություն ստացած է որչափ «Նարեկ»-ը. մեր ժողովուրդը Ավետարանին քով, պիտի համարձակիմ ըսել՝ անկից առաջ դրած է զայն. իր աղոթքի գերագույն գիրքը նկատած է զայն, «հայ» աղոթքին նվիրական գիրքը» (11, 300): Հայն ընկալել է «Մատյանի» խորհուրդը, որով-

հետև գիտակցաբար թե ենթագիտակցաբար նրանում տեսել է իր էության, իր աշխարհատեսության, մտածողության և զգացողության դրսևորումները:

Նարեկացին ինքնակամ զոհաբերում է իրեն, սակայն այդ զոհաբերությունը, ի տարբերություն Քրիստոսի, «անարյուն, բանական» զոհաբերություն է: Նարեկացին զոհաբերում է իր անձը, իր վրա վերցնում հանուր մարդկության բոլոր մեղքերը, որպեսզի «կենդանի մեռյալներին» ցույց տա փրկության կենարար ուղին: Մարդու կեցության նպատակը Քրիստոսին նմանվելն ու Նրա հետ միաձուլվելն է: «Նմանվի՛ր Քրիստոսին» - պահանջում է Նարեկացին, հիշեցնելով՝ որ Տերը հենց ինքն է մարդկանց ավանդել այս պատվիրանը: «Երգ երգոցի» մեկնության մեջ նա գրում է, թե «նախ պետք է մեղքերի մարմինը մեռցնել, Քրիստոսին մահակից լինել և անուշահոտ վարքով Քրիստոսի մաքրությանն հավասարվել և ապա միայն հարս լինել և բարձրանալ դեպի Քրիստոս փեսան» (4, 22): Այն, ինչ արել է Քրիստոսը, մարդը պետք է ձգտի իր հնարավորությունների սահմանում կրկնօրինակել: Քրիստոսը, մեր բնությամբ կերպարված մարմնով, ազատագրության մեծ ավետիսը համբավեց բոլորին և իր աստվածային ձեռքը կարկառելով՝ մահվան դատապարտված մարդուն իր սերունդներով ոտքի կանգնեցրեց:

Քրիստոսը ներկայանում է որպես հաշտարար՝ Աստծո և մարդկանց միջև: Եվ քանի որ Նարեկացին նույնպես հանդես է գալիս հաշտարարի դերում, ուստի իրեն նմանեցնում է Քրիստոսին: Իր իսկ խոսքերով՝ «արտաքուստ և ներքուստ հենց իրեն՝ Աստծուն եմ հագել» և «ասես կամովին ինքս կրեի տանջանքները Քո՝ մեծիդ փոխարեն»: Նարեկացին հետևում է Քրիստոսին նաև այն բանում, երբ իրենն է համարում մարդկանց բոլոր հանցանքները. ինչպես Քրիստոսը «ամենայն հանցանքները մեր իրենը համարեց և իր վրա վերցրեց «մեր հաշտության փրկանակը», նույն կերպ էլ վարվում է բանաստեղծը: Սակայն Քրիստոսը անմեղ էր, անապական, իսկ մարդը մեղավոր է, ուստի մեղավորի գիտակցությամբ պիտի ընդունի «սկզբնահորից սկսած մինչև նրա ծննդի սերունդը վերջին, մարդկային ազգի ողջ չարիքների» պատասխանատվությունը:

Բայց որչափ դժվար է մարդկության «աղոթանվեր պատգամավորի», Աստծու և մարդկանց միջև «հաշտարարի» դեր ստանձնելը, նույնչափ ահավոր է այդ մասին բարբառելը, առավել ևս՝ պարզապես խելահեղություն է ավանդել «փրկչական» խոստովանությունը, ավետել նոր հավատքը, մեն-միայնակ «դատի» մեջ ընկնել Ամենաբարձյալի հետ: Նարեկը սկսվում է հեղինակի այս հոգեվիճակի պատկերմամբ. ինչպե՞ս կարող է «Երուսաղեմի վերջին ավերման կերպարանքն» ունեցող, երբևիցե գործված հանցանքներից առավելագույն հանցանքներ ունեցող մեղապարտ մարդը դեմ առ դեմ կանգնել Աստծու առջև:

Նոր հանդունգն ձեռնարկի համար հարկավոր էր «թույլտվություն» ստանալ: Ուստի Աստծուն ուղղված առաջին աղերսը, որով բացվում է Նարեկը, նորահայտ փրկության Մատյանի, ձեռնարկած անհավատալի, բայց անհրաժեշտ գործի համար Աստծուց բարեհաճություն ստանալն է: Նարեկացին ողբաձայն աղաչում է, որ Աստված ընդունի իր անարյուն, բանական զոհաբերությունը՝ այն չշփոթելով «թանձրաբարդ ծխով» մատուցվող բոլորանվեր պատարագի հետ, որ բարեհաճությամբ և ոչ թե բարկությամբ ընդունի «կարճառոտ ու սեղմ խոսքերի» հյուսվածքը, հենց սկզբից հայտնի իր բարեգութ կամքը՝ Մատյանն իր ավարտին հասցնելու համար: Ավելին՝ հարկավոր է նաև, որ Մատյանը լինի աստվածաշունչ, աստվածային ներգործող շունչը միախառնվի մարդու բանաստեղծական ձիրքին:

Կասկածը տանջում է բանաստեղծին. արդյո՞ք ինքը բարոյական իրավունք ունի, «կենդանի մեռյալ» լինելով հանդերձ, դիմել Աստծուն, արդյո՞ք Աստված կլսի իրեն, արդյո՞ք կհասկանա իրեն, արդյո՞ք անվաստակ չի թողնի իրեն: Այդ կասկածանքը ինչ-որ իմաստով վերածվում է աղերսախառն պահանջի.

«Թող չպատահի ինձ հանկարծ՝ երկնել,
սակայն չծնել,
Ողբալ՝ չարտասվել, խորհել՝ չհառաչել,
Ամպել՝ չանձրևել, նալ՝ չհասնել,
Քեզ ձայն տալ, և Դու ձայնս չլսես,
Պաղատել, սակայն անտեսված մնալ...» (3, 14):

Սակայն բանաստեղծի կասկածանքը՝ որպես մահկանացու մարդուն բնորոշ բնազանցական անհանգստության արդյունք, շուտով փոխվում է լավատեսության, որովհետև նա չի կարող կասկածել Աստծու մարդասիրությանը, գթասրտությանը և ողորմածությանը: Նա այլևս Աստծուց չի պահանջում զոհաբերություն, այլ՝ ընդամենը ողորմություն: Հիշելով առաքյալների, անառակ որդու, պոռնիկ կնոջ, չարագործի նկատմամբ Քրիստոսի ցուցաբերած ներողամտությունն ու ողորմածությունը՝ Բանաստեղծը գոտեպնդվում է հույսով, հավատում, որ այս անգամ ևս Քրիստոսը չպիտի այլայլի մարդասիրելուց և փրկություն պարգևելուց:

Աստծո մեծությունն ոչ այնքան համայնի արարչագործության, որքան մարդու հանդեպ գութ ու կարեկցանք ցուցաբերելու մեջ է: Քրիստոսը արեց այն, ինչ մինչ այդ չէր արվել: Նա մարդկությանը տվեց Նոր Օրենք, որն սկզբունքորեն տարբերվում է Հնից: Պատահական չէ, որ «Մատյանում» Նարեկացին բազմիցս շեշտում է Հին և Նոր օրենքների մինչև եղած տարբերությունը, որպեսզի ցույց տա Քրիստոսի կատարած գործի մեծությունը: Հին Օրենքը «զորավոր էր միայն բռնալիր քարաձգությամբ ու անեծքներով դատապարտելու, մահ գործելու մեջ»: Դրա պաշտոնը մեղապարտներին դատապարտելն էր, ուստի դա «մի թույլ միջնորդ էր հաշտարարության և խափանելի մի կտակ երկրային»: Հնի նկատմամբ Նոր Օրենքի առավելությունն այն է, որ դա փրկության իրական, աներկբայելի երաշխիք է և հնարավորություն է տալիս մարդուն մաքրագործվելու, դառնալու աստված, միաձուլվելու աստվածային կենաց լույսին.

«Եվ այն, ինչ ասելն իսկ անավոր է,
Գրում եմ այստեղ որպես հիշատակ
մեծ երախտիքիդ,
Կարող ենք նույնիսկ մենք աստված լինել
Շնորհներով ու ձիրքերով ընտիր
Ու միավորվել ստեղծողիդ հետ՝
Տերունական քո մարմնի հաշակմամբ
Եվ միաձուլմամբ քո կենաց լույսին.
Մինչդեռ, Պողոսի խոսքի համաձայն,
Նախկին օրենքը չուներ այսպիսի
Կատարելության երջանիկ խոստում» (3, 312):

Քրիստոսը «Մատյանում» ներկայանում է որպես մեծագույն մարդասեր, սիրող, գթացող Աստված: Քրիստոսը անոխակալ է, ամենակեցույց, չունի ցասումնալից սիրտ, չկա նրա մեջ «նենգության նշմար, մթության նշույլ», Նա ո՛չ թե ընկածին ոտնահարում, այլ խնամում է, ո՛չ թե տապալում, այլ բարձրացնում է: Թեպետ ապերախտ ու բազմավրեպ երկրածին մարդիկ միայն չարությամբ փոխհատուցեցին Քրիստոսին, բայց Նա, լինելով լույս և լուսատու, «ամբողջովին փրկագործություն», չի ուզում կորուստ, չի ցանկանում մահ:

Իսկ փրկվելու համար Նարեկացին առաջադրում է երկու նախադրյալ՝ աղոթքի միջոցով մեղքերի խոստովանություն, զղջում, մեղանչում, ապաշխարություն և աներկբա հավատ առ Քրիստոս:

Զղջումն ու հավատը սերտորեն կապված են իրար: Ինքնին զղջումն ու մեղանչումը կդառնան անիմաստ, եթե չլինի հավատ, որով պիտի մարդիկ փրկվեն: Բանաստեղծի կարծիքով՝ «թե՛ զղջումն ուժգին, թե՛ մեղանչումը անսանձ, մոլագար» հավասարապես կորստաբեր են, որովհետև երկուսն էլ մարդուն մղում, հասցնում են նույն վիատության: Նույն միտքը նա արտահայտել էր «Երգ երգոցի» մեկնության մեջ. «եթե մեկն իր գործած մեղքերի համար սուգի մեջ լինի, չափից ավելի չսգա, որպեսզի հուսահատության չմատնվի և չասի, թե փրկություն չկա: ... ամեն բանի մեջ պետք է չափավոր լինել» (4, 29): Ուստի զղջման ու մեղանչման հետ հարկավոր է զորացուցիչ և կազդուրիչ դեղ՝ հավատ, հավատ առ այն, որ հնարավոր է Քրիստոսի օգնությամբ փրկվել:

Զղջման ու մեղանչման իրականացման լավագույն և կանոնական ձևը աղոթքն է: Աղոթքը մարդուն հնարավորություն է տալիս անմիջականորեն հաղորդակցվել Աստծու հետ: Մեծ է աղոթքի դերը հավատացյալի կյանքում: Քրիստոնեական մարդաբանության համաձայն՝ Աստված մարդուն ստեղծել է որպես հոգու և մարմնի միասնություն, երկու հակադիր բնությունների կատարյալ ու ներդաշնակ ամբողջություն: Սակայն մեղսագործությամբ խախտվում է այդ աստվածային ներդաշնակությունը. մարդու մեջ մարմինն ու հոգին վերածվում են երկու ներհակ, հակամարտող սկիզբների: Մարդը հայտնվում է անելանելի, ողբերգական կացության մեջ. հոգին ձգտում է տանել նրան դեպի աստվածային աշխարհը՝ իր նախկին «տունը», իսկ մարմինը՝ դեպի նյութական, երկրային աշխարհը: Մարդը տոչորվում է այս երկու հակադիր սկիզբների անվերջանելի պայքարից, որոնք «թեև հարազատ, բայց անհաշտելի ոսոխների պես դավաճանաբար ջարդում են իրար»:

Եվ որպեսզի մարդը վերագտնի իր հոգեկան հանգստությունն ու խաղաղությունը, պետք է մշտապես դիմի աղոթքի: Աղոթքը հոգևոր նորոգության ճիգ է և պիտի ուղեկցվի «երկիւղով, զղջմամբ, հոգեւորի անձկութեամբ եւ անմռունչ հեծութեան մեջ յանցանքները պատմելով» (12, 184): Աղոթքի վերաբերյալ մի ամբողջական տեսություն էր մշակել Նարեկացու հայրը՝ Խոսրով Անձևացին, որը, ինչպես հայտնի է, բանադրվել էր եկեղեցու կողմից: «Աղօթքն ամրութեան պարիսպ է,- գրում է նա,- հաստատութեան սիւն, հաւատքի հիմք, յոյսի խարիսխ, առ Աստուած ելնելու սանդուղք: Աղօթքը պարծանքների պսակ է, փրկութեան պատճառ, բարիքների առիթ, համբերութեան մարզիչ, աստուածպաշտութեան ծանօթութիւն, Սուրբ Հոգուն հրաւիրող...: Եւ ի՞նչ եւս ներբողեմ աղօթքի արդիւնաւորութեանը, քանզի հրեշտակներին դասակից է դարձնում, սուրբերին՝ քաղաքակից եւ սերովբէներին՝ կաճառակից: Մարդում դարձնում է Աստուծոյ տաճար եւ Երրորդութեան օթեւան» (7, 166, 164): Այսպիսով՝ աղոթքն այն կարճ ճանապարհն է, որը մարդուն մերձեցնում է Աստծուն, մարդուն դարձնում Աստծու տաճար, մարդուն պարգևում հոգեկան հանգստություն, դառնում փրկության պատճառ: Աղոթքը հնարավորություն է տալիս մարդուն անկեղծորեն մեղանչելու և զղջալու, Աստծու առաջ բացելու իր սիրտը:

Սակայն, որքան էլ կարևոր լինի աղոթքը, այնուհանդերձ, մարդու փրկության գլխավոր զենքը հավատն է: Հավատով է միայն հնարավոր փրկություն: Բայց ինչպիսի՞ հավատով: Ահա այստեղ է, որ Նարեկացին, հակադրվելով իր ժամանակներում հավատի նկատմամբ եղած վերաբերմունքին, առաջարկում է ճշմարիտ, անկեղծ, մաքուր, «ի խորոց սրտի» հավատի տեսություն: «Մատյանի» սկզբնամասում նա հայտարարում է. «Սկզբնավորմամբ այս աղերսական ողբամատյանի // Ես հավատքի շենք պիտի կառուցեմ»: Ըստ նրա տեսության՝ ձևական, արտաքին, կեղծավոր հավատի փոխարեն մարդ պետք է ունենա ճշմարիտ, ազնիվ, ապրեցնող հավատ, որը որևէ արտաքին հենարանի, նույնիսկ Գրքերի կարիք չպետք է ունենա: Այս կապակցությամբ Նարեկացին «Երգ երգոցի» մեկնությունում մեջբերում է Հովհան Ոսկեբերանի խոսքը. «Մենք պետք է այնպիսի սրբակրոն վարք ունենայինք, որ գրքի կարիք չունենայինք. ինչպես՝ Նոյը և Աբրահամը և նրանց որդիներն ու թոռները, ինչպես Հոբը և Մովսեսը, և առաքյալները, որոնց սրտի մեջ էր բնակվում, գրի փոխարեն սրտի տախտակների մեջ էր գրում և ոչ թե գրքերի» (4, 5):

Իր ժամանակի մարդուն համակած ճգնաժամի գլխավոր պատճառներից մեկը, ըստ Նարեկացու, «անհավատ» հավատն է: «Հավատի սովը» ի վիճակի է տակնուվրա անելու մարդկային կյանքը: Իսկապես, գաղափարախոսությունները և կրոնները հայտնվում են ճգնաժամի մեջ նախ և առաջ այն պատճառով, որ դրանց տեսաբանները քարոզում են մի բան, սակայն կյանքում անում են բոլորովին այլ բան, ավելին՝ ապրում են այն բարքերով, որոնք տեսականորեն մերժ-

վում և դատապարտվում են իրենց իսկ կողմից:

Հավատքի համար չկա ավելի կործանարար բան, երբ ցույց ես տալիս, թե հավատում ես, բայց շարունակում ես ապրել անհավատի կյանքով: «Անհավատ» հավատացյալը Աստծուն երկրպագում է՝ ակնկալելով Նրանից պարգևներ, երկրային բարիքներ: Մարդն անգամ մտածում է, որ ինքը կարող է Աստծուն չհավատալով՝ միջնորդի դեր կատարել Աստծու և մարդկանց միջև: «Մատյանում» Նարեկացին մի քանի անգամ արտահայտում է այն միտքը, թե մարդկանց գործերն ուզում են գերազանցել աստվածայինին: Նարեկացին, փաստորեն, հետևելով Նարեկա վանքում ձևավորված ավանդույթին, քննադատում է ինչպես եկեղեցական դոգմատիկ հավատքը, որում մեծ տեղ է տրվում հավատքի արտաքին նշաններին, այնպես էլ աղանդավոր թոնդրակեցիների մարդապաշտական հավատքը, ըստ որի՝ փրկությունը կարող են իրականացնել հենց իրենք՝ մարդիկ, իրենց ուժերով: Նարեկացու համար հավասարապես անընդունելի են ինչպես կեղծ հավատացյալներն ու «փոքրիկ հավատաքննիչները», որոնք սրտով ու հոգով կապված չեն Աստծու հետ, այնպես էլ աղանդավոր հավատացյալները, որոնք անճանաչելիորեն վերափոխում են Քրիստոսի վարդապետությունը: Սակայն Նարեկացու մեծությունը ոչ թե այն է, որ նա քննադատում է թե՛ ձևապաշտ եկեղեցականներին և թե՛ ճշմարտությունից շեղված աղանդավորներին, այլ՝ որ, վեր կանգնելով նրանցից, փորձում է համամարդկայինի մի նոր մակարդակում «հաշտեցնել» հակամարտ կողմերին:

Բնականաբար, այդ մոտեցումն անհասկանալի պիտի լիներ հակամարտող կողմերի համար: Նարեկացին քննադատում է քրիստոնեական հավատքի հանդեպ որոշ եկեղեցականների անհոգ, անտարբեր, շահապաշտական վերաբերմունքը, որի բնական հետևանքը պետք լիներ աղանդավորական շարժումների աշխուժացումը: Այդ շարժումներն ըստ երևույթին սկզբնական շրջանում ուղղված էին քրիստոնեական հավատքը «մեռցնող» հոգևորականների դեմ: Այս հարցում Նարեկացին հետևում էր իր հոր դիրքորոշմանը. «Լսէ՛ք, հովիւներ, լսէ՛ք եւ երկնչէ՛ք եւ առաւե՛լ զարհուրէք եւ ողբացէ՛ք ահ ու դողով: Քանզի հովիւ կոչուեցիք ոչ թէ որպէսզի ձեր անձերն արածեցնէք եւ ջորիներով ու աչքի ընկնող երիվարներով շրջէք աշխարհում եւ մարմնական փառքով ճոխանաք ու յիմարաբար մեղկանաք զգեստներով, այլ՝ որպէսզի Տիրոջ ժողովուրդը հովուէք, բանաւոր խաշներն արածեցնէք... որպէսզի միշտ խօսքով վարդապետէք եւ նոյնը գործով կատարէք՝ (սեփական) անձի մաքրութեամբ բոլոր բարիքների օրինակը տալով հոտին եւ բարի նախանձով յորդորելով բոլորին ... Եւ, որ պարտաւոր էիք բարի օրինակ լինել, գայթակղութեան պատճառ էք լինում եւ կործանում ձեր անձերն ու ձեր ձեռքի տակ գտնուողներին: Եվ ով անհոգ է իր անձի կորստեան հանդեպ, ինչպե՞ս կարող է հոգ տանել այլոց փրկութեան համար» (7, 161-162):

Նարեկացին, Ս. Ավերինցևի բառերով ասած, միաժամանակ «լավ հասկանում էր այն մարդկանց զգացմունքները, ովքեր ճշմարտություն էին որոնում հերետիկոսության մեջ»: Իսկ այդ «հասկացումը», ինչ-որ իմաստով ներքին համակրանքը չէր կարող ձևապաշտ հոգևորականների սրտով լինել (դրա վկայություններն են Նարեկացու մասին տարածված ժողովրդական լեգենդները և վիպական երգերը), մանավանդ որ աղանդավորներն իրենց հերթին համակրում էին Նարեկացուն: Նարեկացին «Մատյանում» ակնարկում է, որ աղանդավորները «ըստ իրենց հավատի» իրեն անվանում էին քրիստոս.

«Մեկի փոխարեն կրկնակի՝ հիշի՛ր նրանց,
բարերա՛ր,
Որ ընդունեցին անարժանիս քո վսեմ անունով...
Թեպետև ինքս լիովին զուրկ եմ արժանիքներից,
Սակայն նրանք, ըստ իրենց հավատի
Եվ հուսապատար ակնկալության,
Մեղավոր երուս նայում են բարի,
ուղղամիտ կամքով,
Կարծելով հո ուս պահարանում ես
Ծածկույթի ներքո ունեմ լիառատ
Սուրբ մասունքներից քո կենսապար և» (3, 506):

«Հավատի շենքի» կառուցման հիմքը ճշմարիտ հավատն է, որն ամենազոր է և ամենակարող: Աստվածահաճո բարեմասնությունների չափն ու արժեքը որոշելիս, գրում է Նարեկացին, «միշտ հավատը պիտի գտնենք ամենից բարձր ու գերազանց», որովհետև նրանով կարելի է լոկ մերձենալ բոլոր սրբություններին: Աստված մարդկանցից պահանջում է անսասան հավատ. առանց հավատի Նա անգամ չհաճեց ցույց տալ իր հրաշագործ զորությունը: Եթե մանանեխի մի փոքրիկ սերմնահատի չափ հավատը կարող է «ծովի խորքը փոխադրել մեծամեծ լեռներ», ապա այն պետք է ընդունենք «որպես ուղեցույց առաջնորդ կյանքի» և «Աստծո աներկմիտ երկրպագության»: Հավատը, լինելով Տիրոջն առընթեր, ունի «ինքնիշխանորեն կյանք ընծեռելու» զորություն: Հավատը գերազանց և առավել է բանականությունից, որովհետև միայն վերջինիս միջոցով հնարավոր չէ հասնել և ճանաչել Աստծուն: Նարեկացու համոզմամբ՝ հավատքը պետք է ներառնի մարդկային իմացության մյուս ունակությունները, դրանք ընդգրկի իր մեջ, քանզի «տեսությունն հստակ, Իմաստությունը կատարելագույն, Մտերմությունը երկնավորի հետ, Ճանաչումն Աստծո՝ մասն են հավատքի» (3, 60):

Հավատքի էությունը, նախ, այն է, որ պետք է հավատալ և հուսալ, որ «Քրիստոս ինչ որ կամենա, կարող է անել», որ Նրա համար չկա անկարելին: Երկրորդ՝ պետք է հավատալ Քրիստոսին, նրա հարությանը, երրորդ՝ պետք է հավատալ «և այն փոփոխության, որ մեղավորը կարող է դառնալ լիովին քավված, չարագործն՝ արդար, անմաքուրը՝ սուրբ»:

Հավատի շնորհիվ Նարեկացու մարդաբանությունը դառնում է լավատեսական: Ինչ կա, արդարև, գրում է նա, ավելի չքնաղ, խոսքից ու մտքից վեր, քան երկբայության թանձր խավարից Աստծու օգնությամբ մաքրված սիրտն այն մեղավորի, որ թեև խորասուզվել է կործանման վիհի անդունդն անհատակ, բայց իբրև իր հոգում և մտքում պահած լույսի կայծ,

ունի նաև փրկության նշխար: Ուստի իսպառ վշտաբեկ մեղավորը կարող է հուսալ՝ «հասնելու նորեն նախապարգևյալ փառազարդության», քանի որ Աստծու կամքով է մարդու մեջ այդ կայծն առկայծում: Այդ ներքին հավատը, զգացմունքը, նվիրվածությունը, ի խորոց սրտից Աստծո հետ զրույցը «ավելի մեծ հաճույքամբ է հոտոտում Աստված, քան մյուս բոլոր բուրումներն անուշ»:

Այս ներքին անսասան հավատը ճշմարիտ քրիստոնեության պատվարն է: Մարդն ինքը պետք է դառնա Աստծու տաճարը և ոչ թե իրենից դուրս փնտրի Աստծուն: Փրկության հարցում մարդուն չեն կարող օգնել մինչևիսկ «մերձավորագույն մարդիկ Աստծո»՝ նահապետները, մարգարեները, առաքյալները, մարտիրոսները. ուստի «զուր է նրանցից փրկություն հուսալ»: Նույնիսկ նրանք, ովքեր «շատ բարձր են թռչում իրենց սուրբ վարքի թևերով», դարձյալ կարոտ են Աստծու ողորմության:

«Որ զորությունը մարդկային իրոք
Սահմանափակ է փրկության համար,
Ցույց տվին և այդ ընտրյալներն իրենք՝
Ապավինելով միշտ բարերարիդ
ողորմածության...» (3, 426):

Մարդու համար արդեն իսկ կենդանություն է, երբ նա դավանում և օրհնաբանում է կենարար Աստծուն, ընտանի ձայնով կանչում Նրան: Այսպիսի հավատը մարդուն դարձնում է լավատես, վստահություն ներշնչում նրան, որ նա ոչ միայն կարող քավել իր մեղքերը, մաքրագործվել, այլև նույնիսկ միավորվել Աստծու հետ:

Սակայն մարդը ինքն իրեն, իր ուժերով չի կարող փրկվել: «Մատյանում» մեզ ներկայանում է ապաշխարող, փրկություն հայցող մարդը, այն մարդը, որը իմանալով, որ ինքն առանց Աստծու չի կարող փրկվել, ամբողջությամբ իր հույսը կապում է Քրիստոսի հետ:

Եթե մարդ չի կարող ինքնուրույն փրկվել, ապա կարո՞ղ է արդյոք նա իր փրկության համար ինչ-որ բան անել: Արդարև, ողբերգական է մարդու վիճակը, բայց մի՞թե մարդն այնքան թույլ է, այնքան ապականված, անհուսալիորեն կործանված, որ անկարող է որևէ բան անել: Նույնիսկ «թույլ մարդու» տեսության հեղինակ Օգոստինոս Երանելին գրում էր, թե Աստված մեզ ստեղծեց առանց մեզ, բայց չի կարող մեզ փրկել առանց մեզ: Չէ՞ որ Աստված մարդեղացավ այն բանի համար, որպեսզի մարդը դառնա աստված: Դիմելով Քրիստոսին՝ Նարեկացին գրում է. «Դու, որ մարմնացար մեզ համար՝ ըստ մեզ, // Որ մեզ դարձնես ըստ քեզ՝ քեզ համար», կարող ես վերստեղծելով հրաշակերտել մեզ: Ճանաչելով մարդու բնության չափն ու զորությունը և ունենալով «Աստծո մերձավորագույն մարդկանց» օրինակը որպես սփոփանք և քաջալերություն, գրում է Նարեկացին, պետք է անմիջականորեն դիմել Աստծուն, Քրիստոսին, որովհետև ըստ մի իմաստունի խոսքի՝ «Ավելի լավ է ընկնել ձեռքն Աստծո, և ոչ թե մարդկանց, // Քանզի որպիսին ինքն է զորությամբ, // Այդպիսին է և ողորմությունն իր»: «Չի առանց կամքիդ անկարող եմ ես վերանորոգվել, // Թե մահապարտիս գթալ չուզենաս, փրկվել չեմ կարող»: Միայն լիակատար, ամբողջական և անվերապահ մեղանչումն ու զղջումը կարող է «փափկացնել» Աստծուն, միայն դրա միջոցով է հնարավոր ակնկալել մեղքերի թողություն: Քանի որ Նարեկացին հանդես է գալիս Աստծուն և մարդկանց հաշտեցնողի դերում, որպես համայն մարդկության պատգամավոր, ուստի նա, մի կողմից՝ ներկայացնում է մարդու մեղավորությունը, իսկ մյուս կողմից՝ Աստծուն «հիշեցնում», թե Նա ինչպիսի՜ անբավ զորություններ ունի, ինչպիսի՜ ջերմ մարդասիրական վերաբերմունք ունի մարդկանց նկատմամբ: Հրաշք է, անշուշտ, երբ Աստված չգոյից ստեղծում է գոյը՝ մարդուն, բայց առավել մեծ հրաշք է, երբ վերստեղծում է մարդուն՝ «Քանզի, իսկապես, ավելի մեծ է զորությունը այն, // Որ հնացածն է կրկին նորոգում, // Ըստ առաջնային իր պայծառության, // Քան ստեղծողը անգոյությունից» (3, 290):

Նարեկացու քրիստոնեական հումանիզմի առանցքային գաղափարն այն է, որ այլևս մարդու հերթն է քայլ ձեռնարկելու իր փրկության համար: Նարեկացու հումանիզմը դրսևորվում է այն բանում, որ նա մարդուն մղում է ակտիվության, սխրագործության, հորդորում բռնել դեպի աստվածացում տանող ոչ թե «հորիզոնական», այլ ավելի կարճ՝ «ուղղահայաց» ճանապարհը: Յուրաքանչյուրը հույսը պետք է դնի իր վրա, բայց ոչ այն իմաստով, որ ինքը կարող է իրեն փրկել: Առանց Աստծու չի կարող լինել փրկություն, հետևաբար մարդը ո՛չ իր և ո՛չ էլ այլ մարդկանց միջոցով չի կարող փրկվել: Սակայն առանց մեր օգնության, մեր ջանքի ու ճիգի, Աստված չի ցանկանա մեզ փրկել:

Այդ խիզախ քայլը պետք է սկսվի ինքնադիտարկումից ու ինքնավերլուծությունից, սեփական ես-ի բարոյական դիմագծի անաչառ գնահատումներից, գործած և գործելիք մեղքերի անկեղծ խոստովանությունից, անվերապահ զղջումից ու մեղանչումից:

Նարեկացին իրեն համարում մեղավորներից ամենամեղավորը:

«Չկա ո՛չ մի մարդ այնքան մեղավոր,
այնքան անօրեն,
Այնքան ամբարիշտ, այնքան անիրավ,
այնքան չարա ործ,
Այնքան մոլորված, այնքան սխալված,
այնքան մոլե նած,
Այնքան խարդախված, այնքան շաղախված,
Այնքան ամաչած ու դատապարտված,
Որքան որ ես եմ.
Միմիայն ե՛ս եմ, և ուրիշ՝ ոչ ոք.
Ե՛ս եմ համայնը, և ամենքիին է
պարփակված իմ մեջ» (3, 442):

Նարեկացին իրեն մեղավոր է համարում, որպեսզի իրենց անմեղ, մաքուր և ճշմարիտ համարողները լռեն: Սակայն փարիսեցիություն չէ՞ ձևանալ անմեղ, եթե նույնիսկ ճշմարիտ է, որ «Չշնացա ու չպոռնկացա

երբեք իմ կյանքում, // Ոչ էլ աշխարհիկ քաղցրությունների // Մահաբույր հաճույքն ես ճաշակեցի»: Թող ոչ ոք չպարծենա, թե ինքն անմեղ է կամ սուրբ, կամ պատասխանատու չէ մարդկային չարիքների համար: Չկա մեկը, որ չկրի նախնական մեղսագործության հետքը, չկա մեկը, որքան էլ լինի բարեպաշտ ու աստվածապաշտ, մասնակից չլինի չարիքին: Մարդկային բնությունն այնպիսին է, որ ի բնե հակված է չարիք գործելու: «Սխալական է մարդը մշտապես», ստեղծված է թերի, խակամիտ: «Արարածը չար է էությամբ, Որ բնածին է չարությունը մեր», ուստի ոչ մի մարդ չի կարող մնացած լինել «անսխալական, անգայթ, անխոտոր»:

Նարեկացին չի փորձում արդարանալ. պիտի ամեն ինչ խոստովանել, ոչինչ ծածուկ չպահել: Քանի որ ես ինձ հանձնել եմ ամենագիտակ Աստծու ատյանին, գրում է նա, ուրեմն չպիտի կեղծեմ, չպիտի ստեմ և «խաբեբայությամբ չեմ ջանա մտնել Նրա աչքը»: Ինքնադատ խոստովանությունը, ինքնադատապարտումը և ինքնաճաղկումը փրկության գրավականն է:

Մարդը ոչ միայն պետք է քողազերծի սեփական մեղքերը, այլև իր վրա վերցնի համայն մարդկության կատարած, կատարվող և կատարվելիք հանցանքների պատասխանատվությունը: Նա, ով Ադամի սխալն իր անձին չի վերագրում, համայնի մեղքերն իրենը չի համարում, մեղանչում է արդարության դեմ և չի կարող նմանվել Քրիստոսին: Եթե մարդը մաքուր է (կա՞ արդյոք մաքուր մարդ), ապա թող «ընդունի այս կշտամբանքն իբրև իր համար պսակ», որ անմտորեն իր բարձունքից վայր չընկնի, իսկ եթե պատժապարտ է՝ «որպես փրկության միջոց, // Որ վեր բարձրանա հոգեկան մահվան // Կործանումից ու ապրի լիահույս»: Եթե մաքուր մարդ էլ կա, ապա գուցե դա հենց Բանաստեղծն է, որը, սակայն, հեռու չէ «սայթաքումից» և, որպես մարդ, բնավ էլ իրեն անմեղ չի համարում: Ընդհակառակը, նա ծաղկումն սկսում է իրենից, իրեն վերագրում բազմաբնույթ հանցանքներ: Օրինակ, որպես իր «անձին ամբաստանություն, վարժապետ անուն նույնիսկ» կրեց, կոչվեց ռաբբի՝ «եղծելով գովեստն առ Աստված», մարդկանցից վկայվեց սուրբ, երբ «անմաքուր» էր Աստծու առաջ, դիտվեց արդար ու բարի, երբ ամբարիշտ ու եղկելի էր բոլոր կողմերով, ավազանից կոչվեց արթուն (Գրիգոր), երբ ննջել էր մահաբեր քնով: Պարզվում է, որ նա է նախահայրը ամբարշտության, մեղավորների պետն ու անիրավների գլխավորը, պատժապարտների առաջնագույնը և հանցավորների հարազատ տիպարը:

Ժամանակակից մարդու համար այսպիսի մոտեցումը կարող է անհասկանալի, ինչ-որ տեղ նաև նվաստացուցիչ լինել: Սակայն միջնադարյան մարդու համար ինքնաճաղկումը բոլորովին այլ արժեք և նշանակություն ուներ: Ինքնաճաղկումը նշանակում է դարձ առ Աստված. դա մաքրագործման ու բարոյական կատարելագործման սկիզբ է: Նարեկացին գրում է.

«Եթե, արդարև, ծանր է ուրիշից անեծք ստանալ,
Ապա կրկնակի դառն է, դժնդակ,
Երբ մարդ հենց ինքն է նզովում իրեն...
Սակայն եթե մարդ խոնարհությամբ՝ հենց
Ինքը իր անձը ենթարկի դրանց,
Սեփական լեզվով կշտամբի, ծաղկի,
Մտրակի իրեն դառն անեծքներով,
Կօրհնվի շուրթերով ամենակալի,
Քանզի անսխալ մեկնած կլինի դարձն իր
առ Աստված՝
Զհեռանալով ճիշտ ճանապարհից,
Սիրով հատուցած կլինի լրիվ պարտքերն իր բոլոր՝
Զնվաճվելով չարախոսների խարդավանքներից,
Դարձած կլինի Հիսուսի հոտի բժշկված ոչխար՝
Դիմելով հենց այն աղին, որ, իրոք,
Բուժում է ախտերն իր աղիքների» (3, 356):

Ինչպես նկատում է ռուս անվանի գիտնական Ս. Ավերինցևը, խոստովանական ինքնաճաղկումները և սեփական մեղքերի համար ողբերը միջնադարյան գրականության շատ արդյունավետ ժանրերից էին: Այս կարգի ստեղծագործությունները ելնում էին մի դիրքորոշումից, որը շատ հեռու էր ինքնարտահայտվող անհատականության մասին ռոմանտիկական կամ հետռոմանտիկական պատկերացումներից: «Երբ հեղինակը ասում է մեզ. «ես» տառապում եմ ու ողբում, «ես» մեղավոր եմ և ինքնաճաղկում եմ ինձ, նրա «ես»-ը պարտավոր է լինել այնպիսին, որ հեղինակին հավատակից ընթերցողը կամ ունկնդիրը կարողանա կրկնել նրա բողոքն արդեն ի՛ր անունից՝ ամբողջությամբ և անվերապահորեն նույնացնելով իր «ես»-ը հեղինակային «ես»-ի հետ: Կրկնենք ևս մեկ անգամ - ամբողջությամբ և անվերապահորեն, քանի որ և ընկալման այն եղանակի մեջ, որը ռոմանտիզմից սկսած սովորաբար հաշվարկված է այսպես կոչված խոստովանական քնարերգության համար, ներառվում է ինքնանույնացման որոշ չափաբաժին՝ «ահա՛ և ե՛ս էլ եմ այդպիսին» բանաձևով, սակայն միավորված «և ե՛ս էլ եմ» առանձնացնող պաթոսի հետ, դա արդեն նշանակում է՝ «նա չէ», «այդպիսին» արդեն նշանակում է՝ «նույնը չէ»: Այսպիսի ինքնանույնացումը միջնադարյան տեքստում հնարավոր չէ: Դա նշանակում է, որ տեքստում կամ պետք է անհատական կենսագրության նշանները լինեն հաղթահարված կամ համամարդկային հարացույցներում ընդհանրացվեն այն աստիճանի, որ ամեն մի մանրամասն մշակված լինի որպես սիմվոլ: Այլապես չէր կարող տեղի ունենալ հավատացյալների համայնքի կողմից տեքստի յուրացումը: Այս ժանրը ձեռք է բերում վերանձնական բնույթ: Նարեկացին զոհաբերում է իր անհատականությունը, և այդ գործողությունը մոնումենտալ մի ժեստ է: Նա բառացիորեն ձեռքի հզոր շարժումով քանդում է «ես»-ի և «ոչ ես»-ի միջև եղած միջնապատը, որպեսզի իր համար և բոլորի համար աղոթքը հնարավոր չլինի տարբերել (13, 16-19): Իսկապես, «Մատյանում» ոչ միայն ջնջվում է «ես»-ի և «ոչ ես»-ի միջև գոյություն ունեցող սահմանը, այլև ես-ը նույնանում է «բոլորի» հետ, «ես»-ը դառնում է «հանուր մարդկության ճշգրիտ տիպարն ու պատկերը»: Ինքնանույնացման այսպիսի աստիճանի շնորհիվ

Նարեկացու «Մատյանը» վերածվում է մի Գրքի, որով ոչ միայն բոլոր մարդիկ միավորվում են, այլև, որպես հայելի, տեսնում են իրենց պատկերը:

«Մատյանը» իր բովանդակությամբ ու գաղափարական միտվածությամբ քրիստոնեական հումանիզմի մարմնացում է: Նա համոզված է, որ ոչ թե պետք է փրկվեն միայն ընտրյալները, այլ բոլորը, որովհետև բոլորը Աստծունն են.

«Արդ, ամենքին էլ դու ես ստեղծել.
Բոլորն էլ քոնն են, միա՛յն բարերար,
Ուստի բոլորին պիտի ողորմես.
Եթե մինչևիսկ մեղանչած լինեն,
Քոնն են, քանի որ քո հաշվի մեջ են
Եվ ճանաչում են զորությունը քո...» (3, 195):

Պատահական չէ, որ Նարեկացին «Մատյանը» հանձնարարում է բոլորին՝ անկախ նրանց ծագումից, ազգությունից, սեռից, դավանանքից ու սոցիալական դիրքից: Ելնելով մարդասիրական այս դիրքորոշումից՝ Նարեկացին պահանջում է, որ բոլորը պատասխան տան բոլորի համար, բոլորը մտածեն բոլորի փրկության մասին: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուրն իր վրա պետք է վերցնի բոլորի մեղքերը, Աստծու առաջ ներկայանա որպես համայն մարդկության «աղոթանվեր պատգամավոր»: Հետևելով Քրիստոսին՝ նա փրկություն է հայցում նաև իր թշնամիների համար՝ «Ինձ խայթողներին մի՛ բնաջնջիր, այլ ուղղի՛ր միայն»: Նարեկացին բոլորի հետ է՝ թե՛ մեղավորների և թե՛ արդարների: Իսկ «քանի որ նա «միասին» է միաժամանակ թե՛ մեկի և թե՛ մյուսի հետ, այդ երկուսի միավորումը տեղի է ունենում նրանում և նրա միջոցով. նա դառնում է միավորման խորհուրդ: Մարդիկ պետք է լինեն միասնական, որովհետև պոետն արդեն միասնական է բոլորի հետ» (13, 20): Որպեսզի վերջ տրվի հոգևոր անհիշխանությանն ու գժտությանը, որպեսզի բոլորը, հատկապես հակամարտության մեջ գտնվող մարդիկ միավորվեն, մոռանան միմյանց հասցրած վիրավորանքներն ու մեղադրանքները, պետք է վերափոխվեն, փոխեն իրենց դիրքորոշումները: Բոլորը պետք է ընդունեն, որ մեղավոր են, ընդսմին՝ յուրաքանչյուրն իր վրա պետք է վերցնի բոլորի մեղքերը, պատասխանատու լինի բոլորի համար: Բոլորը պետք է ընդունեն, որ իրենց փրկության գրավականը հավատն է առ Քրիստոս Աստված, որի համար բոլորը հավասար են, եթե անկեղծորեն հավատում են Նրան: Բոլորը պետք է ապրեն քրիստոսաբար, դառնան մարդկային աստվածներ, որպեսզի կարողանան միաձուլվել Քրիստոս Աստծու հետ: Յուրաքանչյուր մարդ պետք է գործի այդ սխրանքը: Ահա այն Կտակը, որ Նարեկացին ավանդել է մարդկությանը՝ ինքն էլ դառնալով համամարդկային այդ սխրանքի խորհրդանշանը:

Գրականության ցանկ

1. Աբեղյան Մ. Երկեր, հ. Գ, Երևան, 1968:
2. Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանների /Արեւելահայերէն նոր թարգմանութիւն/, Երեւան, 1999:
3. Գրիգոր Նարեկացի. Մատյան Ողբերգության, Տաղեր, թարգմ.՝ Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979:
4. Գրիգոր Նարեկացի. Մեկնություն «Երգ երգոցի» Սողոմոնի, «Աստղիկ», թիվ 4, 1991:
5. Գևորգյան Վ. Հետադարձ ակնարկ, «Գրիգոր Նարեկացի, Մատյան Ողբերգության, Տաղեր» գրքում, Երևան, 1979:
6. Խրլոպեան Գ. Գրիգոր Նարեկացու իմաստասիրական ուսմունքը, «Հասկ» հայագիտական տարեգիրք, Թ տարի, Անթիլիաս, 2001:
7. «Աստուծոյ կամքն ու երկիւղը ճշմարտութեամբ ծանուցող սուրբ հոգեկիր վարդապետ Խոսրովի յոյժ օգտակար եւ հոգեշահ խրատական պատգամները», «Գանձասար», Բ, 1992:
8. Ղազինեան Ա. Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995:
9. Մկրյան Մ. Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976:
10. Նալբանդյան Վ. Գրիգոր Նարեկացի, Երևան, 1990:
11. Չոպանյան Ա. Երկեր, Երևան, 1988:
12. Սուրբ Նեղոս Սինայեցի. Աղօթքի մասին, «Գանձասար», Ա, 1992:
13. Аверинцев С. С. Роскошь узора и глубины сердца: Поэзия Григора Нарекаци. В кн. “Григор Нарекаци. Книга скорбных песнопений”, М., 1988.

GRIGOR NAREKATSI AND THE QUESTION OF ARMENIAN RENAISSANCE

SEYRAN ZAQARYAN
Doctor of Philosophy, Professor

Summary

In the article where having considered the view of supporters of the conceptions of , Armenian Renaissance according to it Grigor Narekatsi is the forefather of Renaissance and his “The book of Lamentations” which tunes with the times of renaissance, the author on the base on analysis of the content of this book have come a conclusion that Narekatsi is the men of genius representative of medieval Christian culture and literature.

ГРИГОР НАРЕКАЦИ И ВОПРОС АРМЯНСКОГО РЕНЕССАНСА

СЕЙРАН ЗАКАРЯН
Доктор философских наук, профессор

Резюме

В статье, рассматривая точку зрения сторонников концепции “армянского Ренессанса”, согласно которой Григор Нарекаци является родоначальником армянского Ренессанса, а его “Книга скорбных песнопений” созвучна духу эпохы Ренессанса, автор, на основе анализа содержания этой книги, приходит к выводу, что Нарекаци является гениальным представителем средневековой христианской культуры и литературы.

ՎԱՉԻԿ ԲՐՈՒՏՅԱՆ
Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության ամբիոնի հայցորդ

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Իրավական պետության ստեղծումն անհնար է առանց մարդկանց համակողմանի զարգացման: Իրավական պետությունում մարդու ձևավորման որոշիչ դերը պատկանում է նպատակասլաց դաստիարակչական աշխատանքներին, որոնց մեջ առավել կարևոր տեղ է զբաղեցնում իրավական դաստիարակությունը[1]:

Ժամանակակից հասարակության իրավական կարգավորման կառուցակարգի կարևորագույն տարրերից է իրավագիտակցությունը: Առանց պատշաճ իրավագիտակցության՝ իրավունքը և իրավական կարգավորման համակարգը դառնում են ոչ միայն անարդյունավետ, այլև անիմաստ: Հայտնի օրինաչափություն է, որ օրինականության վիճակը կախված է հասարակության իրավագիտակցության, քաղաքացիների իրավական մշակույթի զարգացման մակարդակից: Հասարակության անդամների, պետական պաշտոնյաների մոտ իրավագիտակցության պատշաճ, կայուն մակարդակի ձևավորման միջոցով միայն հնարավոր կլինի հաղթահարել իրավական նիհիլիզմը /բացասական վերաբերմունքը դեպի իրավունքը և օրենքը/, ինչպես նաև իրավական իդեալիզմն ու ռոմանտիզմը /իրավունքի դերի գերագնահատումը/: Իրավական նիհիլիզմի, իդեալիզմի և ռոմանտիզմի հաղթահարման ու հասարակության անդամների իրավագիտակցության մակարդակի բարձրացման, նրանց մոտ որոշակի իրավական մշակույթի ձևավորման միջոցներից են իրավական դաստիարակությունը, իրավական ուսուցումը և քարոզչությունը[2]:

Իրավական դաստիարակության նշանակությունը հանգում է աշակերտների մոտ հատուկ իրավական մտածողության մշակմանը, նրանց իրավական մշակույթի ձևավորմանը, իսկ դա շատ կարևոր է մեր հասարակության մեջ կարգ ու կանոն, օրինականություն հաստատելու և ընդհանրապես իրավախախտումների կանխարգելման համար: Իրավական դաստիարակության միջոցով ձևավորվում են պատանի քաղաքացու իրավագիտակցությունը և վարքը:

Իրավական դաստիարակությունը բնորոշվում է պետության բնույթով և քաղաքականությամբ: Այն սերտորեն կապված է քաղաքացիական դաստիարակության հետ: Դաստիարակության այդ ուղղությունները շատ ընդհանրություններ ունեն, սակայն իրավական դաստիարակությունն ավելի շատ կողմնորոշված է դեպի իրավաբանական օրենքների և իրավական նորմերի, իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ գիտելիքների սերմանումը:

Իրավական նորմը հասարակության մեջ մարդու անհրաժեշտ վարքի իդեալական մոդելն է: Չհանդիսանալով ամբողջությամբ գործունակ քաղաքացի՝ երեխան գտնվում է օրենքի պաշտպանության ներքո[3]. նրա հատուկ կարգավիճակը ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (1948թ.), Երեխայի իրավունքների մասին հռչակագրում (1959թ.), Երեխայի իրավունքների մասին միջազգային համաձայնագրում (1989թ.), ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում (1996թ.): Երեխայի առնչություններն օրենքի հետ իրականանում են հիմնականում միջնորդավորված կերպով, ծնողների և մանկավարժների միջոցով[4]: Ընտանեկան և դպրոցական դաստիարակության պայմաններում երեխան յուրացնում է օրինակելի վարքի կանոնները, բարոյական և իրավական նորմերի մասին հիմնական գիտելիքները, ինչպես նաև սոցիալական գործունեության առաջնային կարողությունները:

Իրավագիտակցությունն իրավունքի՝ որպես սոցիալական իրականության առանձնահատուկ երևույթի, գիտակցման ձև է[5]:

Իրավագիտակցության մեջ սերտորեն համատեղվում և փոխներգործում են երեք բաղադրատարր՝ ճանաչողական, գնահատող և կարգավորող: Դրանց համապատասխան՝ կարելի է առանձնացնել իրավագիտակցության երեք հիմնական գործառույթ՝ ճանաչողական, գնահատող և կարգավորող:

Իրավագիտակցության ճանաչողական գործառույթն այն բանի գիտակցության մեջ է, թե ինչ է իրավունքը. այդ գործառույթն իրականացվում է առանձին իրավական երևույթների ու ամբողջությամբ վերցրած իրավունքի հայտնաբերման, արտահայտման և իմաստավորման տարբեր ձևերով (զգայական, կերպարային, տրամաբանական – հասկացական):

Իրավագիտակցության գնահատող գործառույթն իրավունքի մասին որոշակի արժեքային պատկերացումների և գաղափարների ձևավորման մեջ է, որոնցից ելնելով՝ իրավագիտակցության սուբյեկտը գնահատում է (դրական կամ բացասական) գործող իրավունքը և իրականությունը:

Իրավագիտակցության կարգավորիչ գործառույթը սուբյեկտի կողմից կոնկրետ գործողություններում (իրավաչափ կամ ոչ իրավաչափ բնույթի) գործող իրավունքի պահանջների վերաբերյալ իր վարքագծային դիրքորոշման (վարքագծի մոդելի) գիտակցման, որոշման և իրականացման մեջ է:

Իրավագիտակցության առանձնահատկությունը գիտակցության այլ ձևերի (բարոյական, կրոնական և այլն) հարաբերակցության մեջ է՝ պայմանավորված հենց իրավունքի առանձնահատկությամբ, որն արտահայտելու համար իրավագիտակցությունն օգտագործում է համապատասխան կերպարներ, պատկերացումներ, խորհրդանիշեր ու

հասկացություններ:

Իր շարժառիթային-կարգավորիչ բնույթով և կամային ուղղվածությամբ իրավագիտակցությունը լինում է՝ օրենքին հավանություն տվող՝ օրինապահ, և օրինախախտ[6]:

Հանցավոր կենսաոճն ուղեկցվում է անձի դեգրադացիայով (հետընթացով) և իրավագիտակցության էական ձևախեղմամբ, որում սկսում են տիրապետող դիրքեր գրավել այսպես կոչված «գողական օրենքի»՝ հանցավոր աշխարհի յուրահատուկ, չգրված «օրենսգրքի» հակահասարակական «արժեքները» և հանցավոր պատվիրանները:

Իրավական մշակույթը մարդկանց կյանքի իրավական կազմակերպման մեջ ձեռք բերված զարգացման մակարդակն է:

Իրավական մշակույթն ընդհանուր մշակույթի կարևոր բաղադրատարրն է:

Համամարդկային իրավական մշակույթի պատմությունն իրավունքի և պետության առաջադիմող զարգացումն է սկզբնական պարզունակ ձևերից մինչև իրավունքի, իրավական պետության, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հաստատման և տիրապետման ժամանակակից ձևերը:

Ժամանակակից իրավական մշակույթին ներհատուկ են այնպիսի որակական բնութագրեր, ինչպիսիք են՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների որոշիչ նշանակությունը հասարակական և պետական կյանքի կազմակերպման մեջ, զանգվածային իրավագիտակցության մեջ օրենքի և իրավակարգի, իրավունքի տիրապետման գաղափարների ու արժեքների նկատմամբ հարգալիր վերաբերմունքի հաստատումը, սահմանադրականության ու իրավական օրենքի գերակայության սկզբունքի իրականացումը, դրական իրավունքի բոլոր աղբյուրների և պետական իշխանության բոլոր ճյուղերի համաձայնեցված ու արդյունավետ գործունեությունը, իրենց իրավունքներն իրականացնելու ու իրենց իրավական պարտականությունները պատշաճ կատարելու՝ քաղաքացիների ու նրանց հասարակական միավորումների իրավական ակտիվությունը, պետական մեխանիզմի բոլոր օղակների՝ իրենց իրավասությունների շրջանակներում ակտիվ օրինաստեղծ, իրավապաշտպան և իրավակիրառական գործունեությունը, պետության վրա քաղաքացիական հասարակության ներգործության և նրա գործունեության վերահսկողության օրինական ձևերի, միջոցների ու ընթացակարգերի ճյուղավորված համակարգի առկայությունը:

Իրավական մշակույթին հակընդդեմ (անտիպոդ) է իրավական նիհիլիզմը՝ իր բազմաթիվ դրսևորումներով ու ձևերով, իրավունքը թերագնահատելուց և դրա նկատմամբ անհարգալից վերաբերմունքից մինչ իրավունքի լիակատար անտեսումն ու բացառումը: Իրավական նիհիլիզմը միշտ էլ պետականության նիհիլիզմ է, քանի որ իրավունքի բացառումը, ըստ էության, ներառում է նաև պետության՝ որպես հանրային իշխանության իրավական կազմակերպության բացառումը:

Իրավական նիհիլիզմը լայն տարածում է գտել շատ երկրներում: Դա խոր արմատներ է նետել նաև հայ իրականության մեջ: Հետխորհրդային ժամանակներում Հայաստանը մուտք է գործել մշակութային-իրավական զարգացման նոր ժամանակաշրջան, որի հիմնական նպատակներն ու կողմնորոշիչները մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, քաղաքացիական հասարակության և իրավական պետության սկզբունքների, նորմերի ու ինստիտուտների սահմանադրականորեն ամրագրված գաղափարներն ու արժեքներն են: Սակայն արդի անցումային պայմաններում իրականության մեջ դեռևս շատ ուժեղ են մի ամբողջ շարք բացասական գործոններով խորացվող և պահպանվող իրավական նիհիլիզմի դրսևորումները: Այդ գործոններից են՝ իրականացվող սոցիալ-տնտեսական վերափոխումների թերությունները, իրավական բարեփոխումների անավարտվածությունը, պետական իշխանության ամբողջ ապարատի աշխատանքի ոչ արդյունավետությունը, զանգվածային կերպով և ամենուր կատարվող օրինախախտումները, իրավապաշտպան մեխանիզմի անգործությունը՝ հատկապես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ոլորտում, բուռն աճող հանցագործությունների դեմ պետության պայքարի նվազ արդյունավետությունը և այլն:

Իրավական նիհիլիզմի հաղթահարումն ամբողջությամբ հնարավոր է միայն երկրում հետսոցիալիստական վերափոխումների գործընթացի հաջող զարգացման և ժամանակակից իրավական մշակույթի գաղափարների ու արժեքների գործնական իրացման ընդհանուր հունում:

Իրավական մշակույթը ձևավորվում է իրավական դաստիարակության արդյունքում:

Իրավական դաստիարակությունը ներգործությունների այնպիսի համակարգ է, որն ուղղված է իրավագիտակցության և իրավական մշակույթի բարձր մակարդակի մշակմանը[7]: Իրավական դաստիարակության նպատակն է՝ մարդուն տալ անհրաժեշտ իրավական գիտելիքներ և սովորեցնել հարգել օրենքները: Իրավական դաստիարակության խնդիրներն են՝

- հաղորդել գիտելիքներ իրավունքի գործող համակարգի մասին, ինչպես նաև ճիշտ հասկանալ և պարզաբանել իրավական ակտերը,
- ձևավորել խոր ներքին հարգանք իրավունքի հանդեպ,
- ձևավորել կարողություններ՝ ինքնուրույնաբար պրակտիկայում կիրառելու իրավական գիտելիքները,
- ձևավորել օրենքներին համապատասխան վարքի նորմեր,
- ձևավորել իրավաչափ վարքի դրական արժևորում և բացասական վերաբերմունք իրավական նորմի յուրաքանչյուր խախտման հանդեպ:

Իրավական դաստիարակությունը կարելի է հասկանալ երկու իմաստով՝ լայն և նեղ: Լայն իմաստով՝ իրավական դաստիարակությունը իրավական մշակույթի և իրավագիտակցության ձևավորման ամբողջ բազմակողմանի գործընթացն է: Նեղ իմաստով՝ իրավական դաստիարակությունը բարձր մակարդակի իրավագիտակցության և իրավական մշակույթի ձևավորման նպատակով մարդ-

կանց գիտակցության վրա ազդելու նպատակասլաց, կառավարելի և կանխամտածված գործընթացն է:

Կախված դաստիարակության ձևից, որը կիրառվում է անձնավորության վրա որպես ներգործություն, կարելի է առանձնացնել իրավական դաստիարակության երկու տեսակ՝

• ընդհանուր. ի նկատի ունենք բնակչության իրավական դաստիարակությունն ամբողջությամբ՝ իրավական թեմաներով դասախոսությունների կազմակերպում, իրավական հարցերի վերաբերյալ երեկույթների անցկացում, հասարակական խորհրդատվություններ, զանգվածային լրատվամիջոցների գործունեություն և այլն.

• հատուկ. ի նկատի ունենք իրավական գիտելիքների հիմունքների նպատակասլաց ուսուցում (հատուկ դասընթացներ հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատություններում), ինչպես նաև մասնագիտական իրավաբանական կրթություն իրավաբանական բնագավառի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Իրավական դաստիարակության ձևերի մեջ դասվում են՝

• իրավական ուսուցումը
• իրավական պրոպագանդան
• ինքնադաստիարակությունը
• իրավաբանական պրակտիկան

Իրավական ուսուցումը նույնպես կարելի է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր և հատուկ: Ընդհանուր իրավական ուսուցումն ընթանում է դպրոցական ուսուցման շրջանակներում («Մարդու իրավունքներ» - 8-րդ դասարան, «Քաղաքացիական կրթություն» - 9-րդ դասարան, «Պետություն և իրավունք»- 10-րդ դասարան), ինչպես նաև բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության շրջանակներում իրավական գիտելիքների հիմունքների հատուկ դասընթացների ուսուցման եղանակով՝ ոչ իրավաբանական մասնագիտությունների ուսանողների համար: Հատուկ իրավական ուսուցումն իրենից ներկայացնում է իրավաբանական կրթությամբ մասնագետների պատրաստում բարձրագույն և միջին մասնագիտական կրթության շրջանակներում:

Դպրոցում իրավունքի ուսումնասիրությունը սովորողների համար հնարավորություն է ստեղծում ստանալու իրենց հետաքրքրող ստույգ իրավական տեղեկատվություն և մանկավարժներին թույլ է տալիս համակարգելու նրանց իրավական հետաքրքրությունների ուղղվածությունը: Այնուամենայնիվ, դպրոցական իրավական դասընթացը դպրոցականների իրավական դաստիարակության ամբողջ համակարգի միայն մեկ օղակն է: Անհրաժեշտ է աճող սերնդի բարոյաիրավական դաստիարակությանը, որը ներառում է դաստիարակչական միջոցառումների մի ամբողջ շարք, մոտենալ համակողմանիորեն ու համալիր կերպով: Այլ կերպ ասած՝ դպրոցում իրավական դաստիարակության և կրթության գործընթացը չի կարելի սահմանափակել, դիցուք, ՀՀ Սահմանադրության ուսումնասիրմամբ, չնայած որ վերջինս խիստ անհրաժեշտ է, և այն պետք է ուսումնասիրել առաջին հերթին: Սովորողներին պետք է կողմնորոշել ուսումնասիրելու նաև կոնկրետ օրենքներ, նրանց պարտադիր հոդվածներն ու դրույթները, կարևորագույն նորմատիվ ակտերը: Դրա հետ միասին պետք է հաշվի առնել, որ իրավունքի մասին գիտելիքների ձեռք բերումը գործի մի մասն է միայն, և անչափահասների իրավական դաստիարակության իրական իմաստը ոչ միայն օրենքների իմացության, այլև դրանք հարգելու և «ըստ օրինաց» ապրելու մեջ է:

Իրավական առարկաների դասավանդումը դպրոցում իրականացվում է 8-10-րդ դասարաններում, սակայն իրավական դաստիարակությունն սկսվում է ավելի վաղ: Դրա հետ կապված՝ անհրաժեշտ է կարևորել մի էական մեթոդական հարց՝ իրավական դաստիարակության կապը դպրոցական ծրագրի ուսումնական մյուս առարկաների հետ. արդյոք դպրոցականն այնտեղ չի՞ կարող գտնել իրավունքի մասին գիտելիքներ: Փորձը ցույց է տալիս, որ, անտարակույս, կարող է: Մեր ուսումնասիրություններում հանգամանորեն անդրադարձել ենք այդ հիմնախնդիրներին ու դրանց լուծման տարբերակներին և եկել ենք այն համոզման, որ դիտվում է ձևավորվող անձնավորության՝ կյանքի երևույթներն իրավական դիտանկյունից ու չափանիշներով ընկալելու պակաս, ինչպես նաև իրավագիտության բնագավառում մանկավարժների գիտելիքների, իսկ իրավաբանների մոտ՝ մանկավարժության բնագավառին վերաբերող անհրաժեշտ գիտելիքների պակաս: Այս հանգամանքն օրինաչափորեն պահանջում է մանկավարժների և իրավաբանների միջև տարբեր մակարդակներում սերտ համագործակցություն՝ սկսած մանկավարժորեն «անտեսված» անչափահասների հետ անհատական զրույցների անցկացումից մինչև դպրոցական ծրագրերի և ամենօրյա աշխատանքային պլանների մշակումը:

Համոզված ենք, որ իրավական մշակույթի ձևավորման ուղղությամբ անհրաժեշտ է դպրոցում աշխատանքներ իրականացնել ոչ թե դրվագներով, այլ գիտականորեն համակարգված կերպով: Այդպիսի համակարգի ստեղծումը ենթադրում է մի քանի փուլեր.

1. Ախտորոշիչը, որը ենթադրում է հարցի ուսումնասիրման աստիճանը, թույլ է տալիս բացահայտել տվյալ դպրոցի աշակերտների ընտանիքների սոցիալական կազմը, տալ «դժվար» երեխաների տարբեր խմբերի բնութագրերը, վերլուծություն կատարել իրավախախտ անչափահասների թվային աճի և որակական կազմի մասին:

2. Որոնողական, որը թույլ է տալիս գտնել հիմնախնդրի լուծման ուղիները:

3. Գործուն, որը թույլ է տալիս վերլուծել ստացված արդյունքները և նախորոշել հիմնախնդրի լուծման միջոցները:

Աշակերտների ընտանիքների սոցիալական կազմի ախտորոշիչ վերլուծության միջոցով բացահայտվում է հետևյալ տվյալների տոկոսային քանակական պատկերը.

- ոչ լրիվ ընտանիքներ
- անապահով ընտանիքներ
- բազմանդամ ընտանիքներ
- միաերեխա ընտանիքներ

- անբարենպաստ ընտանիքներ
- հաշմանդամ ծնողներ

Ինչպես երևում է ցանկից, ընտանիքների սոցիալական կազմի տոկոսային հարաբերությունից ելնելով՝ դպրոցում անհրաժեշտ է աշխատանքներ իրականացնել դաստիարակության հարցում պրոբլեմներ ունեցող ընտանիքների հետ:

Այդ պրոբլեմը կարող է ծագել և՛ միաերեխա, և՛ բազմազավակ ընտանիքներում: Միաերեխա ընտանիքներում երեխան ավելի շատ է հակված եսասիրության, անհոգության: Միաժամանակ, քրեագետների տվյալներով, բազմազավակ ընտանիքների երեխաներն ավելի հաճախ են ընտրում վարքի սոցիալապես վտանգավոր ճանապարհը, քանի որ այդպիսի ընտանիքներն ավելի շատ են նյութական դժվարություններ ունենում, որը թույլ չի տալիս ամբողջությամբ բավարարել երեխայի պահանջմունքներն ու հետաքրքրությունները[8]:

Անբարենպաստ ընտանիքներից ուշադրության են արժանի այնպիսիները, որտեղ ծնողները կամ ծանր հիվանդ, կամ հաշմանդամ են: Այդպիսի ընտանիքները, որպես կանոն, արտաքին կոնֆլիկտներ չեն դրսևորում, սակայն աստիճանաբար նվազում է ծնողների հեղինակությունը և ազդեցության աստիճանը երեխաների վրա:

Դպրոցում անցկացված աշակերտների ընտանիքների սոցիալական կազմի ախտորոշումը թույլ է տալիս ստանալ աշակերտների և նրանց ընտանիքների հետ տարվող անհատական աշխատանքի ամբողջական պատկերը: Բացահայտվում են այն երեխաները, որոնք գտնվում են անբարենպաստ ընտանեկան պայմաններում, ուր վտանգված է նրանց առողջությունը և զարգացումը, կարիք ունեն նյութական օգնության, գտնվում են սոցիալական վատ կամ վատթար վիճակներում:

«Դժվար» դեռահասների խմբերի հայտնաբերման ուղղությամբ դպրոցում տարվող ախտորոշիչ հետազոտությունները մանկավարժական կոլեկտիվին թույլ են տալիս կազմելու մանրակրկիտ պլան՝ յուրաքանչյուր խմբի և առանձին վերցրած աշակերտի համար[9]:

Որոնողական փուլը թույլ է տալիս գտնելու հիմնախնդրի լուծման ուղիները:

ա) Առաջին փուլը ներառում է իրավական պրոպագանդայի զանազան ձևերի իրականացում (իրավական դասախոսություն, հետաքրքիր հանդիպումների ակումբ, հեռուստատեսություն, կինո, մամուլ), աշակերտների հետ արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպում:

բ) Երկրորդ փուլը հիմնված է ուսուցիչների և ծնողների իրավական մշակույթի բարձրացման վրա (ուսուցիչների կատարելագործում, ծնողների համար՝ իրավական ուսուցողական միջոցառումներ):

Գործուն փուլում իրավական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների ծանրությունն ընկած է մանկավարժական հանրույթի վրա: Իրավական դաստիարակության արդյունավետության բարձրացման պայմաններից մեկը դպրոցականների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելն է: Վերջինս ենթադրում է իրավական դաստիարակության միջոցների տարբերակում դպրոցի տարրական, միջին և բարձր օղակներում:

Այսպես՝ 1-3-րդ դասարանների աշակերտները սկսում են յուրացնել իրենց համար անծանոթ դպրոցական կարգը, վարքի կանոնները, աշակերտների պարտականությունները, կատարում են առաջին հասարակական հանձնարարությունները՝ որպես հերթապահներ և սանիտարներ: Այդ գործունեության ընթացքում նրանց մոտ ծագում է դասարանի և դպրոցի հանդեպ պատասխանատվության զգացում՝ իրենց վարքի և արարքների համար[10]:

Կրտսեր երեխաների հետ զրույցները կարող են ընդգրկել մոտավորապես հետևյալ թեմաները՝

1. Ամենալավը մեր երկիրն է
2. Կարգապահությունը դպրոցում, փողոցում և տանը
3. Փողոցային երթևեկության կանոններն իմանալը պարտադիր է յուրաքանչյուր աշակերտի համար
4. Իմ ոստիկանը պաշտպանում է ինձ
5. Անգնիվ արարքները դատապարտելի են
6. Մեր հայրենիքը Հայաստանն է
7. ՀՀ զինանշանը, դրոշը, օրհներգը
8. ՀՀ Ազգային ժողովի պատգամավորը ժողովրդի ընտրյալն է
9. Ո՞վ պետք է պահպանի դպրոցի, բակի մաքրությունը:

Որպեսզի սովորողները կարողանան լավ յուրացնել կանոնները, ճշտությամբ կենսագործել նրա պահանջները, անհրաժեշտ է, որ դասվարն անցկացնի բազմաթիվ գործնական վարժություններ՝ օգտագործելով պլակատներ, դիապոզիտիվներ, մանկական գեղարվեստական գրականությունից ընտրված օրինակներ, կազմակերպի կինոնկարների միասնական դիտումներ, անցկացնի վառ ու պատկերավոր զրույցներ ընկերասիրության, քաջության, ազնվության թեմաներով:

Տարրական դասարանների աշակերտները մասնակցում են «Փողոցում», «Լուսակիր», «Վարքը դասամիջոցին» դերերով խաղ-պարապմունքներին:

4-6-րդ դասարանների աշակերտների հետ աշխատանքների ընթացքում ամրապնդվում է նրանց գիտակցական վերաբերմունքը ներդպրոցական աշակերտական կանոնների նկատմամբ, ձևավորվում է անհանդուրժողականություն կարգ ու կանոնի խախտման հանդեպ, շարունակվում է իր արարքների համար անձնական պատասխանատվության գիտակցման ամրապնդումը:

4-6-րդ դասարանների աշակերտները մասնակցում են հետևյալ թեմաներով զրույցներին՝

1. Դպրոցի կանոնադրությունը դպրոցական կյանքի հիմնական օրենքն է
2. Քո իրավունքներն ու պարտականությունները
3. Իսկական բարեկամության և կեղծ ընկերության մասին
4. Ազնիվ ապրել, ժողովրդին ծառայել
5. Դու անտարբեր չպետք է լինես
6. Ի՞նչ է օրենքը, ինչպե՞ս է այն ընդունվում և ի՞նչ ուժ ունի
7. Ի՞նչ է հանցագործությունը, և ինչպե՞ս պայքարել նրա դեմ:

Այս դասարանների աշակերտները քննարկում

են կինոնկարներ, ներկայացումներ՝ նվիրված ոստիկանության աշխատողներին: Մասնակցում են ոստիկանության աշխատողների հետ հանդիպումներին: Ձևավորում են ստենդներ ու անկյուններ «Կարելի է» և «Չի կարելի» թեմաներով, կազմակերպում են «Կանաչ պարեկ» ջոկատներ և դպրոցի միկրոշրջանում զբաղվում են բնության պահպանության գործունեությամբ:

7-8 - րդ դասարանների աշակերտները պետք է ընդհանուր պատկերացում ստանան Հայաստանի Հանրապետության օրենքների, քաղաքացիների հիմնական իրավունքների և պարտականությունների մասին, կարողանան հասկանալ և պահպանել վարքի կանոնները հասարակական վայրերում: Շատ կարևոր է «Մարդու իրավունքներ» դասընթացի յուրացումը: Նրանց հետ անցկացվում են զրույցներ հետևյալ թեմաներով՝

1. Մոտենում է քո քաղաքացիական հասունությունը
2. Անչափահասների պատասխանատվությունը
3. Քրեական պատասխանատվություն
4. Դատարանը և արդարադատությունը ՀՀ-ում
5. Հանցագործ և հանցակից
6. Երջանկությունը ծնվում է աշխատանքում:

Անցկացվում են «Դու և օրենքը», «Օրենքը և խիղճը» իրավական թեմաներով հարց ու պատասխանի թեմատիկ երեկոներ: Աշակերտները նյութեր են հավաքում մարզի խիզախ ոստիկանների մասին, լույս են ընծայում «Մարդը և օրենքը» թերթը, պատրաստում են գրքերի ցուցահանդես իրավական թեմաներով: Մասնակցում են լավագույն ալբոմի՝ օրինակելի արարքների մասին աշխատանքի, օրենքի մասին առածների և ասացվածքների ժողովածու ստեղծելու մրցույթին:

Բարձր դասարաններում շարունակվում է Հայաստանի օրենսդրության, պետության և իրավունքի տեսության հարցերի ուսումնասիրումը՝ «Քաղաքացիական կրթություն» /9-րդ դասարան/, «Պետություն և իրավունք» /10-րդ դասարան/ ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Իրավական դրույթներն ու փաստերը դպրոցականներն ավելի խորությամբ են կապում կյանքի իրողությունների հետ: Իրավական գիտելիքների յուրացման հենքի վրա աշակերտները ձեռք են բերում մարդկանց վարքը գնահատելու անհրաժեշտ կարողություններ և ունակություններ: Դպրոցի բարձր օղակում իրավական կրթությունը պետք է լինի ավելի դաստիարակչական, ունենա ավելի արտահայտված կանխարգելիչ ուղղվածություն, կարևագույն գործոն հանդիսանա հակահասարակական վարքի դրսևորումները կանխելու համար:

Բարձր դասարանների աշակերտների հետ անցկացվում են զրույցներ «Քաղաքացի լինել պարտավոր ես», «Ծխելու և ալկոհոլի վնասի մասին», «Կյանքում, արդյոք, ամեն ի՞նչ է վերաբերում քեզ» և այլ թեմաներով: Դպրոցում անցկացվում են երեկոներ՝ «Իրավունքը և բարոյականությունը», «ՀՀ օրենքները» և այլ թեմաներով:

Տրվում են իրավաբանական-իրավագիտական մի շարք ամսագրերի տեսությունները, թողարկվում է «Դու և օրենքը» հաղորդաթերթը, անցկացվում են իրավաբանական գիտելիքների պրոպագանդայի շաբաթներ, տասնօրյակներ, միամսյակներ, պատրաստվում են ցուցափեղկեր, ստենդներ՝ օրենսդիր մարմինների ընթացիկ որոշումներով: Մասնակցում են դպրոցում աշակերտներին անձնագիր հանձնելու հանդիսավոր արարողությանը նախապատրաստելուն: Անցկացվում են պատվի, ճշմարտասիրության, հարգանքի և օրենքների պահպանման վերաբերյալ մեծ մարդկանց ասույթները, աֆորիզմները լավ իմանալու մրցույթներ, ինչպես նաև ընթերցողների կոնֆերանսներ, ընտրվում են նյութեր իրավական թեմաներով գրքերի ցուցահանդեսների համար: Աշակերտները ծանոթանում են դատարանի, դատախազության, ոստիկանության գործունեությանը, հանդիպում են նրանց ներկայացուցիչների հետ, այցելում են առանձին ցուցադրական դատավարությունների:

Իրավական դաստիարակության ուղղությամբ դպրոցական աշխատանքներում կան յուրահատուկ մանկավարժական մեթոդներ, որոնք խթանում են դպրոցականների իրավապահպան գործունեությունը: Մեր կողմից ուսումնասիրված դպրոցներում մշակվել և գործում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Դպրոցի կանոնադրությունը:
2. Դպրոցի «օրենքները»:

Անչափահասների հետ տարվող զանազան դաստիարակչական աշխատանքներում շատ կարևոր դեր է խաղում նրանց ներգրավումը բազմաբնույթ խաղային և ստեղծագործական միջոցառումներին:

Դրանք են՝

1. Ամենամյա «Իրավական գիտելիքների շաբաթները», որոնք թույլ են տալիս աշակերտների մոտ ամրապնդելու կայուն և գիտակցական վերաբերմունք իրավական վարքի նկատմամբ, մշակում են բացասական վերաբերմունք թմրանյութերի օգտագործման հանդեպ, դաստիարակում են հարգալից վերաբերմունք օրենքի նկատմամբ:
2. Միամսյակ՝ «Պաշտպանենք երեխաներին թմրանյութերից»:
3. Ուրախների և հնարամիտների ակումբի տիպի մրցույթ՝ հետևյալ իրավական թեմաներով՝ «Մարդը և օրենքը», թատերականացված ներկայացում՝ «Դատ ծխախոտի դեմ», բանավոր հանդես՝ «Այս զարմանալի երիտասարդությունը»:
4. Կանխարգելման խորհրդի մշտական աշխատանքներ տարբեր խմբերի «դժվար» աշակերտների և նրանց ծնողների հետ:
5. Անչափահասների հանդիպումներն իրավապահպան մարմինների աշխատակիցների հետ:
6. «Իրավագիտություն» խմբակի աշխատանքի կազմակերպումը:

Իրավական լուսավորության բնագավառում դպրոցում ստեղծվում է մշտական գործող իրավական բնույթի տեղեկատվական դաշտ: Այդ համակարգում ընթանում են ծնողական լսարանի պարապմունքներ, որտեղ ծնողների առջև ելույթներ են ունենում հոգեբաններ, նարկոլոգներ, մանկավարժներ, իրավապահպան մարմինների աշխատակիցներ.

1. Մանկավարժական խորհուրդ՝ «Երեխայի իրավունքները» թեմայով (հրավիրվում են ոստիկանության, դատախազության և դատարանների աշխատակիցներ): Նպատակն է՝ երեխաների իրա-

վունքների ուսումնասիրումը և տվյալ դպրոցում երեխայի իրավունքների պաշտպանության խնդիրների դիտարկումը:

2. «Անչափահասների շրջանում իրավախախտումների կանխարգելումը» թեմայով սեմինարի անցկացում՝ դասղեկների հետ, որի նպատակն է՝ կատարելագործել ուսուցիչների մանկավարժական գործունեությունը:

3. Հոգեբանի հետ մանկավարժական կոլեկտիվի հանդիպում հետևյալ թեմայով՝ «Թույլատրելի կոնֆլիկտային իրավիճակները կրտսեր դպրոցական հասակում»:

4. Հանդիպում քաղաքի նարկոլոգիական դիսպանսերի հոգեթերապևտի հետ:

5. Հանդիպում սոցիոլոգ մանկավարժի հետ՝ «Դժվար դաստիարակելի երեխայի ձևավորման սոցիալ-հոգեբանական ասպեկտները» թեմայով:

Մեր կողմից կատարված վերոհիշյալ աշխատանքների արդյունքը հանդիսանում է աշակերտների, նրանց ծնողների և մանկավարժների իրավական իրազեկության բավարար մակարդակը, դպրոցականների կողմից կատարվող հանցագործությունների թվի կրճատումը, իրավախախտումների թվի աճի միտումների բացառումը:

Խստիվ հաշվի է առնվում նաև այն փաստը, որ դեռահասների իրավախախտումների և հանցագործությունների կանխման ախտորոշիչ աշխատանքներում մեծ ուշադրություն է դարձվում նրանց ազատ ժամանակի կազմակերպմանը, դպրոցում երեխայի՝ որպես անհատականության ձևավորման ու զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Իրավական դաստիարակության համակարգի վերջին օղակը հանդիսանում է դպրոցականների իրավական մշակույթի մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքների արդյունքների վերլուծությունը, որն ուղղակիորեն նպաստում է իրավական դաստիարակության հետագա իրականացման ընթացքում արդեն նվաճված արդյունքներին «հենվելու» և դրանք առավելս մեծացնելու մանկավարժական գործունեությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1 Տե՛ս ????? ?., ? ??????? ?????????? ???? ??? – ??-??????? ????? ?????????????? ?????? , ????????? ?? ? ???? ??????? ??? ?????. - «Պետություն և իրավունք», 1999, թիվ 3(6), էջ 22:

2 Տե՛ս Գ.Ղազինյան, Ա. Վաղարշյան և ուրիշներ, Պետություն և իրավունք: Դասագիրք 10-րդ դասարանի համար:Երևան, Տիգրան Մեծ, 2001, էջ 3:

3 Տե՛ս Վ. Այվազյան, Մարդու իրավունքներ: Ուս. ձեռնարկ: Երևան, Տիգրան Մեծ, 2002, էջ 141:

4 Տե՛ս Գ. Ղարախանյան, Անչափահասը և օրենքը:«Իրավունք և օրինականություն», 1997թ., թիվ 3(13), էջ 33:

5 Տե՛ս Апиян Н.А., Апиян С.Н., Правосознание, правовое воспитание, правовая культура. Ереван: изд. ЕГУ, 2001, с. 18.

6 Տե՛ս Վ.Ս. Ներսիսյանց, Իրավունքի և պետության տեսություն: Երևան, Նաիրի, 2001, էջ 94:

7 Տե՛ս Апиян Н.А., Апиян С.Н., Правосознание, правовое воспитание, правовая культура. Ереван, изд. ЕГУ, 2001, с. 47.

8 Шиханцов Г.Г., Юридическая психология. Учебник для вузов, М., изд. «Зеркало», 1998, с. 44-48.

9 Кочетов А.И., Верцинская Н.Н., Работа с трудными детьми.: Книга для учителья.- М., Просвещения, 1986, с.24.

10 Հ.Գ. Պետրոսյան, Սովորողների իրավական կրթությունը և դաստիարակությունը դպրոցում: Երևան, «Լույս», 1979, էջ 23:

SOME QUESTIONS ON LAW EDUCATION OF PUPILS

VACHIK BRUTYAN
Dissertator of Yerevan State Pedagogical University
General Pedagogical Department

Summary

Law education of pupils includes special law thinking and formation of law culture, that is very important for setting public order and for prophilactic measures of criminals.

Law culture should de formed not episodically, but systematically. Such a system must be created in some stages: diagnostic, searching, efficient.

The result of our work is law education of pupils, their parents and teachers, decreasing number of criminals among pupils, exception of increasing level of criminals against a background of increasing criminality in the Country.

ВОПРОСЫ ПРАВОВОГО ВОСПИТАНИЯ ШКОЛЬНИКОВ

ВАЧИК БРУТЯН
Соискатель кафедры общей педагогики
Ереванского армянского государственного
педагогического университета им. Х. Абовяна

Резюме

Правовое воспитание школьников сводится к разработке специального правового мышления и формированию правовой культуры, что крайне важно в деле установления общественного правопорядка и в целом профилактики правонарушений.

Работы по формированию правовой культуры необходимо проводить не эпизодически, а систематически. Создание такой системы предусматривает несколько этапов: диагностический, поисковый, действенный.

Результатом выполненной нами работы является правовое просвещение школьников, их родителей и педагогов, сокращение числа преступлений, совершаемых школьниками, исключение тенденции роста уровня правонарушений на фоне растущей преступности в стране.

ԱՐԵԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
ԵՊՀ քաղաքա իրության ամբիոնի ասպիրանտ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Քաղաքագիտության առջև ծառացած կարևորագույն հիմնահարցերից է պարզել, թե պատմական տվյալ իրավիճակում հակամարտությունների լուծման ինչ նպատակահարմար ուղիներ գոյություն ունեն: Քաղաքագիտական գրականության մեջ տարբերակում են հակամարտության կարգավորում և հակամարտության լուծում հասկացությունները: Կարգավորման մասին խոսելիս նկատի է առնվում հակամարտության ծավալների և տարածականության սահմանափակմանն ուղղված միջոցների մշակումը և կիրառումը[1]: Կարգավորումը ենթադրում է կողմերի սուր հակամարտության մեղմացում, ինչպես նաև կարգավորման սուբյեկտի ձգտումը՝ խուսափել հակամարտության առավել բացասական հետևանքներից: Կարգավորումը կարող է լինել ամբողջական և մասնակի: Հակամարտության մասնակի կարգավորման պարագայում, բնականաբար, չեն կարող վերացվել կոնֆլիկտի պատճառները, և շարունակում է պահպանվել մասնակիորեն կարգավորված հարաբերությունների նոր սրման որոշակի հավանականություն:

Կարգավորման սուբյեկտի դերում կարող են հանդես գալ ինչպես հակամարտության կողմերից մեկը, այնպես էլ որևէ երրորդ ուժ, որը շահագրգռված է հակամարտության կարգավորմամբ: Քաղաքական կյանքում կարևորվում են այն դեպքերը, երբ հակամարտության կարգավորման են ձգտում պետական կառույցները:

Անկախ նրանից, թե ով է հանդես գալիս որպես կարգավորման սուբյեկտ, հարաբերությունների կարգավորման տեխնոլոգիաների ընտրությունը պետք է խարսխվի հետևյալ համընդհանուր խնդիրների լուծման վրա՝

- բացահայտել հակամարտության բոլոր մութ, անհայտ կողմերը, որպեսզի նվազեն անվերահսկելի գործընթացներն ու հետևանքները.
- կանխել հակամարտության անցումն այնպիսի փուլ, որը նշանակելիորեն կմեծացնի նրա կարգավորման սոցիալական գինը.
- նվազագույնի հասցնել սոցիալական լարվածության աստիճանը[2]:

Այսինքն՝ կարգավորող սուբյեկտի գլխավոր խնդիրը պետք է լինի հակամարտության իրական պատճառների բացահայտումը, հետևաբար՝ նաև այդ հակամարտության կողմերի իրական նպատակների բացահայտումը: Հակամարտությունը կարգավորող սուբյեկտ(ներ)ը պետք է կարողանա(ն) տարբերել իրական պատճառներն առիթ-խթանից:

Հայտնի է, որ քաղաքական հակամարտության լուծման գլխավոր օրինական միջոցը է համարվում սահմանադրությունը[3]:

Երբեմն (հատկապես հասարակության՝ որակապես սոցիալական նոր վիճակի անցնելու պայմաններում) առաջանում է սահմանադրությունը վերանայելու անհրաժեշտություն: Եթե պետության քաղաքացիները վստահություն ունեն օրենսդիր և օրինականության պահպանումը վերահսկող մարմինների նկատմամբ, իսկ սահմանադրությունն ընդունվել է քաղաքացիների բացարձակ մեծամասնության կողմից, ապա առանձին խմբերի չի հաջողվի հեշտությամբ իրենց օգտին ծառայեցնել հասարակարգի փոփոխությունը կամ էլ նոր համակարգ տեղափոխել իրենց հին արտոնությունները: Սահմանադրությունը կարևոր դեր ունի պետության և քաղաքացիների միջև ծագող խնդիրների լուծման և վստահության մթնոլորտ ստեղծելու գործում: Ինքնին հասկանալի է, որ հակամարտությունների հաղթահարման սահմանադրական հնարավորությունները տարբեր երկրներում տարբեր են:

Քաղաքագիտության մեջ մշակվել են քաղաքական հակամարտությունների կարգավորման ու լուծման համընդհանուր ձևեր ու միջոցներ: Դրանց թվում առանձնանում են կոմպրոմիսը և կոնսենսուսը:

Քաղաքագիտական բառարաններում կոմպրոմիսը սահմանվում է որպես համաձայնություն՝ փոխադարձ զիջումների հիման վրա: Տարբերակվում են հարկադրական և կամավոր կոմպրոմիսներ: Կարգավորման այս ձևերը կայանում են այն ժամանակ, երբ կողմերի պահանջները մեծ չեն, առկա է ժամանակի սղություն կամ վախ հակամարտության սրման նկատմամբ:

Կոնսենսուսը մարդկանց որևէ խմբի նշանակալի մեծամասնության համաձայնությունն է նրա սոցիալական կարգի առավել կարևոր ասպեկտների վերաբերյալ՝ արտացոլված գործողություններում: Կոնսենսուսը ժողովրդավարության համընդհանուր սկզբունք է, որը թույլ է տալիս լուծել հակասությունները և հակամարտությունները, կանխել կամ մեղմել, վերացնել հասարակական լարվածությունը: Կոնսենսուսի արդյունավետությունը կախված է իշխանության լծակներին տիրապետելու «չափից», հասարակության բարեկեցությունից, քաղաքական մշակույթի մակարդակից:

Քաղաքական հակամարտությունների կարգավորման, հաղթահարման առավել տարածված միջոցը բանակցությունն է: Բանակցությունների գործընթացում կողմերը կարծիքներ են փոխանակում, ինչը որոշակիորեն մեղմացնում է հակամարտության սրությունը, օգնում հասկանալ, համարժեք գնահատել ուժերի իրական հնարավորությունները, հաշտության պայմանները: Բանակցությունները հնարավորություն են տալիս հավասարակշռել զիջումները, քննարկել այլընտրանքային լուծումները, նվազեցնել հակառակորդի կողմից անազնիվ հնարքների

գործադրման հավանականությունը:

Ամերիկյան մասնագետներ Մ. Դեյչը և Ս. Շիկմանը գտնում են, որ բանակցությունների արդյունավետությունը բարձրանում է, երբ գոյություն ունեցող խնդիրները հետևողականորեն առանձնացվում են մասնակիցների սուբյեկտիվ շահագրգռվածությունից, ուշադրությունը կենտրոնացվում է ոչ թե ինչ-ինչ քարացած սկզբունքներ անխախտ պահելու, այլ իրական հակասություններն անթաքույց մատնանշելու վրա[4]:

Զիջումները, խոստումներ տալը, ուշադրությունը համագործակցի նկատմամբ մեծացնում են համաձայնության հասնելու հնարավորությունները, մինչդեռ սպառնալիքները, ուժային ճնշումները նվազեցնում, երբեմն նույնիսկ ի չիք են դարձնում այդ հնարավորությունները:

Հաճախ ստեղծվում են իրավիճակներ, որոնցից հակամարտող կողմերն ինքնուրույն դուրս գալ չեն կարողանում: Այսպիսի դեպքերում երրորդ կողմի միջամտությունն անխուսափելի է: Տարբերակվում են երրորդ կողմի մասնակցության մի քանի ձևեր, այսպես կոչված՝ դերեր [5]: Հաշտարար-միջնորդի դերում առավել մեծ է նրա իշխանությունը, ով ուսումնասիրում է խնդրի էությունը, քննարկում է կոնֆլիկտի մասնակիցների հետ, իսկ հետո վերջնական փոխհամաձայնեցված որոշում է կայացնում: Նույն հաշտարար-միջնորդի դերում նվազ է նրա հեղինակությունը, ով մասնակցում է խնդրի քննարկմանը, սակայն վերջնական որոշումը կայացնում են մասնակիցները: Հաշտարար-միջնորդի շատ ավելի պատկառելի դերի փոխարեն երբեմն երրորդ ուժն ստանձնում է սոսկ օգնականի դեր, որը գլխավորապես զբաղված է խնդրի քննարկման գործընթացի կազմակերպմամբ և չի մասնակցում որոշման ընդունմանը:

Էթնոքաղաքական հակամարտությունների լուծման գործընթացն անհամեմատ բարդանում է այն դեպքում, երբ միջէթնիկական հարաբերություններն ուղղահայաց են: Եթե հարաբերությունների հորիզոնական առկայության դեպքում էթնիկական խմբերն ապրում են իրավահավասար կարգավիճակով, ծագող հակամարտություններն անհամեմատ դյուրությամբ են լուծվում, որովհետև կողմերը հանդես են գալիս որպես իրավահավասար խմբեր, շերտեր և այլն: Սակայն երբ ուժեղ էթնիկական խմբերը ձգտում են իրենց ենթարկել համեմատաբար թույլերին և ստեղծել հարաբերությունների ուղղահայաց համակարգ, սրվում է միջէթնիկական հակամարտությունը, որն անհապաղ լուծում է պահանջում:

Բնականաբար, ազգամիջյան հակամարտության հաղթահարումն ավելի կենսական նշանակություն ունի, քանի որ այդպիսի հակամարտության հաղթահարումը կփրկի հազարավոր մարդկանց կյանքեր, կխնայվեն հսկայական միջոցներ ու ռեսուրսներ: Այդ իսկ պատճառով էլ քաղաքականության առաջնային ֆունկցիան հակամարտությունների կարգավորումն է, իսկ քաղաքագիտության խնդիրը՝ հակամարտությունների լուծման ուղիների որոնումն ու հայտնաբերումը:

Կարևոր է այն բանի գիտակցումը, որ ազգամիջյան հակամարտությունների հրդեհն ավելի հեշտ է հանգեցնել հենց սկզբից, երբ այն նոր է բռնկվել և դեռ չի կրում լայնածավալ բնույթ: Բանն այն է, որ ծագող ազգամիջյան հակամարտությունները միտում ունեն աճելու, տարածվելու և սրվելու: Եթե հակամարտությունը մտել է տևական փուլ և ընդունել ձգձգվող բնույթ, ապա նրա կարգավորումը դժվարանում է, երբեմն հանգեցնում անդառնալի հետևանքների:

Ազգամիջյան հակամարտության կարգավորման տեխնոլոգիան ենթադրում է այդ ուղղությամբ գործունեության ալգորիթմ: Հակամարտության կարգավորման համար կատարվող աշխատանքների ընթացքում ամենից առաջ պետք է վերլուծվեն կոնֆլիկտի պատճառները, պատմությունը, կողմերի դիրքորոշումները և հարաբերությունները, վերջնական վերաբերմունքը կոնֆլիկտի նկատմամբ:

Բանակցություններին կարող են մասնակցել ինչպես կողմերի պաշտոնական, այնպես էլ հասարակական-քաղաքական ուժերի ներկայացուցիչները: Կոնֆլիկտների, հակամարտությունների լուծման պրակտիկայի կատարելագործումը խթանվեց նոր մեթոդների ի հայտ գալով, որոնք հիմնված են իրավիճակի փոփոխման վրա, և որոնք հաճախ կիրառում է երրորդ կողմը: Հեռանկարային է այլընտրանքի մեթոդը, որի էությունը լուծումների առաջարկվող տարբերակներից ոչ ստանդարտ ընտրության կատարման մեջ է: Օրինակ՝ տարածքի «փոխանակումը» խաղաղության հետ կամ տարածքային զիջումը որոշակի քաղաքական կարգավիճակ ձեռք բերելու, դրանով իսկ՝ որոշակի էթնիկական խմբի իրավունքները վերականգնելու համար:

Որպես կոնֆլիկտի կարգավորման արդյունավետ մեթոդ՝ հանդես է գալիս ազգային պետական կազմավորման կարգավիճակի փոփոխումը կամ այնպիսի կարգավիճակի շնորհումը, որը տվյալ էթնոսը մինչ այդ չի ունեցել: Այսպես, օրինակ, փորձագետների գնահատականով՝ Ղարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի բարձրացումը ինքնավար հանրապետության մակարդակի զգալի կերպով կմեղմացներ բախումը և կդյուրացներ կարգավորումը:

Կանադացի քաղաքագետ Գ. Ուինհեմը գրում է, որ բանակցությունները երբեմն կարող են միջոց կամ գործիք լինել նրանց համար, ովքեր բնազդաբար փորձում են պահպանել արդեն նվաճածը: Ամենամեծ բարիքը, որ կարող են տալ բանակցությունները, կայունությունն է, իսկ կայունության խախտման ամենամեծ վտանգը բխում է նրանցից, ովքեր փորձում են փոխել միջազգային ստատուս-քվոն ռազմական բռնության միջոցով[6]:

Միաժամանակ պետք է նաև նշել, որ խաղաղ մեթոդները (բանակցությունները) և ուժային մոտեցումները երկար դարեր կազմել են դիալեկտիկ միասնություն. պատերազմները հաճախ ավարտվել են խաղաղ բանակցություններով, իսկ այդ բանակցությունների արդյունքում հաստատված համաձայնությունները պատերազմների ընթացքում խախտվել

են: Ավելին՝ շատ դեպքերում այս ծայրահեղական մոտեցումներն օգտագործվել են որպես միմյանց լրացնող միջոցներ քաղաքական որոշակի նպատակների հասնելու համար: Ռազմական և բանակցային մեթոդների համադրման դասական օրինակներ են այն դեպքերը, երբ կողմերից մեկը սկսել է ռազմական գործողությունները մյուսի դեմ և, գրավելով հակառակորդի տարածքի մի մասը, նստել է բանակցային սեղանի շուրջը, բայց արդեն՝ ուժի դիրքերից: Երբեմն հակամարտության մասնակիցները ծավալում են ռազմական գործողություններ և միաժամանակ անցկացնում բանակցային երկխոսություններ:

Այս ամենը թույլ է տալիս եզրակացնել, որ զինված պայքարը և բանակցությունները միմյանց ուղեկցող, երբեմն մրցակցող, բայց միմյանց չբացառող հարաբերությունների ձևեր են:

Ընդհանրապես տեղային մակարդակում հակամարտության լուծման ուժային տարբերակը բավականին տարածված է: Ավելին՝ այստեղ կարելի է առանձնացնել այնպիսի ծայրահեղ միտում, որպիսին է ահաբեկչական գործողությունների շարունակումը, ձգտումը՝ «գնալ մինչև վերջ»՝ անտեսելով հնարավոր զոհերը:

Սովորաբար զինված հակամարտության ժամանակ ի հայտ են գալիս հետևյալ օրինաչափությունները՝

- հակամարտությունների ընթացքում որքան շատ է բռնություն գործադրվում, այնքան դժվար ու տևական է դառնում նրա կարգավորումը.
- ավելի դժվար է կարգավորել ճգնաժամերն ու հակամարտությունները, որոնք ընդգրկում են երեք և ավելի շահագրգիռ կողմեր.
- կողմերի միջև գլխավոր հարցի շուրջ ընդգծված տարաձայնությունները մեծ հավանականությամբ տանում են նրա լուծման բռնի ձևերի.
- ինչքան ավելի ծավալուն ու անզիջում են ռազմական գործողությունները հակամարտության ընթացքում, այնքան ավելի դժվար է գտնել վերջինիս խաղաղ կարգավորման ուղիներ:

Ռազմական գործողություններից բացի՝ հակամարտության խաղաղ կարգավորման մեթոդները նվազ արդյունավետ են, եթե հասարակության մեջ տեղի են ունենում տնտեսական, սոցիալական, հոգեբանական և քաղաքական կտրուկ փոփոխություններ: Եթե զինված հակամարտությունն ընդունում է ձգձգվող բնույթ՝ առանց այս կամ այն կողմի առավելության, և սկսում են աշխատել մեխանիզմներ, որոնք տանում են տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգեբանական փոփոխությունների, ապա այս պայմաններում խաղաղ բանակցությունները սկսվում են նրանից հետո, երբ կողմերն ընկալում են փոխադարձ պարտությունը և ուժային լուծման անհնարինությունը: Այդպիսի իրավիճակը որոշ հեղինակներ անվանում են «ցավոտ պատ»: Այլ կերպ ասած՝ զինված կոնֆլիկտի ժամանակ ուժերի հավասարության պայմաններում մասնակիցները որպես կանոն բանակցությունները սկսում են այն ժամանակ, երբ համոզվում են, որ ուժային գործողությունների հնարավորությունները պակասում են, իսկ կոնֆլիկտը շարունակելու «գինը» չափազանց բարձրանում է: Սակայն նույնիսկ այս դեպքերում կողմերն ինչ-որ ժամանակ դեռ կարող են շարունակել հակամարտությունը, քանի որ՝

- դժվար է կանխատեսել և գնահատել բոլոր դրական ու բացասական պահերը՝ կապված կոնֆլիկտի ավարտի հետ, ինչպես նաև պայմանները, որոնցում դրանք իրականանում են.
- հաճախ մասնակիցները խաղաղ բանակցությունների գործընթացն սկսելուց առաջ փորձում են կորզել-նվաճել առավելագույնը , որպեսզի հետո՝ բանակցությունների ընթացքում, ուժեղացնեն իրենց դիրքերը.
- չեն պատկերացնում, թե ինչպես պետք է դուրս գան կոնֆլիկտից՝ «պահպանելով իրենց դիրքը».
- հույս ունեն երրորդ կողմի օգնության:

Կոնֆլիկտը շարունակելու անհնարինության հիմնական պատճառներից մեկը ռեսուրսների (ֆինանսական, ռազմական, մարդկային և այլն) պակասն է: Հաճախ այս գործոնը երկարատև զինված կոնֆլիկտի ժամանակ որոշիչ դեր է խաղում: Կոնֆլիկտը խաղաղ ուղիով լուծելու համար էական գործոն կարող են դառնալ այլ երկրների և միջազգային կազմակերպությունների արձագանքները, որոնք մերժումբացառում են կոնֆլիկտը:

Կոնֆլիկտի կարգավորումը շատ դեպքերում ենթադրում է աստիճանականություն: Դա շատ կարևոր սկզբունք է գործընթացի համար: Սուր զինված կոնֆլիկտից միանգամից հաշտության անցնելու փորձերը հանգեցնում են բանակցությունների տապալման: Պարզվում է, որ կողմերը պատրաստ չեն համատեղ որոշումների: Ձևավորվում է անվստահություն բանակցությունների նկատմամբ և՛ քաղաքական առաջնորդների, և՛ զանգվածների մակարդակով: Այդ դեպքում բավական դժվար է սկսել բանակցությունների նոր փուլ: Իսկ կոնֆլիկտի աստիճանական կարգավորման դեպքում մասնակիցները հնարավորություն են ստանում արտահայտել տեսակետներ, մշակել լուծման տարբերակներ և միայն դրանից հետո անցնել վերջնական համաձայնեցման: Զինված կոնֆլիկտի դեպքում աստիճանականության սկզբունքը նշանակում է՝ անցնել մի քանի փուլ, որոնք իրենց առաջադրանքներով տարբերվում են: Այդ փուլերն են՝

- բռնի գործողությունների դադարեցում.
- երկխոսության հաստատում, պատրաստակամություն՝ անցնելու բանակցությունների.
- բանակցային գործընթացի սկիզբ.
- ձեռք բերված պայմանավորվածությունների կատարում:

Առաջին երկու փուլերը կոնֆլիկտի կարգավորման համար չեն ենթադրում կողմերի համատեղ գործունեություն: Բայց և այնպես դրանք կարևոր նշանակություն ունեն և պահանջում են շատ ժամանակ ու ջանքեր: Երրորդ փուլում վարվում են բանակցություններ: Խնդիրներ են առաջանում չորրորդ

փուլում, երբ կողմերն ի վիճակի չեն կամ չեն ուզում կատարել իրենց վրա դրված պարտավորությունները, որի արդյունքում առաջանում է պրոբլեմային իրավիճակ, որն ամերիկացի քաղաքագետ Գ. Ռայֆն անվանում է «կարգավորման անհրաժեշտություն կարգավորումից հետո»[7]:

Կոնֆլիկտի խաղաղ կարգավորման շատ տարածված տարբերակ է երրորդ կողմի միջամտությունը: Երրորդ կողմը կարող է միջամտել կոնֆլիկտին ինքնուրույն կամ հակամարտող կողմերից մեկի խնդրանքով: Նրա ազդեցությունը կոնֆլիկտի մասնակիցների վրա կարող է տարակերպ լինել: Միջամտության մեթոդները բաժանում ենք երկու խմբի՝

- համոզել և օգնել հակամարտության խաղաղ լուծմանը.
- ստիպողականություն, ճնշում և կոնֆլիկտային գործողությունների սահմանափակում:

Համոզելը և օգնություն ցույց տալը խաղաղ կարգավորման համար՝ երրորդ կողմի գործունեության հիմնական միջոցներն են բանակցային գործընթացում, չնայած բացառված չէ նաև ճնշման միջոցների գործադրումը (օրինակ՝ քաղաքական կամ տնտեսական ճնշում, սանկցիաներ և այլն):

Կոնֆլիկտներն ու պատերազմներն ուղեկցել են մարդկությանը նրա ամբողջ պատմության ընթացքում, այսինքն՝ դրանք հասարակական երևույթներ են և քաղաքագիտության հետազոտման առարկան:

Կոնֆլիկտային իրավիճակը երբեմն մարդկանց գիտակցության մեջ անցանկալի կերպարաստեղծման պատճառ է դառնում: Առաջանում են բացասական կարծրատիպեր. մարդկանց գիտակցության մեջ ձևավորվում է թշնամու կերպար, և ծնվում է նպատակ-ձգտում՝ ոչնչացնել թշնամուն, հակառակ դեպքում՝ նա կոչնչացնի: Այս կարծրատիպն արմատավորվում է համեմատաբար լայն զանգվածների գիտակցության մեջ՝ նայած հակամարտության սրության, տևականության: Տվյալ էթնոսի համար էթնիկական կարևորության աստիճանից կախված՝ այդ կարծրատիպերը կարող են փոխանցվել սերնդից սերունդ:

Ինչպես նկատել է Դարենդորֆը, ով կարողանում է կոնկրետ գործողությունների միջոցով հաղթահարել կոնֆլիկտը, նա հսկում է պատմության ընթացքը, իսկ նրա համար, ով բաց է թողնում այդ հնարավորությունը, պատմությունը թշնամի է դառնում:

Նորագույն ուսումնասիրությունները գիտականորեն ապացուցում են, որ տարածքային հակամարտությունների լուծման ամենաժողովրդավարական ու իրավական հիմքն ազգերի ինքնորոշման իրավունքն է:

---

[1] Տե՛ս Политология, под. ред. Василика М. А., М., 2001, с. 493.

[2] Տե՛ս Пугачев Б.П., Соловьев А. И. Введение в политологию, М., 1995, с. 373.

[3] Տե՛ս Дмитриев А. Б., Конфликтология, М., 2000, с. 222.

[4] Տե՛ս Пугачев Б. П., Соловьев А.И., указ. тр., с. 381.

[5] Տե՛ս Политология, под.ред. Марченко М. Н., М.,1999, с. 391.

[6] Տե՛ս Лебедева М. М., Политическое урегулирование конфликтов, М., 1997, с. 42.

[7] Նույն տեղում, էջ 90-91:

CLASSIFICATION OF THE WAYS OF CONFLICTS SOLUTION

AREG GHARIBJANYAN
Research Student of YSU Politology Department

Summary

The cornerstone in the conflict between the nations became more important during cold war period. Successful solution of the conflict will save lives of thousands of people, also huge material resources. Here the following notions, of “distribution of conflict” and “solution of conflict” are being distinguished.

It is natural that the main goal for the distribution is to find out true motives of the conflicts first and then to look for the ways of solution.

The two main ways worked out in the politology are the compromise and the consensus. The importance of the negotiations in the solution of conflicts is also being.

КЛАССИФИКАЦИЯ ПУТЕЙ РЕШЕНИЯ ПРОТИВОСТОЯНИЙ

АРЕГ ГАРИБДЖАНЯН
Аспирант кафедры политологии ЕГУ

Резюме

Преодоление поисков путей решения межнационального противостояния стало наиболее актуальным после холодной войны. Обнадеживающие решения противостояния спасут тысячи человеческих жизней, сэкономят огромные материальные средства. Различают понятия “урегулирование противостояния” и “решение противостояния”.

Естественно, что главная задача субъекта урегулирования прежде всего в выявлении реальных причин, потом поиск путей решения.

Проработанные политологией пути - компромисс и консенсус.

Подчеркивается также место переговоров в процессе решения политического противостояния.

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Դատական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

«ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏՔԻ ԳԱՆՁԱՐԱՆԻ» ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ*

Ավարտվեց վաստակաշատ իրավագետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Ավագյանի «Հայ իրավական մտքի գանձարան» եռահատորյակի հրատարակությունը:

Վերջին՝ երրորդ հատորը նվիրված է XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ իրավագիտական մտքի վերլուծությանն ու գիտական լուսաբանմանը: Այդ ժամանակահատվածի հայ իրավագիտական մտքի զարգացման ասպարեզում մեծ ավանդ է ներդրել ականավոր գրող, նշանավոր իրավագետ, հայտնի հասարակական-քաղաքական գործիչ Գրիգոր Զոհրապը:

Զբաղվելով փաստաբանությամբ՝ նա իրավագիտություն էր դասավանդում Կոստանդնուպոլսի համալսարանում: Նրա դասավանդած առարկաներից մեկը Օսմանյան կայսրության քրեական իրավունքն էր: Դասավանդման ընթացքում, ինչպես գրել է նա. «Չեմ դադրած ազգիս իրավունքներու համար մաքառելե»:

Հայտնի է, որ 1895-96 թվականներին՝ հայոց առաջին զանգվածային կոտորածների ժամանակ, նա համարձակորեն ստանձնել է հայ քաղաքական ամբաստանյալների պաշտպանությունը՝ փրկելով բազմաթիվ հայերի:

1911-ին թուրքական կառավարությանն ուղարկված հուշագրում նա պահանջում էր վերջ տալ արևմտահայերի նկատմամբ իրականացվող դաժան գործողություններին:

Գ. Զոհրապի իրավագիտական ստեղծագործության լուսաբանումն արժանավոր տեղ է գրավել Ռուբեն Ավագյանի “Памятники армянского права” գրքում: Իսկ սույն գիրքն ընդգրկում է «Սամուել Մուրատը և Մխիթարեան Միաբանութիւնը օրենքի առջեւ» ուսումնասիրությունը, որտեղ մի շարք երկրների օրենսդրությունների համադրությամբ բացահայտված են ազգային ունեցվածքի ժառանգման հարցերը: Միաժամանակ մեկնաբանում է 1893-ին Կոստանդնուպոլսում թուրքերեն հրապարակված «Միւրուրի զեմանի» («Ժամանցում») աշխատությունը, որը մինչ օրս թարգմանված չէ հայերեն: Սույն գրքի էջերում ընթերցողը կծանոթանա 1908-ին Փարիզում ֆրանսերեն հրատարակված «Օսմանեան իրավունքում քաղաքացիութեան տարբերութեան պատճառով ժառանգութիւն ստանալու արգելքի մասին» աշխատությանը: Հարկ է նշել, որ հեղինակի այդ ստեղծագործությունն առաջին անգամ թարգմանվել և տեղ է գտել Ռ. Ավագյանի «Հայ իրավական մտքի գանձարան» գրքի ռուսերեն հրատարակության մեջ, իսկ հայերեն թարգմանությունը հրապարակվել է «Գանձարանի» երրորդ հատորում: Գիտական արժեք է ներկայացնում Գրիգոր Զոհրապի «Քրեական իրավունք» աշխատությունը, որը լույս է տեսել միայն թուրքերեն: Պրոֆեսոր Ռ. Ավագյանը հույս է հայտնում, որ երբևէ կկարողանա կազմակերպել և իրականացնել այդ աշխատության հայերեն թարգմանությունը:

Ցավոք, տաղանդավոր իրավագետն ու մեծ գրողը կարճ կյանք ունեցավ. 1915 թվականի մայիսի 20-ին նա ձերբակալվեց և Ուրֆայից Դիարբեքիր տանող ճանապարհին գազանաբար սպանվեց երիտթուրք ճիվաղների կողմից:

Գրքի երկրորդ գլուխը հեղինակը նվիրել է XX դարի նշանավոր իրավաբան, գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Չուբարյանին, որն ուսանել է Յարոսլավլի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և Մոսկվայի համալսարանի պատմության ֆակուլտետում: Պրոֆեսոր Ռ. Ավագյանը սույն ուսումնասիրությունում ընթերցողին ներկայացնում է Գրիգոր Չուբարյանի կյանքից այնպիսի մանրամասներ, ինչպիսիք են XX դարի սկզբին սոցիալիստ-հեղափոխականների (էսեռների) հետ նրա ակտիվ մասնակցությունը Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժումներին, այնուհետև Հայ հեղափոխական դաշնակցության շարքերն անցնելը և Ռոստովում հրատարակվող այդ կուսակցության պաշտոնաթերթն ու ամսագիրը խմբագրելը, կամ ինչպես է 1918 թվականին Գ. Չուբարյանն աշխատանքի անցել Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունում և պառլամենտում:

Գրքում վեր են հանվում Ալեքսանդր Մյասնիկյանի հետ Գ. Չուբարյանի սերտ կապերի վերաբերյալ մանրամասներ, և թե 1921–ի փետրվարյան խռովությունից հետո նա ինչպես է ընդգրկվում Հայաստանի երկրորդ հանրապետության գիտահիրավական, տնտեսական ու մշակութային կյանքի վերակառուցման աշխատանքներում՝ դառնալով արդարադատության ժողկոմի տեղակալ: Գրքում մանրամասնորեն ներկայացվում են նաև Գ. Չուբարյանի ակտիվ մասնակցությունը Երևանի պետական համալսարանի հիմնադրմանը, նրա դասախոսական արգասավոր աշխատանքը: Նշվում է նաև, որ Գ. Չուբարյանը՝ որպես հմուտ իրավագետ, գործուն մասնակցություն է ունեցել Խորհրդային Հայաստանի առաջին Սահմանադրության, ինչպես նաև հողային, քրեական և այլ օրենսգրքերի ստեղծմանը:

Պրոֆեսոր Ռ. Ավագյանը նշում է, որ անգնահատելի են Գ. Չուբարյանի ծառայությունները հայ իրավաբանական առաջին բառարանի կազմման աշխատանքներում, և որ նա եղել է փորձառու փաստաբան ու փայլուն հռետոր:

Աշխատության հեղինակը ցավով է նշում, որ այդ ականավոր իրավագետը, իսկական հայրենասերը ենթարկվել է ստալինյան բռնություններին: Դժվարին ու քաղաքային պայմաններում անհետ կորել են նրա մի շարք իրավաբանական գիտական աշխատություններ, որոնց անվանումները փորձում է վերծանել այս գրքի հեղինակը:

Ավարտելով՝ համարձակորեն կարող ենք ասել, որ Ռուբեն Ավագյանի «Հայ իրավական մտքի գանձարանի» երրորդ հատորը նոր, ծանրակշիռ ավանդ է հայ իրավական մտքի պատմության գիտական լուսաբանման գործում:

---

* Տպագրվում է մասնակի կրճատումներով:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՄԱԿ-ի ամենամեծ նվաճումներից մեկը մարդու իրավունքների օրենքների ընդգրկուն դասի ստեղծումն է, որը, պատմության մեջ առաջին անգամ ապահովում է մարդու իրավունքների համընդհանուր և միջազգայնորեն պաշտպանված մի օրենսգիրք, որին բոլոր պետությունները կարող են միանալ, և որին բոլոր ժողովուրդները կարող են ձգտել: ՄԱԿ-ը ոչ միայն ջանասիրաբար սահմանել է մի ամբողջ շարք միջազգայնորեն ճանաչված իրավունքներ, ի թիվս որոնց՝ տնտեսական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև քաղաքական ու քաղաքացիական իրավունքները, այլև հաստատել է այն մեխանիզմները, որոնցով պետք է առաջ մղվեն ու պաշտպանվեն այդ իրավունքները, ինչպես նաև օժանդակություն ցույց տրվի կառավարություններին իրենց պարտականությունները կատարելու գործում:

Օրենքների այս մարմնի հիմքում ընկած են Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որոնք ընդունվել են Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ.: Այդ ժամանակից ի վեր ՄԱԿ-ն աստիճանաբար ընդլայնել է մարդու իրավունքների օրենքները՝ ընդգրկելով հատուկ չափանիշներ կանանց, երեխաների, հաշմանդամների, փոքրամասնությունների, միգրանտ աշխատողների և այլ խոցելի խմբերի համար, որոնք ներկայումս խտրական վերաբերմունքից իրենց պաշտպանող իրավունքներ ունեն, ինչը վաղուց ի վեր ընդհանուր երևույթ է շատ հասարակություններում:

Իրավունքներն ընդլայնվել են Գլխավոր ասամբլեայի վճռորոշ որոշումներով, որոնք աստիճանաբար հաստատել են իրենց համընդհանուր բնույթը, իրենց անբաժանելիությունն ու փոխկապվածությունը զարգացման ու ժողովրդավարության հետ: Կրթական արշավներն անդադար իրազեկել են աշխարհի ժողովուրդներին իրենց անօտարելի իրավունքների մասին, մինչ բազմաթիվ ազգային դատական ու քրեական համակարգեր բարելավվել են ՄԱԿևի վերապատրաստման ծրագրերի ու տեխնիկական խորհուրդների միջոցով: ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների դաշնագրերի կենսագործումը վերահսկող մեխանիզմը անդամ պետությունների շրջանում նշանակալի ձև ու կշիռ է ձեռք բերել:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարն աշխատում է ամրապնդել և համակարգել ՄԱԿ-ի աշխատանքը՝ ուղղված ամբողջ աշխարհում բոլոր մարդկանց բոլոր իրավունքների պաշտպանությանն ու առաջմղմանը: Գլխավոր քարտուղարը մարդու իրավունքները դարձրել է հիմնական թեմա, որը համախմբում է կազմակերպության աշխատանքը խաղաղության ու անվտանգության, զարգացման, մարդասիրական օգնության և տնտեսական ու սոցիալական խնդիրների հիմնական ոլորտներում: Փաստացի ՄԱԿ-ի յուրաքանչյուր մարմին և մասնագիտացված գործակալություն որոշակի չափով ներգրավված է մարդու իրավունքների պաշտպանության գործում:

Մարդու իրավունքների փաստաթղթերը

1945թ. Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած կոնֆերանսում, որով հիմնադրվեց Միավորված ազգերի կազմակերպությունը, մոտ 40 ոչ կառավարական կազմակերպություններ, որոնք ներկայացնում էին կանանց, արհեստակցական միություններ, էթնիկ կազմակերպություններ և կրոնական խմբեր, միավորեցին իրենց ջանքերը պատվիրակությունների հետ, որոնց մեծ մասը փոքր երկրներից էին, և պահանջեցին մարդու իրավունքների ավելի որոշակի մատուցում, քան ներկայացված էր այլ երկրների կողմից: Այս հաստատակամ քարոզչության արդյունքում մարդու իրավունքների վերաբերյալ համարձակ դրույթներ ներառվեցին ՄԱԿ-ի Կանոնադրության մեջ, որով հիմք դրվեց միջազգային իրավունքի կերտման 1945թ. հաջորդած փուլին:

Կանոնադրության նախաբանը պարզորոշ կերպով վերահաստատում է «հավատը մարդու հիմնարար իրավունքների, արժանապատվության և մարդ էակի արժեքի, տղամարդկանց ու կանանց և մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների հանդեպ»: 1-ին հոդվածը սահմանում է, որ ՄԱԿ-ի հիմնական խնդիրներից մեկն է առաջ մղել և պաշտպանել «հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ բոլորի համար՝ առանց ռասայական պատկանելության, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերակման»: Այլ դրույթներ պարտավորեցնում են պետություններին, ՄԱԿ-ի հետ համագործակցելով, ջանքեր գործադրել մարդու իրավունքների հանդեպ համընդհանուր հարգանքի հասնելու համար:

Մարդու իրավունքների միջազգային օրինագիծ

ՄԱԿ-ի աշխատանքը սկսվելուց երեք տարի անց Գլխավոր ասամբլեան մարդու իրավունքների ներկայիս օրենքների հիմնաքարը դրեց. ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որը «բոլոր մարդկանց համար ընդհանուր չափանիշ» էր դառնալու: Այն ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 10-ին. ներկայումս այդ օրն ամբողջ աշխարհում տոնվում է որպես Մարդու իրավունքների միջազգային օր: Հռչակագրի 30 հոդվածները ներկայացնում են քաղաքացիական, տնտեսական, քաղաքական ու սոցիալական հիմնարար իրավունքները, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր երկրում ապրող յուրաքանչյուր մարդ:

Համընդհանուր հռչակագրի դրույթները սովորութային միջազգային իրավունքի կշիռ ունեն, քանի որ լայնորեն տարածված են և ընդունվում են որպես պետությունների վարքագիծը գնահատելու չափանիշ: Շատ նորանկախ պետություններ մեջբերում են Համընդհանուր հռչակագիրը կամ ներառել են նրա դրույթներն իրենց հիմնարար օրենքների կամ սահմանադրությունների մեջ:

Մարդու իրավունքների՝ ՄԱԿ-ի ներքո բանակցված, իրավականորեն պարտադիր ուժ ունեցող ամենամեծ պայմանագրերը երկու միջազգային դաշնագրերն են, մեկը տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների, իսկ մյուսը՝ քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին: Այս պայմանագրերը, ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից 1966թ., ավելի առաջ են մղում Համընդհանուր հռչակագրի դրույթները՝ այդ իրավունքները իրավականորեն պարտադիր ուժ ունեցող հանձնառություններ դարձնելով և անդամ պետությունների պարտավորությունների կատարումը վերահսկող մարմիններ ստեղծելով: Աշխարհի պետությունների մեծ մասը միացել է դաշնագրերին:



Կյանքից անժամանակ հեռացավ մեր ընկեր, հայտնի մտավորական ու գիտնական, Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի հայ ժողովրդի պատմության ու քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՀՐԱՅՐ ԽՈՐԵՆԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ:

Հրայր Դարբինյանը ծնվել է 1938 թվականի դեկտեմբերի 25-ին պատմական Տավուշի Թովուզ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: 1956 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: Գերազանցությամբ ավարտելով համալսարանը՝ երկու տարի դասավանդել է Հրազդանի շրջանի Ծաղկաձորի թիվ 20 գիշերօթիկ դպրոցում: 1963թ. ընդունվել է համալսարանի ասպիրանտուրան: Ավարտելուց հետո պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, կարճ ժամանակ անց՝ դոցենտի կոչում: 1984 թվականին Հրայր Դարբինյանը հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 1986թ. արժանացել պրոֆեսորի կոչման:

1967 թվականից երիտասարդ գիտնականը դասախոսել է մայր բուհում, իսկ 1975թվականից՝ Երևանի նորաստեղծ պետական տնտեսագիտական ինստիտուտում:

Հրայր Դարբինյանը ուսանողների սիրելին էր, նրանց բարի խորհրդատուն: Դասախոսություններն ու գործնական պարապմունքները վարում էր տեսական բարձր մակարդակով:

Հր. Դարբինյանը մանկավարժական աշխատանքը հաջողությամբ զուգակցում էր գիտահետազոտականին: Նա հանրապետության ճանաչված գիտնականներից էր, աչքի էր ընկնում ստեղծագործ ու հասուն մտքով, օժտված էր զարմանալի եռանդով ու աշխատասիրությամբ: Հր. Դարբինյանի գրչին են պատկանում արժեքավոր և մնայուն մենագրություններ, գիտական հոդվածներ՝ նվիրված ինչպես հայ ժողովրդի պատմության տարբեր առանցքային խնդիրներին, այնպես էլ միջազգային դիվանագիտության պատմությանը, որոնցում նորովի ու յուրովի են մեկնաբանվում մի շարք վիճահարույց հարցեր: Նա գիտական հետազոտություններ ու վերլուծություններ է կատարել նաև իր ծննդավայրի վերաբերյալ, որոնք նկատելիորեն հարստացրել են այդ տարածքի մասին եղած պատմագիտական նյութը:

Ավելի քան 15 տարի նա ղեկավարում էր ԵՊՏԻ-ի հայ ժողովրդի պատմության և քաղաքագիտության ամբիոնը: Նրա ղեկավարման տարիներին ամբիոնը դարձել է ուսումնագիտական լուրջ կենտրոն:

Հր. Դարբինյան մարդուն, քաղաքացուն, մտավորականին և դաստիարակին բնորոշ էին հոգատարությունը, մարդասիրությունը, նրբանկատությունը: Նրա ջերմ վերաբերմունքը, օգնությունն ու աջակցությունը վայելում էին գործընկերները, աշխատակիցները, ուսանողները: Նա անչափ բարի մարդ էր:

Վաստակաշատ գիտնական-մանկավարժի, լավ ընկերոջ ու բարեկամի վաղաժամ մահը կսկիծ ու ցավ է նրան ճանաչողների համար:

Մահը վերաբերում է նրա մարմնական բնույթին, հոգին ու հիշատակը ապրելու են միշտ:

Փիլիսոփայական իրությունների դոկտոր, պրոֆեսոր ***Ա. ՍԱՐԳՍՅԱՆ***
ԵՊՏԻ փիլիսոփայության ամբիոնի վարիչ

Տնտեսական իրությունների դոկտոր, պրոֆեսոր ***Մ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ***
ԵՊՏԻ տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ

Տնտեսական իրությունների դոկտոր, պրոֆեսոր ***Լ. ԱՆԱՆՅԱՆ***
ԵՊՏԻ տնտեսական պատմության եւ իրավագիտության ամբիոնի վարիչ

Տնտեսական իրությունների թեկնածու, դոցենտ ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***
ԵՊՏԻ ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկան

Մինչ «Վասն արդարութեան» հանդեսի խմբագրությունը գիտական խմբագրական խորհրդի անդամ, պրոֆեսոր **ՀՐԱՅՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ** ծննդյան 65-ամյակն առանձին էջով նշելու նախապատրաստական աշխատանքներ էր իրականացնում, ստացվեց նրա մահվան լուրը: Խմբագրության համար իսկապես ցավալի է գիտնականի և հանդեսի բարեկամ-խորհրդատուի ծննդյան տարեդարձի համար նախանշված էջում զետեղել նույն մարդու մահախոսականը: Հրայր Դարբինյանը պայծառատես մարդ էր, անկրկնելիորեն շիտակ ու անբռնազբոս պահվածքի տեր անձնավորություն: Պատմագիտության պրոֆեսորի իր կոչումը նա կրում էր զարմանալի անհավակնոտությամբ, բնականությամբ, որը չէր վանում Դարբինյան-գիտնականին, այլ, ընդհակառակը, մերձեցնում էր աստվածապարգև բարությամբ:

Մահվանից հետո ապրել շարունակելը բացառիկ շնորհ է:

Այդպիսի շնորհակիր է ՀՐԱՅՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ:

«Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն»
«Վասն արդարութեան» *հանդեսի խմբագրություն*

Գրքերի կեսություն

Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հումանիտար գիտությունների բաժանմունքի «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածուի 2003 թ. 3-րդ համարը: Այն բացվում է ժողովածուի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանի «Երիտասարդ գրականության «հոգսերն» ու խնդիրները» հոդվածով, ուր ցավով ու տագնապով արձանագրվում է, թե ժամանակակից հայ գրականությունը (պոեզիան՝ ի մասնավորի) «մեր խառնաշփոթ, բայց աղավաղված և անբարո կյանքի արտացոլումն է»:

Ժողովածուն ունի առանձին բաժիններ՝ գրականագիտության, լեզվաբանության, պատմության, փիլիսոփայության, մանկավարժության: Ժողովածուում անդրադարձ կա նաև էկոլոգիական իրավունքին: «Էկոլոգիական կրթության և դաստիարակության միջոցները և ուղիները դպրոցում». այսպես է վերնագրված Ա. Ներկարարյանի հոդվածը, որն, անշուշտ, կհետաքրքրի ընթերցողին այնպես, ինչպես է. Մինասյանի, Ս. Գևորգյանի, Տ. Մաթոսյանի, Ա. Գրիգորյանի, Ռ. Միրումյանի և այլոց հոդվածները:

«Կանթեղ» ժողովածուի տարբեր տարիների տարբեր համարներում ընթերցողը կարող է գտնել նաև քաղաքագիտական, իրավագիտական բնույթի բազմաթիվ հոդվածներ:

ՕՄԲՈՒԴՄԵՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ (համաշխահային փորձը)

Երևան, «Արեգ» հրատարակչատուն, 2003, 160 էջ

Այսօր Հայաստանում իրականացվող պետահիրավական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտություն է ծագել կրկին անդրադառնալ այդ բարեփոխումների արդյունավետությունը երաշխավորող այնպիսի նոր մեխանիզմների ստեղծման կարևորագույն հարցին, որոնցից ամենահիմնականներից մեկը օմբուդսմենի (մարդու իրավունքների պաշտպանի) ինստիտուտն է:

Գրքում ներկայացված նյութերը պատկերացում են տալիս օմբուդսմենի ինստիտուտի, նրա հիմնական նպատակների ու իրավասությունների մասին: Սույն ժողովածուն օգտակար կլինի թե՛ մասնագետի, թե՛ հասարակության լայն խավերի համար, կնպաստի Հայաստանում այդ ինստիտուտի ձևավորման գործընթացին:

Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ. ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԻՑ

Երևան, «Նժար», 2002, 444 էջ

Աշխատանքը համեմատական վերլուծությամբ ամփոփում է սահմանադրական և այլ դատարանների համակարգային գործակցության համաեվրոպական փորձը, բացահայտվում են այս բնագավառում միջազգային զարգացումների միտումները՝ նոր հազարամյակի հասարակական մարտահրավերների համատեքստում, առաջադրվում են հասարակական օրգանիզմի իմունային բավարարվածության ամրապնդման կոնկրետ մոտեցումներ, ներկայացվում է Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատության համակարգային բարեփոխումների ամբողջական հայեցակարգ:

Նյութը նախատեսված է ոչ միայն մասնագիտական լսարանի, այլև ընթերցողների լայն շրջանակի համար, կարող է օգտակար լինել պետական կառավարման, օրենսդրական, գիտավերլուծական աշխատանքներում, ճանաչողական հարուստ տեղեկատվություն հաղորդել ուսանողությանը, իրավական, ժողովրդավարական պետության սկզբունքները հարգող և իր երկրի ապագայով մտահոգ յուրաքանչյուր անհատի:

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ուսումնական ձեռնարկ, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2002, 504 էջ

Բուհական դասընթացի ծրագրին համապատասխան՝ ուսումնական ձեռնարկում համակարգված կերպով շարադրված է ժամանակակից միջազգային իրավունքի հիմնական բովանդակությունը, ներկայացված են նրա ճյուղերի և ինստիտուտների առանձնահատկությունները: Առանձին ուշադրություն է հատկացված Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պրակտիկային: Ուսումնական ձեռնարկում տեղ են գտել նաև առանձին հիմնարար միջազգային իրավական և ներպետական ակտեր:

Նախատեսված է բուհերի իրավաբանական և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների ուսանողների, ասպիրանտների և դասախոսների համար: Այն կարող է օգտակար լինել արտաքին հարաբերությունների և միջազգային կապերի ոլորտի աշխատողների, միջազգային հիմնախնդիրներով հետաքրքրվող անձանց և կազմակերպությունների համար:

Մ. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2002, 560 էջ

Լույս է տեսել «Փիլիսոփայություն» ուսումնական ձեռնարկի 3 գրքերից 2-րդը՝ «Համաշխարհային փիլիսոփայական մտքի պատմություն» (սկզբնավորումից մինչև XIX դար): Գիրքն սկսվում է «Նախափիլիսոփայությունը Միջագետքի երկրների, Հին Եգիպտոսի և Իրանի հոգևոր մշակույթի մեջ» գլխով, որին հաջորդում են առանձին գլուխ-անդրադարձները Չինաստանում, Հին Հունաստանում, Հին Հռոմում փիլիսոփայական մտքի զարգացմանը, խորությամբ վերլուծվում են ատոմիստական փիլիսոփայության ներկայացուցիչների (Լևկիպոս, Դեմոկրիտես), Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի փիլիսոփայական հայացքներն ու ուսմունքները: Ծավալուն քննությամբ ընթերցողին է ներկայացվում նաև հելլենիզմի դարաշրջանի անտիկ փիլիսոփայությունը, ինչպես նաև փիլիսոփայական մտքի զարգացումը Միջնադարում, Արևելքի և Արևմուտքի արաբալեզու երկրներում, Վերածննդի դարաշրջանում: Գրքի վերջին երկու գլուխները նվիրված են Նոր ժամանակի և XVIII դարի ֆրանսիական Լուսավորականության շրջանների փիլիսոփայական մտքի զարգացման պատմությանը:

Ուսումնական ձեռնարկը հրատարակության է ներկայացրել ԵՊՀ փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնը:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է բուհերի ուսանողների, մագիստրատների, ասպիրանտների և փիլիսոփայությամբ հետաքրքրվող ընթերցողների համար:

ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Ուսումնական ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2002, 388 էջ

Ձեռնարկում համակարգված և ամբողջական տեքստով շարադրված է «Մարդու իրավունքներ» դասընթացը: Հեղինակը փորձել է ներկայացնել մարդու իրավունքների բովանդակությունը, ծագումն ու պատմական զարգացումը, անհատի իրավական կարգավիճակը, քաղաքացիության հետ առնչվող հիմնախնդիրները, մարդու անհատական և կոլեկտիվ իրավունքների համակարգը: Աշխատանքներում մեծաքանակ միջազգային փաստաթղթերի և ազգային օրենսդրության ուսումնասիրության հիման վրա շարադրվում է մարդու իրավունքների միջազգային-իրավական և ներպետական պաշտպանության մեխանիզմների գործունեության պրակտիկան, նշվում դրանց արդյունավետության բարձրացման ուղիները: Առանձնակի կարևորվում են առանձին խումբ անձանց (երեխաներ, կանայք, ազգային փոքրամասնություններ, փախստականներ և այլն) իրավունքների պաշտպանության միջազգային իրավական և ներպետական միջոցառումների առանձնահատկությունները, նրանց զարգացման ուղիները ներկա պայմաններում: Ձեռնարկում ներկայացվում է նաև միջազգային մարդասիրական իրավունքի գործունեության ոլորտը մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է հանրապետության բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, հանրապետությունում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների, մարդու իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար:

ՄԻՔԱՅԵԼ ՍԵՎՅԱՆ,
ՍՊԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Գիրք 9, Երևան, «Տիգրան Մեծ», 2002, 132 էջ

«Ընտանեկան հանրամատչելի իրավական գրադարանի» հերթական գիրքն է, որտեղ հարցերի ու պատասխանների միջոցով հանրամատչելի կերպով ներկայացվում են սոցիալական իրավունքներին առնչվող՝ քաղաքացիների առօրյա կյանքում հաճախ ծագող հարցերի պարզաբանումներ: Մասնավորապես պարզաբանումներ են տրվում պետական կենսաթոշակային ապահովության իրավունքի, աշխատանքային, սոցիալական կենսաթոշակների, դրանց նշանակման ու վճարման վերաբերյալ: Առանձին գլխով ներկայացված է հաշմանդամների սոցիալական պաշտպանության վերաբերող օրենսդրությունը, որով երաշխավորվում են հաշմանդամների աշխատանքային իրավունքները:

Մարդու իրավունքների բաղադրանի նոր բականություն

- Հանրային հարաբերություններ եւ աշխատանք ԶԼՄ-ների հետ: Ձեռնարկ հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների համար, Երևան, 2003
- Հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովման ստանդարտ կանոններ, Երևան, 2003
- Հասարակությունը եւ հաշմանդամությունը, սոցիալական մոդելի բաղկացուցիչ մասերը, Երևան, 2003
- Սահմանադրական վերահսկողությունը, ուս. ձեռնարկ բուհերի համար, Գ. Գ. Հարությունյան, Երևան, 2002
- Քրեական գործ # 307 (մինչդատական վարույթ), ուսումնական ձեռնարկ, Կ. Ա. Լալայան, Երևան, 2002
- Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը եւ ժողովրդավարական սկզբունքների պահպանման հիմնախնդիրները Հայաստանում: Մասնակցային գործընթաց, Երևան, 2003
- Աղքատության հաղթահարման իմ/մեր տեսլականը: Հոդվածներ, քաղվածքներ ՄԻԺԻ-ի կողմից կազմակերպված մրցույթից, Երևան, 2001
- Աղքատության ու գոյատեւման պատկերը: Հասարակության շերտավորման գործընթացները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2003
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 2, 2001
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 4, 2001
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 7, 2001
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 2, 2002
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 3, 2002
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 4, 2002
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 1, 2003
- «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, Երևան, թիվ 3, 2003
- Первая Конституция Республики Армения, Генрик Хачатрян, Ереван, 2001
- Конституционное право Российской Федерации: учебник для вузов, М. Баглай, Москва
- “Конституционное правосудие в Республике Беларусь”, Василевич Г. А., Ереван, 2003
- “Конституционное правосудие”, под ред. Г. Г. Арутюняна, н.4 (10), 2000
- “Конституционное правосудие”, под ред. Г. Г. Арутюняна, н.1, 2001
- “Конституционное правосудие”, под ред. Г. Г. Арутюняна, н.2 (12), 2001
- “Конституционное правосудие”, под ред. Г. Г. Արտյունյան, н.2 (16), 2002
- “Конституционное правосудие”, под ред. Г. Г. Արտյունյան, н.3 (17), 2002
- “Конституционное правосудие”, под ред. Г. Г. Արտյունյան, н.4 (18), 2002
- “Конституционное правосудие”, под ред. Г. Г. Արտյունյան, н.3 (21), 2003
- Poverty Reduction Strategy Paper, Yerevan 2003